

Արա Պետրոսյան

ԸՆԴ ՏԱՆՈՒՐ

Երևան • 2020

ՆՏԴ 1/14
ԳՄԴ 87
Պ 505

Պետրոսյան Արա:
Պ 505 Ընդ հանուր / Ա. Պետրոսյան.– Եր.: Նեղ. հրատ.,
2020. – 208 էջ:

Պատահական է արդյոք ամեն ինչ մեզ շրջապատող աշխարհում, թե՞ գոյություն ունի ինչ-որ տրամաբանություն: Արդյոք մարդը Տիեզերքի սխալն է, թե՞ հակառակը՝ մեծ համակարգի տրամաբանական տարրը: Եվ եթե մարդը սխալմունք չէ, ապա ինչու՞ է նրա կյանքն այդքան հակասական և խնդրահարույց, իսկ ստեղծած քաղաքակրթությունը՝ հոգեվարքի մեջ: Գրքում փորձ է արվել պատասխանելու այս կարևորագույն հարցերին և առաջարկվել է մի յուրօրինակ վարկած, որը միասնական իմաստ ու տրամաբանություն է հաղորդում մեզ հայտնի և դիտարկելի բոլոր երևույթներին՝ հիմնարար մասնիկների աշխարհից մինչև մարդկային սոցիում:

ՆՏԴ 1/14
ԳՄԴ 87

Թերևս դժվար է գտնել մեկին, ում լիովին բավարարում է գոյություն ունեցող աշխարհը: Բոլորն էլ համակվում են մի զգացողությամբ, որ ինչ-որ բան այն չէ՝ անկախ հասարակական դիրքից, բարեկեցությունից: Ընդ որում, այդ զգացողությունն ի հայտ է գալիս դեռ մանկությունից: Երեխաները չեն հասկանում՝ ինչու են մեծերը հաճախ արգելում անել բաներ, որոնք իրենք անում են միշտ, առանց խղճի խաթի: Երեխաներին խրատում են, որ սուտը չարիք է, բայց տեղնուտեղը ակնհայտ է դառնում, որ երբեմն, որոշ դեպքերում, հանուն ինչ-որ նպատակների, մտերիմ մեկի շահերից ելնելով՝ կարելի է նաև ստել: Այս հակասության բացատրությունը կամ մշուշոտ և անհամոզիչ է լինում, կամ ընդհանրապես չի լինում: Եվ ահա արդեն դպրոցում՝ ֆիզիկայի դասին, աշակերտը լսում է, որ լույսը միաժամանակ և՛ ալիք է, և՛ մասնիկ: Մի՞թե դա հնարավոր է: Ուսուցիչը, որը պիտի բացատրեր, նույնպես չի հասկանում. ընդամենն առարկություն չընդունող տոնով խոսում է այդ մասին: Աշակերտը ոչինչ չի հասկանում, սակայն ստիպված է պատասխանել այնպես, ինչպես դասագրքում է. նա պիտի բարձր գնահատական ստանա: Այս ամենը տարիների ընթացքում սկսում է տարօրինակ թվալ. պատասխան մի՛ փնտրիր, որպեսզի խնդիր չունենաս, ստի՛ր, նույնիսկ եթե այլ կերպ ես մտածում: Սպիտակը, պարզվում է, ոչ միշտ է սպիտակ, իսկ մտքի ճշմարտացիությունը կախված է այն բանից, թե ով է այն հայտնել: Ծագող հարցերն ու կասկածները բախվում են անունների մեծությամբ՝ Մարքս, Էնգելս, Լենին, Մաքսվել, Էյնշտեյն, Դարվին, Ֆրոյդ... Իսկ մեծերը, ինչպես գիտենք, չեն սխալվում: Սակայն բացի գիտության հեղինակություններից,

անակնկալներ մատուցում է հենց ինքը կյանքը. մարդ արարածի համար դյուրին չէ հասկանալ, թե ինչու է ինքն ընդամենը 10-20 տոկոսով ավելի շատ վաստակում՝ աշխատելով 10 անգամ ավելի շատ և ավելի լավ: Նրան հասկանալի չէ՝ ինչու է պետությունն իրեն պատերազմելու ուղարկում հեռավոր երկիր չզիտես՝ ում դեմ, չզիտես՝ հանուն ինչի, սակայն անպայման հայրենասիրական կոչերի ներքո: Եվ նա չի կարող բացառություն գտնել՝ ինչու ֆիլմերում հանգիստ և առանց խղճի խայթի ցուցադրվում են սպանության արյունոտ տեսարաններ, բայց այդ նույն ֆիլմերում մարդու սեռական օրգանների ցուցադրումը համարվում է անպարկեշտության գազաթնակետ և ենթարկվում խիստ գրաքննության: Կյանքի ընթացքում մարդն ականատես է լինում բազում պարադոքսների, հակասությունների, անհամապատասխանությունների և բացահայտ ստի: Սակայն այս ամենով հանդերձ՝ նա պետք է դրամ վաստակի, ընտանիք պահի, առաջխաղացում ունենա կարիերայում: Այդ պատճառով այս բոլոր երկակի ստանդարտների, բացասական զգացողությունների մասին մտքերը, որոնք առաջանում են կյանքում և վերքեր թողնում հոգու վրա, մի կողմ են դրվում. կյանքի հորձանուտում մարդը դրա ժամանակը չունի: Եվ միայն այնժամ, երբ արդեն երկար տարիներ են հետևում մնացել և որոշակի փորձ է կուտակվել, ու երբ վերջապես ազատ ժամանակ կա, ոմանք, այնուամենայնիվ, վերադառնում են հիշողությանը պահ տված այդ մտորումներին: Նմանատիպ դատողությունները մասնավորի մասին երբեմն հանգեցնում են ընդհանուր բնության եզրահանգումների, աշխարհի որոշակի ամբողջական տեսլականի: Տեսնելով՝ ինչպես է Արարիչը (լինի բնություն, թե Աստված) հանճարեղորեն նախագծել կենդանի բջիջը՝ փոխադրեցության իր բարդագույն մեխանիզմներով, հավատդ չի գալիս, որ Արարիչը կարող էր այդչափ շատ սխալվել մարդու հարցում: Բջիջում բացառված է ինչ-որ ռիբոսոմի ըմբոստացումն իր իսկ տեղի և դերի դեմ ընդհանուր

կառուցվածքում. այնտեղ ամեն ինչ ներդաշնակ է գործում: Իսկ մարդկանց աշխարհում շուրջըլուրը համընդհանուր մասնատվածություն ու հակասություններ են: Փաստը, որ դա ոչ թե տեղային բնույթ է կրում, այլ ամենուրեք է, հանգեցնում է այն մտքին, որ այս ամենն ունի ընդհանրական հիմք և ինչ-որ ընդհանուր պատճառ: Այո՛, սկզբում թվում է, թե ամեն ինչը տարբեր պատճառներ ունի: Բայց հետո հանգում ես այն մտքին, որ տարբեր են միայն անհամապատասխանությունների նկարագրման լեզուները, իսկ նրանց առաջացման գործընթացներն ու պատճառներն ընդհանուր են: Եվ երբ հանգում ես այդ մտքին ու մի օր ինքնուրույն բացահայտում տեղի ունեցողի գլխավոր պատճառն ու ներքին կապերը, սկսում է թվալ, որ ամեն ինչ միանգամայն պարզ է: Բայց եթե ամեն ինչ այդքան պարզ և ակնհայտ է, նշանակում է՝ դա պետք է շատերը հասկանային: Քանի որ այսօր մենք ապրում ենք հեռուստատեսությունում, ռադիոյում, ինտերնետում և համատարած խոսակցությունների դարաշրջանում, ապա, թվում է, վաղ թե ուշ կգտնվեն ճիշտ խոսող մարդիկ, որոնք կհանգեն նույն եզրակացություններին: Իհարկե, քիչ չեն խելացի մարդիկ, նորմալ փորձագետներ, որոնք հաճախ ճիշտ բաներ են խոսում, սակայն հիմնականում՝ մեծ խճանկարի առանձին հատվածների մասին: Իսկ ահա ամբողջի մասին չի խոսում ոչ ոք: Եվ հենց այդ պահին մտքերը թղթին հանձնելու անհաղթահարելի ցանկություն է առաջանում, որպեսզի ուրիշներն էլ դրանք տեսնեն և կարդան, որպեսզի իրավիճակն առաջ շարժվի մեռյալ կետից: Սակայն պարզվում է, որ ինչ-որ կարևոր իմաստներ հասկանալն ու այդ մասին պատմելը տարբեր բաներ են: Մեր գաղափարը՝ այն, ինչ կուտակվում և ձևավորվում է մարդու մեջ տարիներ շարունակ, մեր մեջ ապրում է որպես զուգահեռ կերպար: Այդ կերպարը ստեղծվում է ներքին վիրտուալ զրուցակցի հետ վեճերի և մտորումների շնորհիվ: Բայց բանն այն է, որ այդ վիրտուալ զրուցակիցը հենց մենք ինքներս ենք.

նա մեզնից քիչ է տարբերվում, նույն կերպ է մտածում, ամեն ինչ տեսնում է մեր ասածից ավելի վաղ, հարկ չկա նրան ամեն ինչ սպառիչ բացատրելու. նա հեշտ է համաձայնում: Բայց երբ ցանկանում ես ընթերցողի դատին հանձնել հայացքներիդ բարդ համակարգը, որտեղ ամեն ինչ փոխկապակցված է, այդ դեպքում զուգահեռ կերպարը բանի պետք չէ: Անպատրաստ մարդու համար մի ակնթարթում հնարավոր չէ որսալ և ընկալել այդպիսի բարդ պատկեր. պետք է ստեղծել հետևողական կերպար, պետք է ինչ-որ տրամաբանական հետևողականությամբ շարադրել սեփական գաղափարը, որպեսզի այն հասկացվի և արձագանք գտնի ընթերցողի կողմից, ճիշտ ընկալվի: Այստեղ է, որ պետք է հաջողել, պետք է հանդիպել մեկին՝ իրական գրուցակցին, որի հետ կարելի է քննարկել, բանավիճել, և արդյունքում եղածը զուգահեռ կերպարից փոխադրել տառերի, բառերի, մտքերի հերթագայության: Աշխատանքի ընթացքում շատ կարևոր է այդպիսի իրական գրուցակցի գոյությունը, որը կյանքի մեկ այլ ուղի է անցել, այլ փորձ ունի, ինչի շնորհիվ գրույցի ժամանակ հնչեցված յուրաքանչյուր դրույթ պահանջում է առավել մանրակրկիտ, լուրջ հիմնավորում և լրացուցիչ փաստարկներ: Այս առումով Էդուարդ Այանյանը, որի հետ մենք աշխատել ենք գրքի վրա, դարձավ ոչ միայն բնագրի խմբագիրը, այլև հանդես եկավ այնպիսի քննադատ-գրուցակցի դերում, որն էապես բարելավեց արտահայտված գաղափարների փաստարկման, ինչպես նաև ձևակերպումների որակը, իսկ որոշ օրինակներ, որոնք դիպուկ լուսաբանում էին աշխատանքի հիմնական դրույթները, հենց նա է գտել: Մի բանի ամիսների ընթացքում գրույցների, քննարկումների և պարզապես ընկերական շփման շնորհիվ ծնվեց այս գիրքը, որտեղ մտքերն ու գաղափարները վերածվեցին կոտ ու կապակցված տեքստի:

Գրքի մասին լավագույնս խոսում է անվանումը՝ «Ընդ հանուր» (դեպի ամբողջը). սա բավականին սեղմ և ինչ-որ տեղ

լակոնիկ փորձ է շարադրելու մի գաղափար, որը բացատրում և փոխկապակցում է մեր շուրջը եղած շատ կարևոր բաներ: Բնականաբար, մեր ժամանակներում կյանքի և աշխարհի իմաստի մասին հարցերը շատերին են հուզում, և աշխարհի պատկերը յուրովի նկարագրելու, նրանում միասնական իմաստ տեսնելու ինչ-որ փորձեր արվում են: Բայց այդ տեսությունների հիմնական խնդիրը գաղտնագիտությամբ (էզոթերիկայով) հրապուրվելն է: Նրանց հեղինակները խախտում են Օկամի հայտնի սկզբունքը. ստեղծում են գոյ, որի անհրաժեշտությունը չկա: Արդյունքում ի հայտ են գալիս բազում հասկացություններ, որոնց նմանօրինակը մարդը չի կարող գտնել: Ընդ որում, այդ հասկացությունները, այդ նոր՝ հորինված էությունները դասավորվում են ինչ-որ տրամաբանական շղթաներով ու համակարգերով՝ փոխգործակցելով՝ ըստ ինչ-որ մտացածին օրենքների և սկզբունքների, որոնք հնարավոր չէ ո՛չ ժխտել, ո՛չ հաստատել: Տեղիականները ստեղծում են մեզ ծանոթ կյանքից հեռու երևակայական աշխարհներ և էություններ՝ փորձելով դրանց միջոցով ձևակերպել ինչ-որ ճշմարտություններ մեր կողմից դիտարկվող աշխարհի համար: Ընդ որում, այդ տեսություններում քիչ չեն հիշտն ու հետաքրքրականը: Բայց լրջագույն խնդիրը հենց կիրառվող մեթոդաբանությունն է, որտեղ կան հակասություններ՝ անդրադարձ հասկացությունների, գործընթացների և երևույթների, որոնց գոյությունն անհնար է ստուգել: Իսկ այն տեսությունների արժեքն ու կիրառելիությունը, որոնք հիմնված են սկզբունքորեն անստուգելի փաստերի վրա, խնդրահարույց են: Ինչ վերաբերում է տվյալ գրքին, ապա այստեղ չկան հորինված պնդումներ, խոսքն այնպիսի բաների մասին է, որոնք հանգիստ կարելի է ստուգել, և որոնց մասին հասանելի տեղեկություններ շատ կան: Պարզ ասած՝ սա փորձ է աշխարհի պատկերը կառուցելու ձեռքի տակ եղած միջոցներով: Կարևոր է, որ գրքում ուշադրությունը գիտակցաբար չի սևեռվում առանձին փաստերի և խնդիրների վրա, չկա

դրանց խոր և մանրագնին քննարկում: Առավել կարևոր է եղել տեսնել և նկարագրել ընդհանուր պատկերը: «Ընդ հանուր»-ը գլխական աշխատանք չէ, այլ մի փորձ հանրամատչելի, հասանելի կերպով շարադրելու տարիների ընթացքում ձևավորված գաղափարներն ու վարկածները, որպեսզի նրանց հետագա քննարկման և զարգացման մեջ ներգրավվեն համախոհներ՝ մտածելու գործում համարձակ մարդիկ: Իսկ այդպիսիք, վստահ եմ, մեր մեջ կան:

«Нет, ребята, все не так,
все не так, ребята...»

Վ. Վինգլի

Որքան էլ մենք զբաղված լինենք սեփական կյանքով և անձնական խնդիրների լուծմամբ, ժամանակ առ ժամանակ մեզանից շատերը գեթ մի ակնթարթ մտահոգվում են մեր շուրջը, ընդհանրապես աշխարհում տիրող իրավիճակով: Եվ ավելի ու ավելի հաճախ անդրադառնալով աշխարհի ընդհանուր պատկերին, մենք նկատում ենք տարօրինակ մի բան. չնայած մարդկության թվացյալ զարգացմանը, սրընթաց գիտատեխնիկական պրոգրեսին, համընդհանուր խնդիրներն ու չլուծված հարցերը միայն բազմապատկվում են՝ առավել լուրջ բնույթ ստանալով: Այսօրվա խնդիրներն իսկապես համընդհանուր են՝ կյանքի որ ոլորտին էլ վերաբերեն՝ բնապահպանություն, աշխարհաքաղաքականություն, սոցիալական հարցեր, գիտություն, կրթություն: Ընդ որում, հորիզոնի վրա արդեն ուրվագծվում է մեր ընդհանուր ապագայի մշուշոտ պատկերը՝ առաջացնելով ինչ-որ աղուտ զգացում առ այն, որ մեր մոլորակի վրա ինչ-որ բան այն չէ... Տնտեսական ճգնաժամեր, որոնք սնանկացնում են աղքատներին ու հարստացնում հարուստներին, անհամոզիչ նպատակներով շարունակական պատերազմներ, որոնք սպանում են անմեղ մարդկանց, դեղեր, որոնք չեն բուժում, ֆիզիկայի օրենքներ, որոնք հակասում են ֆիզիկայի մյուս օրենքներին, բազում հակամարտող կրոններ, որոնք պնդում են, որ Աստված միակն է, առ Աստված հավատի

խոստովանություն՝ գրված թղթադրամի վրա, արվեստ՝ զգվանք հարուցելու նպատակով, ծխելու վտանգի մասին զգուշացնող ֆիլմեր, որտեղ մարդկանց զանգվածաբար սպանում են: Մեզ հետ՝ մեր այժմյան մարդկային քաղաքակրթության հետ, իրոք, ինչ-որ բան այն չէ: Եվ շատերն են ժամանակ առ ժամանակ խորհում այս մասին. ի՞նչն է պատճառը: Ի՞նչ է մեզ հետ կատարվում: Տարբեր հետազոտողներ և վերլուծաբաններ խնդրի բազում ձևակերպումներ են առաջարկում՝ կենտրոնանալով մերք տնտեսության խնդիրների, մերք բարոյակալության հզանժամի, մերք կյանքի այլ բնագավառների վրա: Սակայն ազնիվ պատասխանն ավելի պարզ է ու խիստ: Եվ դա համապարփակ վերլուծության հետևանքն է այն ամենի, ինչով մենք ապրում ենք, և ոչ թե ինչ-որ առանձին վերցրած ոլորտի: Նհարավոր է և հավանական, որ այս ըմբռնումը շատերն ունեն: Բայց ոմանց ըմբռնումը հիմնավորված չէ համոզիչ փաստարկներով, մյուսները ցանկություն չունեն իրենց ժամանակն ու ջանքերը ծախսելու այս խնդրի վրա, իսկ մեկ ուրիշը չի ցանկանում այս մասին խոսել, որպեսզի չխոստովանի սեփական անկարողությունը: Ճշմարտությունն այն է, որ մեր ներկայիս քաղաքակրթությունն արդեն մեռած է: Իհարկե, նման ձևակերպումը շատերի մեջ անխուսափելիորեն ներքին բողոք և հազարավոր հարցեր է առաջացնում: Այսինքն՝ ինչպե՞ս թե մեռած է: Շուրջը, թվում է, կյանքը եռում է. արագացող գիտատեխնիկական առաջընթացը նոր ու բացառիկ հնարավորություններ է ընձեռում, մարդկությունը պատրաստվում է Մարս թռչել, ի հայտ են գալիս բիզնեսի նոր տեսակներ և մոդելներ, իսկ մատչելի տեխնոլոգիաները հնարավոր են դարձնում այն, ինչը մինչև վերջերս ֆանտաստիկ էր համարվում: Այո՛, հիրավի, մեր քաղաքակրթության զարկերակը դեռ բաբախում է, արյունը՝ դեռ շրջանառվում, և դեռ գործում են օրգանները: Բայց ահա թե որն է դաժան ճշմարտությունը. այդ քաղաքակրթության գլխուղեղի մահն արդեն տեղի է ունեցել: Եվ այս

համապատկերում մեր՝ արդեն մարդկային մահվան վտանգը չափազանց իրական է դարձել: Քաղաքակրթության մահը սաղորիչ արտահայտություն չէ և ոչ էլ սկանդալային մերկապարանոց հայտարարություն: Այն մի եզրակացություն է, որն առաջանում է յուրաքանչյուր մարդու մեջ, որն ընդունակ է հանգիստ ու հստակ վերլուծելու, թե ինչ հանապարհ ենք մենք անցել վերջին հազարամյակներում, ինչպես ենք մտածել, ինչպես ենք գործել և ինչ արդյունք ունենք այսօր: Կարևոր է նշել, որ ներկայիս քաղաքակրթության մահն ինչ-որ համաշխարհային անդրկուլիսային դավադրության հետևանք չէ (թեև նրա գոյությունը լիովին հնարավոր է), այլ մեր քաղաքակրթության հիմքում դրված լուրջ հակասությունների տևական զարգացման արդյունք: Ընդ որում, արձանագրել քաղաքակրթության մահը բնավ չի նշանակում հայտարարել սեփական մահվան մասին, առավել ևս չի նշանակում համաձայնել դրա հետ և ընդունել այն որպես իրողություն: Տեսնելով մոտալուտ աղետը՝ մարդը միշտ ելք է փնտրելու: Բայց նախքան այդ աղետը պետք է տեսնել և գիտակցել, իսկ գիտակցման ընթացքում առանձնացնել գլխավոր հարցերը, օրինաչափությունները և տեսնել կապը նրանց միջև: Ընդ որում, դիտարկելով մարդկության խնդիրները՝ նաև անհրաժեշտ է հասկանալ, որ մենք անքակտելի մասն ենք Տիեզերքի, որտեղ գործում են հստակ ընդհանուր օրենքներ և որտեղ կան որոշակի օրինաչափություններ: Այսօր մեր քաղաքակրթությունը հանգել է Տիեզերքի հետևյալ հիմնարար օրենքների և սկզբունքների ըմբռնմանը.

- պատճառականության սկզբունք. մի դեպքն ազդում է մյուսի՝ ավելի ուշ կատարվածի վրա (ցանկացած դեպք ունի իրեն նախորդող պատճառ),
- պահպանման օրենքներ՝ էներգիայի, իմպուլսի, զանգվածի և այլնի,
- էնտրոպիայի (քաոսի) չնվազման օրենք:

Խոսելով այն մասին, որ մենք մեծ և միասնական ամբողջի փոքր մասն ենք՝ արժե հիշեցնել, որ այդ մեկ ամբողջության մեջ երկու տեսանկյունի վիճակ կա, որոնք կարելի է տարբեր կերպ կոչել՝ կարգուկանոն և քաոս, արարում և կործանում, կառուցողականություն և ապակառուցողականություն: Իր տեղում մենք մանրամասն կդիտարկենք քաոսի էներգիայի (էնտրոպիայի) և նրան հակազդելու հարցը: Իսկ առայժմ պարզապես հիշեցնենք, որ էնտրոպիայի չնվազման հիմնական օրենքի համաձայն՝ էնտրոպիան (քաոսի, չկարգավորվածության էներգիան) բնականորեն ձգտում է աճման և ամենաքիչը չի կարող նվազել առանց արտաքին ազդեցության: Այլ կերպ ասած՝ եթե ոչինչ չանենք, ապա կառուցվածքների քայքայումը տեղի կունենա ինքնըստինքյան. դրա համար ոչինչ պետք չէ: Եվ ընդհակառակը, ինչ-որ կառուցվածք ստեղծելու համար շատ բան է պետք՝ մատերիա, որից բաղկացած է այդ կառուցվածքը, էներգիա, որը պետք է ծախսել նրա ստեղծման վրա, և ինֆորմացիա, որը բնութագրում է այդ կառուցվածքը: Այս երեք մեծությունների՝ երեք էությունների (մատերիա, էներգիա, ինֆորմացիա) ավելացումն էլ (մեծացումը) հենց ստեղծում է ողջ գոյություն ունեցողը՝ այս աշխարհում մեզ շրջապատող բոլոր կառուցվածքները: Ընդ որում, մարդը նույնպես գոյ է, նույնպես կառուցվածք է: Այդ պատճառով, դիտարկելով մեր քաղաքակրթության հարցերն ու խնդիրները, անհրաժեշտ է հիշել ինչպես գոյի այդ երեք բաղկացուցիչ մասերի, այնպես էլ աշխարհի հիմնական օրենքների մասին: Սակայն ամենի մասին ըստ հերթականության: Սկզբում փորձենք գլուխ հանել հետևյալ հարցերից.

- ի՞նչ է մեզ հետ կատարվում,
- որո՞նք են կատարվածի պատճառները:

U U U



ՆԱԲԵՐ ԲԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆԸ

Սկզբում վերլուծենք քաղաքակրթությունը՝ որպես հասկացություն: Բառարանները սահմանում են, որ քաղաքակրթությունը «մատերիալի շարժման սոցիալական ձև է, որն ապահովում է նրա կայունությունն ու ինքնագարգացման կարողությունը շրջակա միջավայրի հետ ինքնակարգավորվող փոխանակման ճանապարհով»: Ձևակերպումը մի փոքր բարդ է ընկալման համար: Եթե ավելի պարզ ասենք, ապա քաղաքակրթությունը հայացքների և մեթոդաբանությունների մի համակարգ է, որը հնարավորություն է ընձեռում համարժեք պատասխան տալու ցանկացած մարտահրավերի: Քանզի եթե չլինեն համարժեք պատասխաններ, անպայման ի հայտ կգան խնդիրներ, իսկ եթե լինեն անլուծելի խնդիրներ, դրանց կհետևեն կործանում ու մահ: Բայց ինչպես էլ քաղաքակրթությունը սահմանեն բառարաններն ու փիլիսոփաները, այն ամեն դեպքում ինքը կյանքն է: Եվ կյանքի ավարտը՝ որպես վերջնականատակ, պարզապես չի էլ դիտարկվում:

Առաջ ընկնելով նշենք, որ ներկայումս մեր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում չափազանց շատ հարցեր են կուտակվել, որոնց մեր այսօրվա հայացքների և մեթոդաբանությունների համակարգը համարժեք և հստակ պատասխանել չի կարող: Այդ խնդիրներն էկոնոմիկայի, հիմնարար գիտության, կրթության, բժշկության, բնապահպանության, սոցիոլոգիայի, աստվածաբանության և նույնիսկ ստեղծագործության մեջ են: Մենք փակուղի ենք մտել և չենք կարողանում հասկանալ, բացատրել կատարվածը, չենք կարողանում լուծում գտնել՝ դեպի ուր շարժվել, չենք կարողանում ինքներս մեզ՝ որպես տեսակի պաշտպանել:

ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՆԵՏԱԳԻԾԸ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ

Որպեսզի առավել ակնառու դարձնենք այսօրվա իրավիճակը, պատկերացնենք, որ մեր ձեռքի տակ քրեական օրենսգիրքն է, որը պետք է հստակ դասակարգի հանցագործության տարբեր տեսակները և համապատասխան պատիժներ սահմանի: Այն հրաշալի օրենսգիրք է՝ գրված այդ ոլորտի հեղինակավոր մասնագետների կողմից, զերծ է ուղղագրական սխալներից, տպագրված է բարձրորակ թղթի վրա և հրատարակված վայելույշ կազմով: Այդ քրեական օրենսգիրքն ամեն ինչով լավն է, բայց մի լուրջ թերություն ունի. հենց փորձում ենք այն կիրառել, պարզվում է, որ գործնականում ամեն ինչ երկակի է մեկնաբանում, հանցագործության շատ տեսակներ հորինված են, իսկ շատերն էլ ընդհանրապես բացակայում են, ընդ որում, հողվածները հակասում են միմյանց և իրենք իրենց: Այսինքն, ունենք մի քրեական օրենսգիրք, որը հնարավոր չէ հաջողությամբ օգտագործել դատական պրակտիկայում: Այն ասես այգեգործի հաստափոր տեղեկատու լինի, որը չի օգնում ծառերը խնամելու: Կամ կահույք հավաքելու ձեռնարկ, որին հետևելով՝ չես կարող այդ կահույքը կարգին հավաքել: Ո՞ւմ է պետք գեղեցիկ ավտոմեքենան, որը հարմարավետ և հաճելի է նստելու համար, բայց որով հնարավոր չէ երթնեկել: Ո՞ւմ է պետք էրգոնոմիկ փոշեկուլը, որն ի վիճակի չէ փոշին հավաքել: Եվ որքանո՞վ է կենսական հայացքների և մեթոդների այսպիսի համակարգը (իմա՝ քաղաքակրթությունը), որը, պարզվում է, ի վիճակի չէ համարժեք պատասխան տալ մեր կյանքի կարևորագույն հարցերին ու մարտահրավերներին, և որն ի վերջո մեզ մահվան է հասցնելու: Ուրեմն, ի՞նչ հիմնական մարտահրավերներ են այսօր ծառացած մեր առջև: Ի՞նչ համարժեք պատասխաններ է առաջարկում ժամանակակից քաղաքակրթությունը: Եվ արդյոք առաջարկո՞ւմ է:

Այսօր մարդկության առջև ծառացած գլխավոր մարտահրավերներից մեկը կյանքի ներկայիս տեխնոլոգիաների անհամապատասխանությունն է գոյություն ունեցող ռեսուրսներին: Մենք ապրում ենք կոնկրետ հասցեում՝ Երկիր մոլորակ: Եվ Երկիր մոլորակի ռեսուրսներն անսահմանափակ, անսպառ չեն: Օգտակար հանածոների, ջրի, հողի, փայտանյութի, օդի քանակը սահմանափակ է: Մենք չենք կարող ավելի շատ քարածուխ, գազ, նավթ այրել, քան կա Երկրի ընդերքում: Անհնար է ցորենի ավելի շատ դաշտեր ցանել, քան կան: Անկարելի է անվերջ մեծացնել հացահատիկի բերքատվությունը, առանց հողը սնանկացնելու: Իսկ պաշարների վերականգնումն այնքան երկարատև գործընթաց է, որ արդյունքը վիճակված չէ տեսնել դեռ բազում սերունդների: Պարզվում է, որ կյանքի մեր տեխնոլոգիաները, կյանքի մեր այսօրվա ստանդարտներն պարզապես անհամատեղելի են մոլորակի հնարավորությունների հետ: Եթե կյանքի ստանդարտներն այլ լինեին, ապա, թերևս, մոլորակը կդիմանար ծանրաբեռնվածությանը: Թեև այդ դեպքում, հնարավոր է, մենք Երկրի վրա ոչ թե 7 մլրդ կլինեինք, այլ շատ ավելի քիչ: Եթե ամեն մի քանի տարին մեկ դեն չնետեինք ավտոմեքենաներն ու ամեն տարի՝ բջջային հեռախոսները, եթե բոլորն ուտեին այնքան, որքան պետք է, և ոչ թե այնքան, որքան պահանջում է անկշտությունը, ապա մոլորակի պաշարներն ակնհայտորեն շատ ավելի երկար կհերիքեին: Սակայն այսօր մենք ստեղծել են մի իրավիճակ, որը լավագույնս բնորոշում է «ինձնից հետո՝ թեկուզ ջրհեղեղ» արտահայտությունը: Մենք չենք ուզում հիշել, որ մեր տանն ուտելիքի, ջրի, էներգակիրների, հումքի քանակը սահմանափակ է: Չենք ուզում մտածել, թե ինչ կպատահի, երբ այդ ամենը վերջանա: Մենք պարզապես չենք ուզում դիտարկել կյանքի վատագույն սցենարը: Այդ ամենի պատճառով անտեսում ենք գլոբալ խնդիրները,

խոսափում ենք գլխավոր հարցերից, քաքնվում նրանցից մեր անձնական փոքրիկ աշխարհում իր փոքրիկ խնդիրներով՝ դեկավարվելով «ինձ կրավականացնի» քանաձևով: Ընդ որում, մոռանում ենք վաղուց հանրահայտ դարձած ճշմարտությունները: «Տայրենիքն այն չէ, ինչը մենք որպես ժառանգություն ստացել ենք մեր ծնողներից, այլ այն, ինչը մենք փոխ ենք առել մեր զավակներից»: Նյուսիսամերիկյան հնդկացիների այս պարզ իմաստությունը կիրառելի է և մեր մեծ Տայրենիքի՝ Երկիր մոլորակի նկատմամբ: Սակայն մենք չենք ցանկանում տեսնել վաղվա օրը, քանի որ այն մեզ վախեցնում է, և շարունակում ենք ապրել ինչ-որ տարօրինակ կանոններով, որոնք մեզ տանում են դեպի անխոսափելի վախճանի: Ռեսուրսները կվերջանան: Իսկ մոլորակի ռեսուրսների սպառումը գլոբալ կոլապս է, համաշխարհային պատերազմ և այլ՝ մարդկության համար տհաճ հետևանքներ, այդ թվում՝ նաև նրա ամբողջական ոչնչացում: Իսկ ի՞նչն այն չէ կյանքի ներկայիս տեխնոլոգիաների հետ: Դրանք ստեղծվել են առաջընթացի՝ շնորհիվ, թե՛ պարտադրվել են մեզ: Բանն այն է, որ կյանքի՝ գոյություն ունեցող տեխնոլոգիաները Երկրում իշխող որոշակի տնտեսական մոդելի ուղղակի և բնական հետևանքն են: Տենց այսօր գործող տնտեսական մոդելն ամենավառ կերպով ի ցույց է դնում ներկա քաղաքակրթության բոլոր հիվանդությունները: Եվ հենց նա է շատ դժբախտությունների պատճառը:

ԼԱՎԱԳՈՒՅՆԻ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԶԱՆԱԿԸ

Տնուց անտի մշտապես գիտակցվել է առկա աշխարհակարգի անկատարությունը, և ժամանակ առ ժամանակ հասարակությանը սոցիալական մի նոր գաղափար առաջարկելու փորձեր են արվել: Այդօրինակ ամենախոշոր նախագիծը Խորհրդային

Միությունն էր, որի նպատակադրումն էր սոցիալական և տնտեսական այլ կարգի օրենքներով ապրող այլընտրանքային հասարակության ստեղծումը: Սակայն ԽՍՀՄ-ը քաղաքական քարտեզում հայտնվեց ու անհետացավ XX դարում՝ դառնալով պատմություն և սերունդների համար հարուստ նյութ այդ փորձի ձախողման պատճառների վերլուծության համար: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո աշխարհում գերիշխում է լույս մեկ տնտեսական մոդել՝ կապիտալիստականը: Ընդամին, արժե երկու խոսքով հիշել կապիտալիզմի բուն էությունը՝ հասկանալու, թե ինչը նրանում այն չէ, և ինչպես է այն ազդում մարդկության վրա: Կարևոր է նաև հիշել, թե կապիտալիզմն առհասարակ երբ և ինչպես է լույս աշխարհ եկել:

Շատ վաղուց՝ մինչև կապիտալիստական դարաշրջանում, գոյություն ուներ խիստ հիերարխիա՝ Աստված, իշխանություն, փող: Աստված ամենավերին տեղում էր, իսկ փողը՝ ստորին աստիճանին: Իշխանությունն Աստծունն էր և նրանից պատվիրակվում էր եկեղեցուն ու միապետին. իշխանությունը կարելի էր փոխարկել փողի, բայց հակառակն անհնարին էր: Իշխանությունը փող ուներ, սակայն փողն իշխանություն չունեց: Փողով չէիր գնի արքայական գահ կամ ազնվականական տիտղոս: Փողը քաղաքականության, օրենքներ ընդունելու, իշխանության ինստիտուտների մուտքի իրավունք չէր տալիս: Այն սոսկ ատրիբուտ էր, գործիք միապետական և ֆեոդալական իշխանության ձեռքում: Ընդ որում, դասակարգային խիստ սահմանազատումները սահմանափակում էին հասարակության անդամների հնարավորությունները, իդձերն ու պահանջմունքները: Եվ այդպես էր բավական երկար ժամանակ: Սակայն մոտավորապես 500 տարի առաջ Վենետիկում և Ջենովայում, Տոլանդիայում, Անգլիայում սկսվեցին լուրջ գործընթացներ, որոնք ամբողջ աշխարհում հարուցեցին արմատական փոփոխություններ. Աստված զրկվեց գերակա դիրքից, իսկ հիերարխիկ բուրգի գահին բազմեցին փողն

ու իշխանությունը՝ ընդ որում, դառնալով փոխարկելի հասկացություններ: Այդպես եղավ, որովհետև փոխվեց (ավելի ճիշտ՝ փոփոխության ենթարկվեց) հասարակարգը. էապես խարխվեցին դասերի միջև պատնեշները: Արդեն հնարավոր դարձավ այն, որ իշխանությունն ընկներ այնպիսի մարդկանց ձեռքը, որոնց միակ արժանիքը փողն էր: Եվ անմիջապես ծառացավ հարցը՝ եթե փող ունենալու դեպքում ոմանց դա արտոնված է, ապա ինչո՞ւ նույնը չեն կարող ցանկանալ մյուսները կամ թեկուզ բոլորը: Այսպես սկիզբ առավ մի գործընթաց, որի հետևանքները մենք տեսնում ենք այսօր: Աստվածային օրենքները տեղը զիջեցին սահմանադրություններին, իսկ իշխանության սրբազան լինելը կասկածի տակ դրվեց տակավին 500 տարի առաջ՝ վերջնականապես և ամբողջովին վերացվելով XX դարասկզբի Առաջին աշխարհամարտի հետևանքով, երբ անհետացան վերջին կայսրություններն ու միապետությունները, իսկ քաղաքական իշխանությունն ամենուր դարձավ ընտրովի: Այստեղ հարկ է նշել, որ XVII դարում հասարակության ինդուստրացմանը սկիզբ դրած անգլիական արդյունաբերական հեղափոխությունը ոչ թե կապիտալիստական գաղափարախոսության տարածման պատճառն էր, այլ հետևանքը. տեխնոլոգիաներն ստեղծվելու համար նախ պետք է պահանջված լինեին: Չէ՞ որ այնպիսի աշխարհում, որը կառուցված է վերին երկնային իշխանությունից մինչև միապետի իշխանությունն ու այդպես շարունակ դեպի ներքև, տեխնոլոգիաների մեծ պահանջարկ չկա: Այդպիսի աշխարհում անիմաստ է մշտապես մեծացնել սպառումը: Քանի որ դասային հիերարխիայի գոյությունը հստակ սահմանազատում էր պահանջմունքները. հասարակ խավը չէր ձգտում հագնվել վերնախավի նման և ոսկե գոտիով ծիրանագույն թիկնոց կրել, իսկ գեղջուկը չէր զինվում ասպետի պես և փոքրիկ կոմսության արժողությամբ զենքուզրահ չէր պատվիրում: Մարդն իր կյանքի որակը դիտարկում էր հասարակության մեջ իր՝ բավականին

հստակ սահմանված դիրքի շրջանակներում: Սոցիալական կարգավիճակով էլ հենց որոշվում և սահմանափակվում էին նրա պահանջմունքները: Սակայն դասային շրջանակների թուլացմամբ, իսկ հետո նաև վերացմամբ առաջին պլան մղվեց փողը, որը հավասար հնարավորություններ է ընձեռում բոլոր նրանց, ում ձեռքում հայտնվում է: Այդ «համահարթեցման» հետևանքով ահռելի թվով մարդկանց պահանջմունքները կարճ ժամանակում կտրուկ աճեցին. ամեն մեկն սկսեց ձգտել առավելագույնին, ցանկալ ավելի ու ավելի շատ: Առաջացավ սպառողական մաքսիմալիզմ՝ ինքնին դատապարտված անվերջ և ապարդյուն մրցավազք լավագույնի համար, որն օրեցօր փոփոխվում է: Կապիտալիզմի կողմնակիցները բուրժուական հեղափոխությունների և արմատական ռեֆորմների միջոցով ակտիվորեն քաջալերում էին դասային շրջանակների ոչնչացումը տարբեր երկրներում՝ հռչակելով «հավասար հնարավորությունների», իսկ իրականում հավասար, ոչնչով չսահմանափակված պահանջմունքների հասարակության ստեղծման մասին: Քանզի միայն այդպիսի վիթխարի, անընդհատ աճող պահանջարկի դեպքում կարող է գոյություն ունենալ կապիտալիզմը: Այսօր համաշխարհային տնտեսության գլոբալացման պայմաններում այլևս անհնար է կանգնեցնել, սահմանափակել շարքային մարդու ցանկությունները: Ծննդյան օրվանից նա շարժվում է դեպի «սպառողական երազանքը»՝ դեպի առավելագույն քանակով լավագույնին տիրապետելը: Սակայն մարդկության անսահմանափակ պահանջմունքները վաղ թե ուշ պետք է բախվեն ռեսուրսների սահմանափակ լինելուն. հենց դրան ենք մենք այսօր արդեն հասել:

Յանկացած սոցիալական և տնտեսական մոդել պարտադիր ունի իր գաղափարախոսական աստառն՝ ինչ-որ գաղափարախոսական հիմք: Բնականաբար, կապիտալիզմը նույնպես ունի իր «բարոյական օրենսգիրքը»: Գլխավոր բառը, որ գործարկվում է այս գաղափարախոսության մեջ,

«ազատությունն» է: Շատերի համար հրապուրիչ ու գրավիչ այս բառիմաստը պարտադիր կրում է հրաժարում ինչ-որ բանից՝ ազատություն ինչ-որ բանից... Կապիտալիզմի հռչակած «ազատ շուկայական հարաբերություններն» ամեն ինչից զատ, նշանակում էին հրաժարում բարոյական և կրոնական տաքուներից, արգելքներից և կայացած նորմերից: Ամենասկզբից կապիտալիզմը ազատություն տվեց մարդկային գրեթե բոլոր արատներին, որպեսզի դրանք, ամուր փոխկապակցված լինելով, իր համար ապահովեին կյանքի անհրաժեշտ պայմաններ, դառնային իրեն սնուցող միջավայրը: Որկրամոլություն, նախանձ, վավաշոտություն, գոռոզամտություն, ազանություն... Ազատություն ստացած գոռոզամտությունը սկսեց ղեկավարել մարդկանց արարքներն ու ցանկությունները: Մեփական բացառիկությունն ընդգծելու հիվանդագին ձգտումը, ամեն գնով առանձնանալու, ուրիշներից հետ չմնալու, հանրության մեջ իր հատուկ տեղն ու կարևորությունն ընդգծելու ցանկությունը մղում են մարդկանց չարդարացված թանկ իրերի և ծառայությունների անիմաստ գնումների: Գոռոզամտությունը թույլ չի տալիս մարդուն գոհանալ անհրաժեշտով ու գործնականով, ապրել՝ ըստ իր ունեցած միջոցների: Հենց գոռոզամտության բավարարման համար ի հայտ եկավ մի այնպիսի հասկացություն, ինչպիսին ծառայությունների և ապրանքների պրեմիում սեզմենտն է: Մարդը չի ուզում լինել մյուսների նման: Նա պատրաստ է գնել իր բացառիկությունը: Եվ հետևանքն այն է, որ մեզ վաճառում են ոչ թե ապրանքը, այլ ոչ բոլորին հասանելի գեղեցիկ առասպելը: Չի կարող սովորական խմելու ջրի շիշն արժենալ 50 դոլար միայն այն պատճառով, որ այն, տեսնե՛ք-տեսնե՛ք, ձեռք է բերվում կանադական սառցադաշտից («10 Thousand BC»): Եվ առավել ևս, չի՛ կարող 1.25 լիտր տարողությամբ ջրի շիշն արժենալ... 60 000 դոլար: Բայց այդպիսի ջուր կա՝ «Acua di Cristallo Tributo a Modigliani»: Շշերը, բնականաբար, զարդարված են ոսկով, ձևավորումը

ամենաթանկարժեք դիզայներինն է (չենք էլ կասկածում), բայց և այնպես ներսում պարզապես ջո՛ր է: Տենց գոռոզամտությունն է նրա սպառողը: Տենց գոռոզամտությունն է կյանքում առաջնահերթ դարձնում ձևը՝ երկրորդ պլան մղելով բովանդակությունը, ջնջելով իմաստը: Եվ անգամ երբ խոսքը սովորական իրերի մասին է, ապրանքն արտադրողը հենց մարդու գոռոզամտությանն է դիմում. ձգտելով բարձրացնել նրան, միաժամանակ նսեմացնելով մյուսներին՝ նրա բացառիկության պատրանքն է կերտում. «Ձեր երեխային ցանկացած շամպուն հարմար է, իսկ իմ փոքրիկին՝ ոչ»: Ենթադրվում է, որ մյուսների երեխաները կարող են լողանալ ցանկացած զգվելի շամպունով, իսկ ահա Ձեր երեխան յուրահատուկ է: Եվ այս ամենը գորացվում է նախանձով: Այն իր հերթին ստիպում է հիվանդագին կրքով տենչալ այն ամենը, ինչն ունի մերձավորդ և նորից գնել, ծախսել, չմտածել գնումների և ծախսերի անհրաժեշտության աստիճանի մասին. «Ուզում եմ նրա ունեցածից, նրանց ունեցածից: Բոլորն ունեն, ես էլ եմ ուզում: Ես ինչո՞վ եմ պակաս»: Իսկ այդ նախանձը բորբոքվում է այս գովազդային տողով. «Զե՛ որ դու դրան արժանի ես»: Իսկ ի՞նչ է անսահմանափակ սպառման կիրքը, եթե ոչ որկրամոլություն: Զե՛ որ խոսքը միայն ուտելիքի մասին չէ: Ոչ անհրաժեշտ հագուստի, արքսեսուարների, կենցաղային իրերի անիմաստ գնումների քանակը պարզապես ահռելի է: Բավական է միայն նայել մեզահանրահայտ չինական համացանցային խանութի «ապրանքների» ցանկին: Մեր անկուշտ որովայնը պահանջում է հագուորդ տալ նորանոր ցանկությունների, առանց որոնց դեռ երեկ կյանքը լիովին հարմարավետ էր: Սակայն, թերևս, ամենագլխավոր և ազդեցիկ արատը, որի վրա հենվում է կապիտալիզմը, ազահությունն է: Պարադոքսն այն է, որ կապիտալիզմն անսահման ազատություն տվեց ազահությանը բարի նպատակով՝ բոլորին հազցնել, կերակրել, զվարճացնել: Զե՛ որ ազահության բնույթն այնպիսին է, որ նա ինքն

ամեն ինչ կանի՝ հարստացման հանապարհին ստեղծելով նյութական բարիքներ, ապրանքներ և տեխնոլոգիաներ: Ճահի ծարավն արագացնում է գործընթացները, ակտիվացնում, խթանում դրանք: Բայց ամեն ինչ ունի սահման: Կապիտալիզմի հիմքում ընկած անսահմանափակ ազահությունը տանում է կապիտալի ընդլայնված վերարտադրությանը: Կապիտալիզմը մշտական ան և ընդլայնում է: Դա նրա էությունն է: Սա արքսիոն է: Տակառակ դեպքում տնտեսական սխեման դադարում է գործել: Եվ կապիտալիզմի ամբողջ պատմությունը պատմությունն է այն բանի, թե ժամանակի տարբեր շրջափուլերում ինչպես և ում հաշվին է իրականացվել կապիտալի ընդլայնված վերարտադրությունը: Կապիտալիզմի ի հայտ գալու նախնական շրջանում կապիտալի ընդլայնված վերարտադրությունն ու հարստացումը իրականացվում էր սեփական երկրների հպատակների, նրանց շահագործման հաշվին: Սակայն ինչպես պրակտիկական ցույց տվեց, դա հղի էր սոցիալական լուրջ ցնցումներով և հեղափոխություններով, իսկ մի անգամ էլ առանձին վերցրած երկրում հեղափոխությունն ընդհանրապես դուրս նետեց կապիտալիզմն իր սահմաններից մի քանի տասնամյակով: Եվ այդժամ կապիտալիզմի մարտավարությունը փոխվեց. պարզ դարձավ, որ ավելի շահավետ և անվտանգ է հարստանալ ոչ թե յուրալիներին, այլ օտարների՝ երրորդ աշխարհի ցանկացած այլ երկրի հաշվին: Մարտավարությունը փոխվեց, սակայն էությունը մնաց նույնը:

Խոսելով կապիտալիզմի՝ որպես տնտեսական մոդելի մասին՝ միշտ պետք է հիշել, որ այն ի սկզբանե ինքնաբավ չէ: Կապիտալիզմի բանաձևը՝ **փող – ապրանք – փող**+, արտացոլում է այդ ոչ ինքնաբավ լինելը: Արտադրված ապրանքների և ծառայությունների շուկայական գինը միշտ ավելի բարձր է, քան աշխատավարձը, որը վճարվում է դրանց արտադրության համար: Մեկ գույգ կոշիկ կարելու և այն գնորդին հասցնելու համար պետք է ծախսել 100 պ. մ.: Մինչդեռ գինը գնորդի

համար կազմում է 140 պ. մ.: Նարց՝ որտեղի՞ց վերցնել պակասող 40 պ. մ.: արտադրվածը գնելու համար: Չէ՞ որ եթե արտադրված ապրանքներն ու ծառայությունները չգնեն, ապա համակարգը պարզապես կանգ կառնի և կփլուզվի: Նման իրավիճակում փողը պետք է ինչ-որ ձևով «հասցնել» սպառողներին: Այս հարցին երկու մոտեցում կա. պայմանականորեն դրանք կարելի է կոչել ամերիկյան և եվրոպական: Ամերիկյանը փողի բաժանումն է սպառողներին անթիվ վարկերի տեսքով: Նասարակությունը բանկերից պարտք է վերցնում, որպեսզի գնի այն, ինչին փողը չի հերիքում: Բայց և գումարը բանկերին նա պարտավոր է վերադարձնել ավելիով, այսինքն՝ տոկոսներով: Իսկ որտեղի՞ց պիտի հայտնվեն այդ հավելյալ տոկոսները: Նշանակում է՝ նորից պետք է վարկ վերցնել: Բնականաբար, սպառողը չի կարող անվերջ մեծացնել պարտքը բանկում. վարկային պղպջակներն ինչ-որ պահի պայթում են՝ ծանր հետևանքներ ունենալով ինչպես քաղաքացիների, այնպես էլ բիզնեսի համար: Սրան հավելենք, որ ԱՄՆ-ում փողի տպագրությունն ինքնին նույնպես վարկային պղպջակ է. յուրաքանչյուր դոլար՝ տպված ԱՄՆ-ի Դաշնային պահուստային համակարգի կողմից (մասնավոր կազմակերպություն), ԱՄՆ կառավարության վրա մեկ դոլարից թանկ է նստում: Այսինքն, շրջանառության մեջ գտնվող դոլարները միշտ ավելի քիչ են, քան այն դոլարները, որոնք ԱՄՆ կառավարությունը պարտք է ԴՊՏ-ին: Այս ամենը վարկային քաղաքականության հետ մեկտեղ պարբերաբար հանգեցնում է դաժանագույն ֆինանսական ճգնաժամերի և շուկայի փլուզման: Իսկ հետո շրջափուլերը կրկնվում են:

Ինչ վերաբերում է եվրոպական մոտեցմանը, ապա այստեղ սխեման հետևյալն է. արտադրված ապրանքների մի մասը վաճառել արտասահմանում բարձր գներով, դրանից գերշահույթ ստանալ, որի մի մասը բաժանել բնակչությանը տարբեր լրավճարների (դոտացիաների) տեսքով սոցիալական կամ

առողջապահության ոլորտում, գյուղատնտեսության մեջ և այլն: Փաստացի այսօրվա եվրոպացու բարեկեցության համար վճարում է մնացյալ աշխարհը, ինչ-որ այլ երկրներ: Առաջանում է յուրօրինակ «սննդային շղթա», որտեղ ուժեղ երկրներն ապրում են թույլերի հաշվին, իսկ կապիտալի ընդլայնված վերարտադրությունը տեղի է ունենում նորանոր շուկաների նվաճման հաշվին: Ընդ որում, այդպիսի «սննդային շղթաների» տրամադրման հնարավորություններն անկասելիորեն կրճատվում են: Սոցիալիստական աշխարհի գոյությունը սահմանափակում էր մուտքը բազում մեծ շուկաներ: Այսօր այդ սահմանափակումները չկան. գործնականում աշխարհի բոլոր երկրներն են ընթանում կապիտալիստական ուղով (այդ թվում Չինաստանն ու Ղազախստանը), սակայն «սննդային շղթաները», միևնույնն է, կրճատվում են, ընդհատվում արդեն բնական պատճառներով. պարզապես սպառողներն են քիչ: Մենք քիչ ենք, նշանակում է՝ մեզնից յուրաքանչյուրի վրա պետք է ավելի ու ավելի շատ թվով ապրանք վաճառել: Բայց ինչպե՞ս: Չէ՞ որ մարդու բնական, նորմալ պահանջմունքներն այնքան էլ մեծ չեն: Այդ պատճառով կապիտալի ընդլայնված վերարտադրության համար անընդհատ անհրաժեշտ է նորանոր պահանջմունքներ հորինել, արհեստականորեն ստեղծել դրանք: «Նորը»-ը համարժեք է դարձել «անհրաժեշտ»-ին: Եվ այդժամ մենք ստանում ենք մի իրավիճակ, երբ նոր բջջային հեռախոսը միակն է, որ համապատասխանում է ժամանակակից պահանջներին, քանի որ միայն նրա՝ հետ են համատեղելի նոր ծրագրերն ու հավելվածները, միայն նա՝ է մուտք ապահովում դեպի նոր ֆունկցիաներ, առանց որոնց կյանքն անհետաքրքիր է: Պարզվում է՝ սափրվելու նոր գործիքը միակն է, որ հիշտ է սափրում և ապահովում «նոր մոտեցում ձեր մաշկին»: Նոր դեղի արտադրողն ընդհանրապես չի պատկերացնում՝ ինչպես ենք մենք գոյատևել՝ օգտագործելով հին դեղամիջոցները: Գովազդը մարդուն համոզում է, որ նրան դա

խիստ անհրաժեշտ է, նրան պետք է ամենանորը, որ առողջ, գեղեցիկ, հաջողակ, ինքնավստահ լինի, իսկ ամենագլխավորը՝ բոլորից առաջ անցնի: Եվ այս ամենը՝ մինչև հաջորդ տարի, երբ կպարզվի, որ ընդամենը երեկ ձեռք բերվածն արդեն անորակ է, հնացած, ոչ արդիական, անհարգի, և արդեն հիմա կենսականորեն անհրաժեշտ է ունենալ ավելի նոր մի բան: Իսկ եթե միանգամից երեքը վերցնեք, ապա լավ գեղչեր կարվեն: Եվ մարդիկ գնում են հինգ հավերժական թավաներ երկուսի գնով (թեև միայն մեկն էր պետք՝ սովորականը), հավաքածու՝ 10 սուպերդանակներից, որոնք հեշտությամբ կկտրեն ավոկադոն (թեև տանը լիքը դանակ կա, իսկ ավոկադո երկիր չի ներմուծվում), գիրք կարդալու գեղեցիկ լապտեր, որն աշխատում է USB-ով (թեպետ լապտերի տերը թղթե գիրք վերջին անգամ կարդացել է 20 տարի առաջ): Բայց և նոր պահանջարկներ ստեղծող երևակայությունը հետզհետե ինքն իրեն սպառում է: Տներ, ավտոմեքենաներ, համակարգիչներ, բջջային հեռախոսներ, գաջետներ... Իսկ հետո՞: Երբ 2008 թվականին հայտնվեցին սենսորային էկրանով և ինտերնետ կապով առաջին սմարթֆոնները, նրանք իսկական հեղափոխություն արեցին՝ լինելով սգբունքորեն նոր բան: Բայց ի՞նչը պետք է այսօր մարդուն ստիպի ամեն տարի սմարթֆոն գնել, եթե «հինը» հրաշալի աշխատում է: Եթե շուտով չհայտնվեն «անհրաժեշտի» հեղափոխական առաջարկներ, ապա տնտեսական կոլապս հնարավոր է արդեն այսօր: Որքան էլ ձգտեն մեզ պարտադրել մեր ունեցածի ամենամյա, ամենամյա նորացումը, այդ գործընթացն անվերջ չէ: Վաղ թե ուշ անհնար կլինի ինչ-որ մեկի հաշվին փող վաստակելը. մարդկանց քանակը երկրագնդի վրա սահմանափակ է, իսկ նրանց մեծ մասը՝ անվճարունակ: Սպառման նոր շուկաներ չկան: Իսկ ինչպես գիտենք, կապիտալիզմը չի կարող գոյատևել առանց պահանջարկի մեծացման, առանց նոր շուկաների նվաճման, կապիտալիզմը չի կարող չընդլայնվել, իսկ դա նշանակում է՝

նա դատապարտված է: Պետք է ասել, որ դասական կապիտալիզմի վերջը շատերն են կանխատեսել և կանխատեսում են ցայսօր, սակայն հիմնականում խոսքը նրա փոխակերպման և նոր իրողություններին հարմարվելու, սեփականության նոր ձևերի և արտադրության նոր միջոցների մասին է (դրանց հիմա վերագրում են և՛ փողն ինքնին, և՛ նույնիսկ մարդկանց): Խնդիրը համարում են մարտավարական՝ այն հանգեցնելով կապիտալիզմի նոր՝ «պրոգրեսիվ» ձևերի որոնմանը: Իսկ իրականում խնդիրն առավել խորն է և պահանջում է ոչ թե փոփոխություններ, այլ միանգամայն այլ բան՝ հիմնված սկզբունքորեն այլ գաղափարախոսության վրա: Մենք այսօր ընդհուպ մոտեցել ենք այդ նորի ստեղծման անհրաժեշտությանը: Իսկ առայժմ, չնայած կապիտալիզմի խնդիրների ակնհայտությանը, դեռ շարունակում ենք ապրել ըստ այդ տնտեսական մոդելի՝ շարունակելով առաջնորդվել նրա գաղափարախոսությամբ և փիլիսոփայությամբ, իսկ փաստացի՝ կրոնով: Այո՛, որքան էլ տարօրինակ է, կապիտալիզմը որոշակի կրոնական հայացքների և դրույթների հաղթանակի արդյունք է: Չէ՞ որ մենք չենք կարծում, որ աշխարհում որևէ բան կարող է առանց պատճառի լինել:

Նախամարդը դեռ շատ բան չուներ և շատ բան անել չէր կարող, բայց նրա մեջ զարգացած էր մի խիստ կարևոր ունակություն՝ մտածելու կարողությունը: Ժամանակի ընթացքում նա էնպիրիկ կերպով, շնորհիվ սեփական փորձի, պարզեց կյանքի երեք կարևոր սկզբունքներից երկուսը՝ էնտրոպիայի (քաոսի) չնվազելն ու պատճառականության սկզբունքը: Բնականաբար, այսպիսի բարդ տերմինաբանության մարդը դեռ չէր տիրապետում, բայց տեսնում էր, որ իր հյուղակը, նիզակը կամ կացինը իրենք իրենց չեն հայտնվել, այլ հեղինակ, ստեղծող են ունեցել. դա հենց ինքն էր: Ընդ որում, ամբողջ ստեղծվածը ժամանակի հետ փչանում ու կործանվում էր: Տեսնաբար, խիստ տրամաբանական էր ենթադրել, որ այն ամենը, ինչ

շրջապատում է մարդուն, նույնպես հեղինակ և արարիչ ունի: Եվ հենց ինքը՝ մարդը, նույնպես ինչ-որ մեկի ստեղծագործությունն է: Նման տրամաբանական դատողությունների արդյունքը եղավ մարդու կողմից Աստծու՝ այս աշխարհի արարչի հայեցակարգի ստեղծումը: Իսկ եթե արարիչ է եղել, համապատասխանաբար, պետք է լինեին և այդ արարչի կողմից սահմանված ինչ-որ կանոններ: Մարդը՝ որպես հասարակական էակ, միշտ հանրության մեջ հարաբերությունները կարգավորող ինչ-որ գաղափարախոսական, բարոյական դրույթների, համակարգերի կարիք է ունեցել: Եվ այդպիսի առաջին օրենքները ձևակերպվեցին կրոնի միջոցով. դրանք կյանքի որոշակի չգրված կանոններ էին՝ աշխարհի արարչից:

Գլխավերևում անծայրածիր տիեզերքը մարդուն որոշակի պատկերացում էր տալիս իր վիթխարի չափերի մասին, և հենց այնտեղ՝ վերևում, մարդը փնտրում էր իր Աստծուն (կամ աստվածներին): Իրենց կապը տիեզերքի հետ մարդիկ գիտակցել են միշտ և հենց այնտեղ են տեսել իրենց արարիչներին, առաջնորդներին, նախահայրերին, ուսուցիչներին և այլն: Բոլոր աստվածները մարդկանց մոտ իջնում էին երկնքից, աստղերից: Եվ լիովին տրամաբանական էին փորձերն աստվածների պանթեոններում (շումերական, փոքրասիական, հինեգիպտական, հունական, հռոմեական և այլն) արտացոլել տիեզերքի կամ Արեգակնային համակարգի կառուցվածքը: Սակայն այն, ինչի հետ գործ ունի այսօր մեր քաղաքակրթությունը, այլ ծագում ունի: Որքան էլ տարօրինակ հնչի, բայց կապիտալիզմի գաղափարախոսական ակունքներն ընկած են դեռևս Տիև Կտակարանի դրույթներում. Աբրահամին առաքինի կյանքի համար խոստացված էին ոչ թե հոգևոր, այլ նյութական բարիքներ՝ լավագույն արտադրյալներ, պարարտ հողեր: Կյանքի ամբողջ իմաստը նյութական բարիքների, հարստության ապահովումն էր, ինչը հատկանշական է պարզունակ, միաշափ կեցության համար: Նկատենք, որ նյութական բարիքն

ինքնին դատապարտելի չէ: Կարողություն և ունեցվածք նշանակող «բարիք» բառը բոլոր լեզուներում դրական երանգավորում ունի: Խնդիրն այն էր, որ զարգացման այդ փուլում նյութականը, ըստ էության, միակ և գլխավոր նպատակն էր: Եվ այդ նպատակին հասնելու ճանապարհին մարդուց պահանջվում էր միայն անխոս հպատակություն և խոնարհում Աստծուն, աղոթքներ, ինչպես նաև՝ զոհաբերություն: Որքան էլ տարօրինակ է, բայց գրեթե երեք հազար տարի անց ոչինչ չի փոխվել: Պարզապես հին ծեսերը տեղափոխվել են նոր իրականություն: Մարդիկ առաջվա պես ակտիվորեն խոնարհվում և աղոթում են, բայց այլ աստվածությունների՝ տեխնոլոգիական աշխարհի արգասիքների, բրենդների: Եվ զոհ մատուցելը նույնպես ոչ մի տեղ չի անհետացել: Միայն թե անմեղ գառի արյան փոխարեն զոհասեղանին հայտնվում է անգին մի բան՝ սեփական հոգին, մարդու անկրկնելի անհատականությունը: Եվ այս ամենը՝ նյութական բարիքներ ստանալու, իր աճող պահանջմունքները բավարարելու հույսով: Մենք ապրում ենք մի ժամանակաշրջանում, երբ մարդը ստիպված է դառնալ անդեմ՝ ոչնչի մասին չխորհող մեծամասնության մասը, և սարսափելի, անքնական բան անել՝ հրաժարվել իր էությունից՝ հանուն ոչ պարտադիր ցանկությունների: Անհատի բացառիկությունն ու կամքի ազատությունը մարդու գլխավոր արժեքներն են, որ նրան տրված են ի ծնե: Սակայն այժմյան քաղաքակրթական մոդելն ստիպում է զոհել այդ արժեքները՝ դրանք տալով խմբին, մեծամասնությանը, իսկ իրականում՝ ոչնչացնելով և տարրալուծելով: Այդպիսին է մեր կյանքի այսօրվա փիլիսոփայության էությունը: Ինչպես տեսնում ենք, տնտեսությունն ու բարոյական արժեքների համակարգն ամուր կապակցված են:

ՃԱՆԱՊԱՐՏ, ՈՐՆ ԱՅԼԵՎԱՍ ՉԻ ՏԱՆՈՒՄ ԴԵՊԻ ՏԱՃԱՐ

Դիտարկելով ժամանակակից արևմտյան քաղաքակրթության ճգնաժամը (իսկ վերջին հաշվով հենց արևմտյան քաղաքակրթությունն է հաստատել իր կանոնները Երկրի վրա)՝ մենք չենք կարող չանդրադառնալ եկեղեցու և ընդհանրապես կրոնի խորագույն ճգնաժամին: Չէ՞ որ այն ներկա քաղաքակրթության քաղկացուցիչ և անբաժանելի մասերից է: Յանկացած համակարգի մահը վկայում է նրա անկենսունակության, լուրջ, չլուծված ներքին խնդիրների մասին: Կարո՞ղ ենք մենք արդյոք խոսել եկեղեցու՝ որպես ինստիտուտի մահվան մասին: Այդ հարցին հեշտ է պատասխանել՝ դիտելով, թե ինչ էր եկեղեցին նախկինում և ինչի է հասել այսօր: Ի սկզբանե եկեղեցին իրեն դիրքավորում էր որպես քաղաքական իշխանության մի ճյուղ, իսկ իրականում հենց ինքն իշխանությունն էր: Եկեղեցու՝ որպես ինստիտուտի սրբազնությունը միայն արտաքուստ էր: Մինչդեռ բովանդակությամբ այն մարդկանց ղեկավարելու հզոր միջոց էր, և նրա ազդեցությունը մարդու կյանքի վրա վիթխարի էր: Աստծու օրենքը հասարակության հիմնական օրենքն էր, և ոչ մի կարևոր հարց հասարակության մեջ չէր կարող լուծվել առանց եկեղեցու ներկայացուցիչների անմիջական մասնակցության և օրհնության: Սակայն այսօր եկեղեցին գրեթե ամբողջությամբ կորցրել է իր դերը, այլևս քաղաքական իշխանություն չէ և մարդկությանը կառավարելու գործերին իրապես խառնվել չի կարող: Ստիպելով նահանջել Աստծուն՝ կապիտալիզմը նաև եկեղեցու ինստիտուտին ստիպեց նահանջել: Սկսվեց նրա այլասերման աստիճանական գործընթացը, որն ի վերջո հանգեցրեց ծիսականացմանը. այսօր եկեղեցին ոչ թե իմաստների կրող է, այլ հիմնականում ծեսեր է ապահովում: Կտրուկ նվազում է եկեղեցի հաճախողների թիվը, եկեղեցական շինությունները զանգվածաբար վաճառվում կամ

վարձով են տրվում առևտրային կազմակերպություններին: Եկեղեցին փուլ առ փուլ հեռանում է իր սկզբունքներից և իր իսկ բարոյականությունից: Տաճարամյակների սահմանագծին Տովհաննես Պողոս II-ի գղջումը՝ կաթոլիկ եկեղեցու՝ բազում դարերի ընթացքում գործած սխալների և մեղքերի համար հավատացյալներին եկեղեցու ինստիտուտի արդիականացան և նորացման, նրան իրական կյանքին, ժամանակակից մարդու հետաքրքրություններին և ձեռքբերումներին մոտեցնելու հույս տվեց: Սակայն հետագա գործընթացները ցույց տվեցին, որ ճգնաժամը շատ ավելի խորն է, և նույնիսկ անցյալի սխալների մասին ազնվորեն խոսելը չի կարող փոխել իրողությունը. եկեղեցու երբեմնի հզոր և անսասան կառույցը կործանվում է: Կյանքի՝ արագություն հավաքող գնացքից հետ չմնալու փորձերում եկեղեցին գաղափարախոսության առումով ապակողմնորոշված վիճակում հայտնվեց. Եվրոպայի որոշ Լյութերական և ավետարանչական եկեղեցիներում միասնական ամուսնությունների գրանցումն ամենաարտառոգ ու հակաուրամբանական օրինակը չէ: Իսկ ներկայիս պոնտիֆիկոսի 2020 թվականի նախօրեին հրապարակված սուրբծննդյան ուղերձը, թե Եվրոպան արդեն դադարել է քրիստոնեական լինել, ավելի շատ նման էր դատավճռի:

Կրոնի ճգնաժամի պատճառները հասկանալու համար արժե նախ և առաջ հայացք նետել հիմքերին, փաստաթղթերին, որոնք նրա «հիմնական օրենքն» են: Մենք կխոսենք միայն կանոնական տեքստերի մասին, քանի որ հենց նրանք են ընկած հիմքում, հենց նրանք են մեկնակետը: Եվ ուսումնասիրելով դրանք՝ կտեսնենք, որ արդեն արբահամական կրոնների հիմքում բազում լուրջ հակասություններ կան: Ըստ Սուրբ Գրքի՝ Սուրբ Տոգին քառսից ստեղծեց կառուցվածքներ, ամեն ինչ՝ ներառյալ մարդուն: Եվ տեսավ, որ դա բարի էր: Ի դեմս Սուրբ Տոգու՝ մենք տեսնում ենք ակնհայտ կառուցավորողի՝ նրան, ով արարում է՝ արարումը հակադրելով կործանմանը,

քառսին: Մարդն ստեղծվել էր ոչ այլ կերպ, քան Արարչի կերպարանքով ու նմանությամբ (կամ արարիչների, էական չէ), այսինքն՝ ըստ համանմանության հենց իրեն՝ Ստեղծողին, կառուցաստեղծին: Իսկ ահա ավելի ուշ ի հայտ են գալիս տարօրինակությունները: Ինչ-որ մեկը, ով իրեն Աստված է կոչում, տարօրինակ կերպով արգելում է Ադամին ուտել չարի և բարու իմացության ծառի պտուղը, որպեսզի նա չդառնա այնպիսին, ինչպիսին ինքն է (ինչպես աստվածներն են): Ինչո՞ւ էր, ուրեմն, Ադամն ստեղծվել բանական և ազատ կամքով, եթե հետո նրան պետք է արգելվեր գործել այդ բանականությամբ և ազատ կամքով: Նա, ով ստեղծել էր Ադամին, որոշակի ծրագրեր ուներ նրա վերաբերյալ, օրինակ՝ կենդանիներին անուններ տալը: Դա մաքուր ստեղծագործություն էր, ազատ բանականության աշխատանք: Եվ այստեղ ի հայտ է գալիս մեկ այլ ուժ, որը բանականության այդ գործածումը սահմանափակում է: Ընդհանրապես, ինչո՞ւ Դրախտի պարտեզում, որտեղ բնակեցրել էին Ադամին, մի ծառ կա, որից չի կարելի ուտել: Իսկ ո՞վ պետք է ուտեր այդ պտուղները: Իրենք՝ աստվածները: Վերջիվերջո այդ ծառը կարելի էր պարզապես չտնկել Դրախտի այգում կամ առանձնացնել մարդուց: Արարիչն ստեղծեց Ադամին իր կերպարանքով և նմանությամբ: Իսկ արգելքը նպատակ էր հետապնդում, որ Ադամը չդառնա Աստծու նման՝ ուտելով այդ պտուղը: Աբսոլյուտ է: Բացի այդ, այնտեղ՝ Սուրբ Գրքում, մենք տեսնում ենք առաջին սուտը՝ կմեռնես, եթե ուտես այդ ծառի պտուղից: Ադամը կերավ և չմեռավ: Եվ ո՞վ է այդ դեպքում «գայթակղող օձը», որը բացահայտեց այդ խաբեությունը: Իսկ չէ՞ որ նա բացարձակ ճշմարտությունն էր ասում և՛ պտղի իրական հատկությունների, և՛ պտղի արգելված լինելու պատճառների մասին: Գուցե նա պատգամաբե՞րն էր Արարչի, որն այդ պահին բացակայում էր: Ինչ որ է. Աստված նրան պատժեց: Պատժեց ճշմարտության համար: Իսկ մարդկանց ոչ միայն պատժեց՝ վտարելով Դրախտի

պարտեզից, այլև անիծեց՝ հակառի քրտինքով կվաստակեր
 ձեր հացը, երկունքի ցավերով կծնեք ձեր զավակներին: Ողջ
 բիրլիական պատմությունն սկսվում է տարօրինակ դեպքերից՝
 Աստծու խաբեությունից, նշմարտության համար պատժից,
 հանաչողության ձգտման համար պատժից, մարդուն տրված
 անեծքից: Եվ հետո ևս տարօրինակությունները շարունակվում
 են: Ադամի ու Եվայի որդին սպանում է իր եղբայր Աբելին: Գո-
 ռոզամտությունից, նախանձից, Աստծու բարեհաճությունը շա-
 հելու ցանկությունից: Մենք գործ ունենք բացարձակ չարիքի
 դրսևորման հետ: Իսկ ինչպե՞ս վարվեց չարիքի այդ աղբյուրի
 հետ արդարադատ Աստված: Տանդիմանեց: Եվ պարզապես
 ուղարկեց նրան հեռու՝ այլ երկրներ: Դա էլ քիչ էր՝ նա Կայենին
 ու նրա սերունդներին անձեռնմխելի հայտարարեց: Իսկ հետո
 պարբերաբար խիստ բարկանում էր, որ մարդիկ (իմա՝ Կայենի
 սերունդները) իրենց պատշաճ չեն պահում: Աստվածաշնչի
 հետագա դեպքերը մեզ ցույց են տալիս մի Աստծու, որն ավե-
 լի շատ ինչ-որ հավատաքննիչի և վերակացուի դերում է: Իսկ
 ահա Սուրբ Տոգու և նրա գործերի մասին մենք հետագայում
 չենք լսում: Այնպիսի զգացողություն է առաջանում, որ Երկրի
 վրա հաստատվել է ինչ-որ կուսակալի իշխանություն, որը կա-
 ռավարում էր աշխարհը շատ յուրօրինակ ձևով՝ հիմնականում
 դաժանորեն պատժելով ցանկացած մեղանչման և չենթարկ-
 վելու համար: Տամաշխարհային ջրհեղեղը ամբողջ կենդա-
 նականի ոչնչացման՝ օմնիցիդի փորձ է: Դա զայրույթի մեջ
 դաժան լինելու վառ օրինակ է: Չէ՞ որ մենք հասկանում ենք, որ
 եթե ջրհեղեղ է արվել, ապա Երկրի վրա մահացել են, օրինակ,
 մեծ թվով երեխաներ, որոնք ընդհանրապես կապ չունեին այդ
 ամենի հետ: Տա, և դժվար թե բոլոր մեծահասակները, բացի
 Նոյից, դժոխքի ծնունդ էին: Բայց սպասե՛ք, բացի իր պահ-
 վածքով մեղանչած մարդկությունից, ոչնչացան և մեծ թվով
 կենդանիներ: Եվ ակնհայտորեն նրանց ոչ բոլոր տեսակները
 փրկվեցին Նոյյան տապանում: Ինչ-որ ժամանակ Ադամին

որպես սնունդ տրված էին միայն պտուղներ և սերմեր. միս նա չէր ուտում, իսկ Կայենն անասնապահությամբ էր զբաղվում լոկ կենդանիներին զոհ մատուցելու, և, հնարավոր է, կաթի և բրդի համար: Ո՞րն էր, ընդհանրապես, կենդանիներին Աստծուն զոհաբերելու իմաստը: Ի՞նչ մի հրաշալի բան էր տեսնում Աստված գառանը կամ ուլին իր համար մորթելու մեջ: Չէ՞ որ նա հաճույքով էր ընդունում այդ զոհերը: Տեղեղից հետո 8 կենդանի մնացած մարդկանց (Նոյին և իր ընտանիքին) և նրանց դեռ շատ սերունդների կյանքի համար հանգիստ կհերիքեին պտուղներն ու բույսերը, բայց Աստծու հատուկ ուղերձով այդոնհետ մարդուն թույլատրվեց միս ուտել, այսինքն՝ անել այն, ինչ մինչև ջրհեղեղը ահավոր մի բան էր: Ջրհեղեղը, թվում էր, պետք է միավորեր մի նավում փրկված մարդկանց ու կենդանիներին: Բայց մենք տեսնում ենք այդ ուրվագծվող ներդաշնակության խախտումն ու փլուզումը:

Ջայրույթն է, որ բնութագրում է Աստծուն բիբլիական պատմության ամբողջ ընթացքում: Ջայրույթի մեջ նա ջրհեղեղ արեց: Տեսող Նոյին հայտնեց, թե ահա, այդպես ստացվեց, բայց այլևս այդպես չի անի. ապրեցե՛ք: Խաբեություն էր: Քանզի թեև ոչ ամբողջ Երկրի մասշտաբով, բայց նման պատժիչ գործողություններ նա, այնուամենայնիվ, կազմակերպեց: Եվ նորից զայրույթով, քանզի Սոդոմն ու Գոմորը թաղվել էին մեղքի մեջ: Եվ նորից ավելորդ է խոսել այն մասին, որ այդ քաղաքներում չէին կարող ապրել միայն մոլագարներ, բռնաբարողներ և այլասերվածներ: Այնտեղ նաև բազում երեխաներ կային, և ակնհայտորեն՝ նորմալ մարդիկ. նրանց ինչո՞ւ այրել այդ բիբլիական Տիրոսիմայի և Նագասակիի կրակների մեջ: Եվ ինչո՞ւ հանկարծ կրկին որոշվեց փրկել միայն մեկ կոնկրետ ընտանիքի: Ինչո՞ւ նա փրկեց Ղովտին: Տրեշտակներին տրված հացի և գիշերելու տեղի համար, նրա համար, որ Ղովտը թույլ չտվեց ամբոխին նրանց բռնաբարել՝ փոխարենը խաժամոժին առաջարկելով իր դուստրերին: Այսինքն, կար կաշառք ու

հովանավորչություն: Նաև Ղովտը փրկվեց, որովհետև նրա համար բարեխոսել էր հարազատ քեռին՝ Աբրահամը: Սա արդեն սովորական քավորսանիկություն է: Այս ամենով հանդերձ՝ Աստված Ղովտի կնոջը, չգիտես ինչու, աղի սյուն դարձրեց լոկ այն պատճառով, որ նա չհնազանդվեց և հետ նայեց: Աստված դա արեց զայրույթի մեջ, ինչը դժվար չէ կռահել: Տարօրինակ և անիմաստ դաժանություն, պատիժ՝ հրամանը չկատարելու, չենթարկվելու համար: Այո՛, Աբրահամի մասին պատմության մեջ Աստված ուղարկեց հրեշտակին, որպեսզի նա չսպանի իր որդուն: Բայց չէ՞ որ սկզբում հենց Աստված էր նրան մղել այդ քայլին՝ սեփական որդու սպանությանն ի նշան հավատի: Նետո Աստված դույզն-ինչ չի վրդովվում, որ Աբրահամը խաբում է փարավոնին և իր կնոջը նրան կնության տալիս՝ նրա համար մեծ փրկագին ստանալով և փաստացի կավատ դառնալով: Աստված Կարմիր ծովում խորտակեց եգիպտացիների բանակն այն բանի համար, որ նրանք վրդովված էին ոսկու կողոպուտից, ինչին Աստված ինքն էր մղել Մովսեսին և նրա տոհմակիցներին: Այսպիսի գործերից հետո Աստված մարդկանց տվեց տասը պատվիրան՝ ինչպես պետք է (կամ ինչպես պետք չէ) ապրել, որոնք հենց ինքն էլ անընդհատ ցուցադրաբար խախտում էր: Եվ անմիջապես դրանից հետո ծավալվում է ոսկե հորթի պատմությունը, որում առաջին պատվիրանի կատարումն ամենակարևորն է, ավելի կարևոր, քան մարդկային կյանքը: Ինչպե՞ս արձագանքեց Մովսեսը ոսկուց ձուլված հորթին: «Այդ ժամանակ Մովսեսը կանգնեց համբարի մուտքի մոտ ու ասաց. «Ո՞վ է Եհովայի կողմը: Ինձ մո՛տ թող գա»: Եվ Ղևիի բոլոր որդիները հավաքվեցին նրա մոտ: Նա ասաց նրանց. «Այսպես է ասում Եհովան՝ Իսրայելի Աստվածը. «Ձեզնից ամեն մեկը թող իր սուրբ իր կողքին կապի: Անցե՛ք համբարի միջով, մի մուտքից մյուսը գնացե՛ք-եկե՛ք, և ամեն մեկն իր եղբորը, ամեն մեկն իր մերձավորին և ամեն մեկն իր ընկերոջը թող սպանի»»: Ղևիի որդիներն արեցին այնպես,

ինչպես Մովսեսն ասել էր, և այդ օրը ժողովրդից մոտ երեք հազար մարդ ընկավ» (Ելք 32. 26-28): Որովհետև գլխավորն Աստծու իշխանությունն էր և նրան ենթարկվելը, իսկ ոսկին մարդկանց բաժինն է: Խոնարհումը ոսկուն մարտահրավեր էր Աստծու միանձնյա իշխանությանը և այդ պատճառով պետք է դաժանորեն պատժվեր: Աստված միակն է, մնացյալը ենթակա էր ոչնչացման, այդ թվում և մարդիկ, որոնք երկմտել էին դրանում: 10 պատվիրանների հայտնվելուց հետո մարդիկ և տիրակալներն իրենց պահվածքում գեթ աննշան չփոխվեցին: Օրինակ, սպանելով մարտում մահացու վիրավորված թագավորին՝ Սավուդին, նրա իսկ խնդրանքով, որպեսզի չտանջվի, ամառեկացին նրա թագը բերում է Դավիթ թագավորին, պատմում պատահածի մասին և խոնարհվում նրա առջև, ինչի համար անմիջապես... սպանվում է Դավթի հրամանով (Թագավորություններ Բ. 1. 1-16): Ահա ինչպես էր այդ նույն Դավիթ թագավորը պահպանում 10 պատվիրանները՝ նվաճելով ամմոնացիների Ռաբաթ քաղաքը. «Նա դուրս հանեց այդտեղի ժողովրդին և դրեց սղոցի և երկաթե կամնասայերի և երկաթե տապարների տակ և նրանց աղյուսի փոռով անցկացրեց: Եվ այսպես վարվեց ամմոնացիների բոլոր քաղաքներում»: (Թագավորություններ, Բ. 12. 31): Եվ իհարկե, նորմալ էր, որ աստվածաշնչյան մարգարեները մարդկանց էին սպանում: Եղիան սեփական ձեռքերով սրի է քաշում այլ պաշտամունքի՝ Բաալի 450 սպասավորների, իսկ նրա աշակերտ Եղիսեն դա անում է Աստծու խոսքով. իր ճաղատը ծաղրելու համար անհիծում է 42 երեխայի, և երկու արջ նրանց պատառոտում են (Թագավորություններ Դ. 2. 23-24): Ամբողջ հինկտակարանային գաղափարախոսության մեջ գլխավորը Աստծուն անխոս ենթարկվելն էր: Վախն ու հնազանդությունը մարդու վրա ներագդելու այն կարգն էին, որն ուրվագծվում է Տին Կտակարանում ըստ Աստծու գործերի: Եվ բազում, անթիվ-անհամար պատիժներ: Բայց եթե Աստված ամեն ժամ մեզ ինչոր

բանի համար պատժում է, ապա մենք միայն դա ենք սովորում: Ուրեմն ինչո՞ւ զարմանալ մարդկային դաժանության վրա. մարդիկ գիտեն՝ ումից օրինակ վերցնել: Մի հետաքրքրասեր հետազոտող հաշվել է, որ Սուրբ Գրքում բացասական իմաստ ունեցող բառերը մոտավորապես 6 անգամ ավելի շատ են, քան դրականները: Սա մի գդալ կուպր չէ մեղրի տակառում: Սա կուպրի նորմալ տակառ է: Ասենք, սիրուն վերաբերող խոսքեր Աստվածաշնչում հանդիպում են 537 անգամ: Ընդ որում, ստրուկների մասին խոսվում է 1094 անգամ, իսկ արյան, մահվան, վախի, սպանությունների և սարսափի մասին՝ 5348 անգամ: Սուրբ Գրքում ամենատարածված բառը «գոհ»-ն է (1279 անգամ), «ոսկի»-ն հանդիպում է 606 անգամ, «արծաթ»-ը՝ 526, այն դեպքում, երբ «խիղճ»-ը գործածվում է ընդամենը 32 անգամ: Խոսքերն այստեղ, իրոք, ավելորդ են: Եվ այս ամենից հետո մի՞թե զարմանալի է, որ մարդու վերաբերմունքն Աստծու և տիեզերքի հանդեպ, մեղմ ասած, տարօրինակ է: Մի՞թե զարմանալի է, որ մարդու մասին խոսելիս գործածվում է «Աստծու ծառա» արտահայտությունը: Ծառա: Այսօր կրոնը մեզ ներշնչում է, որ մենք ինչ-որ նախաստեղծ մեղքի ժառանգորդ ենք, որը 6 հազար տարի առաջ մեկ ուրիշն է գործել: Մեզ փորձում են համոզել, որ մենք սխալմունք ենք: Ողջ համակարգը նպատակ է դրել ներշնչելու մարդուն՝ ծնվածդ օրից մեղանչական ես և մեղավոր, այսինքն, կառավարելի ես: Պատվիրաններն իրենց ձևով և բովանդակությամբ արգելակներ են. պետք չէ անել այս կամ այն: Իսկ ի՞նչ է պետք անել: Այս մասին ընդհանրապես ոչ մի խոսք չկա: Թեև որոշակի ակնարկներ կան և դրանք խտրական բնույթ են կրում յուրայինների և մնացյալի համար, որոնց հետ ինչպես ուզեն, կարող են վարվել. «Քո եղբորից շահ չառնես՝ փողի շահ կամ ուտելիքի շահ և կամ որևիցե բանի, որ շահով տրվում է: Օտարականից շահ առ, բայց քո եղբորից շահ չառնես, որ քո Եհովա Աստվածը քո ամեն ձեռնարկած գործում քեզ օրհնի այն երկրում, ուր դու

մտնելու ես այն ժառանգելու համար» (Բ. Օրենք 23. 19): Նկատենք, որ բոլոր սահմանափակող, արգելող պատվիրանների անխոս պահպանումը ոչնչով չի մղում մարդուն արարման: Իսկ չէ՞ որ մարդու կյանքի իմաստը նախևառաջ արարումն է: Այնինչ նրա առաջին ստեղծագործական հանձնառությունը Երկրի վրա՝ անվանումներ տալ կենդանի բնությանը, այդպես էլ մնաց միակը:

Եթե մի պահ հետ կանգնենք ընդունված մեկնություններից և լույս Սուրբ Գրքի մեզ առաջարկած փաստերը գործարկենք, ապա ի սկզբանե Աստվածաշնչում կնկատենք երկու հիմնադրույթների՝ կառուցողականի և ապակառուցողականի, արարողի և կործանողի հակամարտություն: Ստացվում է, որ Տայր Աստվածն ու Սուրբ Տոգին անհաշտ ախոյաններ են: Դիպեկտիկական հակասությունը, բախումը Տայր Աստծու և Սուրբ Տոգու միջև երևի պետք է լուծեր Տիսուսը, որը եկել էր նոր փիլիսոփայությամբ: Ներկայիս եկեղեցին Սուրբ Երրորդությունը (Տայր, Որդի և Սուրբ Տոգի) համարում է միասնական մի բան: Բայց նրանց գործերն այլ բան են ասում: Օրինակ, Քրիստոսի առակը սերմնացանի մասին ուղղակի հակասում է Տայր Աստծու արարքներին՝ Տամաշխարհային ջրհեղեղին, Սողոմ-Գոմորի պատմությանը: Տիսուսը փորձեց նոր իմաստ հաղորդել մարդու կյանքին, նոր կանոններ առաջարկել, նյութականը ենթարկել հոգևորին, հաստատել հոգու առաջնությունը մարմնի ցանկությունների նկատմամբ: Սակայն Քրիստոսի գաղափարները շատ կարճ դիմացան, ստույգ մինչև այն պահը, երբ քրիստոնեությունը դիտմամբ անքակտելիորեն ամրակցվեց Տին Կտակարանին միասնական Աստվածաշնչի ձևաչափով՝ դառնալով անհամատեղելի համաձուլվածք: Մենք հազվադեպ ենք խորհում Սուրբ Գրքի պարադոքսալության մասին, որը բաղկացած է այդքան տարբեր և ըստ էության միմյանց հակասող գրքերից՝ Տնգամատյանից և Ավետարանից: Իսկ եթե մտորում ենք, ապա ստանում ենք աստվածաբանների

մեկնությունները՝ առավել շատ հակասություններով և պարադոքսներով լի: Ժամանակի ընթացքում քրիստոնեական ձևը դուրս է մղել քրիստոնեական բովանդակությունը: Դատելի է ունեցել ոչ միանգամից. վաղ միջնադարում շատերը դեռ հասկանում էին նոր ուսմունքի խորունկ էությունը: Նայտնի է, օրինակ, որ հայ աստվածաբանները քրիստոնեությունը դիտարկել են որպես վերածնունդ, որպես վերադարձ մարդկության ինչ-որ կարևոր արմատների, նրա էությանը: Քրիստոնեության նյութականացման և «երկրայինության» հետ անհամաձայնությունը բազմաթիվ աղանդներ ծնեց, իսկ ժամանակի ընթացքում հանգեցրեց քրիստոնեական նոր դավանաբանությունների, որոնք դարձան հռոմեական եկեղեցու ռիսերիմ թշնամիները և դաժանորեն հետապնդվեցին: Այսօր մենք ստիպված ենք ընդունել, որ մի քանի դարի հակամարտությունից հետո քրիստոնեության մեջ վերջնականապես հաղթանակեց Տին Կտակարանի նյութականությունը: Եվ ինչի՞ ալն հանգեցրեց:

Մենք խոսակցությունը սկսեցինք նրանից, որ ներկայիս արևմտյան փիլիսոփայությունն ուղիղ ժառանգորդն է հինկտակարանային դրույթների. չէ՞ որ հենց այնտեղ ենք մենք գտնում կապիտալիզմի գաղափարական հենքը՝ կողմնորոշում առ նյութական բարիքները՝ որպես վերջնականատակ: Ընդ որում, այդ նույն Տին Կտակարանում մենք պայմանագիր ունենք՝ կնքված մարդու և Աստծու միջև, որը պահանջում է չխախտել 10 հիմնական սկզբունքները՝ պատվիրանները, բարգավաճման և բարեկեցության հանապարհին: Բայց ահա, գործնականում պարզվում է, որ հենց այդ տարրերից հրաժարումն է մարդուն արագ մոտեցնում նյութական հարստության: Ստացվում է, որ այդպիսի օրենքներ առաջարկելով՝ Աստված խաբել է մարդկանց, քանի որ այդ օրենքների պահպանումը չէր կարող և չի կարող մարդուն հարստություն պարգևել: Այս ամենից հետո այնքան էլ զարմանալի չէ,

որ մարդն իրեն խաբված զգաց: Փորձով հայտնաբերեց, որ առաջարկվող միջոցներն իրեն չէին հասցնում հայտարարված նպատակին: Եվ գործնականում բոլոր պատվիրանների ժխտումը դարձավ այսօրվա գործընթացների շարժիչ ուժը: Եթե որևէ մեկի խոսքերը մեզ համար արժեզրկված են, ապա այդ խոսքերի հեղինակը ևս մեզ համար շատ բան չարժե: Եթե մենք ժխտում ենք Աստծու ասածը, ապա վերջին հաշվով ժխտում ենք և իրեն: Տենց այստեղ գործում է և հակառակը. եթե մենք առանց Աստծու գլուխ ենք հանում, ապա նրա ասածը ևս մեզ համար կարևոր չէ: Այսօր մենք մեր գործողությունները Սուրբ Գրքով չենք չափում: Եկեղեցու հիմքից մի հսկա քար են հանել: Արժե՞ արդյոք զարմանալ, որ այդ շենքը թեքվել է և ցանկացած պահի սպառնում է փլուզվել:

ԿՐՈՆԻ ՃԳՆԱԺԱՄԻՑ՝ ՆԱՎԱՏԻ ՃԳՆԱԺԱՄ

Խոսելով ժամանակին արևմտյան քաղաքակրթության գաղափարական առանցքը դարձած քրիստոնեական եկեղեցու ճգնաժամի մասին՝ մենք չպետք է մոռանանք, որ այսօր ճգնաժամ են ապրում և մյուս կրոնները: Ազգայնամոլական և ահաբեկչական արմատական կազմակերպությունները, որոնք ղեկավարվում են Ղուրանով (իսկ իրականում՝ քողարկվում նրանով) ընդամենը հենց իր՝ ճգնաժամ ապրող իսլամի դրսևորումներից են, որն ինքնին դաժանություն և անհանդուրժողականություն չի քարոզում: Բավական է հիշել, որ սկզբում՝ Արաբական խալիֆայության ժամանակներում, մահմեդական աշխարհն առաջընթաց ապրող աշխարհ էր. ծաղկում և բարգավաճում էր գիտությունը, բժշկությունը, գրականությունը, փիլիսոփայությունը, հարտարապետությունը: Սակայն այսօր մենք գործ ունենք կրոնների ընդհանուր արժեզրկման հետ:

Արևելյան աշխարհը բոլորովին այլ փիլիսոփայական ավանդույթների և կրոնների ժառանգորդ է, այլ գաղափարախոսություն է և բարոյական արժեքների բոլորովին այլ համակարգ: Բայց, այնուամենայնիվ, այն ներքաշված է ընդհանուր տնտեսական գործընթացների, կապիտալիզմի համաշխարհային համակարգի մեջ: Արևմտյան քաղաքակրթությամբ ստեղծված գլոբալ տնտեսությունը՝ հիմնված հինկտակարանային դրույթների վրա, կրոնական տեղային առանձնահատկությունները մղել է հետին պլան. Էկոնոմիկան է ամեն ինչ ղեկավարում: Իսկ Էկոնոմիկայի հետ մեկտեղ աշխարհում ամենուր տարածվել են նաև արևմտյան քաղաքակրթության բոլոր խնդիրները, այդ թվում՝ հավատի հարցերում: Այսօր կրոնները սնանկ են, քանի որ ոչ մեկին ոչ մի բան չեն կարողանում համոզել: Նրանք ծեսի են վերածվել: Գրեթե ամեն ինչ, որ առաջ կրոններն էին տալիս (մարդու և աշխարհի կառուցվածքի մասին մեկնություններ, կյանքի օրենքներ ու կանոններ), այսօր գիտությունն է առաջարկում, իսկ պատվիրանների և կրոնական դոգմաների փոխարեն գործում են սահմանադրություններն ու քրեական օրենսգրքերը: Միակ բանը, որ այսօր մնացել է որպես կրոնի առանձնաշնորհ, Չարի և Բարու հասկացություններին դիմելն է, այսինքն՝ այն հասկացություններին, որոնք գիտությունը պարզապես չի էլ գործարկում: Ընդ որում, կրոնների առաջարկած Չարի և Բարու մեկնությունները մեծամասնության համար այդպես էլ համոզիչ չդարձան: Նախաստությունների և չափածության մեծ քանակը հետզհետե տրամաբանորեն հանգեցրեց կրոնների ճգնաժամի, որն էլ իր հերթին հանգեցրեց առավել լուրջ խնդրի՝ հավատի ճգնաժամի:

Նավատը մարդուն պետք է ցանկացած պարագայում. առանց դրա նա չի կարող: Չէ՞ որ 90 տոկոս դեպքերում մարդը գործում է ինքնաբերաբար՝ ղեկավարվելով հավատով, իմանալով՝ ինչն են լավն ու վատը, Չարն ու Բարին: Նավատն

օգնում է այս կամ այն իրավիճակում ամեն անգամ որոշում չկայացնել, այլ պարզապես գործել՝ չգիտես ինչու իմանալով, որ դա ճիշտ է, որ դա լավ է: Տավատը գալիս է ենթագիտակցությունից, որը դիմում է նախորդ սերունդների, նախորդ փորձով կուտակված չձևակերպված ճշմարտություններին: Մենք որոշումներ ենք կայացնում ենթագիտակցորեն և հետո միայն գիտակցության օգնությամբ դրանք հիմնավորում կամ արդարացնում: Մեր որոշումներն ակնթարթային են, մենք ամեն մի արարքից առաջ առանձնապես չենք դատում: Մեր ընտրությունն ավելի շուտ է արվում, քան մենք հորինում ենք նրա հիմնավորումն ու վերլուծում գիտակցությամբ: Տամադրումը կատարվում է մարդկային ենթագիտակցության, իսկ վերլուծությունը՝ գիտակցության մեջ: Օրինակ, մենք չունենք շենք կառուցելու համակողմանի բանաձև, որտեղ պարզապես պետք է տվյալներ ներմուծել ու պատրաստի լուծում ստանալ: Սկզբում մենք նախագծում ենք շինությունը, իսկ հետո վերլուծում՝ արդյոք ճիշտ ենք գծագրել, կա՞ն արդյոք սխալներ: Երբ նախագծում ենք, դեկավարվում ենք հավատով: Եվ ամեն ինչն է այդպես: Տավատն անհրաժեշտ է մարդուն: Ինչի նկատմամբ ուզում է լինի, միայն թե ենթագիտակցության մեջ լինեն այն հենման կետերը, որոնք գործելու հնարավորություն են տալիս: Մինչդեռ կրոնի ճգնաժամը խիստ խարխլեց հավատն առ Աստված, առ վերին ուժերը, իսկ շատերին պարզապես զրկեց այդ հավատից: Իսկ եթե մարդն արդեն կորցրել է հավատն առ Աստված, ապա անպայման ինչ-որ նոր բան դրան կփոխարինի: Այն, ինչ, ըստ մարդու, գլխավորն է: Այսօր ոչ անհրաժեշտ նյութական արժեքների ձեռքբերման կրքով տարված ժամանակակից արևմտյան մարդու համար այդ տեղը զբաղեցրել է հավատն առ առաջընթաց (կամ առ այն, ինչը նա առաջընթաց է անվանում): Առ Աստված հավատին գիտատեխնիկական առաջընթացի հանդեպ հավատով փոխարինել է այն նույն «նկարագրողական» գիտությունը, որը եկել է

փոխարինելու կրոնին: Եվ այստեղ է, որ գործ ունենք կազուսի հետ: Գիտությունը, որը մեր կյանք է մտել, որպեսզի փոխարինի կրոնին, վերջին հաշվով հենց ինքն է կրոնի վերածվել:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Ընդհանրապես, գիտության և կրոնի միաժամանակյա գոյությունն անհեթեթություն է: Չէ՞ որ գիտությունը հայտնվեց, որպեսզի իր մեթոդներով մարդուն ներկայացնի աշխարհի իրական պատկերը, որը կրոնը դարերով մատուցել է մկրատված ու խեղաթյուրված, ներկայացնի՝ ձեռքի տակ ունենալով համոզիչ ապացույցներ, որոնք կասկածի տեղիք չեն տալիս, քացառում են երկակի մեկնություններն ու անորոշությունները: Այդուհանդերձ, գիտությունն ու կրոնը դեռևս գոյություն ունեն կողք կողքի, և դրա պատճառը ինչպես կրոնի անկարողությունն է, այնպես էլ գիտության անօգնականությունը. մեր կյանքի հիմնական հարցերն առաջվա պես մնում են առանց պարզորոշ պատասխանի:

Շատ գիտնականներ և հետազոտողներ հավատում են Արարիչ Աստծուն, հավատում են աշխարհաստեղծման ծրագրին՝ հետևելով պատճառականության սկզբունքին՝ հասկանալով, որ էնտրոպիայի չնվազման օրենքը չի ենթադրում համակարգերի կամայական առաջացում, որ կառուցավորումը պահանջում է իմաստալից, կարգավորված գործողություններ: Մեկ անգամ ևս դիմենք էնտրոպիայի (քաոսի, անկարգության էներգիայի) չնվազման օրենքին. եթե որոշակի պահի փակ համակարգի էնտրոպիան տարբեր է առավելագույնից, ապա հաջորդ պահերին այն չի նվազում, աճում է կամ, ծայրահեղ դեպքում, հաստատուն մնում: Ավելի մեծ էնտրոպիայի վիճակի անցման հավանականությունը շատ ավելի մեծ է՝

համեմատած նրա նվազման հավանականության հետ: Վերջինս փաստացի երբեք չի կարող դիտվել բնության մեջ: Այլ կերպ ասած՝ բնության մեջ ամեն ինչ ոչնչացման միտում ունի, և ոչինչ ինքնակամ, առանց որևէ ազդեցության չի կարող համակարգվել, կառուցավորվել:

Բայց ի՞նչ ունենք փաստացի: Բոլորի կողմից ընդունված Դարվինի էվոլյուցիայի տեսությունը, որն ընդունում է կյանքի ծագումը, անդադար զարգացումն ու կենդանի օրգանիզմների (բարդագույն համակարգերի) նոր տեսակների ի հայտ գալն առանց որևէ համակարգված ազդեցության՝ պատահականությունների շղթայի շնորհիվ: Մաթեմատիկական այդպիսի պատահականությունների հավանականությունը գնահատում է այնպես, ինչպես եթե տպագրատան պայթյունի հետևանքով հանկարծ բառարան առաջանար:

Ինչ վերաբերում է մեր կյանքին և Տիեզերքին, ապա չենք կարող չնկատել և չարձանագրել գոյություն ունեցող որոշակի օրինաչափություններ: Դիտելով, թե ինչ է կատարվում այստեղ և հիմա, իրավամբ, կարող ենք ենթադրել՝ ինչպես են նմանատիպ գործընթացները տեղի ունեցել ինչ-որ տեղ և ինչ-որ ժամանակ: Եթե այստեղ և հիմա չկա տեսակների առաջացում բնական ընտրության հանապարհով, նշանակում է՝ ինչ-որ տեղ և ինչ-որ ժամանակ այդպիսի գործընթաց նույնպես տեղի չի ունեցել: Չէ՞ որ երբևէ չենք տեսել, որ մանրէն վերածվի մոծակի կամ ինչ-որ այլ բանի, փոխի իր էությունը, թեպետ նրա բազմացման արագությունը միլիոն անգամ բարձր է այլ տեսակների բազմացման արագությունից: Փոխարենը տեսել ենք՝ ինչպես է մանրէն մոտացիայի ենթարկվում, վերածվում իր մեկ այլ տարբերակի: Այսօր պնդում են, որ 500 միլիոն տարվա ընթացքում էվոլյուցիայի և բնական ընտրության շնորհիվ ամբողջ բիոմը փոխվել է: Այսինքն, խոսքը կենդանի օրգանիզմների մոտ 15 միլիոն սերնդի մասին է: Գիտությունն այսօր պնդում է, որ այդ ժամանակի ընթացքում աշխարհ են

եկել անհավատալի թվով կաթնասունների, թռչունների, ձկների, միջատների զանազան նոր տեսակներ: Բայց, օրինակ, 15 միլիոն սերունդը մանրէների համար չնչին ժամանակ է պատմության տեսակետից: Մանրէները բազմանում են ամեն 10-20 րոպեն մեկ: Եվ ստացվում է, որ ներկա քաղաքակրթության ընդամենը 500-600 տարվա ընթացքում մենք պետք է տեսնեինք անհավանական քանակությամբ նորանոր կենդանի տեսակներ, որոնք մանրէներից առաջացած կլինեին: Սակայն մեր ամբողջ ժամանակաշրջանի ընթացքում որևէ սկզբունքային փոփոխություն նույնիսկ մանրէների հետ տեղի չի ունեցել: Եվ այնուամենայնիվ, այդպիսի ակնհայտ հակասություններով հանդերձ՝ մենք հավատում ենք էվոլյուցիայի տեսությանը ճիշտ այնպես, ինչպես հավատում ենք բազում այլ տեսությունների՝ ինքներս մեզ չծանրաբեռնելով ավելորդ հարցերով: Իսկ հարցերը պետք է որ չափազանց շատ լինեն: Գիտությունն առաջվա պես չի կարողանում բացատրել՝ ինչպես է առաջացել Տիեզերքը, ինչպես են առաջացել աստղերը, ինչպես է ծագել կյանքը, ինչպես է առաջացել մարդը: Բայց չէ՞ որ սրանք կարևորագույն, սկզբունքային հարցեր են: Այո՛, բազմազան տեսություններ, վարկածներ և ենթադրություններ կան, սակայն այդ երևույթների հստակ և ոչ հակասական բացատրությունը չկա և չի եղել:

Պատճառներից մեկն ակնհայտ է. գիտությունն անբալկոնլիորեն կապված է աշխարհում տիրող տնտեսական մոդելի՝ կապիտալիզմի հետ, ինտեգրված է նրան: Բայց սա ևս իր պարադոքսներն ունի: Նախատանալու ձգտումը բնականորեն ակտիվացնում է նոր տեխնոլոգիաներ ստեղծելու, նվազագույն ժամկետներում դրանք մշակելու պահանջը: Մինչդեռ տեխնոլոգիաների մշակումը հնարավոր է, եթե համապատասխան հենք կա՝ հիմնարար, տեսական հետազոտություններ: Այսպիսով, կապիտալը, թվում է, հանդես է գալիս գիտական գործունեության խթանիչի դերում: Նույնիսկ Արքիմեդն իր

օրենքներից մեկը բացահայտել է, քանի որ արքան ցանկանում էր իմանալ՝ արդյոք իրեն չի՞ խաբել ոսկեհուռ թագ պատրաստած ոսկերիչը: Բայց ողջ խնդիրը հենց այն է, որ կապիտալին հետաքրքրում է գիտական հայտնագործությունների միայն կիրառական օգտագործումը: Ո՞ւմ է պետք ռադիոալիքի հայտնագործումը, եթե հետո հնարավոր չի լինելու միլիոնավոր ռադիոընդունիչներ վաճառել: Մարդիկ դարերով տեսել են էլեկտրականությունը կայծակի, սաթի և բրդի շփումից առաջացած կայծերի տեսքով, այն դիտել են ձկների մոտ: Ջանազան հետազոտողներ տարբեր ժամանակներում փորձել են բացատրել էլեկտրականության բնույթը: Սակայն իրական հետաքրքրությունը նրա նկատմամբ հայտնվեց միայն հարյուրավոր տարիներ անց, երբ հնարավորություն ստեղծվեց էլեկտրականության միջոցով մեծ գումարներ վաստակելու: Ընդ որում, այդ հետաքրքրությունը, միևնույնն է, խիստ սահմանափակումներ ուներ. հետաքրքրում էր միայն այն, ինչը կարող էր շահույթ բերել: Նիկոլա Տեսլայի հետազոտություններն էլեկտրաէներգիայի անլար փոխանցման ոլորտում և նրա կառուցած հայտնի Վորդենկլիֆի աշտարակը զրկվեցին Ջոն Պիրպոնտ Մորգանի ֆինանսավորումից մի պարզ պատճառով. պարզվեց, որ ծրագրի հաջողության դեպքում էլեկտրականությունը, հեռախոսակապն ու ռադիոկապը կարող էին հասանելի, անսահմանափակ և անվճար դառնալ Երկրի բոլոր բնակիչների համար: Իսկ դա ոչ մի կերպ չէր համընկնում նրանց շահերին, ովքեր «ֆինանսավորում էին գիտությունը». այդ մարդկանց հետաքրքրությունը միայն շահույթի նոր աղբյուրների ստեղծմանն էր վերաբերում: Այդ ամենի հետևանքով մենք էլեկտրաէներգիայի անլար փոխանցման հետազոտություններում ավելի քան հարյուր տարով հետ նետվեցինք: Եվ այս իրավիճակը գիտության մեջ ամենուրեք է: Նյուտոնի օրենքները բանաձևերի օգնությամբ մեզ պատմում են, թե ինչ է կատարվում զանգվածի, գրավիտացիայի հետ: Մինչդեռ մենք չգիտենք՝

ինչ են զանգվածն ու գրավիտացիան: Ըստ էության, դա աշխարհի հանաչում չէ, այլ «նկարագրողական» գիտություն, որը գերազանցապես կիրառական գործարկում ունի: Մենք դադարել ենք փնտրել Տիեզերքին վերաբերող հարցերի պատասխանները, պատասխան չենք փնտրում գրավիտացիային, էլեկտրականության էությանը վերաբերող հարցերին: Ընդհանրապես, չենք էլ հասկանում՝ դա ինչ է: Այսօր գրեթե ողջ գիտությունը դարձել է կիրառական: Նրան չի հուզում կյանքի ու մարդու գոյության իմաստը: Ավելին, նրան ընդհանրապես չի հետաքրքրում՝ ինչ է էլեկտրականությունը, գրավիտացիան, ռադիոակտիվությունը: Կիրառական գիտությունը պարզապես օգտագործում, շահագործում է էլեկտրականությունը, գրավիտացիան ու ռադիոակտիվությունը: Եվ, բնականաբար, միայն նյութական բարիքներ ստանալու նպատակով: Արդյոք սա չի՞ հիշեցնում Տին Կտակարանը: Որքան էլ անհեթեթ է, բայց անցյալի կրոնական դրույթները դարձել են գիտության գլխավոր շարժիչ ուժն ու գլխավոր խնդիրը:

Խոսելով ժամանակակից ֆունդամենտալ գիտության հզնաժամի մասին՝ պետք է առանձնացնել ևս մեկ խնդիր՝ հանաչման նպատակների փոփոխությունն ու ձևափոխումը: Նոյում գիտնականներին առաջին հերթին հետաքրքրում էին իմաստները: Սկզբում բնագիտությունը փորձում էր հասկանալ՝ ինչու, ինչ պատճառով է ամեն ինչ այնպես, ինչպես կա: «Ինչպե՞ս» հարցը միջանկյալ էր: Պատահական չէ, որ փիլիսոփայությունն անցյալի գիտության անբաժանելի մասն էր: Մաթեմատիկոսները, աստղաբանները, բժիշկները նաև փիլիսոփաներ էին: Սակայն Տիեզերքի իմաստի որոնումը դյուրին խնդիր չէ: Ստեղծելով մեխանիկայի օրենքները՝ Նյուտոնը նույնպես պատճառականության հարցեր էր առաջադրում և իմաստներ փնտրում Տիեզերքում, բայց պատասխան չգտավ և հանձնվեց՝ ասելով, թե մենք վարկածներ չենք հորինում: Նետագայում էլ «ինչո՞ւ» հարցի պատասխանը չփնտրելու

միտումը միայն ամրացավ: Գիտությունն ինքն իրեն սահմանափակեց «ինչպե՞ս» հարցի պատասխանների որոնմամբ, այսինքն՝ քանակական հարաբերակցությունների, բանաձևերի քացահայտմամբ՝ հույսով, որ դա ինչ-որ կերպ կօգնի պատասխանելու «ինչո՞ւ» և «ինչի՞ համար» հարցերին: Վերջին մի քանի դարերում գիտնականներն ընթացան այդ հանապարհով: Գալիլեյը, Ֆարադեյը, Ամպերը և ուրիշներ փորձեր էին դնում, հետազոտում երևույթներ, չափումներ էին անում և հանգում եզրակացությունների՝ այս սա այսպես է կառուցված: Ինչու հենց այսպես՝ դեռևս անհասկանալի էր: Գուլոնի օրենքը, Ամպերի օրենքը, Ֆարադեյի օրենքները բնագիտություն էին՝ հիմնված փորձի և դիտարկումների վրա: Տետազոտողների բոլոր եզրահանգումներն անմիջական առնչություն ունեին դիտարկվող գործընթացներին, արտացոլում էին կյանքի իրական պատկերը: Սակայն ինչ-որ պահի բնագիտությունը վերջացավ: Կատարվեց դա, որքան էլ տարօրինակ հնչի, Էյնշտեյնի թեթև ձեռքով, որը, ստեղծելով իր հարաբերականության տեսությունը, գիտության համար անթույլատրելի մի բան արեց՝ կամայականորեն ձևափոխեց մեթոդաբանության կանոնները:

Էյնշտեյնը հիմնվեց այն կանխադրույթի վրա, որ համաշխարհային եթեր գոյություն չունի: Ընդ որում, այդ կանխադրույթի հիմնավորումը բավական տարօրինակ էր: Եթերի համեմատ Երկրի շարժման արագության չափման՝ Մալթելսոն-Մորլիի փորձի արդյունքները տվեցին ոչ թե վայրկյանում 30 կմ (Երկրի ուղեծրային արագությունը), այլ ավելի քիչ, բայց ոչ զրո: Դա նշանակում էր, որ անշարժ եթեր չկա, հնարավոր է, որ այն քաշվում-տարվում է նյութով: Բայց որպեսզի իր կյանքը չբարդացնի նյութով մասնակիորեն քաշվող-տարվող եթերի խրթին հաշվարկներով, ավելի հարմար էր կարծել, որ եթեր ընդհանրապես գոյություն չունի: Դա բնագիտական փորձից չբխող բացարձակ կամայական միտք էր և հարմար էր միայն այն պատճառով, որ չկար

այնպիսի մաթեմատիկական գործիքակազմ, որը կրնուժագրեր մասնակիորեն քաշվող-տարվող եթերը: Նետագայում Էյնշտեյնը փոխ առավ մաթեմատիկոս Պուանկարեի և ֆիզիկոս Լորենցի գաղափարները: Վերջինս իր բանաձևերը եթերային տեսության համար էր ստացել, այսինքն՝ եթերի գոյության պայմանների համար: Ստացվում է, որ Լորենցի՝ եթերի գոյության պայմանների համար ստեղծված բանաձևերն Էյնշտեյնը կիրառեց եթերի բացակայության պայմանների համար: Արդյունքում ի հայտ եկավ հարաբերականության տեսությունը, որը նկարագրում էր շարժումը, մեխանիկայի օրենքները և տարածաժամանակային հարաբերությունները մեծ արագությունների, այդ թվում՝ նաև լույսի արագությանը մոտ արագությունների դեպքում: Այդ տեսության հիմնական տարբերությունը դասական մեխանիկայից դիտարկվող տարածական և ժամանակային բնութագրերի կախվածությունն էր արագությունից: Եվ Էյնշտեյնի տեսության հայտնվելուն պես ծագեցին մի քանի տասնյակ մտածական փորձեր՝ կապված լույսի արագությամբ կատարվող գործընթացների հետ: Դրանք կոչվեցին պարադոքսներ: Երկվորյակների պարադոքս, քանոնի պարադոքս, համաժամանակյա դեպքերի հարաբերականության պարադոքս և այլն: Նրանք առաջադրում էին հարցեր, որոնց միանշանակ պատասխաններ հարաբերականության տեսությունը չէր կարող տալ, և վկայում էին տեսության մեջ առկա լուրջ ներքին հակասությունների մասին: Այս ամենը պահանջում էր բացատրություններ, ակնկալում լուծումներ: Էյնշտեյնի տեսության վրա թափվեց հիմնավորված քննադատության տեղատարափը: Գիտնականները պետք է որ թողնեին բոլոր մյուս գործերը, գիտությունների ակադեմիաներում հանձնաժողովներ ստեղծեին և պատասխաններ փնտրեին: Սակայն Էյնշտեյնին այդ հակասությունների լուծումն ընդհանրապես չէր հետաքրքրում: Չէր հետաքրքրում և համաշխարհային հանրությանը: Բոլորն էին տեսնում, որ տեսության

մեջ անհամապատասխանություններ և հակասություններ կան: Եվ, այդուհանդերձ, տեսությունն ընդունեցին որպես ճշմարտություն: Ավելին, արգելեցին նրանից շեղվել: 1922 թվականին գերմանական գիտական հանրությունը որոշում կայացրեց բացառելու հարաբերականության տեսության քննադատությունն ակադեմիական պաշտոնական միջավայրում: Ի հետևանք՝ Գերմանիայում՝ ակադեմիական մամուլում և կրթական գործընթացում, արգելք դրվեց ռելյատիվիզմի (հարաբերականության տեսության) քննադատության վրա: Այդ արգելքը գործում է մինչ օրս: Պարզվեց՝ Խորհրդային Ռուսաստանի աջակցությունն ստանալու համար բավական էր, որ 1919 թվականին Էյնշտեյնը Գերմանիայի կոմկուսի անդամ դառնար: 1922 թվականին նա դարձավ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 1926 թվականից՝ ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի արտասահմանյան պատվավոր անդամ: Զարմանալի չէ, որ ԽՍՀՄ-ում 1934 թվականին ռելյատիվիզմի շուրջ քննարկումների առթիվ ընդունվեց ՏԿԿ(բ) Կենտկոմի հատուկ որոշումը, ըստ որի՝ հարաբերականության տեսության բոլոր հակառակորդները դասվեցին կամ «աջ ուկլոնիստների», կամ «մենշևիկյան իդեալիստների» շարքին: 1938 թվականից ԽՍՀՄ ԳԱ-ն չէր ֆինանսավորում որևէ գիտական աշխատանք, որը թեկուզ փոքր-ինչ հակասում էր հարաբերականության տեսությանը: Եվ որպես կուլմինացիա՝ 1964 թվականին ԽՍՀՄ ԳԱ նախագահությունը փակ որոշում կայացրեց, որը բոլոր գիտական ամբիոններին, խորհուրդներին, հանդեսներին արգելում էր ընդունել, դիտարկել, քննարկել և հրապարակել Էյնշտեյնի տեսությունը քննադատող աշխատանքներ: ԱՄՆ-ում այս տեսության սրբացումն ավելի վաղ էր տեղի ունեցել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ժամանակակից Գերմանիայում հոլոքոստի մասին հիշեցումը «փաստարկ» դարձավ ընդդեմ հարաբերականության տեսության

ցանկացած քննադատության: Այնպես, ինչպես ԱՄՆ-ում այդպիսի «փաստարկ» էին դարձել «հակասեմականության» մեջ մեղադրանքները: Բայց ամենաաբսուրդայինն այս պատմության մեջ թերևս այն է, որ Էյնշտեյնն ինքը հարաբերականության տեսության քննադատությունը կոչեց «հակասեմականության յուրահատուկ ձև»: Նարաբերականության տեսության հայտնվելու և հաստատվելու պատմությունն ակներև ցույց է տալիս, թե ինպես կարելի է օղից վերցված պատմությունը վերածել գիտական դոգմայի՝ գործի դնելով քաղաքական և այլ տիպի փիար:

Նին ժամանակներում բոլոր գիտնականները գլուխ էին կոտրում շարժման վերաբերյալ Ջենոնի ապորիաների վրա (Ջենոն Էլեացի, մ.թ.ա. V դար): Այդ ապորիաները լուծում ստացան, երբ բացահայտվեց դիֆերենցիալ հաշիվը: Ջենոնի հարցադրումներն Աքիլեսի մասին, որը չի կարող հասնել քայլող կրիային, կամ թռչող նետի մասին, որը ժամանակի ամեն պահին անշարժ է, ինչը նշանակում է՝ ընդհանրապես անշարժ է, ստիպում էին գիտնականներին ջանք թափել դրանց լուծման համար, փնտրել պատասխանը: Եվ քանզի փնտրում էին, գտան: Բայց այսօր մենք հանգել ենք մի տարօրինակ իրավիճակի. խնդիրն այն չէ, որ հակասություններ և պարադոքսներ կան գիտական տեսություններում, այլ այն, որ գիտությունը դրանք անտեսում է: Երբ խնդրի լուծումը չեն փնտրում, քննարկումը չի հաջողում, գիտությունը վերածվում է դոգմայի, դառնում կրոն, որը զբաղվում է ոչ թե ճշմարտության որոնումներով, այլ ինքն իր վերարտադրությամբ: Պատահական չէ վերջերս ռուս գիտնականներից մեկը գիտությունների հարազատ ակադեմիան համեմատել «ֆեոդալական քարացած կառույցի» հետ: Գիտնականները ճշմարտություն չեն փնտրում, նրանք հավատում և խոնարհվում են: Նավատում են ավելի վաղ ստեղծված օրենքների ճշմարտացիությանը և խոնարհվում հեղինակությունների առջև: Օրինակ, Էյնշտեյնի

կողմից ձևակերպված հիմարությունը չի կարող հիմարություն լինել զուտ այն պատճառով, որ նա Ալբերտ Էյնշտեյնն է: Սրա հակառակն էլ կա. ձեր նոր վարկածները, տեսությունները, բանաձևերը, որոնք չեն համընկնում բոլորի կողմից ընդունված և դասագրքում տեղ գտածների հետ, չեն ընդունվի և նույնիսկ չեն դիտարկվի «գիտական հանրության» կողմից, եթե դուք այդ հանրության անդամ չեք, «գիտնական» չեք: Իսկ «գիտնական» (գիտական աստիճան ունեցող) կարող եք դառնալ, երբ պաշտպանեք ատենախոսություն: Բայց դա սկզբունքորեն հնարավոր չէ, քանզի դուք առաջ եք քաշում գաղափարներ, որոնք հակասում են դասագրքերին: Իսկ այդ դասագրքերով էլ հենց ձևավորվել է սույն «գիտական հանրությունը»: Նրա անդամներն այդ դասագրքերի համահեղինակներն են, փող են ստանում, շքանշաններ և կոչումներ ունեն, և ոչ ոք պատրաստ չէ հրաժարվել դրանցից միայն հանուն ճշմարտության ճանաչման: Սա ամեն նորին ընդդիմացող փակ շրջան է: Նորը կարող է իր ճշմարտությամբ խարխլել հնի հիմքերը, որի վրա կառուցված է ողջ համակարգը, կարող է զրկել նյութական բարիքներից և հարգանքից:

Գիտությունն սկսվեց «ինչո՞ւ» հարցից, հետո փորձեց պատասխանել «ինչպե՞ս» հարցին, իսկ Էյնշտեյնից սկսած՝ բնագիտությունը հարցը սկսեց ձևակերպել խիստ տարօրինակ կերպով. «Ի՞նչ կարող էր լինել»: Ի՞նչ կարող էր լինել իրականությունը, եթե... Եվ այստեղ է, որ գործի է դրվում երևակայությունը: Տեսությունների հեղինակներն սկսեցին հորինել իրականություն, որը փորձերի արդյունքների հետ համընկնում է գոնե մեկ-երկու գործոնով (ընդ որում, տասնյակ գործոններ չեն համընկնում): Այսինքն, ըստ նոր տեսությունը հաստատող մեկ-երկու օրինակի՝ հայտարարվում է, որ այն գոյության իրավունք ունի: Ի վերջո, ժամանակակից հիմնարար գիտության մեջ կոնֆլիկտ հասունացավ «ինչ-որ տեղ ինչ-որ ժամանակ»-ի և «այստեղ ու հիմա»-ի միջև: «Այստեղ ու

հիմա»-ի վերաբերյալ որոշակի կառուցիկ գիտական տեսություն ունենք: Թվում է, թե «ինչ-որ տեղ ինչ-որ ժամանակ»-ն ինչ ասես կարող է լինել: Եվ, այնուամենայնիվ, Տիեզերքը միակերպ է կառուցված: Մշտական մի բան ենք տեսնում մնացորդային հառագայթումը դիտելիս, հեռավոր աստղերին նայելիս մենք ամենուրեք տեսնում ենք նուրբ կառուցվածքի հաստատունը: Փաստորեն, Տիեզերքի մեր դիտարկումներում մենք որևէ օրինակ չունենք, որ ինչ-որ տեղ և ինչ-որ ժամանակ ամեն ինչ կարող էր այլ կերպ լինել՝ ոչ այնպես, ինչպես հիմա այստեղ է: Ամենուրեք նույն օրենքներն են: Եվ մեզ միայն ենթադրություններ են մնում: Վատն այն է, որ ճշմարտության որոնման փոխարեն այդ ենթադրությունները սրբացվում, կանոնացվում են: ԱՄՆ-ի նախագահ Օբաման հրապարակային ելույթի ժամանակ այն միտքը հայտնեց, որ Տիեզերքը ենթադրաբար առաջացել է մեծ պայթյունից: «Ենթադրաբար»-ը վրդովմունքի այնպիսի փոթորիկ առաջացրեց գիտական հանրության մեջ, որ Օբաման ստիպված եղավ ներում հայցել դրա համար: Արդյունքում ընդհանուր առմամբ ճիշտ ձևակերպումը մերժվեց և փոխարինվեց պարտադրող-հրամայականով՝ ամեն ինչ հենց այդպես է եղել, առանց «ենթադրաբար»-ի: Թեպետ մեծ պայթյունի տեսությունն ընդամենը ենթադրություն է, քանի որ մնացորդային հառագայթումից անդին սկզբունքորեն հնարավոր չէ ոչինչ տեսնել: Այսինքն, հնարավոր չէ ստուգել բանաձևերի արդարացիությունը, որոնք նկարագրում են մնացորդային հառագայթմանը նախորդած ժամանակաշրջանը: Այդուհանդերձ, այն, ինչ հնարավոր չէ ստուգել, դարձել է գերագույն ճշմարտություն: Նենց սա է գիտության սրբացումը, վերածումը կրոնի: Եվ հանուն օբյեկտիվության պետք է ասել, որ այս գործընթացը միշտ է նրան սպառնացել, գիտությունը պարբերաբար բախվել է իր իսկ քարացմանը: Բայց եթե նախկինում իրավիճակն ինչ-որ կերպ արդարացնում էր այլընտրանքային ինֆորմացիայի պակասը կամ դրա

անհասանելիությունը, ապա այսօր այդպիսի խնդիր չկա. փոխարենը կա մեծ քանակությամբ կառուցողական և հիմնավոր քննադատություն, սակայն այն պարզապես անտեսվում է: Գիտության համար մեկ ուրիշ խնդիր դարձան նոր տեսություններ ստեղծելու փորձերը, որոնք հենվում էին ոչնչով չհիմնավորված ենթադրությունների վրա: Այսօր գիտնական-տիեզերագետները հայտարարում են, որ տիեզերագիտության մեջ չկան պահպանման օրենքներ: Նայտարարում են անառարկելի տոնով և առանց որևէ փաստարկի: Բայց, ներեցե՛ք, չե՞ որ ոչ մի հիմք չկա կարծելու, որ Տիեզերքի ծննդյան պահին պայմաններն այլ են եղել: Ուրեմն, որտե՞ղից են այդ ենթադրությունները: Կա՞ն ինչ-որ չափումներ կամ դիտարկումներ: Չկան: Կա կանխադրույթ: Իսկ որտեղի՞ց է վերցվում այդ կանխադրույթը: Ոչ մի տեղից: Ժամանակին Մենդելեևը նկատեց, որ որոշ քիմիական տարրերի հատկություններ կրկնվում են, և դրանում օրինաչափություն տեսավ: Նա ենթադրեց, որ պարբերական օրենք գոյություն ունի և ձևակերպեց այն: Այդ ենթադրությունը հետագայում հաստատվեց: Ենթադրության հիմքում իրական փաստեր ու դիտարկումներ էին: Այսինքն, այն հիմնավորված էր: Իսկ ինչո՞վ էր հիմնավորված այն պնդումը, որ Տիեզերքի ծագման ժամանակ պահպանման օրենքները չեն գործում, որ չեն գործում էնտրոպիայի չնվազման օրենքը, պատճառականության սկզբունքը: Դրա համար պետք էր, օրինակ, ինչ-որ տեղ Տիեզերքում տեսնել մի գալակտիկա, որի հատկանիշները տարբերվում են մերից: Բայց նման օրինակներ ոչ միայն չգտնվեցին, այլ, ընդհակառակը, պարզվեց, որ միլիարդավոր լուսային տարի հեռավորության վրա գալակտիկաները հիշտ այնպիսին են, ինչպիսին մերն է: Փաստացի մենք ունեցանք չհիմնավորված գիտական տեսություն, որի ամրապնդման համար ձևակերպվում է մի կանխադրույթ, որն ինքն էլ ոչնչով հիմնավորված չէ: Արդյունքում ստանում ենք «այն, ինչ կարող էր լինել»-ի տեսությունը: Իսկ երբ այն հակասության

մեջ է մտնում փաստերի հետ, ապա այդպիսի տեսության հեղինակներն ու հետևորդները հայտարարում են. «Ավելի վատ՝ փաստերի համար»: Գալիլեյն ազնվորեն փորձեր էր դնում վակուումում, Ֆարադեյը միացնում էր էլեկտրականությունը և չափում էլեկտրամագնիսական դաշտը. բնագիտությունը հենց սա է, որ կա: Ցանկացած տեսության համար չափելի, դիտարկելի հաստատումներ են պետք: Այսօր, սակայն, տեսությունների հաստատում չի պահանջվում: Այսօրվա մեթոդաբանությունը գիտությունը տանում է փակուղի:

Եվ վերջապես, գիտության մասին խոսելիս պետք է ևս մեկ կարևոր բանի՝ աշխարհի հանաչման մեթոդի մասին նշել: Խոսքը հանաչման վերլուծական (անալիտիկ) մեթոդի մասին է, որի էությունը մեծ և բարդ ամբողջը բաղկացուցիչների, առավել պարզ մասերի բաժանելն է: Այս մոտեցումը մենք գործնականում կիրառում ենք ամենուր: Պարզ է, որ մարդկային գիտակցությունն ի վիճակի չէ միաժամանակ ընկալել բարդ, փոխկապակցված ինֆորմացիայի ամբողջ ծավալը: Այդ պատճառով բարդը պարզ բաղադրիչների վերածելու ձգտումը խիստ բնական է: Սակայն խնդիրն այն է, որ վերլուծությանը (անալիզ) պետք է հաջորդի համադրումը (սինթեզ), այսինքն, բոլոր բաղադրիչները կրկին մեկ ամբողջության մեջ հավաքելը: Յուրաքանչյուր նկարիչ, քանդակագործ, ստեղծագործող մարդ գիտի այդ չգրված հշմարտությունը. աշխատանքի ընթացքում պարբերաբար ընդհանուրից գնալ մասնավորին և մասնավորից՝ ընդհանուրին: Բայց հենց այստեղ է, որ գիտության մեջ խնդիրներ են ծագում: Իսկ ի՞նչ է գիտությունը, եթե ոչ գիտելիքների համակարգ իրականության մասին՝ աշխարհի, բնության, հասարակության զարգացման օրինաչափությունների: Աշխարհը մի մեծ համակարգ է: Երկիրը գոյություն չունի Տիեզերքից առանձին, մարդը, կենդանիներն ու բույսերը գոյություն չունեն Երկրից առանձին: Փորձելով հանաչել մեծ և բարդ աշխարհը՝ մենք աստիճանաբար բաժանում էինք

այն բաղկացուցիչ մասերի: Առաջացան աստղագիտությունը, կենսաբանությունը, ֆիզիկան, քիմիան, մաթեմատիկան, տրամաբանությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան: Վետոնասն այս բաղկացուցիչ մասերը սկսեցինք բաժանել առավել մանր մասերի. առաջացան ֆիզիկայի բաժինները, հետո նրա տեսակները՝ իրենց մոտ 40 ենթատեսակներով՝ չհաշված ֆիզիկայի ևս 30 բաժինները, որոնք այլ գիտությունների սահմանագծին են: Մյուս գիտություններն էլ նախանձելի վիճակում չեն: Մի կողմից՝ նեղ մասնագիտացումը թույլ է տվել ավելի խոր թափանցել տեղի ունեցող գործընթացների մեջ՝ կենտրոնանալով միայն լոկալ, շատ կոնկրետ խնդիրների վրա, մյուս կողմից՝ որքան ավելի խորն են գիտնականները խորասուզվում գիտության իրենց սեփական ոլորտների մեջ, այնքան ավելի է կորչում կապը ամբողջի բաղկացուցիչ մասերի միջև, և այնքան ավելի դժվար է գիտակցել և հավաքել այդ ամբողջը: Այդպիսի կապի բացակայության դեպքում գիտության ամեն մի տեսակ սկսում է ապրել իր կյանքով՝ կուտակելով ոչ միայն ձեռքբերումներ, այլև սխալներ: Տակասություններն սկսում են աճել նույնիսկ գիտության մեկ բաժնի շրջանակներում: Այսօր 70 տարբեր ֆիզիկոսներ արդեն չեն կարողանա առանց կոնֆլիկտների միավորել իրենց գիտելիքները մեկ ամբողջության, մեկ ֆիզիկայի մեջ: Ավելին, չկա հաղորդակցման լեզու, որը թույլ կտար կատարել այդ համադրումը. չէ՞ որ ֆիզիկայի յուրաքանչյուր ոլորտ հագեցել է իր յուրահատուկ տերմինաբանությամբ, ձևավորել իր գիտալեզուն: Բայց չէ՞ որ համադրման այդ արդյունքը, այդ ընդհանուր ֆիզիկան պետք է ներդաշնակորեն միավորվի նաև մյուս գիտությունների հետ, որոնք նույնպես ունեն բազմաթիվ սեփական ենթաբաժիններ ու լեզուներ: Այս ամենի հետևանքն այն է, որ մենք չունենք ամբողջական պատկեր, այսօր անհնար է խճանակարը դասավորել, անհնար է որոշել՝ նրա որ հատվածներն են անպետք, և որոնք են պարզապես բացակայում: Դետալների և

մանրամասների հետևից ընկած՝ մենք աննկատ կորցնում ենք ընդհանուր, գլխավոր իմաստները: Այս առումով հանրահաշվից բազմություններին վերաբերող մի լավ օրինակ հիշենք: Բազմությունը ենթաբազմությունների բաժանելիս նրանց կրկին միավորումը միասնական բազմության մեջ կորուստներից հետո հնարավոր է միայն այն դեպքում, եթե այդ ենթաբազմությունները գծայնորեն անկախ են: Մեր իրականության մեջ մենք գիտությունը բաժանել ենք մանր մասերի և տարբեր մանիպուլյացիաներ ենք սկսել այդ մասերի հետ՝ մոռանալով նրանց կախվածությունը մեկ համակարգից, մեկ ընդհանուր աշխարհից: Այսօր կիրառվող ճանաչման մեթոդը մեզ հանգեցրեց աշխարհի հակասական և անհամոզիչ նկարագրությանը, մի իրավիճակի, երբ կա վիթխարի թվով ինֆորմացիա և հակասական օրենքներ, որոնք չեն կապվում և դառնում միասնական համակարգ: Իր դերը խաղաց նաև գիտնականների և հետազոտողների նեղ մասնագիտացումը: Որևէ հարցի համակողմանի ճանաչումն ու հետազոտումը նման է ուղղահայաց պատերով խորունկ ջրհորի, որտեղ, հնարավոր է, թաքցված է ճշմարտությունը՝ պարզևր՝ հետազոտողի ջանքերի համար: Բայց այդ ջրհորի խորքերից տեսանելի չէ աշխարհի ընդհանուր պատկերը. գլխավերևում տեսանելի է միայն երկնքի մի կտոր: Խոսելով համադրական (սինթետիկ) մտածողության մասին՝ մենք խոսում ենք երկրի մակերևույթին գտնվող այնպիսի մարդկանց անհրաժեշտության մասին, ովքեր տեսնում են այդ բոլոր «ջրհորները», տեսնում են աշխարհի ամբողջական պատկերը, կարող են այդ ամենը համադրել մեկ ամբողջության մեջ: Տամադրական մտածողությունը չի ժխտում դիֆերենցիալը, այլ լրացնում է այն: «Ջրհոր» փորողները պետք է շարունակեն փորել. խորությունների հետազոտումը ոչ ոք չի չեղարկել: Բայց այսօր պետք են մարդիկ, որոնք հասկանում են այն ամենի իմաստը, ինչ ստեղծել է մարդ արարածը: Պետք են մարդիկ, ովքեր կտարածեն այդ իմաստները: Մինչդեռ

փիլիսոփայությունը, որը պետք է զբաղվեր իմաստներով, ինքն էլ է իր համար այդպիսի «ջրհոր» փորել: 200 տարի առաջ փիլիսոփայությանը դեռ հետաքրքրում էին ընդհանուր իմաստները. նա զբաղվում էր դրանցով, բայց այսօր այն փակվել է իր սեփական «ջրհորում»՝ իր հատուկ միջավայրում, սկսել կորցնել կապը հասարակության հետ: Տամադրական մտածողությունն այսօր ճնշված է: Մտածողության դիֆերենցիալ մեթոդի գերիշխումը հանգեցրեց իմաստների կորստի: Եվ եթե կողքից դիտենք ներկայիս գիտությունը, ապա մենք այժմ ինչ-որ ֆիրիլլացիայի վիճակում ենք. ամեն ինչ աշխատում է, բայց ոչ համաժամանակյա: Մենք պետք է իմաստ հաղորդենք մկանների այդ աշխատանքին:

Ինչպես վերն արդեն նշել ենք, այսօր մարդկությունն իր նպատակը տեսնում է միայն գիտատեխնիկական առաջընթացում, հավատում նրան: Իսկ առաջընթացը գիտության գործունեության արդյունքն է: Եվ գիտության ներկայիս վիճակը, նրա վերածումը կրոնի մեզ հետ է մղում կամ տանում է սխալ ճանապարհով: Ճշմարտությունն այն է, որ մենք արդեն վաղուց ոչ մի գլուտ չենք անում, ոչինչ չենք հայտնագործում, այլ պարզապես կատարելագործում ենք անցյալի հայտնագործությունները: Տրֆիտային շարժումը, ռադիոկապը, ատոմային էներգիան ու ռադիոակտիվությունը, կիսահաղորդիչներն ու օպտիկական էֆեկտները վաղուց հայտնագործված են: Մենք արդեն երկար ժամանակ է՝ ընդամենը վերամշակում ենք հայտնագործածը կամ փնտրում նրա համար նոր կիրառում: Պոռթկում չկա գիտության մեջ, ինչպես չկան նոր հորիզոններ: Իհարկե, պատմության մեջ նման իրավիճակը նորություն չէ: Ժամանակին միջնադարում կրոնի դոգմատացումը, նրա ձևայնացումն ու նյութական աշխարհի անտեսումը հանգեցրին լնացմանը, որը հանգուցալուծվեց անցումով կապիտալիզմին, բնական գիտությունների բուռն զարգացմամբ: Գիտությունը եկավ փոխարինելու կրոնին և ակտիվորեն զբաղվեց նյութական

աշխարհի հետազոտությամբ՝ այս անգամ անտեսելով հոգ-
ևորը: Իսկ այսօր մենք արդեն ունենք մի իրավիճակ, երբ դոգ-
մատացվում է արդեն գիտությունը: Բայց չէ՞ որ առաջընթացի
համար պատասխասխանատվությունը հենց նրա՝ ուսերին է
դրված: Իսկ փակուղի մտած գիտությունը հասարակությանը
փաստորեն զրկում է շարժման վեկտորից: Աշխարհի ուսում-
նասիրությունն անհապաղ նոր մոտեցումներ է պահանջում՝
բնագիտության նոր փիլիսոփայություն, մտածողության նոր
մեթոդներ:

ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՍ

Վերը նշված խնդիրներն այսօր վառ արտահայտվում են
բժշկության մեջ, որից մարդն առանձնահատուկ կախում ունի:
Մի կողմից՝ թվում է, որ ժամանակակից բժշկությունը դեպի
լավն է փոխել մարդու կյանքը. նախորդ դարերի համեմատ
զգալիորեն աճել է կյանքի տևողությունը, մենք սովորել են
պայքարել բազում հիվանդությունների դեմ, փոխպատվաս-
տել օրգաններ և դրանք փոխարինել արհեստականներով, գի-
տենք մանրէների և վիրուսների աշխարհի գոյության մասին,
շատ բան ենք բացահայտել օրգանիզմի կառուցվածքի, նրա
գործունեության մեխանիզմների մասին: Սակայն ճանաչման
ընթացքում մենք այստեղ ևս ընթացանք միասնականը բա-
ղադրիչների բաժանելու ճանապարհով: Անցյալում մնացին
ընտանեկան բժիշկները, որոնք ամբողջ կյանքում զբաղվում
էին տվյալ մարդու բոլոր հիվանդությունների բուժմամբ: Նեղ
մասնագիտացումը հանգեցրեց այնպիսի բժիշկների ի հայտ
գալուն, որոնք մանրամասն տիրապետում են սրտի աշխա-
տանքի մեխանիզմին, բայց բացարձակ չեն հասկանում մյուս
օրգանների գործունեությունը: Այս ամենի հետևանքն այն

եղավ, որ մենք բուժում ենք օրգաններ և մարմնի մասեր՝ չփորձելով բուժել ամբողջը: Միջին ականջի մասնագետը մարդկային օրգանիզմի ոչ մի այլ հատվածի մասին ոչինչ չգիտի: Ինչպես նաև մաշկաբանը կամ գաստրոէնտերոլոգը:

Մարդու օրգանիզմը հարյուրտոկոսանոց փոխկապակցված համակարգ է, որը կառավարվում է ուղեղով: Նրա գործունեությունը մինչև այժմ մեծ հանելուկ է գիտնականների համար: Այսինքն, մենք տեսնում ենք ուղեղի գործունեության միայն վերջնական արդյունքը՝ չհասկանալով՝ նա ինչպես և ինչու է դա անում: Չէ՞ որ մենք չենք մեր գիտակցությամբ կառավարում օրգանիզմի գործընթացները, մենք չենք հանձնարարական տալիս սրտին աշխատել որոշակի ռիթմով, իսկ լյարդին՝ մաքրել արյունը: Մենք կարող ենք խոսել այն մասին, որ նյարդերն էլեկտրական ազդակներ են փոխանցում և հանգեցնում են մկանների կծկման, որ ռեցեպտորներն ուղեղին ինֆորմացիա են տալիս, որին նա արձագանքում է, որ ուղեղիկը կարգավորում է մեր հավասարակշռությունը: Բայց մենք, միևնույն է, չենք հասկանում՝ ինչպես են այդ գործընթացները կազմակերպված որպես համակարգ: Իսկ դա նշանակում է՝ մենք չենք հասկանում մեր օրգանիզմը: Եվ չենք բուժում հիվանդությունները, այլ ձգտում ենք հեռացնել խանգարող ախտանիշերը: Դիցուք, ինչ-որ բան է պատահել մարդու երիկամին, և նա դադարել է մաքրել ազոտային միացություններն այնպես, ինչպես հարկն է: Երիկամը խնդրի մասին ազդանշան է ուղարկում ուղեղին, իսկ ուղեղն ի պատասխան՝ մեծացնում է արյան ճնշումը: Բայց երբ մարդու ճնշումը բարձրանում է, նա անմիջապես դիմում է սրտաբանին, իսկ վերջինս հաբերով այդ ճնշումն իջեցնում է: Չէ՞ որ դա իր մասնագիտացումն է: Չէ՞ որ նա գիտի, որ արյան բարձր ճնշումը վտանգավոր է: Իսկ այդ ընթացքում երիկամը, միևնույն է, չի կարողանում աշխատել. նրան պետք էր ճնշումը բարձրացնել, որպեսզի ծանրաբեռնվածությանը դիմանար, իսկ այն

չբարձրացրեցին: Ազոտային միացությունները ոչ մի տեղ չանհետացան, և երիկամը դրանք նետեց միջբջջային տարածություն: Մարմնով հանապարհորդելու արդյունքում նրանք կուտակվում են հոդերում: Եվ սկսում են ցավել ծնկները, ողնաշարը: Ո՞ւմ դիմել: Իհարկե ոսկրաբանին: Չէ՞ որ դա արդեն նրա մասնագիտացումն է: Ոսկրաբանը ծնկների ցավի համար շատ գործուն դեղամիջոց է նշանակում, որն առաջին հերթին... երիկամներին է հարվածում: Երիկամն արդեն հուսահատ SOS ազդանշանն է տալիս: Ուղեղը նորից ճնշումն է բարձրացնում: Իսկ սրտաբանը, ի պատասխան, նշանակում է նոր՝ գերհզոր դեղամիջոց, քանի որ հիմը չէր օգնել: Այդ ամենի հետևանքը կարող է կաթվածը լինել՝ երիկամը բուժելու փոխարեն: Քանի որ սրտաբանն զբաղվում է արյունատար անոթներով և սրտով, ոսկրաբանը՝ ոսկրերով, իսկ ընդհանուր մարդ արարածով ոչ ոք չի զբաղվում:

Բժշկական նեղմասնագիտական մոտեցումը մարդուն միկրոօրգանիզմների աշխարհին հակադրելու պատճառներից մեկը դարձավ: Երբ պարզվեցին կոնկրետ հիվանդությունների պատճառները՝ մանրէները, համապատասխան բժիշկները դրանց սպանելու, ոչնչացման միջոցներ մշակելու առաջադրանք ստացան: Մենք կրկին հայտնվեցինք մի իրավիճակում, որտեղ լոկալ հարցն անջատվեց համակարգից, և նրա լոկալ լուծման փորձերը հանգեցրեցին վիթխարի խնդրի: Մենք մոռանում ենք, որ մանրէները Երկրի վրա միլիարդ անգամ ավելի շատ են, քան մարդիկ: Ավելին, նրանց բիոզանգվածը գերազանցում է երկրազնդի բոլոր կենդանիների և բույսերի միագումար բիոզանգվածին: Նրանք մարդկանցից առավել լավ են գոյատևում անբարենպաստ պայմաններում և հարմարվում դրանց: Սովորական պայմաններում մարդիկ և մանրէներն ապրում են համակեցությամբ, որոշակի հավասարակշռության մեջ: Եվ այդ հավասարակշռության խախտումը հղի է հետևանքներով: Օրինակ, մարդու մարմնում ապրում

են մանրեներ, որոնք սնվում են մեր մեռած մաշկով: Այդ մանրեները պաշտպանում են մարդուն այլ հիվանդություններից, որոնք փոխանցվում են մաշկից: Ֆորմալ առումով մանրեները մեզ ուտում են և միաժամանակ պաշտպանում: Սա է հենց սիմբիոտիկ (համակեցային) հավասարակշռությունը: Մարդն ու մանրեները չեն կարող առանց մեկմեկու: Եվ նրանցից ոչ ոք ժամանակից շուտ չպետք է հաղթի: Սակայն մենք ոչնչացնում ենք այդ հավասարակշռությունը՝ արտադրելով և մեծ քանակությամբ գործածելով նորանոր անտիբիոտիկներ (հակամանրեներ): Մանրեներն իմունիտետ են ձեռք բերում այդ դեղամիջոցների նկատմամբ, դառնում ավելի ու ավելի վտանգավոր, ավելի ու ավելի հզոր: Իսկ մարդը, ընդհակառակը, այդ պայքարում թուլանում է: Եվ տեսանելի ապագայում մենք կբախվենք ծանր խնդիրների. այլևս չենք ունենա միկրոօրգանիզմների դեմ պայքարի արդյունավետ միջոցներ: Արդեն այսօր լուրջ խնդիր կա ոսկեգույն ստաֆիլոկոկի դեմ պայքարում, որը բժշկական հաստատություններ է գրավում. հակամանրեային դեղամիջոցների մշտական ընդունման պատճառով հենց հիվանդանոցներում է ձևավորվել մի միջավայր, որտեղ մանրեները հարմարվել ու առավել կայուն ու վտանգավոր են դարձել: Մարդը՝ որպես տեսակ, կարող է ոչնչացման վտանգի տակ հայտնվել մանրեների դեմ իր չմտածված և անհեռանկարային պատերազմի հետևանքով:

Պատահակա՞ն են արդյոք այդ գործընթացները: Ո՛չ, եթե հիշենք տնտեսական այն համակարգի մասին, որի շրջանակներում գործում է այսօրվա առողջապահությունը: Մարդու առողջության, նրա բուժման ժամանակակից մեթոդների մասին խոսելը կամա թե ակամա մի տարօրինակ հարց է առաջադրում. իսկ բժշկությունն ընդհանրապես կարո՞ղ է ապահովել մարդու իրական առողջությունը, եթե այդ առողջությունը պարզապես ձեռնտու չէ: Չէ՞ որ այսօրվա բժշկությունը սերտորեն կապված է դեղագործական ինդուստրիայի հետ:

Դեղագործական ընկերություններն աշխարհի ամենահարուստ կազմակերպություններից են. դեղատոմսային դեղամիջոցների շուկայի ընդհանուր ծավալն աշխարհում կազմում է տարեկան ավելի քան 800 մլրդ դոլար, իսկ ոլորտի առաջատարների վաճառքի ծավալները հասնում են տարեկան 44-45 մլրդ դոլարի: Ամենամեծ շահույթն ապահովում են հակաքաղցկեղային դեղամիջոցները, պատվաստանյութերը, ծանր հիվանդությունների դեմ դեղորայքը... Եվ դժոխային տրամաբանություն է ուրվագծվում. որքան երկար հիվանդ լինենք, այնքան շատ դեղամիջոց մեզ կարող են վաճառել և այնքան շատ փող վաստակել: Դեղագործական կազմակերպությունների այդպիսի գերշահույթների դեպքում ոչ մի նախադրյալ չկա, որ նրանք կարող են հետաքրքրված լինել քաղցկեղի, ցրված սկլերոզի և այլ ծանր հիվանդությունների բուժմամբ: Իսկ անհա նոր դեղահաբերի վաճառքի և դրանց նորանոր տեսակների թողարկման հարցում՝ խնդրե՛մ: Նույն իրավիճակն է պատվաստումների դեպքում: Թվում է՝ պատվաստումը կարևոր կանխարգելիչ միջոց է մարդկանց առողջությունն ապահովելու համար: Ավելին, բնակչությունը պատվաստումների համար չի վճարում. ամեն ինչ շատ ազնիվ է. կատարվում են համընդհանուր անվճար պատվաստումներ: Սակայն պատվաստանյութերն ապրանք են, փող արժեն և արտադրվում են միլիարդավոր չափաբաժիններով: Նրանք պետք է գնորդ ունենան: Եվ արտադրողը խորապես հետաքրքրված է, որ դրանք գնվեն մշտապես և ավելի ու ավելի շատ: Ուրեմն, ո՞վ է դրա համար վճարում: Ֆորմալ՝ Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը: Իսկ փաստացի՝ այն երկրները, որոնք ըստ ԱՏԿ-ի հանձնարարության և պահանջի՝ անցնում են այդ պատվաստանյութին և ձեռք են բերում այն իրենց քաղաքացիների համար: Ներկայիս բժշկության մեջ կողք կողքի հայտնվեցին սկզբունքորեն երկու անհամատեղելի հասկացություններ՝ մարդու առողջության

մասին հոգացողությունն ու դեղամիջոցների վաճառքից առաջացած գերշահույթը, ֆինանսական շահագրգռվածությունը՝ մարդկանց երկարատև բուժման մեջ: Բնական է, որ այդպիսի իրավիճակում մարդկային առողջության նկատմամբ իրական հոգատարությունը միշտ կպարտվի ազահությանը. չկա այնպիսի հանցագործություն, որին քիզներ չէր գնա՝ ունենալով գերշահույթ ստանալու հեռանկար: Ինչպես տեսնում ենք, բժշկության մեջ նույնպես, չնայած բազում հարյուրամյակների ընթացքում կուտակված վիթխարի գիտելիքների ծավալին, ստեղծվել է մի իրավիճակ, որը լուրջ, սկզբունքային փոփոխություններ է պահանջում, որոնց շնորհիվ կբուժեն մարդուն և ոչ թե առանձին հիվանդություններն ու դրանց ախտանիշերը, իսկ մարդու առողջությունը կդադարի չարաշահման առարկա լինելուց:

ՓՈՐՁՈՒԹՅՈՒՆ ՍՈՑԻՈՒՄԻ ՏՎԱՐԸ

Ինչպես հայտնի է՝ մարդը հասարակական էակ է: Եվ այս առումով նա շատ նման է կենդանական աշխարհի ներկայացուցիչներին: Կենդանի արարածների զանազան տեսակներ Երկրի վրա ապրում են հանրույթներով՝ նախիրներով, փրայդներով, գաղութներով: Ինչո՞ւ են կենդանիները նման հանրույթներ ստեղծում: Սնունդը, անվտանգությունն ու վերարտադրությունն այն հիմնական խնդիրներն են, որոնց կենդանի արարածները ձգտում են արդյունավետ լուծում գտնել՝ նմանատիպ հանրություններ ստեղծելով, սոցիալապես կազմակերպվելով: Բնության մեջ սոցիալական կազմավորումների բազմաթիվ մոդելներ կան՝ գազաններին, թռչուններին, ձկներին, միջատներին: Դա կարող է մաքուր հիերարխիկ համակարգ լինել, օրինակ՝ ռհմակ իր առաջնորդով (և նրա

շքախմբով), ինչի շնորհիվ ընդհանուր սնունդն ու անվտանգությունն ապահովվում է խիստ հիերարխիկ կախվածության մեջ (ուժեղը ստանում է ավելի շատ): Ընդ որում, լիդերների գործողությունները ի ցույց են դնում իրենց լավագույն որակները: Առաջնորդը լավագույն որսորդն է, լավագույն մարտիկը: Խմբի մյուս անդամները երկրորդական գործառույթներ են իրականացնում (նրանց խնդիրն առաջնորդի որակները քանակով զորացնելն է): Իսկ օրինակ, մրջյունների և մեղուների դեպքում հանրույթի գլխավոր խնդիրը վերարտադրությունն է. այդ գործառույթի կրողը մայրն է՝ լավագույն վերարտադրողը, իսկ ամբողջ սոցիալական համակարգն այնպես է կառուցված, որ ապահովի այդ առաքելությունն իրագործողի անվտանգությունն ու սնունդը: Տվյալ դեպքում գործ ունենք գործառույթների հիերարխիկ դասավորության հետ (յուրաքանչյուր ստորաբաժանում զբաղվում է գործունեության իր տեսակով, ստորաբաժանումները միմյանց ենթակա չեն, սակայն ենթակա են ընդհանուր նպատակին): Կենդանական աշխարհում կան նաև մոդելներ, որտեղ գլխավոր առաքելության կրողները ոչ թե առանձին անհատներն են, այլ հանրույթի բոլոր անդամները հավասարապես: Օրինակ՝ ձկների վտառները կամ մանր թռչունների երամները, որոնցում անհատների հիերարխիա չկա, այլ կա անհասկանալի կերպով ապահովվող սինքրոնացված գործունեություն՝ բոլորը բոլորի համար: Ընդ որում, հանրույթի ցանկացած մոդելում կա գլխավոր նպատակ, գերխնդիր, ինչի շուրջ այն համախմբված է: Չկա այնպիսի սոցիում, որը չունենա կենտրոնական գաղափար:

Եթե հանրույթի կազմակերպման մոդելը կենդանիների ամեն մի կոնկրետ տեսակի համար մշտական և անփոփոխ է, ապա մարդկային սոցիումի կազմակերպման մոդելը ժամանակ առ ժամանակ ձևափոխվել է: Այդ փաստը վկայում է մարդու հետ կատարվող որոշակի փոփոխությունների

և հանրության անդամների փոխհարաբերությունների վրա այդ փոփոխությունների ազդեցության մասին: Իսկ ի՞նչն էր փոխվում այս ընթացքում:

Մարդկային իրական հանրությամբ ձևավորվեց, երբ տեղի ունեցավ կոգնիտիվ հեղափոխություն. մարդը սկսեց վերացական մտածել: Մարդկային հասարակության պարզունակ մոդելը քիչ էր տարբերվում կենդանական աշխարհի համանման հանրություններից: Մարդիկ ապրում էին խմբերով, ցեղերով: Դա արտաքին մարտահրավերներին ընդդիմանալու ձև էր. սննդի հայթայթումն ու արտաքին վտանգներից պաշտպանությունը խմբում ավելի լավ էին ապահովվում՝ պայմաններ ստեղծելով բարենաջող վերարտադրության համար: Կուտակված փորձն ու ինֆորմացիան հուշում էին, որ տասը հոգով կարելի է ավելի հաջող որս անել, քան միայնակ, բացի այդ, տասը հոգին կարող են հաջողությամբ պաշտպանվել գիշատիչներից, իսկ միայնակ դա դժվար կլինի անել:

Գլխավորը ցեղախմբում «մեծ որսորդն» էր, որն ամենատոժեղն ու ճարպիկն էր: Կար հանրություն մաս ամեն ինչ իմացողը՝ «մեծ իմաստունը», հեքիմը: Նրա գործառնությունները նույնպես կարևոր էին՝ գտնել կեցության լավագույն պայմաններն ու լավագույն որսի վայրը, գուշակել եղանակը, բուժել: Բացի այդ, հանրության ունեն և գլխավոր կազմակերպիչ՝ «մեծ մենեջեր», սակայն նրա դերը պրիմիտիվ հասարակության մեջ այնքան էլ նկատելի չէր: Նրա գործառնությունները սահմանափակվում էին հանրության ներսում պարզագույն հարաբերությունների կարգավորմամբ, սննդի բաշխմամբ: Իսկ խմբի գլխավոր խնդիրը սննդի ապահովումն էր: Այսինքն, կենտրոնում մեծ որսորդն էր, որից կախված էր սննդի ապահովումը: Այդպիսի ցեղը բնակվում էր մեկ-երկու օրվա ուղիքի ճանապարհ ընդգրկող տարածքում (մի քանի տասնյակ կիլոմետր շառավղով): Որոշ ժամանակ բնակության այդ տարածքը կարող էր կերակրել ցեղին: Սակայն ցեղի աճի հետ տվյալ արեալում անխուսափելի էր

դառնում սննդի պակասը, դեֆիցիտը: Տեսևանքը լարվածությամբ էր, հասարակության ներքին կոնֆլիկտը, քանի որ ուտելիքը ոչ բոլորին կարող էր հերիքել, կամ ոչ բոլորին կարող էր դուր գալ ուտելիքի բաժանման եղանակը: Կոնֆլիկտը լուծվում էր ցեղի մի մասի վերաբնակեցմամբ դեպի այլ տարածք, որը բավական հեռու պիտի լիներ հին տեղից՝ նախկին ցեղակիցներին չհանդիպելու համար: Տաշվի առնելով ունեցվածքով ծանրաբեռնված չլինելը՝ այդպիսի ֆիզիկական հեռացումը և ցեղի մի մասի ինքնավարացումը բարդ չէին: Դա շահերի բախումից ծագած ներքին կոնֆլիկտի լուծման օպտիմալ և ամենաանցավ տարբերակն էր. հակառակորդ կողմերը պարզապես հեռանում էին միմյանցից:

Սակայն ցեղերը գնալով շատանում էին, և անխուսափելիորեն գալիս էր այն պահը, երբ լավ և հարմարավետ ազատ տարածքներ վերաբնակեցման համար այլևս չկային: Բնականաբար, ստիպված շփումներ սկսվեցին մյուս ցեղերի հետ, որին հաջորդեց միջցեղային շահերի բախումը: Լավագույն տարածքը կամ պետք է կիսվեր (ստեղծվեր ցեղային միություն), կամ հարցը պետք է լուծվեր ուժի օգնությամբ (պատերազմ՝ տարածք նվաճելու կամ հակառակորդին կողոպտելու նպատակով): Այդպիսով, հնարավորություն ստեղծվեց սնունդ հայթայթել ոչ միայն որսի և հավաքչության միջոցով, այլև ուրիշից խլելու ճանապարհով: Եվ, բնականաբար, վտանգ կար, որ մի օր նաև քեզնից կարող են խլել. անհրաժեշտ էր ցեղի պաշտպանությունն իր նմաններից: Բացի որսորդներից և հավաքորդներից, հայտնվեցին մարտիկներ, որոնք կարող էին խլել մյուսներից և պաշտպանել յուրայիններին, իսկ ներքին կոնֆլիկտներից զատ՝ կարիք եղավ նաև լուծելու արտաքին աշխարհի հետ շփումների հարցը: Այս իրականության մեջ «մեծ որսորդն» առաջվա պես անհրաժեշտ էր և կարևոր, բայց արդեն կորցրել էր սնունդ հայթայթելու մենաշնորհը. փոխարենը կտրուկ անել էր «մեծ մենեջերի» դերը. ցեղի կյանքը

բարդացել էր, և այս բոլոր գործընթացներին լավ կազմակերպիչ էր պետք: «Մեծ իմաստունի» կարևորությունը նույնպես որոշ չափով անել էր. ընդլայնվել էր կուտակված գիտելիքներն ու ինֆորմացիան կիրառելու ոլորտը: Մակայն այդ գիտելիքների և ինֆորմացիայի գործածումը հետապնդում էր խիստ նյութական նպատակներ՝ սնունդ և անվտանգություն: Մարդկային հասարակության զարգացման այդ փուլում մենք գործ ունենք միաչափ հասարակության հետ՝ նյութականի առաջնայնությամբ: Նրա ամբողջ կառուցվածքը թելադրված էր գոյատևման խնդրով:

Գյուղատնտեսության ստեղծումը շրջադարձային եղավ պատմության մեջ և փոխեց մարդկային հասարակությունը: Առաջացան սննդի արտադրության տեխնոլոգիաներ (նույնպես փորձի և գիտելիքի կուտակման շնորհիվ), որոնք արդեն ոչ թե բացառիկ անհատական ունակություններ էին պահանջում, այլ լոկ տեխնոլոգիաների տիրապետում, որոնց կրողն էր «մեծ իմաստունը» (գիտելիքն ու ինֆորմացիան ավելի կարևոր գործոններ դարձան): Արտադրությունն ու սննդի ձեռքբերումը հրաշքից վերածվեց սովորական աշխատանքի, որի համար բացառիկ ուժ և հարակություն պետք չէր: Պետք էր ընդամենը հասարակության անդամների միջև ճիշտ բաժանել սնունդ արտադրելու գործառույթները: Այդ պայմաններում մեծ որսորդի դերն ավելի նվազեց: Իսկ անվտանգության ապահովման և մյուսներից սնունդ խլելու պահանջը մնաց: «Մեծ մենեջերը» հանրությամբ վերջնականապես և անշրջելիորեն դարձավ գլխավորը: Այդպիսի հասարակությունը, որտեղ առաջին պլանում դեկավարման և կազմակերպման հարցերն էին, պահպանվեց շատ երկար: Ընդ որում, ի սկզբանե գոյություն ուներ այնպիսի կարևոր գործոն, ինչպիսին մարդու՝ կուտակելու քնական ձգտումն էր: «Մեծ մենեջերը»՝ նույն ինքը առաջնորդը, սկսեց մտածել իր ազդեցությունն ու հարստությունն իր որդուն, իր տոհմին փոխանցելու մասին:

Նաև պետք էր դա ապահովել որևէ տեսական հիմքով, ինչ-որ կերպ հիմնավորել նման ցանկությունները: Տեսություններ էին պետք, որոնք կհաստատեին «մեծ մենեջերի»՝ իշխանության բացառիկ իրավունքը, նրա առանձնահատուկ, ընտրյալ լինելը: Դա կհեշտացներ իշխանության փոխանցումն իր սերունդներին ու միաժամանակ կթեթևացներ հասարակության կառավարումը, կլուծեր իշխանությանը ենթարկվելու հարցերը: Քանի որ այդպիսի տեսությունների պահանջարկ կար, դրանք, բնականաբար, սկսեցին ի հայտ գալ: Նրանք ստեղծվում էին իշխանությունների՝ շամաններին, կախարդներին և «մեծ իմաստուններին» տրված հանձնարարականներով: Այդպես ծագեցին առաջին պաշտամունքներն ու կրոնները: Ասվեց, որ «մեծ մենեջերը» հասարակության հիերարխիայի վերին աստիճանը զբաղեցնում է ոչ հենց այնպես, այլ նշանակված է ինչ-որ աստվածների կողմից (կամ աստվածների անմիջական սերունդն է): Կրոնը ձեռք բերեց նոր կիրառական գործառույթ. սկսվեց իշխանության սրբացումը: Այդ գործընթացը տևեց երկար դարեր և ուղեկցվեց զանազան կրոնների ստեղծմամբ: Արդյունքում ձևավորվեց մի հասարակություն, որտեղ գլխավորը հենց իշխանությունն էր: Այդ հիերարխիկ հասարակությունը նույնպես միաչափ էր, բայց արդեն էներգիայի առաջնահերթությամբ. գլխավորը իշխանությունն էր, ինչի շուրջ էլ կառուցված էր ողջ հանրույթը: Պետք է նշել, որ սոցիումի կառուցման և ձևափոխման ընթացքում երևում է մարդու և կենդանու հիմնական տարբերություններից մեկը. դա մարդու՝ նյութական բարիքներ, իշխանություն և ինֆորմացիա կուտակելու և հաջորդ սերունդներին փոխանցելու կարողությունն է: Տայտնագործություններ անելու, ինֆորմացիա կուտակելու և փոխանցելու կարողությունը նպաստեց կյանքի նոր տեխնոլոգիաների առաջացմանը (կենդանիների մոտ դրանք անփոփոխ են): Իսկ մարդու՝ նյութական բարիքներն ու իշխանությունը կուտակելու և

փոխանցելու ձգտումը ժամանակի ընթացքում հանգեցրեց հասարակական կառուցվածքի ձևափոխությունների: Շենց կուտակման և փոխանցման ձգտումը կանխորոշեց նոր, սկզբունքորեն այլ հասարակության ձևավորումը. դա երկարատև գործընթաց էր, որն սկսվեց այն պահից, երբ հայտնագործվեց փողը: Մարդկային հանրույթի համար փողի ի հայտ գալը շրջադարձային եղավ: Նասարակության հիերարխիկ կառուցվածքի ներքևում գտնվող մարդն ազդեցություն և իշխանություն չուներ, բայց փողի շնորհիվ անանուն հարստություն՝ մասնավոր կապիտալ դիզելու հնարավորություն ստացավ հասարակության աչքից հեռու: Նրա տունը, ունեցվածքը, սննդի կամ ապրանքի պաշարները միշտ աչքի առաջ էին և կարող էին խլվել իշխանությունների կամ չարականների կողմից: Իսկ ահա կուտակված փողի մասին ոչ ոք չէր իմանա. այն թաքցնելը հեշտ էր: Փողը հարմար էր մարդու կուտակման կիրքը բավարարելու, ինպես նաև առանց ավելորդ ուշադրություն գրավելու ժառանգներին փոխանցելու համար: Ժամանակի ընթացքում հայտնվեցին մարդիկ, որոնք սովորեցին փողն ավելի լավ տնօրինել. դրանք առևտրականներն էին, վաճառականները, իսկ ավելի ուշ՝ նաև վաշխառուներն ու առաջին բանկիրները: Փողը սկսեց կուտակվել ակտիվ և ձեռներեց մարդկանց գրպանում: Դրամի կուտակման գործընթացը հասարակության՝ իշխանություն չունեցող անդամների ձեռքում գորանում էր, բայց դարեր շարունակ երկրորդ պլանում էր, քանի որ առաջինում նախկինի պես սրբազան իշխանությունն էր՝ միապետերն ու հոգևորականները, որոնց դիրքերն անհնար էր սասանել: Ավելին, իշխանությունն ուժեղի իրավունքով միշտ կարող էր խլել հարստությունն իր տերերից: Ասվածի վառ օրինակը տամպլիերների ասպետական միաբանությունն էր, որի կուտակված հարստությունը բարդ հարաբերությունների պատճառ դարձավ եվրոպական միապետերի և հռոմի պապի հետ: Այդ ամենի հետևանքով

միաքանութիւնը լուծարվեց, միաքանութեան անդամները գլխատվեցին, իսկ ունեցվածքը միապետերն ու եկեղեցին բաժանեցին միմյանց միջև: Փողը, ում մոտ էլ որ այն կուտակված լինի, հասարակության վերնախավից զատ, իրական վտանգ էր ներկայացնում իշխանությանը, և իշխանությունն այդ հարցում ավելորդ նրբանկատություն չէր ցուցաբերում: Սակայն հասարակության մեջ երկու ծանրության կենտրոնների՝ իշխանություն չունեցող հարուստ դասի և ապրիորի անառարկելի իշխանության ձևավորվումը չէր կարող կոնֆլիկտ չառաջացնել: Այդ կենտրոնների խաղաղ համագոյակցումն անհնար էր: Փողի զգալի կուտակումը պահանջում էր դրա փոխարկումն առավել էական մի բանի: Եվ արդյունքում, ինչպես վերևում արդեն նշել ենք, նախ թուլացան, իսկ հետո ընդհանրապես վերացան դասակարգային շրջանակները՝ ազատություն տալով փողի կիրառությանը: Առաջացավ կապիտալիզմ, փողն ու իշխանությունը դարձան հավասարաժեք և փոխարկելի հասկացություններ: Փաստացի ձևավորվեց հասարակության սկզբունքորեն նոր՝ երրորդ տիպը: Եթե առաջին երկուսը միաչափ էին՝ սկզբում նյութականի, իսկ հետո՝ իշխանության առաջնայնությամբ, ապա հիմա հասարակությունը դարձավ երկչափ՝ ունենալով զարգացման երկու հավասարաժեք վեկտոր՝ էներգիա (իշխանություն) և մատերիա (փող): Սա հասարակության այն տեսակն է, որ տեղ մենք ապրում ենք վերջին մի քանի դարում:

Իսկ ո՞րն էր «մեծ իմաստունների» և հեքիմների դերն այդ երկչափ հասարակության մեջ: Ինչպե՞ս փոփոխվեց ինֆորմացիայի դերը հանրություն: Իհարկե, ինֆորմացիան կարևոր գործոն էր, որն ազդեցություն ուներ և՛ իշխանության, և՛ փողի վրա: Սակայն դրա ստացման հնարավորությունները, ինչպես նաև օգուտը դրանից սահմանափակ էին: Նա, ով փող և իշխանություն ուներ, կարող էր հարստանալ ինֆորմացիայի միջոցով, իսկ ինֆորմացիայի աղբյուրը և ինֆորմացիա

տրամադրողը՝ ոչ: Ինֆորմացիան օգնում էր մանիպուլյացիայի ենթարկել հասարակության գիտակցությունը՝ հեշտացնելով մարդկանց կառավարումը և օգնելով նրանց հարստանալ: Ջուզահեռաբար նոր գիտելիքներն ու տեխնոլոգիաներն ապահովում էին լավ սնունդ, առողջություն, անվտանգություն և հարմարավետություն: Նոր ինֆորմացիայի ստեղծումն ու նյութականացումը, նոր տեխնոլոգիաների առաջացումը պահանջված էին դառնում մեծ փողերի և մեծ իշխանության կողմից: Սակայն շահույթի հետևից ընկած կապիտալն անշրջելի գործընթաց սկսեց, որը կանխորոշեց մարդկային հասարակության նոր՝ ավելի լուրջ ձևափոխություն: Մարդկանց լայն զանգվածներին վաճառված նոր տեխնոլոգիաների մեջ կային նաև ինֆորմացիայի արտադրման և տարածման միջոցներ: Տպագրական դազգահի գյուտը և թերթերի ու գրքերի տարածումը առաջին փոքրիկ քայլն էր դեպի ինֆորմացիոն հեղափոխություն. ինֆորմացիա սպառողների լսարանը միանգամից զգալիորեն մեծացավ: Ռադիոյի և հեռուստատեսության հայտնվելը վիթխարի թռիչք էր, քանի որ ինֆորմացիոն հոսքերի մեջ հնարավոր եղավ ներգրավել գրեթե բոլորին: Սակայն նույնիսկ հսկայական լսարանը լոկ պասիվ սպառող էր: Մինչ այն պահը, երբ հայտնվեց համացանցը: Այն յուրաքանչյուրին հնարավորություն տվեց ոչ միայն սպառել, այլև արտադրել ու տարածել ինֆորմացիան, ընդ որում՝ անսահմանափակ քանակությամբ: Նետանքը համաշխարհային ինֆորմացիոն ցանցի անկառավարելի լայնացումն ու տարածումն էր: Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում տեղի ունեցած հեղափոխությունը վիթխարի փոփոխություններ առաջացրեց հասարակության մեջ, որը նոր տեսակի հանրույթի նախակարապետն էր.

- շնորհիվ մատչելի տեխնոլոգիաների մարդիկ ներքաշվեցին ինֆորմացիայի հոսքի մեջ ամենուրեք և շուրջօրյա ռեժիմով,

- քացառապես բոլորը դարձան ցանկացած բովանդակության ինֆորմացիայի ստեղծող և տարածող,
- ցանկացած կարգի արտադրվող և սպառվող ինֆորմացիայի քանակը մեծապես անեց:

Մի պահ այդ գործընթացները բերեցին օրինաչափ արդյունքի. քանակն աննկատելիորեն դարձավ որակ: Ի՞նչ տեղի ունեցավ: Նախ և առաջ հեղաշրջում կատարվեց հասարակական արժեքների հիերարխիայում: Ինֆորմացիան իշխանության և փողի սպասավորից վերածվեց մի բանի, որն ինքն է ազդում թե՛ իշխանության, թե՛ փողի վրա: Նախկինում իշխանությունն ու կապիտալն օգտագործում էին ինֆորմացիան հասարակական կարծիք ձևավորելու համար, որը կամրապնդեր այդ իշխանությունն ու կապիտալը: Այսօր հասարակական կարծիքը կարող է ձևավորվել ինքնին, առանց որևէ կառույցի մասնակցության. հասարակության յուրաքանչյուր անդամ մասնակցում է նրա ձևավորմանն ու տարածմանը: Եվ իշխանությունն ու փողն այլևս չեն կարող հաշվի չնստել դրա հետ: Նախկինում ցանկացած ինֆորմացիոն մեծ սկանդալի հետևում իշխանական կառույցները կամ խոշոր կապիտալի շահերն էին: Պարզ էր, որ յուրաքանչյուր զանգվածային լրատվամիջոց ուներ սեփականատեր, իսկ սեփականատերը՝ շահեր, որոնք պետք էր պահպանել: Այդ պատճառով եթե որևէ մեկը ենթարկվում էր ինֆորմացիոն հարձակման, ապա դա արվում էր իշխանության և մեծ փողերի համաձայնությամբ և մասնակցությամբ: Իսկ այսօր ներքևից հրահրվող և սատարվող ինֆորմացիոն սկանդալի հետևանքով հասարակությունը կարող է տապալել հեղինակավոր, կայացած, հարուստ անհատների, որոնք լիովին բավարարում են թե՛ իշխանությանը, թե՛ կապիտալին: Ներքևներն այսօր կարող են ազդել վերևների վրա ինֆորմացիայի միջոցով: Սա լրիվ նոր իրականություն է, որն արագ դառնում է նորմա:

Սակայն ամեն ինչն ունի իր հակառակ կողմը: Ինֆորմացիայի ստացումը մարդու համար միշտ որևէ գործողության խթան է: Տամապատասխանաբար, մարդու գործողությունների կառուցողականությունը կամ ապակառուցողականությունն ուղղակիորեն կախված են նրա կողմից ընկալված ինֆորմացիայից: Այսօր եվրոպական երկրի վարչապետը կամ ԱՄՆ նախագահը կարող են հրապարակավ վերլուծել լուրջ աշխարհաքաղաքական խնդիրներ՝ հիմնվելով ոչ կոմպետենտ մարդկանց համացանցային հրապարակումների վրա: Եվ այստեղ մենք գործ ունենք լուրջ խնդրի հետ, որին մարդկությունը բախվել է XXI դարում: Դա ճշմարտության տարրալուծումն է ստի, մոլորության և հիմարության ջրերում: Բոլոր ժամանակներում մարդու ստացած ինֆորմացիայի ծավալում առկա էր նաև խեղաթյուրված ինֆորմացիայի, ապատեղեկատվության, ստի և մոլորության մի որոշ չափաբաժին: Ինֆորմացիայի տարածման աղբյուրները միշտ եղել են կոնկրետ ձեռքերում (քրմեր, միապետեր, եկեղեցի, առևտրականներ, կապիտալիստներ և այլն) և սպասարկել են սեփականատերերի շահերը: Ելնելով այդ շահերից՝ սահմանվում էին սեփական սահմանափակումներն ու ֆիլտրերը, ցենզուրան, իսկ ինֆորմացիան չափավորված և համակարգված էր: Սեփական գաղափարների և մտքերի տարածման ու հեռարձակման հնարավորություն հիմնականում ստանում էին նրանք, ովքեր կրթված էին և խելամիտ: Նրանցից ոչ բոլորն էին ճշմարտության կրողներ, և ոչ բոլորը՝ ազնիվ: Սակայն ինֆորմացիոն աղբյուրների որոշակի գտում միանշանակ գոյություն ուներ: Կային գտված ինֆորմացիոն հոսքեր, որոնք շրջանցում էին ինֆորմացիայի տարածման ալիքների սեփականատերերի համար անհարմար հարցերն ու թեմաները: Ինֆորմացիոն տարածքը կանոնակարգված և կառուցավորված էր որոշակի նպատակով: Իսկ ինֆորմացիայի շարքային սպառողը, այն ստանալով, կամ ձգտում էր իր զարգացմամբ

հասնել այդ մակարդակին կրթությամբ, մասնագիտական որակների կատարելագործմամբ, կամ հանգիստ ընդունում էր իր համեստ տեղն ու դերը հասարակության մեջ («Ես հասարակ հյուսն եմ, փայտ եմ մշակում. դա հասկանալն ինձ համար դժվար է»): Կային խաղի որոշակի կանոններ և հավասարակշռություն: Մի կողմից՝ մարդիկ զրկված էին այլընտրանքային ինֆորմացիայից, որը վերլուծության և ճշմարտությունը պարզելու հնարավորություն էր տալիս: Եվ դա վատ էր: Բայց դրա հետ մեկտեղ՝ ցենզուրայի և խմբագրման գոյությունը ենթադրում էր նաև բացահայտ աղբի, հիմարության և անհեթեթության գոտում: Դա լավ էր: Դժվար թե XX դարի ամսագիրն իր էջերը կտրամադրեր այնպիսի հեղինակների, որոնք պնդում էին, թե Երկիրը տափակ է, որ Նապոլեոնի հետ պատերազմում միջուկային զենք է գործածվել, և որ Մոսկվան իրականում հենց Տոռն է, որ կա: Իսկ երբ հիմարությունը չի տարածվում, ապա չի էլ բազմապատկվում: Այդ պայմաններում հիմարությունը զրկված էր սեփական նախաձեռնության իրավունքից: Բացի այդ, հիմարը չգիտեր, որ իր նմանները շատ են (իսկ նրանք միշտ են շատ): Սակայն ինֆորմացիայի տարածման միջոցների քանակի կտրուկ աճը և նրանց մատչելիությունն ինֆորմացիոն կապ ստեղծեցին հանրույթի գրեթե բոլոր անդամների միջև: Մարդը սկսեց համախոհներ գտնել. այժմ նա միայնակ չէր իր դատողություններում և հայացքներում: Նա համարձակ դարձավ: Եվ դա նրան հիմք տվեց ավելի ակտիվ գործելու, հայտարարելու իր մասին: Թվում էր, թե ամեն ինչ լավ է: Չէ՞ որ գիտնականներն ու հետազոտողներն սկսեցին համախոհներ գտնել, նրանց հետ քննարկել հանապազօրյա հարցեր և խնդիրներ, աշխատել ինֆորմացիայի նոր աղբյուրների հետ: Այո՛, նոր պայմաններում արդեն դժվար էր խնդիրները թաքցնելն ու լռության մատնելը: Բայց բանն այն է, որ հիմարությունը նույնպես շանս ստացավ. մեծ թվով համախոհների գոյությունը համոզում է հիմարին իր ճշմարտացիության

մեջ («Միայն ես չէ, որ հավատում եմ, որ Երկիրը տափակ է»): Եվ այդժամ սկսվում է հիմարության զանգվածային և ակտիվ տարածումը. դրա համար արդեն կան բոլոր տեխնիկական հնարավորությունները:

Նշենք մի կարևոր նրբություն. հշմարտությունները (հշմարիտ ինֆորմացիան) ընդամենը մի քանիսն են, բայց ահա սուտն ու ապատեղեկատվությունը, մոլորությունն ու սխալներն այդ նույն թեմայով անթիվ են: Եվ եթե շատ կտրուկ մեծացնենք մարդկանց ստեղծած ինֆորմացիայի հոսքերը, միևնույնն է, նոր հշմարտություն չի ավելանա, իսկ ահա հիմարությունն ու սուտը կանեն երկրաչափական պրոգրեսիայով և ամբողջովին կլցնեն ինֆորմացիոն դաշտը: Քանակական առումով հշմարտությունը կսկսի լրջորեն տանուլ տալ, տարրալուծվել ինֆորմացիոն աղմուկի հոսքերի մեջ: Եվ մեծ թվով մարդկանց գործողությունները՝ հիմնված մեծ քանակությամբ ստի և ապատեղեկատվության վրա, միանգամից սպառնալից չափեր կընդունեն: Այսօր խելացի և տաղանդավոր մարդկանց տոկոսը հասարակությունում անցյալի համեմատ չի աճել: Թերևս, չի էլ նվազել: Փոխարենը շատ կտրուկ աճել է ոչ կոմպետենտ, թերուս և պարզապես հիմար մարդկանց թիվը, որոնք շանս են ստացել աշխարհը լցնել անպետք, ոչինչ չտվող, ապակառուցողական ինֆորմացիայով: Յուրաքանչյուր ոք դարձել է ինֆորմացիա արտադրող: Դրա սպառողը, համապատասխանաբար, նույնպես շատացել է: Եվ մեծամասնությունը բնավ էլ նորելյան մրցանակակիր չէ: Միլիկոնե կրծքերով ինչ-որ բլոգեր XVII դարում մեծ իրարանցում և հետաքրքրություն կառաջացնե՞ր ամենաշատը 100-200 մարդու շրջանակում, և դրանով նրա անպետք պատմությունն անփառունակ ավարտ կգտնե՞ր: Մինչդեռ այսօր նրա կասկածելի արժեք ունեցող լուսանկարների համացանցում հարյուր միլիոն մարդ է հետևում: Անիմաստն ու ոչ պիտանին ձեռք են բերել պրիմիտիվ, բայց մեծ լսարան

և այդ հետաքրքրությունը փոխարկել փողի և փառքի: Իսկ պրիմիտիվ, սակայն բազմամարդ լսարանը սկսել է պահանջել անիմաստի և անպետքի ավելի մեծ քանակ: Ձևավորվել է փակ շղթա: Մենք սկսել ենք ակտիվորեն ինֆորմացիոն աղբ պահանջել: Այդ աղբն ու անպետք ինֆորմացիան ստեղծվում և տարածվում են ըստ շարքային մարդու՝ հանրույթի աչքում սեփական նշանակալիությունն ընդգծելու ձգտման: Կապիտալիզմի շնորհիվ ազատություն ստացած անսահմանափակ նյութական պահանջմունքները մարդու մեջ տրամաբանորեն արթնացրեցին նաև սեփական նշանակալիության, իշխանության, ամբողջ մարդկության վրա ազդեցություն ունենալու նույնքան անսահմանափակ ձգտում: Տանրույթի շարքային անդամը համաձայն չէ շարքային լինել: Բոլորն ուզում են առաջինը լինել, գլխավորը լինել, ամենալավը լինել: Բոլորը ձգտում են լինել ամենախելացին, ամենագեղեցիկը, ամենապահանջվածն ու ամենակարևորը: Սա ամբիցիաների և գոռոզամտության մրցավազք է: Այս ամենն ինֆորմացիոն տեխնոլոգիաների մատչելիության հետ մեկտեղ մեծ թվով մարդկանց մղում է հրապարակել և տարածել ամեն տեսակի աղբ՝ սկսած «բադիկ» շրթունքներով սելֆիներից և վերջացրած կեղծ գիտական գաղափարներով, քաղաքականության վերաբերյալ դիլետանտ դատողություններով: Ո՞րն է այդպիսի քառսի վտանգը հանրույթի համար: Այն, որ խեղաթյուրված և սուտ ինֆորմացիայի հզոր հոսքերի հետևանքով ուժեղացավ արարմանը խանգարող ապակառուցողական գործունեությունը: Լինելով անվերահսկելի և անվերջ տարածվող՝ ապակառուցողական ինֆորմացիան կարող է կործանել ցանկացած կառուցողական մտահղացում: Այսօր դժվար է հրապարակավ քննարկել որևէ մասնագիտական գաղափար կամ նախագիծ, քանի որ մեծամասնությունը չի տիրապետում թեմային, չունի պրոֆեսիոնալ պատրաստվածություն: Փոխարենն այդ մեծամասնությանը

հասանելի է զանազան տեսակի կասկածելի ինֆորմացիա, և որպես հետևանք՝ այն կարող է առաջ քաշել հսկայական քանակի կեղծ ժխտումներ և ապակառուցողական քննադատություն, որտեղ սկզբնական գաղափարը պարզապես կխեղդվի: Այսօր կառուցողական և օգտակար գաղափարը կարող է կործանվել և ոչնչացվել դեռևս ծագման փուլում:

Բացի այդ, պետք է հասկանալ, որ մարդը որոշակի ժամանակ և էներգիա է ծախսում ինֆորմացիայի մշակման համար: Եթե ինֆորմացիան չափազանց շատ է, ապա նա պարզապես չի հասցնում այն վերլուծել: Թեև փորձում է. չէ՞ որ միայն վերլուծման փորձն է որոշում՝ հատկապես ինչ ինֆորմացիայի հետ է մարդը առնչվել: Միայն որոշակի ժամանակ տրամադրելով՝ կարող ենք հասկանալ, որ մեր առջև խելացի մտքեր են, հավաստի տեղեկություն, և ոչ թե՝ հիմարություն, սադրանք կամ սուտ: Իսկ քանի որ ընդհանուր ծավալում մեծ տեղ է գրավում ինֆորմացիոն աղբը, ապա փաստացի մարդիկ ծախսում են իրենց ստեղծագործական էներգիայի մեծ մասը, փարձելով մշակել ոչ պետքականը: Արարելու փոխարեն գուր աշխատանք ենք կատարում: Օգտակար ինֆորմացիան կուտակելու և մշակելու փոխարեն այն տարրալուծում ենք մոլորության և ստի ջրերում: Ի վերջո, ունենում ենք մի իրավիճակ, երբ առանձին անհատը չի կարող հասարակության մեջ պահվածքի հիշտ վեկտոր (ուղղվածություն) մշակել, չի կարող գատել գլխավորը երկրորդականից, հիշտը՝ ստից, չի կարող հիշտ որոշումներ կայացնել, քանի որ գտնվում է մեծ քանակությամբ հակասական ինֆորմացիայի ճնշման տակ: Պաշտպանական արձագանքը փոքրիկ հանրույթների ստեղծումն է, ինչ-որ փոքրիկ խմբերում պարփակվելը, որտեղ ինֆորմացիան գտված է որոշակի սկզբունքով և բավարարում է խմբի անդամներին: Այդպիսի մարդկանց համար ձևավորվում է աղավաղված ինֆորմացիոն իրականություն, որտեղ հարմար է լինելը, բայց որը ոչ մի կերպ չի արտացոլում իրական կյանքը:

Իրական հասարակությանը զուգահեռ այժմ ունենք նաև գլոբալ ինֆորմացիոն հանրույթ, որտեղ չկա միասնական գաղափար կամ որևէ կանոն: Եվ այդ ինֆորմացիոն հանրույթի մոդելն սկսում է մարմնավորվել իրական կյանքում: Արդյունքում առաջանում են ամեն տեսակի ենթամշակույթներ, հասարակությունը խմբերի է բաժանվում կեղծ և հորինված արժեքային կենտրոնների՝ կեղծ գաղափարների, կեղծ բարոյականության, կեղծ գիտության, կեղծ ստեղծագործության և այլնի շուրջ: Բոլոր այս խմբերը հակամարտության մեջ են, մարտնչում են միմյանց դեմ, լավագույն դեպքում արհամարհում են միմյանց՝ չընդունելով ոչ մի ճշմարտություն, սեփականից բացի: Ինֆորմացիոն քառսն անհնարին է դարձնում հասարակության, մարդկության համախմբումն իսկապես կարևոր և նշանակալից գաղափարների շուրջ: Իսկ կենտրոնական գաղափարի (գաղափարների) բացակայությունը հանրույթին մասնատում է բազմաթիվ ֆրակցիաների, ատոմիզացնում այն: Եվ սա մի վիճակ է, որը պետք է մեկնակետ դառնա հասարակական նոր կառուցվածքի ձևավորման համար: Մարդկային հասարակությունը երկար ճանապարհ է անցել իր պատմության ընթացքում այն քառակի վերաձևավորվել է: Առաջին երկու մոդելները միաչափ էին (մատերիալի առաջնայնություն և էներգիայի առաջնայնություն), երրորդը (կապիտալիստականը) երկչափ հանրույթ էր (փոխադարձ փոխարկվող էներգիայի և մատերիալի առաջնայնություն): Այսօր մեր աչքի առաջ ծնվում է եռաչափ քաղաքակրթությունը: Ձևավորվում է հանրույթի նոր մոդելը, որպիսին մինչ օրս գոյություն չի ունեցել: Այդ նոր՝ եռաչափ մոդելում ինֆորմացիան համեմատելի է էներգիայի և մատերիալի հետ: Այսօր արդեն պայքարը հարուստների կլանների կամ միապետների դինաստիաների միջև չէ: Այսօր ճաղերի հետևում ոչ թե անհամար հարստություն կուտակած տամպլիերներն են, ոչ թե իրենց ձեռքերում անսահման իշխանություն կենտրոնացրած դիկտատորներ,

այլ Ջուլիան Ասանժը՝ հասարակության նոր մոդելի ներկայացուցիչը, որը տիրապետում է նոր ժամանակների ամենակործանարար զենքին՝ ինֆորմացիայի վիթխարի պաշարների: Տասարակական հին մոդելն առայժմ ակտիվորեն ընդդիմանում է: Դաժան պայքար է ընթանում հնի և նորի միջև, իսկ անկառավարելի ինֆորմացիոն հոսքերի ազդեցության տակ տեղի ունեցող գործընթացները ոչ թե լավատեսություն, այլ թշնամանք և անբարյացականություն են առաջացնում: Դեռ երեկ հաջողակ և ճանաչված մարդկանց ճակատագրերը մի ակնթարթում կտրվում են՝ հայտնվելով ինֆորմացիոն հեղեղի հարվածի տակ: Վտանգն սկսել է դարանակալել մարդուն ամեն քայլափոխի, նույնիսկ անցյալից: Ցանկացած, նույնիսկ՝ աննշան դրվագ կամ պատահար հնարավոր է դարձել ուռնացնել մինչև գլոբալ խնդրի մասշտաբների, ինֆորմացիոն հարվածների տակ կարելի է թաղել մարդուն, նրա գաղափարները, նախագծերը, նախաձեռնությունները: Այո՛, այսօր մենք գործ ունենք խիստ անհանգստացնող և ոչ հաճելի իրականության հետ: Բայց մի՞թե այն ամենը, ինչ ստեղծվել է մարդու կողմից և այսօր արժանապատիվ է համարվում, չի ունեցել նողկալի սկիզբ: Քրիստոնեության տարածման պատմությունը, Ամերիկայի նվաճումը, հեղափոխություններն ու ռեֆորմները՝ այս ամենը երկար ճանապարհ է անցել դաժանությունից և անօրենությունից մինչև կարգուկանոնի և ներդաշնակության անհրաժեշտության գիտակցումը: Նոր մեթոդները միշտ ավելի վաղ են հայտնվում, քան դրանցից օգտվելու հմտությունը: Ինֆորմացիոն դարը նոր-նոր է սկսվել, մարդկությունը նոր-նոր է նրանում հայտնվել և դեռևս չի կարողանում ապրել մի աշխարհում, որտեղ ինֆորմացիան ազատ շրջանառվում է: Այսօր մեր հասարակության մեջ դեռևս չկա նոր իրականության գիտակցումն ու իմաստավորումը: Այդ պատճառով ներկայիս բազում գործընթացներ շատ առումներով ապակառուցողական և վանող են:

Վերլուծելով մարդկային հասարակության զարգացումը՝ մենք կարող ենք արձանագրել, որ ի սկզբանե մարդկությունը մարդու օգտագործման ձեռնարկ չի ստացել: Ընտրում է ինքնաբերական նպատակներ, գործում փորձերի և սխալների մեթոդով: Եվ այդուհանդերձ այդ փորձերի և սխալների մեթոդը մեզ առաջ է մղել, մոտեցրել եռաչափ հանրության ստեղծմանը: Տանրության եռաչափ համակարգն առավել ներդաշնակ է բնության հետ, առավել մոտ նրան, քանի որ նրանում առկա են ողջ գոյություն ունեցողի հիմնական բաղադրիչները՝ էներգիան, մատերիան և ինֆորմացիան: Այսինքն, վերլուծելով հանրության փոփոխությունները պատմության ընթացքում՝ մենք, այնուամենայնիվ, մարդկության առաջընթաց զարգացում ենք նկատում: Չնայած բոլոր խնդիրներին: Բացի այդ, նաև նկատվում է գործընթացների ակնհայտ արագացում: Եթե պարզունակ միաչափ նյութական հանրություն մարդն ապրել է գրեթե 200 հազար տարի, իսկ միաչափ էներգետիկ հանրություն՝ 10-12 հազար տարի, ապա երկչափ հանրության կազմավորման համար պետք եղավ ընդամենը մոտ 500 տարի: Իսկ անցումը նոր՝ եռաչափ հասարակությանն ավելի արագ տեղի կունենա: Վաղ թե ուշ ճիշտ հարցադրման դեպքում մարդիկ կսկսեն գիտակցել ձեռք բերած նոր ինֆորմացիոն գործիքակազմը, ինչը պետք է հանգեցնի դրական փոփոխությունների և եռաչափ հասարակության մեջ հանրության նոր տեսակների ձևավորմանը:

ԿՐԹԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՐԳԻ ՃԳՆԱԺԱՍ

Կրթությունը քաղաքակրթական համակարգի կարևորագույն մասն է, որը ապագայի հիմնաքարն է: Եվ մեծապես նրանից է կախված, թե ովքեր և ինչ արժեհամակարգով ու

գիտելիքներով կնախագծեն ու կստեղծեն ապագան: Կրթական ամբողջ համակարգը սկիզբ է առնում մարդու ծննդյան օրվանից: Դեռ ընտանիքում նրան փոխանցվում են որոշ խնդիրների լուծման մեթոդներ՝ ինչպես բռնել գդալը, ինչպես կապել կոշիկները, ինչպես արտասանել բառերը: Տետո այդ գործընթացը շարունակվում է դպրոցում. մարդուն սովորեցնում են բազմապատկել ու գումարել, սովորեցնում են, թե ինչ կառուցվածք ունի մարդը, ծառը, մոլորակը: Խոսքն այն խնդիրների մասին է, որ նախորդ սերունդներն այս կամ այն կերպ լուծել են, ու հիմա որոշ խնդիրների լուծման մեթոդները կրթության համակարգում ներկայացնում են երեխաներին: Սակայն, ապրելով անսահման Տիեզերքում, արժե ենթադրել, որ լուծելիք խնդիրները խիստ բազմազան են: Որքան էլ հարուստ լինի մարդու երևակայությունը, միշտ կա հավանականություն, որ նա կարող է բախվել այնպիսի խնդիրների, որոնց գոյությունը նախկինում ոչ ոք չի ենթադրել: Եվ երբ մենք իսկապես բախվում ենք այդպիսի խնդրի, պարզվում է, որ լավ կրթությունը մեզ միայն խանգարում է, դառնում արգելակ, եթե չենք զարգացնում մեր կոգնիտիվ ունակություններն ու տաղանդը: Պատճառն այն է, որ լավ կրթություն ստացած մարդը համարում է, թե գիտի բացարձակապես բոլոր հիմնախնդիրների լուծման բոլոր եղանակները: Նա կանխապես չգիտի, որ այդ խնդիրն իրեն ծանոթ ցանկից չէ, և սկսում է ապարդյուն մտաբերել հիմնախնդրի լուծման իրեն հայտնի մեթոդները: Դրանց իմացության մեծ ծավալը մարդուն թույլ չի տալիս հայտնագործել նոր մեթոդներ: Եվ հակառակը, այդ հայտնի մեթոդներին անծանոթ մարդը փորձում է ըստ էության լուծել հիմնախնդիրը: Եվ այդժամ խնդրի լուծման նոր մեթոդ է հայտնագործում: Պարադոքս է, բայց հանճարեղ մարդուն կրթություն պետք չէ: Պատահական չէ, որ պատմության ընթացքում գիտության ու արվեստի բնագավառներում բոլոր մեծ հայտնագործություններն ու խորքային

տեղաշարժերը կատարել են մասնագիտական հատուկ կրթություն չունեցող մարդիկ: Թոմաս Էդիսոն, Մայքլ Ֆարադեյ, Նիկոլա Տեսլա՝ նրանք հսկայական ազդեցություն են ունեցել մարդկության զարգացման վրա և խորացված կրթություն չեն ստացել այն ոլորտներում, որտեղ կատարել են հայտնագործություններ: Մասնագիտացված կրթությունը չէ, որ աշխարհին տվել է նաև Դոստոևսկի ու Տոլստոյ: Լավ գրողներ են դառնում բժիշկները, ինժեներները: Բայց շատ քչերն են ընդունակ հայտնագործություններ անելու, ճանաչման նոր մեթոդներ հայտնագործելու. պայմանականորեն՝ մարդկանց 1 տոկոսը: Իսկ ի՞նչ պետք է անի մնացած 99 տոկոսը: Չէ՞ որ նրանք նույնպես ցանկանում են օգտակար լինել հասարակությանը: Այ հենց նրանց էլ անհրաժեշտ է կրթությունը: Լայն առումով այն հասարակությանը տալիս է ոչ թե գիտնականներ ու հանճարներ, այլ շարքային կատարողներ: Իսկ ինչպե՞ս է կառուցված մարդկանց հիմնական զանգվածին կրթող համակարգը:

Այդ համատեքստում արժե հիշել, որ կրթության համակարգում գոյություն են ունեցել երկու տարբեր մոտեցումներ՝ այսպես կոչված խորհրդային և արևմտյան հայեցակարգերը, և դրանց վերլուծությունն օգնում է տեսնել խնդրի լուծման տարբեր մոտեցումների դրական ու բացասական կողմերը, ինչպես նաև բուն խնդիրների տարբերությունը: Խորհրդային համակարգը խնդիր ուներ բացատրելու ոչ միայն «ինչպես»-ը, այլև «ինչու դա հատկապես այդպես պիտի արվի» (քնականաբար, հնարավորության սահմաններում): Այն համապատասխանաբար հաշվարկված էր սովորողի որոշակի կոգնիտիվ ունակությունների համար: Կրթության արևմտյան (անգլո-սաքսոնական) համակարգը նախատեսված է ավելի լայն շրջանակի, այդ թվում նաև ոչ շատ ընդունակ մարդկանց համար: Արևմտյան համակարգը ելնում է նրանից, որ ցանկացած մակարդակի ինտելեկտով

օժտված մասնագետը կարող է օգտակար լինել գործի մեջ: Այդ համակարգը հնարավորություն է տալիս, որպեսզի հասարակությանն օգտակար լինեն բոլորը, այլ ոչ միայն տաղանդավորներն ու շնորհալիները: Մարդն ընդամենը պետք է կարողանա օգտագործել ինֆորմացիան ու տարատեսակ ձեռնարկները: Իսկ խորհրդային եղանակն այլ էր՝ բացատրել, թե ինչու պետք է անել այնպես, որ մարդը կարողանա ինքնուրույն ստանալ պահանջվող արդյունքը:

Այդ երկու մոտեցումների տարբերությունը կարելի է տեսնել էլեկտրական համակարգի մոտաժի համար էլեկտրալարի ընտրության օրինակով: Խորհրդային համակարգում պետք էր վերցնել բանաձևը, նրա մեջ տեղադրել որոշակի տվյալներ (հզորություն, էլեկտրական լարում, նյութ, էլեկտրալարի երկարություն) ու ստանալ պահանջվող լարի անհրաժեշտ հատվածքը: Արևմտյան համակարգում էլեկտրալարի ընտրությունը կատարվում է ոչ թե հատվածքով ու դրա հաշվարկով ըստ բանաձևի, այլ ստանդարտ մակնշումով՝ ըստ պատրաստի աղյուսակների: Դուք չգիտեք լարի հատվածքը, պարզապես հայտնի է, որ այդ պայմանների համար անհրաժեշտ է վերցնել այսինչ համարի լար: Կրթության արևմտյան համակարգը կիրառական խնդիր է լուծում մարդկանց մեծ մասից ստանալ գրագետ օգտագործողներ՝ տալով պատրաստի լուծումներ ու մեթոդներ: Իսկ ԽՍՀՄ կրթական համակարգը մոտ էր օպտիմալին: Այն ոչ միայն խնդիրների լուծման մեթոդներն էր առաջարկում, այլև այդ մեթոդների կառուցման մեթոդը, ինչին նպաստում էին խոր հիմնարար գիտելիքները: Պայմանականորեն ասած՝ խորհրդային համակարգը խնդիր ուներ դպրոց եկած բոլոր երեխաներին դարձնելու նորեկյան դասից ելուցիկներ, վերածելու հանճարների: Ընդհանուր կրթության մակարդակն այդպիսի համակարգում շատ բարձր էր, բայց առանձնահատուկ ունակություններով չօժտված մարդիկ արդյունքում դառնում էին միջակ

մասնագետներ: ԱՄՆ-ում հակառակն էր. հասարակության շարքային անդամներին ավելի պրոֆեսիոնալ եղանակով էին պատրաստում:

Կրթության հիմնական խնդիրներից մեկը մարդուն հասարակության մեջ օգտակար դերի, որոշակի գործառույթների նախապատրաստելն է: Այդ գործառույթների ցանկը հայտնի է. դա մասնագիտությունների ցուցակն է: Եվ մենք տեսանք, որ կրթության արևմտյան համակարգն ավելի հաջող է լուծում այդ գործառույթներին նախապատրաստելու խնդիրը: Բայց ամենամեծ ծուղակը հենց այստեղ է: Երբ ամբողջ ուժով սեղմում ենք առաջընթացի ոտնակը, հասարակության համար օգտակար գործունեության սահմանումը սկսում է փոխվել մեծ արագությամբ: Քանի որ կրթությունը տևում է 14-17 տարի (դպրոցն ու բուհը), այդ ընթացքում հանրային օգտակարության (այսինքն՝ մասնագիտության) մասին պատկերացումն էլ է փոխվում: Ի հայտ են գալիս նոր մասնագիտություններ, իսկ հները կամ անհետանում են, կամ էլ լուրջ փոփոխությունների ենթարկվում: Այսինքն, ստացվում է, որ մենք սովորեցնում ենք այն, ինչը պետք էր երեկ: Նախկինում այդ իրավիճակը լուրջ խնդիրներ չէր հարուցում: XX դարի սկզբին մեծ թռիչք արձագանքվեց գիտության մեջ, բայց, ամեն դեպքում, առաջընթացի արագությունն ավելի ցածր էր, քան այսօր: Տասնամյակների միջև տարբերությունը համեմատաբար մեծ չէր, 15-20 տարվա ընթացքում հասարակության մեջ քիչ բան էր փոխվում, իսկ կրթական նյութն ու մեթոդիկաները պահանջված էին տևական ժամանակ: Իսկ այսօր փոփոխությունները կյանքում ահռելի են ու կատարվում են սրընթաց: Դպրոցականը, որին տասը տարուց ավելի պատրաստում են հասուն կյանք մտնելու, ուսումնառության վերջում հասկանում է, որ աշխարհը, որին իրեն պատրաստում էին, այլևս գոյություն չունի. հիմա այն միանգամայն այլ է: Բացի այդ, կրթությունն ուսուցիչներն են: Իսկ դրանք հասուն մարդիկ են, որոնցից

շատերը գիտեն այն, ինչն արդեն չկա, ինչը եղել է երեկ, լավագույն դեպքում ինչը կա այսօր: Կատարյալն այն կլինի, եթե ուսուցիչն ի գործու լինի գիտելիքներ տալ այն մասին, ինչը կլինի տասը-քսան տարի անց: Նասարակության և կյանքի սրընթաց փոփոխությունների ֆոնին կրթությունն անհուսալիորեն հետ է մնում. նոր խնդիրներն ավելի արագ են ի հայտ գալիս, քան մեզ սովորեցնում են դրանք լուծել: Փաստորեն, մենք պատրաստում ենք երեկվա մասնագետներ:

Ներկայումս գերիշխող կրթության արևմտյան համակարգը երկար ժամանակ ակտիվորեն լուծում էր կիրառական խնդիրներ՝ շեշտը չդնելով խորքային գիտելիքների վրա: Եվ այսօր արդեն մենք տեսնում ենք մի ամբողջ սերունդ, որը ծանոթ չէ սովորական դպրոցի 4-րդ դասարանի ծրագրում ներառված ֆիզիկայի տարրական օրենքներին և պարզագույն բանաձևերին: Մի այդպիսի խորհրդանշական պատմություն եղավ, երբ գովազդային հոլովակի սցենար էր գրվել Եվրոպայի խոշորագույն գովազդային գործակալության համար: Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին հոլովակի սցենարում վարորդի շարժման արագությունը նրա կյանքի տևողության երաշխիքն էր (դա հղում է արագության բանաձևին $V=S/t$): Ընկերության ղեկավարները մերժել էին սցենարը համանմանությունը չհասկանալու պատճառով, իսկ երբ նրանց բացատրվել էր, հայտարարել էին, թե դա «չափազանց բարդ բանաձև է հասկանալի միայն մասնագետներին, ֆիզիկոսներին»: Մարդկանց մտածողության և ունակությունների փոփոխությունները կատարվում են բավական արագ և քնավ չունեն դրական դինամիկա: Առաջ ամեն երկրորդ դպրոցական կարող էր դետեկտորային ռադիոընդունիչ հավաքել, գիտեր հեռախոսի կառուցվածքն ու նույնիսկ կարող էր նորոգել սարքը: Շատերը գիտեին հեռուստացույցի, այլ կենցաղային տեխնիկայի կառուցվածքը, իսկ վարորդական իրավունքի վկայական ստանալիս պետք էր իմանալ և՛ ավտոմեքենայի, և՛

շարժիչի կառուցվածքը: Իսկ այսօր ոչ ոք չգիտի ու չի հասկանում, թե ինչպես է կառուցված, օրինակ, բջջային հեռախոսը: Այսօր մենք ընդամենը կարող ենք օգտագործել այն: Եվ դա միայն սովորական մարդկանց չի վերաբերում: Այսօր նույնիսկ ինժեներն է վերածվում «գիտունիկ» սպառողի, որը բացարձակապես չի հասկանում ավտոմատ նախագծման համակարգը: Նա պարզապես օգտագործում է տվյալները, օգտվում համակարգից, ուրիշի գիտելիքներից, որոնց հիման վրա ստեղծվել են ծրագրային և այլ գործիքներ: Բայց եթե հեռացնենք այն քչերին, որոնք իսկապես հասկանում են գործընթացների էությունը և ի վիճակի են զբաղվելու մշակումներով, ապա սպառողների ամբողջ բուրգը միանգամից փուլ կգա:

Կրթության ժամանակակից համակարգի խնդիրներից մեկն էլ դոգմատիկ լինելն է. կրթական գործընթացի բոլոր փուլերում մեր բազմաթիվ հարցերին տալիս են պատրաստի պատասխաններ: Վոլգան թափվում է Կասպից ծով: Պատերազմն սկսվել է այսինչ թվականին: Մեր գլուխն են մտցնում բազմաթիվ փաստեր՝ ինչ-որ մեկնաբանությամբ: Եվ մենք կորցնում ենք մտածելու և հետազոտելու ունակությունը: Իսկ իրականում ե՞րբ է սկսվել Երկրորդ համաշխարհային պատերազմը: 1939 թվականի սեպտեմբերի 1-ին՝ Լեհաստանում: 1938 թվականին՝ Չեխիայում: Չինաստանում՝ 1935 թվականին: Բայց չե՞ որ Երկրորդ համաշխարհային պատերազմն, ըստ էության, Առաջին համաշխարհային պատերազմի շարունակությունն է: Եվ այդ տեսանկյունից պատերազմի ընկալումը միանգամայն այլ է դառնում, ինչպես նաև նրա սկսվելու պատճառները: Կրթության դոգմաները բազմաթիվ են և ունեն իրենց օգուտն ու վնասը: Մի կողմից՝ դրանք օգտակար են, քանզի մարդուն թույլ են տալիս ինչ-որ հենք ունենալ ստեղծագործաբար մտածելու, խորհելու համար: Բայց մյուս կողմից՝ կասկածելի է ներկայացվող բազում փաստերի հավաստիությունը: Դոգմաները կարող են կեղծ լինել, և պատմությունը բազմիցս

ապացուցել է դա: Կրթության, ինչպես և գիտության դոգմատացումը զարգացման դադար է, որովհետև մարդուն զրկում է հարցեր տալու և դրանց պատասխանները փնտրելու, հետազոտական գործունեությամբ, ճանաչողությամբ զբաղվելու հնարավորությունից:

Կրթությունը ներկայիս տեսքով հասարակության սահուն զարգացման փուլերում դրական դեր է կատարում. գիտելիքների անընդմեջ ճշգրտման գործընթաց է ընթանում: Սակայն բիֆուրկացիայի կետերում հասարակության հեղափոխական վերափոխությունների պահերին կրթությունն սկսում է վնասել, հակազդել զարգացմանը: Բիֆուրկացիայի այդպիսի կետ է դիտարկվում նաև այսօր, որովհետև ձևավորվում է մի իրականություն, որը նախկինում երբեք գոյություն չի ունեցել: Եվ լավ կրթություն ստացած, լավագույն բուհերում ուսումնառություն անցած մարդիկ այսօր հետ են մնում գործընթացներից, իսկ նրանց պահվածքն ու որոշումները համարժեք չեն առկա իրավիճակին: Այսօր մենք նոր տիպի սոցիումի ստեղծման շեմին ենք, որի սպասարկման համար անհրաժեշտ է կրթության այլ համակարգ: Ամբողջ համակարգը պետք է վերաիմաստավորել ու վերանախագծել: Բայց ո՞վ պետք է դա անի: Չէ՞ որ երեկվա հանրույթի մարդիկ չեն կարող ստեղծել ապագայի հանրույթի կրթական բազան ու հանրագիտարանը, նրանք իներցիայով փորձելու են նորի մեջ առնել հնի տարրերը, հետևաբար՝ հակազդել նորին: Այսօր կրթության նոր հայեցակարգ է հարկավոր, որը չի խոչընդոտի զարգացմանը: Իսկ ինչպիսի՞ն պիտի լինի ապագայի կրթությունը: Այն պետք է լուծի երեք խնդիր.

1. Աշակերտի ունակությունների զարգացում հիշողության բարելավում, տրամաբանորեն մտածելու, կանխատեսելու, դեռևս չեղածը տեսնելու, կամքի և այլ կոգնիտիվ ունակությունների զարգացում:
2. Գիտելիքներով, տեղեկատվությամբ հագեցում:

3. Նոգեկան դաստիարակություն՝ Բարոյ և Չարի հասկացությունների տարանջատում, Տիեզերքում մարդու տեղի, նրա գոյության իմաստի սահմանում:

Անցյալի մեծ մանկավարժներն այս երեք խնդիրը լուծում էին մեկ ուսուցչի, մեծատառով Ուսուցչի միջոցով: Դրանք վարպետաց դպրոցներ էին: Օրինակ, Արիստոտելն իր ակադեմիան կառուցել էր իր շուրջը: Եվ այդպիսի կրթական համակարգը ճկուն էր այնքանով, որքան կարող էր փոխվել մանկավարժն ինքը: Այդպիսի մոտեցման արձագանքը պահպանվել է ստեղծագործական մասնագիտություններում: Ստեղծագործական բունեքում մինչ օրս գործում է այդպիսի կրթական համակարգ՝ ինչ-որ մեկի արվեստանոցը: Նետաքրքիր է, որ հայ ավանդական կրթության մեջ նույնպես առկա էին վերը նշված երեք կարևորագույն բաղադրիչները. ուսումնական գործընթացին պարտադիր մասնակցում էին երեք մանկավարժ՝ վարժապետը (պատասխանատու էր շնորհների զարգացման համար), վարդապետը (պատասխանատու էր հոգևոր զարգացման համար) և ուսուցիչը (պատասխանատու էր գիտելիքների համար): Այդպիսով, ապահովվում էր ինֆորմացիայի, էներգիայի և մատերիայի եռամիասնությունը: Եվ, բնականաբար, այդ բոլոր երեք վեկտորներն անհրաժեշտ էր մարդու մեջ զարգացնել միաժամանակ, զուգահեռ: Բայց այսօրվա կրթական համակարգում այդ երեքից առկա է միայն մեկը՝ հնարավորինս շատ ինֆորմացիա տալը սովորողին: Ժամանակին պարտադիր առարկաների ցանկից անհետացել են, օրինակ, տրամաբանությունն ու հոետորաբանությունը՝ հետազոտության գործիքները: Այսօրվա կրթությունն ուղղված չէ հետազոտության հմտությունների սերմանմանը: Իհարկե, ինֆորմացիան յուրացնելիս զուգահեռ զարգանում է նաև տրամաբանությունը, բայց իներցիայով, ինքնատիկության: Եթե աշակերտին հանձնարարեք ընթերցել և պատմել Դոստոևսկու ստեղծագործություններից,

ակամայից նրա մեջ նաև բարոյական հասկացություններ կձևավորվեն (համենայնդեպս, կարող են ձևավորվել): Բայց փաստն այն է, որ դպրոցն ու բունն այսօր մարդու ունակությունները զարգացնելու կամ նրա հոգևոր աճով զբաղվելու խնդիր չեն դնում: Այսօր ձևավորվող հասարակության կրթական հայեցակարգը պետք է վերադառնա եռամիասնության սկզբունքին. այն ի գործ է իսկապես ապահովել մարդու ներդաշնակ զարգացումը:

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃԳՆԱԺԱՄ

Ներկայիս քաղաքակրթության հիմնախնդիրների մասին խոսելիս անհնար է շրջանցել այն հարցերը, որոնք վերաբերում են մարդու անօտարելի, առանձնահատուկ հատկությանը՝ արարելու ունակությանը: Ստեղծագործությունն ինքնին արարչություն է՝ ըստ կերպարանքի ու նմանության: Ժամանակների սկզբում Սուրբ հոգին՝ արարիչը, կառուցավորողը, հենց այդպես է ստեղծել աշխարհը՝ որպես մի ներդաշնակ կառուցվածք: Ըստ կերպարանքի ու նմանության ստեղծված ներդաշնակ կառուցվածք էր նաև մարդը՝ նույնպես ստեղծող ու կառուցավորող: Մեկ անգամ ևս հիշենք մարդու առաջին առաջադրանքը, որն ստացել էր Արարչից՝ անուն տալ կենդանիների բոլոր տեսակներին: Այդ խնդիրն իսկապես ստեղծագործական էր: Ընդ որում, բարձր կարգի ստեղծագործություն էր, որը չուներ մեկնակետ, չէր հիմնվում նախորդների աշխատանքի արդյունքների վրա: Ստեղծագործություն զրոյից, բացարձակ ստեղծագործություն: Աստծու նմանակ, Աստծու մասնիկ, Աստծու մոդել. այս բոլորն ասված են մարդ-արարչի մասին: Եվ իզուր չէ, որ այդպիսի մարդու մասին ասում են՝ Աստծու շնորհն ունի:

Եթե կրոնը, գիտությունն ու արվեստը դիտարկենք որպես զուգահեռ զարգացող կենսոլորտներ, ապա արվեստը շատ ավելի վաղ է անկում ապրել, քան մյուսները: Նավանաբար պատճառն այն է, որ ստեղծագործությունը միշտ որոշակի մարտահրավեր է իրականությանը: Այդ թվում՝ նաև անկմանն ու քայքայմանը: Նասարակության մեջ ծնունդ առնող հակասությունները միշտ արտացոլվում և իմաստավորվում են հենց ստեղծագործության մեջ: Այդպես էր Վերածննդի շրջանում, նման քան տեսնում ենք նաև դարաշրջանների սահմանագծին, հին հասարակական ֆորմացիայի համատարած փլուզման պայմաններում XX հարյուրամյակի սկզբին: Նենց այդ ժամանակ օդում կախված էին արվեստում վրա հասնող լուրջ ճգնաժամի կանխագագույնն ու ընկալումը: Կազիմիր Մալևիչն իր «Սև քառակուսիով» արդեն այն ժամանակ ցույց տվեց, որ ստեղծագործությունն իմաստազրկվում է, ձևն սկսում է հաղթել բովանդակությանը և դուրս գալիս առաջին պլան: Պատահական չէ, որ նրա «Սև քառակուսին» ցուցահանդեսում ներկայացված էր անկյունում, որտեղ միշտ սրբապատկերներն են կախում: Դա պարզ ուղերձ էր. ձևը գլխավոր է դառնում, հենց նրա առջև են խոնարհվելու: Բայց նույնիսկ Մալևիչից հետո մենք տեսնում ենք լիարժեք ստեղծագործության վառ օրինակներ: Անցյալ դարը հարուստ էր ստեղծագործական հանճարներով՝ երաժշտության, գրականության մեջ, արվեստի գրեթե բոլոր ոլորտներում: Բայցևայնպես ստեղծագործությունը մեծ հաշվով ավարտվեց XX դարի վերջին. այսօր դժվար է թվել համաշխարհային մասշտաբի այնպիսի ականավոր գրողների կամ կոմպոզիտորների, որոնք ազդեցություն ունեն մարդկության վրա: Իսկ ստեղծագործության արգասիքների առումով կարելի է ասել, որ մենք ապրում ենք բովանդակության հանդեպ ձևի վերջնական հաղթանակի դարաշրջանում: Այսօրվա ստեղծագործական ինֆորմացիայի մեծ մասը ձև է:

Յանկացած ստեղծագործություն, իհարկե, յուրօրինակությամբ է: Այսինքն՝ որևէ նոր, ցայսօր չեղած բան ստեղծելու ձգտում: Արարողի ֆանապարհը դեպի սովորական մարդը, դեպի այդ մարդու ընկալումն անցնում է նրա տպավորությունների, ենթագիտակցության միջով: Եվ նորը ստեղծագործության պարտադիր բաղադրիչն է: Չէ՞ որ հենց նորն է մարդուն հանում հուզական անշարժությունից, նրան ավելի ընկալունակ ու զգայուն դարձնում:

Սակայն յուրօրինակության որոնումից բացի, ստեղծագործությունը նաև մի գործընթաց է, երբ արարողը տեսնում է կարևորն ապագայում, գտնում է զարմանալիև ու նշանակալիև ներկայում և անցյալում: Մարդկանց մեծ մասը չի տեսնում՝ ինչ է կատարվում շուրջը: Նրանք պարզապես չեն նկատում, որ իրենց կյանքը լեցուն է իրադարձություններով: Իսկ ստեղծագործող մարդը նկատում է այդ իրադարձություններն ու մանրամասները, տեսնում դրանց միջև կապերը, իմաստները: Ստեղծագործողն ինչ-որ առումով իմաստների վերլուծաբան ու կոնստրուկտոր է: Նա ներդաշնակ կառույց է ստեղծում՝ լինի վեպ, պիես, կինոնկար, երաժշտություն, կտավ կամ քանդակ: Եվ արդյունքում ծնվում է նոր իմաստ, կամ էլ վերաիմաստավորվում են գոյություն ունեցող ճշմարտությունները՝ ինքնատիպ ստեղծագործական լուծման շնորհիվ: Կատարյալն այս դեպքում ինքնատիպ ձևի և ինքնատիպ բովանդակության միությունն է: Ընդամին, բովանդակությունը, ինչպես նաև ինֆորմացիան, միշտ առաջնային է: Արարողի ստեղծածի մեջ պարտադիր առկա է մի բան, որը նա ցանկանում է ասել բոլորին: Ստեղծագործությունը խիստ կանոնների ու շրջանակների բացակայության շնորհիվ թույլ է տալիս տեսնել այն, ինչը թաքցված է մեր աչքից, թույլ է տալիս ստեղծել ու նկարագրել այլընտրանքային իրականություն, դիտարկել կյանքի ինչ-ինչ սցենարներ, որոնք կարող էին լինել ապագայում, ներկայում կամ անցյալում: Եվ վերջապես,

ստեղծագործությունը խորհրդածելու առիթ է: Ընդ որում, ինչպես արդեն ասվել է, ստեղծագործությանն արձագանքում է մարդու ենթագիտակցությունը՝ առաջացնելով հույզեր, վերաբերմունք, ապրումներ: Իսկ ապրումների հետևանք են մտորումները, եզրակացությունները, գործողությունները: Միայն ապրումակցող մարդն է ունակ ամբողջ խորությամբ ընկալելու ինֆորմացիան: Նայտնի ամերիկյան ֆիլմում, որտեղ ներկայացված են կինոարտադրության ստեղծագործական գործընթացի մանրամասները, ռեժիսորը սցենարիստին բացատրում է, որ պարզագույն ճշմարտություններ հանդիսատեսին ուղղակիորեն հայտնելու փոխարեն պետք է այլ ուղի փնտրել. «Մենք սովորեցնում ենք նրանց, իսկ մարդիկ դա չեն սիրում: Եթե ասելու բան ունենք, պիտի հասցնենք դա ասել, քանի դեռ մարդը լալիս է, ծիծաղում, վրդովվում»: Նենց դա է «ստեղծագործության մեխանիկան»: Կարծես ամեն ինչ հասկանալի է: Բայց միայն այն դեպքում, եթե իսկապես «ասելու բան ունենք»: Իսկ այդ հարցում այսօր լուրջ խնդիրներ են ծագել:

Ի՞նչն է ոգեշնչում ստեղծագործողին: Սովորական կյանքը, մարդիկ, որոնց հանդիպում է, բնությունը, որով հիանում է: Իսկ ինչո՞վ կարող է ոգեշնչվել, օրինակ, նա, ով մեծացել ու ապրում է բացարձակ միայնության մեջ՝ անլուսամուտ, գորշ պատերով սենյակում փակված: Նա, ով չի տեսել մարդկային հարաբերություններ, բնություն, տարերք, և, ի վերջո, գիրք չի կարդացել, երաժշտություն չի լսել, նկար չի տեսել: Սա, իհարկե, չափազանցություն է: Բայց թույլ է տալիս տեսանելի դարձնել մարդու կախվածությունը միջավայրից: Այո՛, մարդը ձգտում է հայտնագործել ու ստեղծել: Բայց նա պետք է ստեղծի իր մեջ ու իր շուրջը եղածի կերպարանքով ու նմանությամբ: Եվ ստացվում է, որ ստեղծագործությունը կախված է իրական կյանքից: Ստեղծողը պետք է ներքուստ իմանա, թե ինչն է բարին, որպեսզի Արարչի նման ինչ-որ բան ստեղծի ու տեսնի, որ

բարի է: Իսկ այսօր սրընթաց ձևավորվող իրականությունը տարրալուծում է հասկացություններն ու նշանարտությունները, ջնջում Բարու և Չարի, Լավի ու Վատի սահմանները: Ստեղծագործության համար ավելի ու ավելի դժվար է դառնում գաղափարախոսական հենակետեր գտնելը: Եվ այդ ժամանակ մտքի հստակության բացակայության պայմաններում նորը սկսում են փնտրել ու գտնել զուտ ձևի, ընդ որում ամենատարօրինակ ձևի մեջ: Ինստալյացիաներն ու պերֆորմանսները փոխարինել են բովանդակային ստեղծագործությանը, դրանց նշանաբանն են դարձել «Գլխավորն այն է, որ առ այսօր ոչ ոք այսպե՛ս չի արել»-ը, «Որքան սկանդալային, այնքան լավ»-ը և այլն: Իսկ բովանդակությո՞ւնը: Սուրբ Տոգին, ստեղծելով աշխարհը՝ Երկիրը, աստղերը, կենդանիներին, բույսերը, ժամանակ առ ժամանակ դադար էր առնում, որ նայի իր ստեղծածին ու տեսնի, որ բարի է: Մարդն էլ որևէ բան ստեղծելիս միշտ ձգտում է, որ այն դուր գա և՛ իրեն, և՛ նրանց, ովքեր կտեսնեն կամ կլսեն ստեղծածը: Ստեղծագործության իմաստը հենց ներդաշնակը ստանալն է: Եվ տեսնելը, որ դա բարի է: Բայց ցուցասրահներ ներխուժած անիմաստ ինստալյացիաներն ու պերֆորմանսները նշմարիտ ստեղծագործական աշխատանքի ու բովանդակության բացակայության պատճառով դժվարությամբ են արձագանք գտնում մարդու ենթագիտակցության մեջ: Եվ մանավանդ մարդու համար դժվար է զգալ «բարին», երբ այն պարզապես չկա: 2011 թվականի նոյեմբերին Դորտմունդի Քանգարանում հավաքարարը ոչնչացրեց ժամանակակից արվեստի՝ 800 հազար եվրոյով ապահովագրված մի ստեղծագործություն: Այն կոչվում էր «Երբ սկսում է կաթել առաստաղից»: Ամբողջ ստեղծագործությունն իբր առաստաղից կաթացած պղտոր ջրով մի թաս էր: Տավաքարարը լվացել էր թասը՝ ոչնչացնելով գլոխգործոցը: 2014 թվականի փետրվարին իտալական Բարի քաղաքի Քանգարանում մեկ այլ հավաքարար սեղանից մաքրեց թխվածքի փշրանքն

ու դեն նետեց մի քանի հմռթված անձեռոցիկ: Արվեստը նորից ծանր կորուստ կրեց. փշրանքներն ու անձեռոցիկները 10 հազար եվրո արժողությամբ ինստալացիայի մասն էին: 2015 թվականի հոկտեմբերին իտալական Բոլցանոյում հավաքարարն ամբողջովին ոչնչացրեց «Որտե՞ղ ենք պարելու այս երեկո» ինստալացիան՝ գետնին թափված շամպայնի շշեր, ծխուկներ ու կոնֆետի: Բայց ինստալացիայի հեղինակները մեծ վարպետությամբ ընդամենը տասը թուփում վերականգնեցին գլուխգործոցը: Անիմաստն այսօր արվեստի գործի կարգավիճակ է ձեռք բերում: Ճիշտ այնպես, ինչպես անիմաստն ստանում է ինֆորմացիոն հաղորդագրության, հոդվածի, ռեպորտաժի կարգավիճակ: Եվս մեկ գործոն, որի ի հայտ գալը հսկայական ազդեցություն է ունեցել ժամանակակից արվեստի վրա. դա այսպես կոչված մասսայական արվեստն է: Դարեր շարունակ ստեղծագործության արդյունքը բացառիկ, եզակի նմուշ էր: Օրինակ, նկարչի կտավը հասանելի էր մարդկանց սահմանափակ շրջանակի, որոնք, հիմնականում, ինչ-որ բան հասկանում էին կերպարվեստից (հենց նրանց համար էլ այդ կտավները ստեղծվում էին): Այդ մարդիկ և՛ պատվիրատուներ էին, և՛ արվեստի քննադատներ: Տազիվ թե Լեոնարդոն կամ Միքելանջելոն առաջնորդվելիս լինեին ամբոխի հաշակով կամ շուկայի առևտրականների ու գյուղացիների պահանջմունքներով: Նրանց առաքելությունն այլ էր: Յուրաքանչյուրը փնտրում էր մարդու ենթագիտակցությանը դիմելու իր լեզուն: Եվ յուրաքանչյուրն ասելու, տալու բան ուներ, կամ ինչ-որ բանի մասին ուզում էր զգուշացնել: Նրանց ստեղծագործության մեջ առկա էր փիլիսոփայական բաղադրիչը: Աշխատանքի համար նրանց պետք չէին տասնյակ ու հարյուր հազարավոր երկրպագուներ: Բավարար էր միայն, որ Մեդիչիները գլուխ էին հանում արվեստից և ստեղծագործության պատվիրատուներն էին: Մոտավորապես այդպիսի իրավիճակ էր նաև գրականության, երաժշտության ոլորտում:

Օրինակ, Բախի երաժշտությունն ուղղված չէ ժողովրդական զանգվածների ցանկությունների բավարարմանը: Դա մարդարարչի և աշխարհի արարչի միջև կապ հաստատելու հրաշալի օրինակ է երաժշտության ներդաշնակության միջոցով: Դա մարդու և Արարչի հաղորդակցության լեզվի որոնում է: Արվեստն իր լավագույն արտահայտումներում միշտ առաջ է ընկել հասարակությունից, առաջարկել է շարժման վեկտորներ, կողմնորոշիչներ, ինքնատիպ ստեղծագործական լուծումների միջոցով ձևակերպել բարոյական ու վարքագծային հիմնադրույթներ: Բայց ստեղծագործության այդ առաքելությունը մեծ հարցականի տակ դրվեց ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման հետևանքով: Նոր իրականությունը ծնեց այսպես կոչված մասսայական մշակույթ, և ամեն ինչ գլխիվայր շրջվեց: Տպագրական հաստոցը, ձայնագրությունը, կինեմատոգրաֆը, ռադիոն, հեռուստատեսությունը, ինտերնետը հանգեցրին արվեստի ցանկացած գործի համաընդհանուր մատչելիության: Առաջին հայացքից՝ հրաշալի է: Տնարավոր դարձավ տեսնել ու լսել այն ամենը, ինչի մասին մարդիկ նախկինում միայն երագում էին: Բայց, ինչպես արդեն ասել ենք, արվեստից առանձնապես գլուխ չհանող լսարանը տեխնոլոգիաների մատչելիության պատճառով սրընթաց ընդլայնվեց: Այդ լսարանի հետ հետադարձ կապ հաստատվեց. քացարձակապես բոլորը հնարավորություն ստացան գնահատելու ստեղծագործության արդյունքը: Մենք ոչ միայն միլիոնավոր ընթերցողներ, հանդիսատեսներ և ունկնդիրներ ունեցանք, այլև նույն քանակի քննադատներ: Նրանց վերաբերմունքը արվեստին սկսեց նշանակություն ունենալ: Ընդ որում, լսարանը ոչ միայն հուզական (դուր է գալիս/դուր չի գալիս), այլև նյութական (կգնեն/չեն գնի) արձագանքի հնարավորություն ստացավ: Կապիտալիզմի և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների պայմաններում արվեստն արագորեն կախման մեջ ընկավ լայն զանգվածների վերաբերմունքից:

Եթե նախկինում ազնվականը կամ մեկենասն արվեստի ինչ-որ գործ էին պատվիրում սեփական էգոն բավարարելու նպատակով, ապա այսօր նրանց փոխարինելու են եկել մարդիկ, որոնց նպատակը արվեստի հաշվին փող աշխատելն է: «Դրամով քվեարկող» հանդիսատես. սա ժամանակակից կինոյի ու թատրոնի եզրույթ է: Լավագույն կինոռեժիսորների վարկանիշի հիմքում ոչ թե տաղանդն է, այլ ֆիլմի ցուցադրումից ստացված գումարը: Շահութաբերությունը դարձել է արվեստի հաջողակության գլխավոր չափանիշ: Իսկ մենք հիշում ենք, որ մարդկանց լայն զանգվածներն այդ նույն ժամանակ ներքաշված են ահռելի ինֆորմացիոն հոսքերի մեջ, որտեղ ապակառուցողական ու անպետք ինֆորմացիան շատ մեծ տոկոս ունի: Եվ նույն մարդիկ այդ հոսքերի ազդեցությամբ արվեստի պահանջարկ են ձևավորում: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսին կլինի այդ միջին թվաքանական պահանջարկը: Զանգվածները մակերեսային զվարճանք են պահանջում, իսկ նրանք, ովքեր պատասխանատու են արվեստի համար, խրախուսում են դա՝ իրենց կեղծ արվեստն արդարացնելով հանդիսատեսի պահանջարկով: Եվ այս փակ շրջանից դուրս պրոծնելն ավելի ու ավելի դժվար է դառնում, որովհետև արվեստին փող գործնականում տալիս են այդ նույն շարքային հանդիսատեսները: Այո՛, իսկական արարողը ճշմարիտ արվեստ է ստեղծում, անկախ իրականությունից և ի հեռուկա դրան: Բայց այդ քառսի դեմ պայքարը սահմանափակ ռեսուրս ունի: Ասենք, լավ հեղինակը կարող է հանճարեղ ֆիլմի սցենար գրել: Բայց ֆիլմարտադրությունը թանկ հաճույք է: Իսկ որտեղի՞ց այդ փողը: Կինոընկերություններն ու պրոդյուսերները ֆինանսավորում են միայն այն, ինչը եկամուտ է խոստանում: Իսկ եկամտաբերությունը շատ վատ չափորոշիչ է արվեստում: Արդյունքում լուրջն ու արժեքավորը մերժվում են դեռ մտահղացման փուլում. «Ձեր պատմությունը 4 միլիոն տոնային տնտեսումիներին չի ստիպի սուպերմարկետից գնումներ

անելուց հետո մտնել կինոթատրոն ու տոմս գնել»։ Երաժշտությունը մարգադաշտեր պիտի լցնի, ֆիլմը՝ կինոդահլիճներ աշխարհով մեկ, գիրքը պետք է գնեն միլիոնավոր տապաքանակով, հեռուստածրագիրը պետք է բարձր վարկանիշ ունենա, իսկ նկարիչն իր գործերը պետք է ցուցադրի ամենահեղինակավոր (իմա՝ թանկ) պատկերասրահներում։ Շահի հետևից ընկնելը հանգեցրել է ֆիլմերի, երաժշտության, գրականության հարահուս արտադրությանը, ստեղծագործությունների «կոմերցիոն հաջողակության» շաբլոնների ստեղծմանը։ Դրանցում մանրամասն նշված է, թե ստեղծագործության մեջ հատկապես քանի տոկոս պետք է կազմի հումորը, սեքսը, սարսափի և արյունոտ տեսարանները, ինչ կերպարներ են անհրաժեշտ և այլն։ Շաբլոնով գիրք գրելն ու ֆիլմեր նկարելը շատ ավելի հեշտ է, քան ինքնատիպ գրականություն ու իսկական կինո ստեղծելը։ Կինո են նկարահանում ըստ ուղեցույցների, սխեմաների, որոնցում ֆիքսված են զանգվածային հանդիսատեսի վարքականոնները։ Եվ արդյունքում ունենք զանգվածային արվեստի մմուշների զանգվածային արտադրություն զանգվածների համար։

Բայց նույնիսկ արվեստի եզակի հանճարեղ գործերն այսօր ստեղծվում են այլ պայմաններում և այլ նպատակներով։ Արվեստի մեկենասները մեռյալ դաս են։ Նրանց փոխարինել են արվեստում ֆինանսական սպեկուլյացիաներով զբաղվողները. նրանք կտավներ են գնում հետագայում բարձր գնով վերավաճառելու համար։ Տաղանդավոր նկարիչների հարցում ամեն ինչ հասկանալի է. իսկական տաղանդը, միևնույնն է, կգնահատեն, և այն միշտ պահանջված կլինի։ Իսկ ինչպե՞ս վարվել արվեստի «սուռճատի» հետ։ Ինչպե՞ս վարվել կտավին նետած ցայտերի, արստրակտ ներկաբծերի, բազմագույն անիմաստ գծերի հետ։ Նանուն վաճառքի լեգենդներ են հյուսվում դրանց շուրջը։ Եվ փիարը ոչնչությամբ դարձնում է խորհրդավոր հանճար՝ ամենացուցադրվող,

ամենապահանջված, ամենասկանդալային, ամենաեպատաժային և այլն: «Մոդաիկ նկարիչ»։ սա այսօրվա բառապաշարից է: Ոչ թե տաղանդավոր, հանճարեղ կամ խոր, այլ հենց մոդաիկ: Բնականաբար, նույնիսկ այսօր անհրաժեշտ է ինչ-որ նոր, հետաքրքրություն առաջացնող գործեր ստեղծել: Եվ տաղանդի (հետաքրքար՝ մտքի ու բովանդակության) բացակայության պայմաններում առաջին պլան է գալիս ձևը. պատկեր ստեղծելու եղանակները, ներկ ստանալու տեխնոլոգիաները, բուն նյութը, որով նկարվում է կտավը, ավելի կարևոր են, քան այն, ինչ պատկերվում է: Նոր բովանդակություն գտնելը դժվար է, ոչ բոլորին հասու: Իսկ անա արտաքուստ աչքի ընկնելն ավելի դյուրին է: Մազերը կանաչ ներկելն ավելի հեշտ է, քան թեկուզ մեկ խելացի միտք արտահայտելը: Ներկը կտավի վրա թափելը, վրձինը փղին կամ կապիկին հանձնելը ավելի հեշտ է, քան իրական գլուխգործոց ստեղծելը: Այդպիսի սխեման անոելի թվով անտաղանդ, անպիտան մարդկանց հնարավորություն է տալիս ստեղծագործող կամ արվեստի գործիչ կոչվել: Նրանց օրինակը ոգևորում է նաև այլոց, և ապաշնորհների թիվը բազմապատկվում է երկրաչափական պրոգրեսիայով: Նորմալ ստեղծագործությունը ոչնչանում է այդ հեղեղի մեջ՝ չկարողանալով դուրս գալ ջրի երես:

Մենք ապրում ենք բովանդակության հանդեպ ձևի հաղթանակի դարաշրջանում: Այսօրվա ստեղծագործական ինֆորմացիայի մեծ մասը ձև է: Նոր ձևի հետևից ընկնելը քիսում է հասարակության տնտեսական ու սոցիալական մոդելից: Բայցևայնպես ինչո՞ւ է դրան զուգահեռ բովանդակությունը արագ վերանում ստեղծագործությունից: Մի՞թե մեկը մյուսին խանգարում է: Պատասխանը շատ պարզ է. անագնացող ինֆորմացիոն քառսի հետևանքով բովանդակությունը մեր կյանքից է անհետանում: Մենք ամենուր տեսնում ենք իմաստների ու բովանդակություն վերացում: Անիմաստությունը

դառնում է թրեմդ: Իսկ ըստ կերպարանքի ու նմանության ստեղծելն անհնար է, եթե այդ կերպարանքը չկա:

Արդար կլինի ասել, որ իմաստների կորստի խնդիրը վաղուց է ծագել՝ որպես սոցիումի անհավասարակշռվածության, նրա միաչափ-երկչափ մոդելների անկատարության հետևանք: Մարդը միշտ ցանկացել է հանաչել աշխարհը. դա նրա բնական ձգտումն է: Եվ ժամանակի ընթացքում կրոնի, գիտության ու արվեստի ի հայտ գալն այդ ձգտման հետևանքն էր: Դրանց ծագումը պայմանավորված էր որոշ հարցերին պատասխանելու ցանկությամբ՝ ինչ կա մեր շուրջը, ինչպես է դա կազմակերպված, ինչու է այդպես: Սակայն պատմության ընթացքում և՛ կրոնը, և՛ գիտությունը, և՛ արվեստը դադարեցին հետաքրքրվել այդ հիմնարար հարցերով ու սկսեցին զբաղվել կիրառական խնդիրներով. իմաստները սկսեցին նահանջել երկրորդ պլան: Եվ արդյունքում ամեն ինչ կիրառական դարձավ: Կրոնը հոգևոր խնդիրներից անցավ մարդկանց կառավարմանն ու հնազանդեցմանը՝ ստեղծելով եկեղեցու ինստիտուտը, գիտությունն աշխարհի բնույթի և կառուցվածքի հարցերից անցավ կիրառական տեխնոլոգիաների ստեղծմանը, իսկ արվեստն աշխարհահանաչմանն ու մարդու հանաչմանն ուղղված ճշմարիտ ստեղծագործությունից ու արարումից անցավ ամբոխին զվարճացնելուն՝ ստեղծելով փոփ-արտն ու մասսայական մշակույթը:

ՆԵՐԿԱՅԻՍ ԶԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ

Մեր կյանքի տարբեր բնագավառներում կուտակված հիմնախնդիրների ու հակասությունների՝ վերը բերված դիտարկումը մեզ հանգեցնում է հետևյալ ընդհանրացված

եզրակացություններին: Կյանքի ներկայիս տեխնոլոգիաները մարդկությանը հասցրել են նրան, որ արդեն տեսանելի ապագայում կսպառվեն գոյության ու բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ մոլորակի ռեսուրսները: Կյանքի այդ տեխնոլոգիաներն ու ստանդարտները կոչված են բավարարելու մեծամասնության արհեստածին, անսամանափակ պահանջները և պայմանավորված են հասարակության սոցիալական մոդելով, որի հիմքում ազահությունից դրդված և ամեն գնով նյութական շահ ստանալուն միտված կապիտալիստական տնտեսությունն է: Այդ տնտեսական մոդելը, որը պարտադիր պահանջում է կապիտալի ընդլայնված վեր-արտադրություն, ընդհուպ մոտեցել է մոլորակի պաշարների սպառմանը, նոր շուկաների բացակայությանն ու հետագա ընդլայնման անհնարինությանը, հետևաբար՝ կործանմանը: Ընդամին, կյանքի բոլոր բնագավառներում եկամտաբերությունից ու շահութաբերությունից խիստ կախվածությունը հանգեցրեց հասարակության գիտակցության լուրջ դեֆորմացիայի և իմաստների աստիճանական կորստի: Գիտության մեջ սկսել է գերակշռել կիրառական ուղղությունների զարգացումը՝ ի վնաս հիմնարար հետազոտությունների. այսօրվա գիտնականների աշխատանքն ավելի շատ վաղուց ստեղծվածի կիրառման, շահութաբերություն խոստացող տարբերակների փնտրտուք է, քան հեղափոխական հայտնագործությունների որոնում:

Առողջապահության մեջ առաջին պլան է մղվել դեղագործությունը՝ որպես հետևանք հատվածական մոտեցման (բուժել ոչ թե մարդուն, այլ առանձին օրգաններ ու ախտանշաններ), ինչպես նաև գերշահույթ ստանալու ձգտման (հիվանդ մարդկանց հաշվին, որոնք պատրաստ են դեղամիջոցներ գնել): Մարդու առողջության մասին հոգատարությունն այսօր հակասության մեջ է դեղագործական ընկերությունների և առողջապահության ներկայիս ամբողջ համակարգի

Ֆինանսական շահերի հետ՝ ստեղծելով իրական սպառնալիք մարդկության գոյատևման համար: Ֆինանսական շահերի գերակայությունն արտահայտվում է նաև մշակույթի և արվեստի ոլորտի ակնհայտ նգնաժամով, որտեղ ձևը վերջնականապես հաղթել է բովանդակությանը՝ ի հաճույս հասարակության բացարձակ մեծամասնության կասկածելի հաշակի և պահանջմունքների, որոնք ֆինանսապես ազդում են ստեղծագործական նախագծերի ու նախաձեռնությունների նակատագրի վրա:

Կապիտալիզմի գաղափարախոսական հիմքը Հին կտակարանի բազմաթիվ դրույթներն են, որտեղ նյութական բարիքները հռչակվում են կյանքի գերնպատակ, որին հասնելու համար ընդունելի են բոլոր միջոցները: Միևնույն ժամանակ հինկտակարանային գաղափարախոսությունն ու փիլիսոփայությունն արարչական իմաստներ չեն կրում, այլ, ընդհանուր առմամբ, արգելքների համակարգ են, որի հիմնական նպատակը մարդու անմոռոնչ հնազանդեցումն է Աստծու կամքին: Այդ գաղափարախոսությունը, արհեստականորեն միացվելով քրիստոնեությանը, ներքին լուրջ կրոնական հակասություններ առաջացրեց, որոնք աստիճանաբար բերեցին հասարակության նկատմամբ վերահսկողության կորստին: Հինկտակարանային դրույթները, որոնք ուղղված էին մարդու առավել երկրային ձգտումներին, հաղթեցին քրիստոնեական բարոյականությանն ու 500 տարի առաջ դարձան նոր հասարակության ձևավորման հիմքը: Այդ հասարակության մեջ փողը բարձրացվեց ու նույն աստիճանին դրվեց իշխանության հետ: Միևնույն ժամանակ իշխանությունը կորցրեց սրբազանությունն ու իջեցվեց, որպեսզի փողի հետ նույն մակարդակի լինելը սկզբունքորեն հնարավոր դառնա: Այսպիսով, կապիտալիստական համակարգը ձևավորեց ու հաստատեց մարդկային հասարակության նոր, երկչափ սոցիալական մոդել՝ կառուցված երկու փոխարկելի արժեքների՝

իշխանության ու փողի (էներգիայի և մատերիայի) շուրջ: Անցումն այդ երկչափ մոդելին նշանավորվեց կյանքի բոլոր ոլորտներում արմատական փոփոխություններով: Ժամանակին մարդկությունը որպես հիմք ընդունել էր աստվածային (այսինքն տիեզերական) օրենքները, որոնց պետք է ենթարկվեր կյանքը Երկրի վրա՝ որպես Տիեզերքի մի մասի: Մարդկությունը երկար ժամանակ ջանում էր գտնել այդ օրենքները, ձևակերպել դրանք: Սակայն հակասություններով լի, ինչպես նաև անհամատեղելի տարրերի միակցումով կառուցված կրոնը չկարողացավ համարժեք պատասխանել կյանքի կարևոր հարցերին, քացատրել աշխարհի կառուցվածքը, ընկալելի սահմանել Բարու և Չարի հասկացությունները, դրանց ի հայտ գալու պատճառները, մարդու գոյության բուն իմաստը: Երկչափ քաղաքակրթության մեջ կրոնին փոխարինելու եկավ գիտությունը՝ առ Աստված հավատի փախարեն առաջ բերելով գիտատեխնիկական առաջընթացի հանդեպ հավատը: Նասարակության միաչափ (այսինքն՝ միայն իշխանության շուրջ կառուցված) մոդելից երկչափ մոդելին անցնելով՝ մարդկությունը խզեց կապը տրանսցենդենտի հետ ու որոշեց, որ Տիեզերքում մարդուց վեր ոչինչ չկա: Սոցիումի նպատակները սահմանափակվեցին իշխանությամբ ու հարստությամբ, իսկ հոգևոր կյանքն ու մարդկային անհատականության զարգացումը մղվեցին հետին պլան: Գլխավոր օրենք դարձան սահմանադրությունները, որ գրել էին մարդիկ՝ համընդհանուր հավասարության և ցանկացած մարդու՝ փառքի ու հարստության հասնելու պատրանքներից:

XX դարի սկզբին ստեղծվեցին ու ամրապնդվեցին գիտական տեսություններ, որոնք սպասարկում էին այդ համաշխարհային կարգը՝ երկչափ համակարգը: Դա օրինաչափ էր, անհրաժեշտ էին գիտության ֆունդամենտալ տեսություններ այդ կարգը հիմնավորելու համար: Այդ տեսությունները ստեղծվեցին ժամանակի հրամայականով, նույնիսկ գուցե

ենթագիտակցորեն: Իշխանության աշխարհականացման համար պետք էր ոչնչացնել նրա սրբազան բնույթը: Չէ՞ որ երկչափ աշխարհն անհնար է, եթե ամբողջ իշխանությունը պատկանում է Աստծուն: Եվ մարդիկ, գիտնականները ենթագիտակցորեն սկսեցին նկարագրել հենց երկչափ աշխարհը: Կապիտալիզմը երկչափ աշխարհի դասական տնտեսական համակարգն է: Բայց նույնիսկ Կառլ Մարքսի ուսմունքը, որը կապիտալիզմը չարիք հռչակեց ու մարտահրավեր նետեց նրան, երկչափ աշխարհի ծնունդ էր: Մարքսիզմն առաջարկեց հավելյալ արժեքի ուսմունքը, պատմության մատերիալիստական ընկալումը և դասակարգային պայքարի տեսությունը: Մարքսը կտրականապես բացառում էր տրանսցենդենտը մարդու կյանքում, իսկ կրոնը կոչում էր «հաշիշ ժողովրդի համար»:

Բնագիտության մեջ ընդունվեց մարդու ծագման դարվինյան տեսությունը, որը կյանքի ծագումն ու կենդանի տեսակների բազմազանությունը Երկրի վրա հանգամանքների պատահական զուգադիպության արդյունք հայտարարեց: Մարդու ծնունդը նույնպես հռչակվեց պատահական իրադարձությունների արդյունք, իսկ կյանքի արարման մեջ որևէ մտահղացման ու նախագծի գոյությունն ընդհանրապես մերժվեց: Դարվինի տեսությունն, ըստ էության, բացառում էր Տիեզերքի իմաստալից լինելը, ինֆորմացիոն սկզբի առկայությունը: Դա ուղիղ նպաստում էր իշխանության աշխարհականացմանը. եթե նախկինում կայսրն ի վերուստ տրված անձ էր, Աստծու օծյալ, ապա հիմա արդեն երկնքից չէր ծագում, այլ՝ ճահճաջրից, որից իբր առաջացել էին բոլոր կենդանիները, իսկ արդյունքում՝ նաև մարդը:

Ֆրոյդիզմը դարձավ այն ուսմունքը, որը հաստատում էր, թե մարդու բանականությունը բացառապես նրա կենսագործունեության արդյունքն է: Մեր ամբողջ վարքագիծը կապվում էր ֆիզիոլոգիայի հետ՝ սեքս, ուտելիք ու դրանց

հետ առնչվող խնդիրներ: Տեսությունը պնդում էր, որ մարդը զուրկ է աստվածայինից, տրանսցենդենտի հետ որևէ առնչությունից: Եվ այդ տեսանկյունից մարդն ընդամենը կենդանական աշխարհի ներկայացուցիչներից մեկն էր:

Վատն այն էր, որ այդ տեսություններն ամբողջովին կեղծ չէին, կիսաեշմարտություն էին, մանիպուլյացիա: Խելացի սուտը պիտի ճշմարտության տարրեր ունենա: Իսկ ճշմարտությունն այն էր, որ ֆիզիոլոգիան իսկապես զգալի ազդեցություն ունի մարդու կյանքի ու վարքագծի վրա: Բայց ֆրոյդիզմը չէր դիտարկում այն փաստը, որ ֆիզիոլոգիայից բացի, մարդու վրա էլի ինչ-որ բաներ են ազդում: Սուտը հենց դա լռության մատնելու մեջ էր: Դարվինիզմի ճշմարտացիությունը նրանում է, որ տեսակների բազմազանությունն իսկապես կարող է ծագած լինել ընդհանուր կենսաբանական նախնուց: Իսկ սուտն այն էր, որ այդպիսով մեխանիկորեն կապ էր հաստատվում մարդու և պրիմատների միջև՝ անտեսելով մարդու որակական տարբերությունը ցանկացած կենդանուց՝ վերացարկված մտածելու և ստեղծված ինֆորմացիան նյութականացնելու ունակությունը: Իսկ ամենակործանարարը գիտության համար դարձավ անկենդանից կյանքի ինքնաբեր ծագման վարկածը:

Երկչափ հասարակության գաղափարախոսության տեսական հիմքն ավարտուն տեսքի բերեց ֆիզիկան. Էյնշտեյնի հարաբերականության տեսությունը մերժում էր եթերի գոյությունը, ինչը նույնպես տրանսցենդենտի, ինֆորմացիոն սկզբի առկայության, Տիեզերքի տրամաբանության և իմաստալից լինելու ժխտումն էր: Դրանով իսկ Տիեզերքը ներկայացվում էր որպես մի հսկա անիմաստ քառս, որտեղ արդեն միանգամայն բնական էր դիտվում կյանքի անիմաստ ու պատահական ծագումը: Իսկ գիտության մեջ ընդունված մեթոդներն ու փորձը հանգեցրին նրան, որ գիտությունն ինքը շատ արագ վերածվեց կրոնի, որտեղ քննադատական մոտեցումն

ու աշխարհաճանաչման ձգտումը փոխարինվել են կույր հավատով առ հեղինակությունների անսխալականությունը: Գիտության համար լուրջ խնդիր դարձավ նաև ճանաչման անալիտիկ մեթոդը, որը ժամանակի ընթացքում հանգեցրեց գիտնականների նեղ մասնագիտացմանը, ահռելի թվով գիտական մասնագիտությունների ի հայտ գալուն և դրանց միջև տրամաբանական կապի ոչնչացմանը, ընդհանուր պատկերի ընկալման կորստին: Ընդ որում, այսօր առաջվա պես համոզիչ պատասխան չունեն աշխարհաստեղծման կարևորագույն հարցերը.

- ինչպե՞ս է ծնունդ առել Տիեզերքը,
- ինչպե՞ս են ծնունդ առել աստղերը,
- ինչպե՞ս է ծագել կյանքը Երկրի վրա,
- ինչպե՞ս է հայտնվել մարդը:

Կապիտալիզմը սպառողների քանակի անընդհատ և անսահմանափակ աճի հաշվին արագ հարստացման իր ձգտումով ակամա ծնեց նաև իր գերեզմանափորին՝ ինֆորմացիայի արտադրման ու տարածման մատչելի տեխնոլոգիաները, որոնք իրենց հերթին անշրջելի փոփոխություններ առաջ բերեցին հասարակության մեջ ու մարդու վարքագծում: Ամենատարբեր ինֆորմացիայի ահռելի քանակի բուռն տարածումն ու սպառումը մարդկությանը կանգնեցրել է նոր իրողության առաջ՝ նոր, եռաչափ հասարակության ծննդյան, որտեղ փողի և իշխանության հետ մեկտեղ զարգացման համարժեք վեկտոր ու ինքնուրույն արժեք է դարձել ինֆորմացիան: Բայց պարզվեց, որ մարդկությունը պատրաստ չէ այդ եռաչափ իրականության մեջ ապրել. մարդկությունն առայժմ չգիտե՝ ինչպես վարվել ինֆորմացիայի հսկայական հոսքերի հետ, ինչպես կարգավորել, գտել դրանք ու թույլ չտալ, որ ինֆորմացիան ապակառուցողական, կործանարար ազդեցություն ունենա կյանքի վրա:

Վերը բերված եզրակացություններն ընդհանրացնելով՝ կարելի է ավելացնել նաև այսօրվա հետևյալ լուրջ խնդիրները.

- հակասությունների ու պարադոքսների անտեսում գործունեության բոլոր ոլորտներում, կրկնակի ստանդարտների քաղաքականություն և այլն,
- հանաչման վերլուծական, անալիտիկ մեթոդ, հետազոտվող նյութի խոր հատվածականացում, մարդու զարգացման տարբեր ուղղությունների միջև կապերի խզում, ընդհանուր պատկերը նկարագրող սինթետիկ մոտեցման քացակայություն,
- պատրաստ չլինելը նոր ինֆորմացիոն իրականությանը, որն սկսում է ձևավորել հասարակության սկզբունքորեն նոր մոդել:

Ընդ որում, կարելի է նկատել, որ այս բոլոր կետերը փոխկապակցված են, և դրանց միջև առկա է պատճառահետևանքային կապ:

Ասվածն ընդհանրացնելով՝ աշխարհի ներկայիս վիճակը կարելի է գնահատել որպես համակարգային ճգնաժամ. չնայած թվացյալ զարգացմանն ու առաջընթացին, չի հաջողվում գտնել որևէ հիմնախնդրի լուծում մարդկության գործունեության որևէ ուղղությամբ. նույնիսկ հակառակը՝ առաջընթացին զուգահեռ հիմնախնդիրներն ավելանում են: Այսօր չկան մարդկությանը միավորող գաղափարներ, չկան այնպիսի ձևակերպված իմաստներ, որոնք ուղենիշ կդառնային Երկրի վրա մարդու կյանքի համար: Մարդկանց թվաքանակի կտրուկ աճը, մոլորակի ռեսուրսների սահմանափակ լինելը, իշխող սոցիալ-տնտեսական համակարգն ու բոլոր գործընթացների գլոբալացումը մեր քաղաքակրթությունը հասցրել են ճգնաժամի, որից անկորուստ ելք այսօր չի երևում:

ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՈՐՊԵՍ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԵԹՈԴ

Մեր քաղաքակրթությունը պատմականորեն իր մանր ճգնաժամերը լուծել է պատերազմների միջոցով, որոնք բերել են ժամանակավոր հավասարակշռության՝ բնակչության մի մասի, հիմնականում տղամարդկանց զոհվելու գնով: Պատերազմից հետո վրա էր հասնում կատարսիսը, վերաիմաստավորումն ու վերածնունդը: Առանձին կայսրությունների ճգնաժամերը քիչ ազդեցություն ունեին այլ երկրների և ընդհանրապես Երկիր մոլորակի կյանքի վրա: Երրորդ աշխարհն ընդհանրապես չէր նկատում կայսրությունների ճգնաժամերը: Բայց ժամանակի ընթացքում Երկիր մոլորակը ինֆորմացիոն առումով փոքրացավ: Ամեն ինչ դարձավ փոխկապակցված, դարձավ միասնական համակարգ: Աշխարհում այլևս չկա մի անկյուն, որտեղ հասարակության կյանքը հնարավոր լինի այլ՝ համաշխարհային կարգից կտրված սկզբունքներով: Ուստի, ներկայիս ճգնաժամն իր մեջ ահռելի վտանգ է կրում. հնարավոր տնտեսական կոլապսը կազդի Երկիր մոլորակի յուրաքանչյուր բնակչի վրա, ինֆեկցիոն հիվանդության ցանկացած բռնկում կարող է վերածվել համավարակի՝ հսկայական զոհերով ու, բնականաբար, համաշխարհային տնտեսության սրընթաց փլուզմամբ, իսկ նոր համաշխարհային պատերազմը կարող է ոչնչացնել ընդհանրապես ողջ մարդկությունը:

Սակայն պատերազմի մասին խոսելիս պետք է հասկանանք, որ չի կարելի նկատի ունենալ միայն նախկին, դասական պատերազմների մոդելները: Գնահատելով ցանկացած ապագա պատերազմի հնարավորությունն ու նախապատրաստվելով դրան՝ բոլորը սովորաբար դատում են անցած պատերազմի կատեգորիաներով ու կանոններով: Եվ պատմությունն ամեն անգամ մեզ մատնացույց է անում այդ մոտեցման սխալ լինելը: Ամեն նոր պատերազմ վարում են նոր եղանակներով,

որոնք համապատասխանում են նոր իրողություններին: Բայց հարց տանք մեզ՝ իսկ ի՞նչ է պատերազմը:

Ընդհանրապես, գոյություն ունի պետությունների փոխգործակցության չորս տեսակ.

- սիներգիա,
- պարզ համագործակցություն,
- դիմակայություն,
- պատերազմ:

Եթե սիներգիայի ու համագործակցության հարցում ամեն ինչ պարզ է (դրանք փոխշահավետ գոյակցության ձևեր են), ապա փոխգործակցության մյուս երկու տեսակներն արժե մանրամասնել:

Պետությունների դիմակայությունը մրցակցության տեսակ է, որի դեպքում դիմակայող կողմը համաձայն է գոյի աճի ժամանակավոր նվազման (քայց ոչ աճի դադարեցման) այն պայմանով, որ այն կանի հետագայում: Եվ կանի մրցակցի, հակառակորդի հաշվին: Նպատակը հակառակորդից ավելին ստանալն է: Պայմանականորեն խաղաղ ժամանակահատվածում դիմակայող կողմերից մեկը համաձայն է որևէ ոլորտում իր աճի աննշան նվազմանը, եթե հակառակորդի համապատասխան ոլորտում աճի նվազումն ավելի շոշափելի լինի:

Իսկ ի՞նչ է պատերազմը: Պատերազմն այն վիճակն է, երբ կողմերը համաձայն են նույնիսկ ավելի մեծ կորուստների, իրենց գոյի գգալի նվազեցմանը, քայց այն պայմանով, որ հակառակորդի այդ կորուստն ու գոյի նվազումը կրկնակի լինի՝ մարդկային կորուստներ, նյութական վնաս և այլն: Պատերազմի արդյունք պիտի դառնա նյութական կորուստների փոխհատուցումը պարտվածի հաշվին: Պատերազմը տնտեսական ու քաղաքական գերիշխանության հասնելու մեթոդ է, հակառակորդի ռեսուրսներին տիրելու ձգտում: Դրա համար

պետք է կաթվածահար անել հակառակորդին, ճնշել նրան և նրա տիրակալների կամքը: Մինչև XX դարի կեսը հակառակորդի կամքը ճնշելու հիմնական միջոցը թշնամու բանակի հնարավորինս շատ զինվոր սպանելն էր, որպեսզի հակառակ կողմի ղեկավարության դիմադրության կամքը կոտրվեր: Կարևորն այն է, որ նպատակը հենց կամքը կոտրելն էր, իսկ մարդկանց ոչնչացնելը երկրորդական հարց էր. նպատակին հասնելու համար կարելի էր և չսպանել, այլ գերի վերցնել կամ պարզապես կազմալուծել ու փախուստի մատնել հակառակորդի բանակը: Տատկանշական է, որ պատերազմի ավարտից անմիջապես հետո պատերազմող կողմերն արագ անցնում էին սովորական կյանքի և հաճախ լուրջ խնդիրներ չէին ունենում միմյանց հետ հաղորդակցվելու հարցում: Պատերազմը կարծես թե առժամանակ (սովորաբար մի քանի տարով) փոխում էր հաղորդակցման կանոնները, հետո ամեն ինչ վերադառնում էր ի շրջանս յուր:

Բայց XX դարում պարզվեց, որ զգալի վնաս պատճառելն ու հսկայական թվով կորուստները ոչ բոլոր դեպքերում են կոտրում հակառակորդի կամքը: Դրա առաջին օրինակներից մեկը Տայրենական մեծ պատերազմն էր, որի ընթացքում Խորհրդային Միության կամքը չկոտրվեց, չնայած պատերազմի առաջին տարիների ահռելի թվով զոհերին ու հսկայական նյութական կորուստներին: Իսկ Վիետնամի պատերազմը պարզապես աղետալի եղավ ամերիկացիների համար, որոնք հույս ունեին հակառակորդին ջնջել երկրի երեսից զանգվածային ռմբակոծություններով, նապալմով, բնակչության դեմ հաշվեհարդարներով, հերբիցիդներ ցրելով ու անտառներ ոչնչացնելով: Նույնիսկ մեծագույն զոհերի գնով չհաջողվեց կոտրել տեղացիների կամքը, իսկ ամերիկացիները ջախջախիչ պարտություն կրեցին պատերազմում: Աստիճանաբար եկավ այն գիտակցումը, որ ժամանակակից աշխարհում հակառակորդի կամքը կաթվածահար անելու

համար կան նաև այլ մեթոդներ՝ ոչ ուժային, բայց ոչ պակաս արդյունավետ:

Եվ հիմա այդ մեթոդներն ամբողջ ուժով կիրառվում են ամենուրեք: Նոր, եռաչափ իրականության պայմաններում ինֆորմացիան դարձել է զանգվածային ոչնչացման հզորագույն զենք, որը կարող է ճնշել ու կաթվածահար անել հակառակորդի կամքը: Փոփոխել հակառակորդի գիտակցությունը, նրա արժեհամակարգը, սեփական պատմության ու պետության ընկալումը, նրա գիտակցության մեջ ներդնել կեղծ տեղեկություններ, կեղծ հիմնադրույթներ. ահա թե ինչ նպատակներ են այսօր դրվում ինֆորմացիայի առջև: Օրինակ, ամերիկացիները Ռուսաստանի հետ չեն պատերազմում տանկերով ու հրթիռներով (չնայած դրանց թվաքանակը փոքր չէ): Փոխարենն անընդհատ նկարահանում ու տարածում են գեղարվեստական ու վավերագրական ֆիլմեր Երկրորդ համաշխարհային պատերազմում տարած հաղթանակում ԱՄՆ-ի բացառիկ դերի, ԽՍՀՄ-ում կոլեկտիվացման տարիների սարսափների, բռնաճնշումների, ինչպես նաև ամերիկյան ժողովրդավարության՝ որպես մարդկային հասարակության իդեալի՝ արևմտյան մտածողության ու կենսակերպի հաղթանակի մասին և այլն: Երկրները հակառակորդների հետ պատերազմում են ՋԼՄ-ների էջերում, հեռուստատեսությամբ, գլոբալ սոցիալական նախագծերի ու ծրագրերի, հասարակական կազմակերպությունների միջոցով, որոնք հակառակորդի հասարակությունը քայքայող ու ավերող արժեքներ են տարածում: Պետք է ընդունենք, որ այսօր աշխարհում երրորդ համաշխարհային պատերազմ է, միայն թե նոր, անարյուն՝ տնտեսական ու ինֆորմացիոն մեթոդներով, որոնց նպատակը, սակայն, նույնն է՝ ուրիշի սեփականությունը խլելն ու գերիշխումը: Այսօր բոլոր խոշոր քաղաքական խաղացողները պատերազմում են իրար դեմ՝ համաձայնելով զգալի կորուստներին և նույնիսկ զոհերին՝ հուսալով խլել

հակառակորդի ռեսուրսներն ու առավելագույնս թուլացնել նրան: Այդպես են վարում, օրինակ, նավթային պատերազմները, երբ նավթի գների արհեստական անկումը կազմակերպվում է հակառակորդին սնանկացնելու նպատակով (ընդ որում, ընդունելով, որ սեփական տնտեսությունը նույնպես ահռելի կորուստներ է կրելու): Իսկ հակառակորդի տնտեսական կործանման արդյունքը պետք է լինի սոցիալական պայթյունն ու քաղաքական իշխանության փոփոխությունը: Այսպիսի եղանակներով են մղվում ժամանակակից պատերազմները: Միայն թե անարյուն պատերազմի դեպքում չի լինի կատարսիս, չեն լինի աղետի վերախմաստավորում և կյանքի արմատական փոփոխություններ, մահը կլինի դանդաղ ու աննկատ: Պատերազմելու նոր մեթոդները բերում են նրան, որ հասարակությունը չի կարողանում մոբիլիզացվել, քանի որ չի տեսնում կոնկրետ թշնամուն. այն նյութական ու շոշափելի չէ:

Ժամանակին Ադուֆ Տիտերը ցանկանում էր Երրորդ ռայխն առաջնորդ կարգել Եվրոպայի վրա՝ իրեն ենթարկելով մյուս պետությունները: Այդ նպատակին հասնելու մեթոդը կոպիտ ուժն ու նացիստական մարդատյաց գաղափարախոսությամբ հռչակված՝ ազգերի ու ռասաների խտրականությունն էր: Այսօրվա Գերմանիան դե ֆակտո դարձել է Եվրոպայի գլխավոր երկիրը, նրա քաղաքական ու տնտեսական ծանրության կենտրոնը, ազդեցության կենտրոնը: Բայց դրա համար հարկ չեղավ տանկեր հանել ռազմադաշտ կամ ռմբակոծել եվրոպական պետությունների մայրաքաղաքները: Դրա փոխարեն կիրառվեցին ու կիրառվում են պատերազմի ժամանակակից, անարյուն մեթոդներ: Այս ամենով հանդերձ, հարկ է նկատել, որ համաշխարհային մասշտաբի ավանդական պատերազմի սանձազերծման սպառնալիքը՝ ավանդական զինատեսակների կիրառմամբ, բոլորովին էլ չի վերացել: Տակառակը, այն խիստ հրատապ է՝ նկատի

ունենալով որոշումներ կայացնող կենտրոնների թվի անն աշխարհում: Երկքևեռ աշխարհի փոխարեն, երբ «սառը պատերազմի» պայմաններում ակտիվություն կարող էր դրսևորել երկու համաշխարհային խաղացողներից որևէ մեկը, այսօր այդպիսի խաղացողների թիվը զգալիորեն մեծացել է: Ավելին, պարտադիր չէ, որ որոշումներ կայացնող կենտրոնները պետություններ լինեն: Այսօր միջուկային պատերազմ կարող են հրահրել վերահսկողությունից դուրս եկած հաքերները կամ կրոնական մոլեռանդները: Խնդիրն այն է, որ գլոբալ ինֆորմացիոն ցանցի պայմաններում փաստորեն ամեն ոք կարող է մասնակից լինել համաշխարհային պատերազմի սանձազերծմանը: Գլոբալացումը ներկայիս պայմաններում ինքնին լուրջ սպառնալիք է մարդկության անվտանգությանը:

U U U



Դիտարկելով մեր քաղաքակրթության հիմնախնդիրներն ու պարզելով դրանց խորքային պատճառները՝ մենք փորձեցինք պատասխանել առաջին մասի սկզբում տրված հարցերին.

- ի՞նչ է մեզ հետ կատարվում,
- որո՞նք են կատարվածի պատճառները:

Բնականաբար, հաջորդ հարցը, որ ծագում է.

- ի՞նչ անել:

Բայց մինչև կորոշարկենք քաղաքակրթության ապագա մոդելի սահմանային պայմանները, որտեղ մարդկությունը թոթափված կլինի վերը նկարագրված խնդիրներից ու հակասություններից, անհրաժեշտ է վերադառնալ կարևորագույն հարցին՝ մարդու տեղը Տիեզերքում ու կապը նրա հետ: Պետք է միանշանակ արձանագրել, որ մարդը չի ապրում ինչ-որ մեկուսացված համակարգում քացառիկ, զուտ այդ համակարգի համար արդարացի կանոններով: Մարդն ապրում է Տիեզերքում՝ նրա գալակտիկաներից մեկում, գալակտիկական աստղային համակարգերից մեկում, մոլորակներից մեկի վրա: Եվ դա անվիճելի փաստ է: Գալակտիկաները, աստղային համակարգերը, մոլորակները, կենդանի օրգանիզմներն ու մարդը Տիեզերքի անքակտելի մասերն են: Իսկ Տիեզերքում, ինչպես գիտենք, գործում են որոշակի հիմնարար օրենքներ ու կանոններ: Եվ մարդկության համար որևէ վարքականոն դիտարկելիս նախ պետք է անպայման խորամուխ լինել ամբողջի օրենքների մեջ, հասկանալ այդ գլոբալ տիեզերական համակարգը, որի մասն է մարդը: Նայենք

մեր շուրջը, ավելի ուշադիր դիտարկենք այդ տիեզերական օրենքներն ու սկզբունքները, ինչպես և փորձենք նկարագրել առկա օրինաչափությունները, ձևակերպել որոշակի կանխադրություններ, որոնց վրա հիմնվելով՝ հնարավոր կլինի կառուցել մարդկային սոցիումի ապագան:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՅԵՆԱՐ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ

Ցանկացած համակարգ պետք է ունենա որևէ հիմք: Նենման կետերի, որոշակի հիմքի առկայությունն անհրաժեշտ է ցանկացած կառուցվածքի, ցանկացած տեսության համար: Մեր դեպքում հետագա բոլոր մտարկումների հիմքում ընկած կլինեն Տիեզերքի այդ նույն հիմնական օրենքները, որոնք այսօր ձևակերպված են, և որոնց իրավացիությունը հաստատվում է մարդու կողմից Տիեզերքի դիտարկման ողջ ընթացքում: Մենք վերն արդեն հիշատակել ենք այդ հիմնական օրենքներն ու սկզբունքները.

- պատճառականության սկզբունք. մի դեպքն ազդում է մյուսի՝ ավելի ուշ կատարվածի վրա (ցանկացած դեպք ունի իրեն նախորդող պատճառ),
- պահպանման օրենքներ. էներգիայի, իմպուլսի, զանգվածի և այլն,
- էնտրոպիայի (քաոսի) չնվազման օրենք:

Նետագա բոլոր մտարկումներում արդարացի կլինի պահանջել, որ ցանկացած առաջադրվող գաղափար ու ենթադրություն չհակասեն այս օրենքներին:

ԵՐԵՔ ԷՈՒԹՅՈՒՆ

Առաջին ենթադրությունը, որն արդեն հիշատակել ենք սկզբում, երեք եությունների (ինֆորմացիայի, մատերիայի և էներգիայի) պարտադիր առկայությունն է անկարգությանը, քառսին դիմադրող ցանկացած համակարգում, ցանկացած գոյի մեջ: Գոյը պարտադիր բաղկացած է մատերիայից, օժտված է էներգիայով ու նկարագրվում է ինֆորմացիայով: Եվ այդ կանոնը գործում է Տիեզերքի բոլոր անկյուններում: Օրինակ, դիտարկելով հիմնարար մասնիկների մակարդակը, մենք իմանում ենք քվարկների ու գլյուոնների գոյության մասին: Տվյալ դեպքում մատերիան քվարկներն են (հիմնարար մասնիկները), էներգիան՝ գլյուոնները (փոխազդեցության տեղափոխողները, վեկտորային դաշտի քվանտները): Իսկ ինֆորմացիան այն խիստ կանոններն են, որոնց համաձայն՝ քվարկները, գլյուոնների օգնությամբ միանալով, կազմում են պրոտոններ ու նեյտրոններ:

Ցանկացած բարդության բոլոր համակարգերում պատկերը նույնն է՝ երեք եությունների պարտադիր առկայություն. քիմիական միացությունների աշխարհում մատերիան ատոմներն են, իսկ էներգիան՝ դրանք կապող դաշտերը: Եվ այստեղ նույնպես գոյություն ունի սեփական ինֆորմացիան, որը, խստորեն կանոնակարգելով, որոշարկում է այդ կապերն ու փոխազդեցությունները: Որ տեսանկյունից էլ դիտենք գոյը, նկատում ենք այս երեք բաղադրիչները: Օրինակ, մարդու մարմինը մատերիա է, այդ մատերիայի կառուցվածքի մասին ինֆորմացիան արձանագրված է ԴՆԹ-ում, և նրա ֆիզիկական մարմինը, բնականաբար, օժտված է էներգիայով: Միևնույն ժամանակ մարդու գործունեությունը նույնպես եռավեկտոր է. ֆիզիկական մարմինը (մատերիան) օժտված է գիտակցությամբ (ինֆորմացիա), ոգով ու կամքով (էներգիա): Նետաքրքիր է, որ այդ եռավեկտորությունը հատուկ է ոչ միայն

առանձին օբյեկտների, այլև համակարգերի, որոնց մեջ այդ օբյեկտները փոխգործակցում են: Օրինակ, ինչպես արդեն համոզվել ենք սոցիումի հիմնախնդիրները դիտարկելիս, այդ երեք էություններն առկա են մարդկային հասարակության մեջ. մատերիան փողն է, էներգիան՝ իշխանությունը, իսկ ինֆորմացիան հենց ինֆորմացիան է՝ մաքուր տեսքով: Այդ առումով ավելորդ չի լինի ճշտել, որ գոյի երեք էությունների (ինֆորմացիայի, մատերիայի և էներգիայի) մասին խոսելիս մենք խոսում ենք ընդհանրացված մատերիայի, ընդհանրացված էներգիայի և ընդհանրացված ինֆորմացիայի մասին:

Եվ այսպես, մենք ենթադրում ենք՝ Տիեզերքը կառուցված է երեքական սկզբունքով ու եռավեկտոր է: Եռավեկտորությունը դիտվում է ամենուր՝ սկսած տարածությունից: Չորրորդ վեկտորը ոչ մի տեղ ի հայտ չի գալիս, և դա բնավ պատահական չէ: Ինֆորմացիայի տեսությունն ասում է եթե գոյը ներկայացնենք նիշերի նվազագույն քանակով, ապա այդպիսի «այբուբենը» պետք է բաղկացած լինի 2,7 նիշերից (դա իռացիոնալ e թիվն է): Քանի որ մենք խոսում ենք դիսկրետ երևույթների մասին, ապա e-ին առավել մոտ ամբողջական թիվը երեքն է: Այդ պատճառով էլ երեքականություն ենք տեսնում: Չորրորդը պարզապես ավելորդ է: Փաստորեն, երեք ընդհանրացված վեկտորները գոյի շարադրման, ներկայացնման առավել կոմպակտ մեթոդն են: Չորրորդ էության բացակայության խիստ ապացույց, թերևս, չկա: Բայց տրամաբանությունը հուշում է, որ երեքականությունն արդարացի է: Իսկ ինչպե՞ս են իրար հետ կապված այդ երեք հիմնական էությունները՝ ինֆորմացիան, մատերիան և էներգիան:

Ալգորիթմը բավական պարզ է: Ինֆորմացիան առաջնային է: Առանց ինֆորմացիայի մատերիան անհնար է. չէ՞ որ ինֆորմացիան պետք է նախորդի իր նյութականացմանը: Մատերիան արդեն ինֆորմացիայի նյութականացման արդյունքն է: Մատերիան օժտված է այնպիսի հատկանիշով, ինչպիսին

Էներգիան է՝ կինետիկ (շարժվող մատերիայի համար), պոտենցիալ (ներքին) և այլ: Օրինակ, էլեկտրոնն ունի զանգված ու լիցք: Բայց զանգվածի ու լիցքի մասին պատկերացումը (այսինքն՝ դրա մասին ինֆորմացիան) գոյություն ունի նախքան էլեկտրոնը, նրանից անկախ: Էներգիան նույնպես չի կարող գոյություն ունենալ առանց մատերիայի. մատերիայի ծագման պահին նրա շուրջը հայտնվում են էներգետիկ դաշտեր: Ինֆորմացիան իր հերթին չի կարող արտադրվել առանց էներգիայի: Չնայած ինֆորմացիայի ստեղծման համար ծախսված էներգիան չափազանց քիչ է (մոտավորապես 10^{-27} ջ/բիտ), բայց միշտ առկա է: Այսպիսով, շղթան փակվում է, և առաջանում է երեք էությունների (ինֆորմացիա – մատերիա – էներգիա) մրրիկ, ձագար, որն անընդհատ ընդարձակվում է: Իրար հետ կապված երեք էությունների այդ մրրիկում առաջնային պետք է լինի ինֆորմացիան, որն ավելի քիչ ջանք է պահանջում ստեղծման համար: Եթե այդ մրրիկն ուժգնանում է, ապա նրա սկզբնական ազդական ինֆորմացիոն պիտի լինի:

Կարևոր է նկատել, որ ճիշտը փոխազդող էությունների հենց նշված հաջորդականությունն է, որովհետև էներգիան մատերիա չի ծնում: Օրինակ, ոչ մի, նույնիսկ գերուժեղ դաշտ չի կարող պրոտոն կամ հելիումի ատոմ ստեղծել: Մատերիայի նախնական մասնիկը, թեկուզ չնչին, պետք է գոյություն ունենա: Մեծ պայթյունից հետո տարածության մեջ կա չկառուցավորված, չհամակարգված մատերիա: Այն կառուցավորելիս էներգիան ոչ թե ծախսվում, այլ ազատվում է: Օրինակ, երկու պրոտոնների միացման պահին տեղի է ունենում ջերմամիջուկային պայթյուն: Էներգիան ու գրավիտացիան մոտեցնում են կառուցվածքները (պրոտոնները), ինչի հետևանքով ազատվում է էներգիա, որը ծախսվում է նոր կառուցվածքների ստեղծման համար, և այսպես՝ փուլ առ փուլ: Ընդամին, կրկին ընդգծենք, որ այդ գործընթացի համար անհրաժեշտ ամբողջ ինֆորմացիան գոյություն ուներ ի

սկզբանե, մինչ այդ ամենը: Չենք կարող ասել, թե որտեղից են հայտնվել այդ նախնական ինֆորմացիան ու նախնական մատերիան, բայց մենք տեսնում ենք այդ երեք էությունների մրրիկը: Եվ դա փաստ է, ինչպես փաստ է այն, որ ինֆորմացիան անպայման առաջնային է: Մենք դրա արձագանքը գտնում ենք Նովհաննեսի Ավետարանի առաջին տողում «Ի սկզբանե էր Բանն» (ի դեպ, Նին կտակարանում չի ասվում որևէ բան եղե՞լ է սկզբում, այնտեղ պատմությունն սկսվում է նրանից, որ Աստված ինչ-որ բան է արարել): Օրինակ, դիտարկելով քվարկները, ասում ենք, որ գոյություն ունեն դրանց փոխազդեցության կանոններ: Չէ՞ որ ամեն քվարկ չէ, որ մյուսի հետ փոխգործակցում է: Բայց նախ կանոնն է, և հետո միայն՝ դրա կատարումը: Մարդկությունը դարեր շարունակ բացահայտում է բնության օրենքները: Եվ հարց է ծագում իսկ որտե՞ղ են գրված այդ օրենքները: Տիեզերքում բոլոր մասնիկները ենթարկվում են բնության օրենքներին: Իսկ ինչպե՞ս են մասնիկներն իմանում, որ կանոնները հենց այդպիսին են: Իսկապես, կան համընդհանուր փոխգործակցման կանոններ, կան հաստատուններ: Օրինակ, π թիվը եղել է միշտ: Մենք այն չէինք կարող հորինել, միայն կարող էինք գտնել, որ կապ կա շրջանագծի երկարության ու տրամագծի միջև, և այն հաստատուն է: Իսկ որտե՞ղ էր գտնվում այդ π թիվը: Որտե՞ղ էին մյուս հաստատուն մեծությունները, փոխազդեցության, կառուցակարգման օրենքները:

Նամաշխարհային եթերի՝ որպես ինֆորմացիայի պահպանման ու փոխանցման միջավայրի մասին վարկածը կկարողանա բացատրել տիեզերական շատ մեխանիզմներ: Իսկ եթե եթերը կարող է պահպանել ինֆորմացիան, ապա տեսականորեն կարող է և արտադրել այն (ինչպես, օրինակ, ուղեղը): Այդ դեպքում Տիեզերքը կներկայանա որպես բանական, գիտակցությամբ օժտված համակարգ: Բայց ժամանակակից գիտությունը կտրականապես մերժում է եթերի գոյությունը, և

բանական Տիեզերքի հարցն առայժմ բաց է մնում: Տիեզերքում ինֆորմացիայի կարևորության և մարդու կյանքում ու զարգացման մեջ նրա դերի մասին կխոսենք հետո, իսկ առայժմ ձևակերպենք մեր առաջին կանխադրույթը:

Էնտրոպիային դիմակայող ցանկացած գոյ բաղկացած է երեք էությունից՝ ինֆորմացիա, մատերիա և էներգիա:

ԱՇԽԱՐՀՆԵՐԻ ՆԵՏԱԳԻԾԸ ՏԻԵԶԵՐՔՈՒՄ

Եվ այսպես, մենք խոսում ենք գոյի մասին՝ իր բազմազանությամբ ու եռավեկտորությամբ: Ժամանակն է հարցնել՝ իսկ ինչպիսի՞ն է այդ գոյը, որ Տիեզերքում շրջապատում է մեզ: Ընդհանրապես ի՞նչ է այն: Այդ մասին խոսելիս և փորձելով ներկայացնել դիտարկվող աշխարհի օբյեկտիվ պատկերը, բնականաբար, պետք է վերապահում անենք. մենք տեսնում ենք Տիեզերքի միայն որոշակի հատվածը, նրա մի մասը: Մենք հասկանում ենք, որ հնարավոր է՝ աշխարհը շատ ավելի մեծ ու բարդ է, բայց գիտելիքներն ու ինֆորմացիան, որոնց այսօր տիրապետում է մարդկությունը, թույլ են տալիս խոսել միայն դիտարկվող աշխարհի մասին: Եվ գոյի այդ դիտարկվող աշխարհը կարելի է բաժանել վեց պայմանական հիերարխիկ մակարդակների (աշխարհների): Ահա այդ աշխարհները՝ ըստ անման կարգի:

- **Հիմնարար մասնիկների աշխարհ** (քվարկներ, գլյուոններ և այլն): Քվարկը հիմնարար մասնիկ է: Ներկայիս դրությամբ հայտնի է քվարկների վեց տեսակ տարբեր զանգվածներով (մոտ. $1,67 \times 10^{-27}$ կգ), իսկ քվարկների չափը 10^{-16} սմ-ից ոչ ավելի է: Քվարկը նյութի տեսակ է, որի

փոխազդման տեղափոխողը գլխուղեղներն են՝ անզանգված մասնիկները, վեկտորային դաշտի քվանտները: Արդեն այս մակարդակում մենք տեսնում ենք վերոհիշյալ երեք էությունները. մատերիա՝ քվարկներ, էներգիա՝ գլխուղեղներ, և ինֆորմացիա, որը նկարագրում է դրանց պահվածքի ու փոխազդեցության կանոնները:

- **Տարրական մասնիկների աշխարհ** (պրոտոններ, նեյտրոններ և այլն): Պրոտոնը բաղկացած է երեք քվարկից, մոտ 20.000 անգամ մեծ ու բազմակի ծանր է քվարկից: Պրոտոնները մասնակցում են ջերմամիջուկային ռեակցիաներին, որոնք աստղերի գեներացվող էներգիայի հիմնական աղբյուրն են:
- **Ատոմային աշխարհ** (քիմիական տարրերի 118 ատոմներ): Քիմիական տարրերի ատոմներն այն շինանյութն են, որով Տիեզերքում կառուցված է մատերիան: Դրանք աստղերի գործունեության արդյունքն են և իրենց հերթին կազմված են պրոտոններից, նեյտրոններից ու էլեկտրոններից:
- **Քիմիական աշխարհ. մոլեկուլներն ու դրանց միացությունները**: Մոլեկուլային կառուցվածքները քիմիական տարրերի ատոմների ինչպես պարզ, այնպես էլ բարդ միացություններն են: Նրանք ենթարկվում են որոշակի օրենքների. բոլոր ատոմները չէ, որ կարող են միանալ իրար ու մոլեկուլներ կազմել, իսկ միանում են միայն որոշակի կանոնների համաձայն: Տիեզերքում մեզ շրջապատող բոլոր նյութերն էլ հենց կազմում են քիմիական աշխարհը:
- **Կյանք՝ կենսաբանական աշխարհ**: Կյանքը մատերիայի գոյության ակտիվ ձևն է: Դրա հիմքում կենդանի բջիջներն են, որոնց կառուցվածքը ենթարկվում է միասնական սկզբունքների: Բջիջներն օժտված են գեներտիկ ինֆորմացիայով և ունակ են վերարտադրության: Բջիջները կառուցված են բարդ մոլեկուլներից, գոյություն ունեն այդ մոլեկուլների նրբորեն հավասարակշռված քիմիական ու ոչ

քիմիական փոխազդեցության արդյունքում, իսկ դրանց գե-
նետիկ ինֆորմացիան նույնպես գրանցված է մոլեկուլում՝
ԴՆԹ-ում: Երկրի վրա կենդանի ամեն ինչ բաղկացած է
բջջիջներից, այդ թվում՝ նաև մարդը:

- **Մարդկային բանականության աշխարհ:** Մարդը՝ որպես
տեսակ, պատկանում է կենսաբանական աշխարհին, բայց
առանձին դիրք է գրավում, որովհետև մեզ հայտնի միակ
արարածն է, որն օժտված է բանականությամբ, գիտակցու-
թյամբ և տարատեսակ ինֆորմացիա ստեղծելու ու նյութա-
կանացնելու ունակությամբ: Բանականությունը մարդու
հատկությունն է, նրա հայտանիշն է:

Եվ այսպես, ի՞նչ ենք տեսնում դիտարկվող աշխարհի բոլոր
այդ հիերարխիկ մակարդակներում: Տեսնում ենք շատ հե-
տաքրքիր օրինաչափություններ, հստակ տրամաբանական
շղթա: Քվարկի ինքնություն «կյանքն» ավարտվում է պրո-
տոնների, նեյտրոնների, մեզոնների ստեղծմամբ. դա նրա
գործունեության տրամաբանական արդյունքն է: Տեսող պրո-
տոնները ստեղծում են աստղեր. այդ մակարդակում պրո-
տոնի ինքնություն «կյանքն» ավարտվում է այն պահին, երբ
աստղը պայթում է, այսինքն, միջուկները հարստանում են,
վերածվում քիմիական տարրերի ատոմների, որոնք էլ ար-
ձակվում են տարածության մեջ: Վաջորդ մակարդակում
ատոմի միջուկներից ձևավորվում են մոլեկուլներ. ստեղծ-
վում է քիմիական աշխարհը: Մոլեկուլային միացությունները
շինանյութ են դառնում կենդանի բջջիջների, ամբողջ կենսա-
բանական աշխարհի համար: Ակնհայտ է տարբեր մակար-
դակներում տարբեր «արդյունքների» ստեղծումը և դրանց
փոխանցումը հաջորդ աշխարհին: Մարդու արտադրած ու
նյութականացրած ինֆորմացիայի հսկա քանակը վերջինն է,
որ դիտարկում ենք աշխարհների տվյալ տրամաբանական
շղթայում: Այդուհանդերձ, մենք չենք կարող պատասխանել

այն հարցին, թե դեպի ուր է անցում կատարվում մարդկային քանակաւորութեան աշխարհում, և չգիտենք՝ ինչի հաշվին է կատարվում այդ անցումը:

Նկատենք, որ այդ աշխարհներից յուրաքանչյուրի զարգացումն անսահման չէ, յուրաքանչյուր հիերարխիկ մակարդակ ունի իր տրամաբանական ավարտը: Դիտարկելով ընդհանուր պատկերը՝ մենք տեսնում ենք հիերարխիկ մակարդակների հետևողական շղթան՝ պարզից դեպի բարդը: Այդ աշխարհներից յուրաքանչյուրը ստեղծված է նախորդի հիմքի վրա, նախորդի գործունեության արդյունքում: Փաստորեն, մենք տեսնում ենք որոշակի հետագիծ, սահմանված ուղի: Եվ այստեղ էլ ակնհայտ են պատճառականութեան սկզբունքն ու պահպանման օրենքները:

Նետկելով այդ ուղուն, այդ հետագծին՝ նկատում ենք ևս մեկ հետաքրքիր օրինաչափություն. ավելի բարձր հիերարխիկ մակարդակի անցնելուն զուգահեռ տեղի է ունենում գոյի տեսակների ու ձևերի ան: Ասենք, կա ընդամենը մի քանի տարրական մասնիկ՝ մեկ տասնյակի սահմաններում: Բայց հաջորդ մակարդակում այդ մի քանի տարրական մասնիկներից ստանում ենք քիմիական տարրերի հարյուրից ավելի ատոմներ: Այդ 118 ատոմները տալիս են հսկայական թվով մոլեկուլներ, որոնք արդեն դժվար է հաշվել: Իսկ կենսաբանական աշխարհի բազմազանությունը պարզապէս անհնար է նկարագրել: Պետք է նկատել, որ «արդյունքների» (տեսակների) թիվը յուրաքանչյուր հիերարխիկ մակարդակում խիստ սահմանափակ է: Յուրաքանչյուր հաջորդ հիերարխիկ մակարդակում կոմպլեքսացման թիվը կտրուկ աճում է, բայց, միևնույն է, այն վերջավոր է: Ընդամենը, սկսած բջիջից, կենսաբանական աշխարհում (որտեղ նույնպէս կա սեփական ներքին հիերարխիա) աճում է ոչ միայն տեսակների թիվը, այլև ավելանում են ներտեսակային տարբերությունները: Ասենք, եթե նույն տեսակի բջիջներն ու բակտերիաները գործնականում անտարբերակելի են, ապա

արդեն երկու ջրիմուռ կամ երկու մլակ ինչ-որ բանով կտար-
բերվեն: Այդ տարբերությունները շատանում են ավելի բարձր
մակարդակի անցնելուն զուգահեռ, իսկ ամենից ակնհայտ ներ-
տեսակալին տարբերություններն ի հայտ են գալիս այդ կեն-
սաքանական շղթայի վերջում մարդու մոտ: Իրականում նույն
տեսակի ձկների, սողունների, թռչունների, կաթնասունների
տարբերություններն աննշան են: Նույն ցեղատեսակի շները
կամ կատուները շատ նման են իրար: Ինչ վերաբերում է մարդ-
կանց, ապա մարդկալին երկու առանձնյակների արտաքին և
ամենակարևորը՝ մենքալ տարբերությունները հսկայական են
նույնիսկ մերձավոր ազգականների դեպքում: Կառուցվածք-
ների բարդացումը հանգեցնում է նրանց միջև տարբերություն-
ների ավելացմանը: Այսինքն, մենք տեսնում ենք, որ ստորին
հիերարխիկ մակարդակից բարձրին անցնելուն զուգահեռ
տեղի է ունենում տարբեր տեսակներն ու ձևերը նկարագրող
ինֆորմացիայի քանակի աճ:

Իսկ ի՞նչ է կատարվում այդ ընթացքում մատերիայի և էներ-
գիայի հետ: Այստեղ ամեն ինչ հակառակն է. նրանց քանակն
ավելի բարձր մակարդակի անցնելուն զուգահեռ էապես
նվազում է: Տիեզերքի մատերիայի 99 տոկոսից ավելին բա-
ժին է ընկնում հելիումից ու ջրածնից բաղկացած աստղերին.
դա զանգվածի և էներգիայի ահռելի քանակ է: Մեկ տոկոսից
պակաս են կենսաքանական աշխարհ ունեցող մոլորակները,
աստղակերպերը, գիսաստղերն ու տիեզերքի այլ «քնակիչնե-
րը»: Ինչ վերաբերում է կենդանական աշխարհին, ապա նրա
մասնաբաժինը Տիեզերքում ձգտում է անսահման փոքր մեծու-
թյան, իսկ, օրինակ, մարդկության բաժնեչափն արդեն անոմալ
փոքր թիվ է, որը նկարագրելու համար նույնիսկ դժվար է գտնել
մաթեմատիկական մեծություն: Կենդանի աշխարհի թագավո-
րությունում ամեն ինչ բաշխվում է նույն տրամաբանությամբ.
Երկիր մոլորակի վրա բոլոր մարդկանց զանգվածն ամբողջ
կենդանի զանգվածի 0,01 %-ն է կազմում (դրա հետ մեկտեղ,

օրինակ, Երկրի վրա սնկերի կենսաբանական զանգվածը 200 անգամ ավելի է մարդկանց զանգվածից, իսկ բակտերիաներինը՝ արդեն 6000 անգամ):

Եվ այսպես, մենք տեսնում ենք ակնհայտ օրինաչափություններ: Տիեզերքը ներկայանում է որպես մի համակարգ, որտեղ դիտվում է գործընթացների հետևողականության որոշակի տրամաբանություն՝ քվարկից, պրոտոնից ու նեյտրոնից մինչև մարդ, որն օժտված է բանականությամբ, գիտակցությամբ: Այդ տիեզերական համակարգի էությունն ու նշանակությունն արդեն բացատրել չենք կարող. մեր մարդկային աշխարհընկալումը չափազանց նեղ է, բայց Տիեզերքի պահվածքի մեջ մենք տեսնում ենք շարժման որոշակի հետագիծ, և դա անհնար է ժխտել: Մենք տեսնում ենք Տիեզերքի տրամաբանությունը, ընդ որում, նրա պահվածքում նկատվում են հետևյալ օրինաչափությունները.

- մատերիայի (նյութի) և էներգիայի քանակի նվազում ավելի բարձր հիերարխիկ մակարդակի անցնելիս,
- կառուցվածքների թվի աճ ու բարդացում, նյութականացած ինֆորմացիայի քանակի մեծացում ավելի բարձր հիերարխիկ մակարդակի անցնելիս,
- անհատական տարբերությունների աճ կենդանի աշխարհի ավելի բարձր հիերարխիկ մակարդակներում:

Ասվածի հիման վրա ձևակերպենք ևս մեկ կանխադրույթ:

Տիերարխիկ մակարդակների աճին զուգահեռ՝ մատերիան ու էներգիան քվազիասսիմիլանությունից ձգտում են չնչին քանակի, իսկ ինֆորմացիան՝ չնչին քանակից՝ քվազիասսիմիլանության:

ԿԱՌՈՒՑԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՎԵՐՋԱՎՈՐ ԼԻՆԵԼԸ

Արդեն նշել ենք Տիեզերքի դիտարկվող օրինաչափություններն ու որոշակի տրամաբանությունը, հիերարխիկ աշխարհների, դրանց կառուցվածքների միջև կապը: Իհարկե, չենք կարող ասել, թե երբ, ում կողմից և ինչ պատճառով է կատարվել կամ կատարվում այդպիսի կառուցավորումը, բայց կարող ենք դիտարկել կառուցավորման մեթոդներն ու վերլուծել դրանք:

Սկսենք նրանից, թե զուտ մեխանիկորեն ինչպես են կազմակերպված այդ կառուցվածքները: Պարզվում է՝ որ մակարդակում էլ դիտարկելու լինենք կառուցվածքները, դրանք կառուցված են երկու սկզբունքներից մեկով՝ պտտական կամ պարբերական: Մեփական առանցքի շուրջը պտույտը կառուցավորման գլխավոր և ունիվերսալ մեթոդներից է: Մրրկային, պտտական կառուցավորումը նախասկզբնականն է, հիմնայինը: Մենք գիտենք, որ բոլոր մասնիկներն ունեն սպին՝ իմպուլսի մոմենտ, որով բնութագրվում է պտտական շարժման քանակն ու ուղղությունը: Անհնար է գտնել որևէ մասնիկ (ֆեռմիոն) առանց սպինի: Հիմնարար մասնիկների մակարդակում քվարկները, որոնք դիտարկում ենք որպես նյութական աշխարհի մեկնակետ, նույնպես սպին ունեն: Ոչ ոք քվարկին չի հրել, որ այն պտտվի. այդ պտույտը պարզապես գոյություն ունի: Պտույտը շարժման բացարձակ տեսակ է, միակ շարժումը, որը կատարվում է ոչ թե ինչ-որ այլ բանի նկատմամբ, այլ ինքն իր մեջ: Պտույտն ունի միայն ուղղություն՝ աջ կամ ձախ: Գալակտիկաները, ցիկլոններն ու հակացիկլոնները, մոլորակային համակարգերը, աստղները պտտական համակարգի օրինակներ են: Պտույտի դեպքում անպայման առկա է ձգողականության որևէ կենտրոն. փխրուն պերիֆերիան պտտվում է խիտ կենտրոնի շուրջը (խիտ չի նշանակում ծանր, այլ ինչ-որ բանի խտացում. դա համակարգի ձգողականության

կենտրոնն է): Եվ այդ կենտրոնը երկրաչափական առումով զգալի փոքր է ողջ համակարգից: Այդպիսի բան տեսնում ենք, օրինակ, ատոմի մեջ՝ փոքրիկ, աննշան, բայց ծանր միջուկ, որը մոտ 10 000 անգամ փոքր է ողջ ատոմի չափից, իսկ միջուկի շուրջը՝ հսկա փխրուն էլեկտրոնային թաղանթ: Ճիշտ այդպիսի պատկեր ենք տեսնում նաև Արեգակնային համակարգում՝ Արևի տրամագիծը նույնպես մոտ տասը հազար անգամ փոքր է ողջ համակարգի տրամագծից, և դա այն դեպքում, երբ համակարգի զանգվածի ավելի քան 99 տոկոսն ամփոփված է հենց Արևի մեջ: Գալակտիկական կենտրոնը նույնպես մի քանի տասնյակ անգամ փոքր է ամբողջ գալակտիկայի տրամագծից: Այդ բոլորը պտտական կառուցվածքներ են: Նման պատկեր ենք դիտարկում նաև սոցիումում. այն պտտվում է ուժեղ դեկավարի, առաջնորդի ու նրա զինակիցների շուրջը, որոնք ինչ-որ կենտրոնական գաղափարի կրողներն են, նրա հետևորդները: Բայց դա հնարավոր է, եթե առաջնորդն իսկապես շատ մեծ ներուժ ունի: Կառուցավորման այդպիսի տեսակը (պտտական) ի հայտ է գալիս, եթե կառուցվածքի բաղադրիչները, տարրերը տարբեր տեսակի են: Իսկ եթե կառուցվածքի բաղկացուցիչ մասերը միատեսակ են (քիչ թե շատ նույնական ենեղծետիկ չափորոշիչներ ունեն), ապա կատարվում է այլ տեսակի կառուցավորում: Առաջանում են պարբերական, կենտրոն չունեցող, օրինակ՝ բյուրեղների կարգի կառուցվածքներ: Տարրերի փոքր ու մոտավորապես նույնական պոտենցիալի դեպքում կառուցվածքները պարբերական են: Այդպիսի պատկեր ենք տեսնում նաև բյուրեղագիտության մեջ. երբ դանդաղ սառեցնում ենք ձուլվածքը, որպեսզի նրա բոլոր ատոմներն ունենան նույն ջերմաստիճանը, ապա արդյունքում ստանում ենք բյուրեղային համակարգ: Իսկ անհաջերմաստիճանի կտրուկ նվազեցման դեպքում կստանանք ոչ թե բյուրեղ, այլ կենտրոնասիմետրիկ ինչ-որ բան: Այսինքն, պարբերական համակարգերը ստեղծվում են հավասարակշիռ

իրավիճակներում: Իսկ եթե մասնիկների էներգիան կտրուկ տարբերվում է իրարից, ստացվում են մրրկային կառուցվածքներ: Օրինակ, տորնադոներ ու ցիկլոններ առաջանում են, երբ տաք ու սառը օդի զանգվածները սկսում են փոխգործակցել ջերմաստիճանի տարբերության հետևանքով շարժման արդյունքում:

Այսինքն, մեր շուրջը՝ ամբողջ Տիեզերքում, տեսնում ենք պարբերական ու պատական (մրրկային) կառուցվածքներ: Դիալեկտիկական ասում է, որ շարժումը մատերիայի գոյության եղանակն է: Մատերիայի գոյության համար պատական շարժումն անհրաժեշտ է: Նույնիսկ քյուրեղի ներսում, ատոմների միջուկների մակարդակում առկա է պատական շարժում, իսկ արդեն միջատոմային կապերի մակարդակում մասնիկները պարբերական են շարված: Այսպիսին է կառուցավորման մեխանիկական մեթոդների մեզ հայտնի պատկերը:

Սակայն դիտարկելով այդ ունիվերսալ մեթոդները՝ հասկանում ենք, որ դրանք նաև միասնական ինֆորմացիոն բաղադրիչ ունեն: Դրանք հստակ մաթեմատիկական սկզբունքներ են, որոնք օգտագործվում են կառուցավորման մեջ: Օրինակ, մենք տեսնում ենք Ֆիբոնաչիի հաջորդականությունը և դրա հետ կապված ոսկե հատումը տարբեր մրրկային կառուցվածքներում մթնոլորտում ու տիեզերքում, կենդանի համակարգերում մարմնի համաչափություններ, կակղամորթերի պարուրաձև կառուցվածքներ, կենսատիքմեթի պարամետրեր և այլն: Ե՛վ երկրային խխունջը, և՛ տիեզերական գալակտիկական կառուցված են Ֆիբոնաչիի թվերի կիրառմամբ: Ծաղիկների բացարձակ մեծամասնությունն ունի 5, 8, 13 ծաղկաթերթ: Արևածաղկի մեջ, բույսերի ցողուններին, ամպերի գալարա-պտույտում, ջրապտույտներում և նույնիսկ տարադրամի փախարժեքի փոփոխության գրաֆիկներում ամենուր, աշխատում են Ֆիբոնաչիի թվերը. դա թվերի հաջորդականություն է, որտեղ յուրաքանչյուր թիվ նախորդ

երկուսի գումարն է: Ընդ որում, յուրաքանչյուր թվի հարաբերակցությունը նախորդի հետ մշտական է՝ մոտ 1,618: Մենք գործ ունենք միասնական մաթեմատիկական սկզբունքների հետ: Տարկ է նկատել, որ մաթեմատիկական տրանսցենդենտ է ֆիզիկայի նկատմամբ, գոյություն ունի ինքնին և անկախ նրանից՝ նյութ կա՞, թե ոչ:

Եվ վերջապես, խոսելով կառուցավորման մեզ հայտնի մեթոդների մասին, չենք կարող չհիշել նաև դիալեկտիկայի օրենքները, որոնք վերաբերում են համակարգերի և կառուցվածքների զարգացման գործընթացներին.

- հակադրությունների միասնության ու պայքարի օրենքը,
- քանակական փոփոխություններից որակականի անցման օրենքը,
- բացասման բացասումի օրենքը:

Ցանկացած օբյեկտի փոփոխության ու զարգացման աղբյուրն իր մեջ է, եթե արտաքին ուժի միջամտություն չկա: Տակադիր կողմերի, ուժերի, հատկությունների կապի (պայքարի) միջոցով զարգանում են բոլոր օբյեկտները, այդ թվում և սոցիալական համակարգերը: Օբյեկտը զարգանում է քանակական փոփոխությունների ճանապարհով, որոնք կուտակվում են, գերազանցում որոշակի չափն ու առաջ բերում որակական փոփոխություններ, իսկ դրանք իրենց հերթին քանակական փոփոխությունների նոր հնարավորություններ են ծնում: Ջարգացումը ելք է դեպի նոր որակական մակարդակ. հակառակ դեպքում դա զարգացում չէ, այլ օբյեկտի հատկությունների քանակական փոփոխություն: Ջարգացումը տեղի է ունենում օբյեկտի նոր վիճակի կողմից հին վիճակի ժխտմամբ, նորագույնի կողմից՝ նորի ժխտմամբ, ինչի արդյունքում զարգացումը համադրում է ժառանգականությունն ու ցիկլայնությունը: Եթե զարգացում չկա, փոփոխությունն ընթանում է շրջանաձև: Վերընթաց շարժման դեպքում օբյեկտը վերադառնում է ելման

վիճակին, բայց նոր, ավելի բարձր մակարդակում: Ուստի, դիալեկտիկական զարգացումը բնութագրում են որպես պարուրաձև շարժում: Այն ամենը, որ տեսնում ենք աշխարհի կառուցվածքի, նրա կառուցավորման մեջ, ենթարկվում է դիալեկտիկայի օրենքներին:

Ընդհանրացնելով՝ կարող ենք ասել, որ քվազիանսահման Տիեզերքում կառուցավորման, ձևաստեղծման մեթոդները քվազիանսահման չեն: Այդ մեթոդների թիվը վերջավոր է, և դրանք տարբեր մակարդակներում կրկնվում, հար և նման են:

- Մենք տեսնում ենք մաթեմատիկական օրինաչափությունների կրկնողությունը Ֆիբոնաչիի շարքերի ու ոսկե հատման տեսքով:
- Մենք տեսնում ենք դիալեկտիկայի օրենքների կրկնողությունը բոլոր մակարդակներում:
- Մենք տեսնում ենք, որ մեխանիկական կառուցվածքները կառուցված են նույն մեթոդով՝ պտտական կամ պարբերական կառուցավորմամբ:

Դրանից էլ կարող ենք արտածել մեր երրորդ կանխադրույթը:

Կառուցավորման մեթոդների քանակը վերջավոր է, և այդ մեթոդները կրկնվում են տարբեր հիերարխիկ մակարդակներում:

Դա նշանակում է, որ հիերարխիկ ուղղահայացում աշխարհը ֆրակտալ է, հատվածական: Եթե մենք ինչ-որ օրինաչափություններ ենք տեսնում այս պահին ու այստեղ, ապա դրանք կարող ենք վստահաբար տարածել նաև կյանքի այլ փուլերի վրա: Բայց եթե այս պահին և այստեղ այդպիսի օրինաչափություններ չենք դիտարկում, ապա որևէ բան հորինելու հիմքեր չկան: Այսինքն, եթե տվյալ կանխադրույթը ճիշտ է, ապա մեծ հավանականությամբ կարելի է խոսել այն մասին, թե ինչ է

եղել և ինչ կլինի ինչ-որ տեղ ու երբևէ՝ ելնելով հենց նրանից, թե ինչ ենք դիտարկում այստեղ ու այս պահին:

ԱՄԲՈՂՁԻ ՈՒ ՆՐԱ ՄԱՍԻ ՏԵՏԱԳԾԵՐԻ ՏԱՄԱԶԱՅՆԵՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Արդեն նշել ենք, որ մարդուն չի կարելի դիտարկել առանձին ընդհանուրից, Տիեզերքից, որտեղ նա ապրում է, և որի մասն է հանդիսանում: Դիտարկելով հիերարխիկ մակարդակները՝ մենք տեսանք տրամաբանություն, շարժման որոշակի հետագիծ: Քառսի և անկարգության մեջ այդ քառսի մասնիկները որևէ ընդհանուր կանոններ չունեն և կարող են իրենց պահել՝ ինչպես ուզում են, բայց եթե դիտարկվում է ամբողջի տրամաբանությունը, ապա այն պետք է տարածվի նաև նրա մասերի վրա:

Եվ այսպես, եթե ամբողջը տրամաբանություն ունի, ապա նրա մասերը չպետք է հակասեն այդ տրամաբանությանը, շարժման այդ ընդհանուր հետագծին: Կարևոր է, որ մենք չենք խոսում հետագծի բացարձակ համընկնման, վարքի ու կանոնների պատհենման մասին: Դիտարկելով աշխարհը՝ մենք տարբեր հիերարխիկ մակարդակներում տեսնում ենք հար և նման, բայց ոչ նույնական օրենքներ: Ամբողջի բաղկացուցիչ մասերը միշտ որոշակի տարբերակվածություն ունեն, բայց դրա հետ մեկտեղ գոյություն ունի շարժման ընդհանուր միտում, ընդհանուր վեկտոր: Օրինակ, երբ գազը հոսում է խողովակով, ապա այդ հոսքի մեջ գազի բոլոր մոլեկուլները չէ, որ ունեն շարժման նույն ուղղությունը. կան նաև որոշակի շեղումներ, որոշակի քառսային շարժում: Բայց երբ գազը դիտարկում ենք ընդհանուր, ապա նրա բոլոր մոլեկուլները միասին ձևավորում են ուղղորդված հոսք: Նման բան տեսնում ենք

ցանկացած հոսքի մեջ՝ գետ, ձնահոսք, հրաբխային լավա, թռչունների երամ և այլն: Նույնը ներհատուկ է նաև մարդկային հասարակությանը: Նրա քաղկացուցիչ մասերի շարժումը ոչ թե պարտադրաբար համաձայնեցված է, այլ ընտրության որոշակի ազատություն ունի: Այդ ընդհանուր հետագծից շեղումներ կարող են լինել, բայց ընդհանուրին չպետք է խոչընդոտեն: Արդյունքում այդպիսի հասարակությունն ընդհանուր առմամբ շարժվում ու զարգանում է անհրաժեշտ ուղղությամբ: Իսկ մեռնող քաղաքակրթության մեջ առանձին մասերի շարժումն սկսում է հակասել ընդհանուր տրամաբանությանը, ընդհանուր առմամբ՝ մարդկությանը, սկսում է արգելակել Տիեզերքի հետագծի հետ համաձայնեցված նրա ընդհանուր շարժումը: Ընդհանուր հետագծի այդ արգելակման ու հակասության առկայությունը քաղաքակրթության հիվանդության նշաններից է: Առողջ սոցիումի համար պարտադիր է մասերի հետագծի ներդաշնակ, բայց չդետերմինացված համադրումը ամբողջի շարժման հետագծի հետ:

Եվ այսպես, կարող ենք ձևակերպել մեր չորրորդ կանխադրույթը:

Մասի շարժման հետագիծը ժամանակի մեջ ընդհանուր առմամբ չի կարող հակասել ամբողջի շարժման հետագծին:

ՊԱՅՔԱՐ ՔԱՆՍԻ ԴԵՄ

Տիեզերքում կատարվող գործընթացներն ու նրա հիմնական օրենքները դիտարկելիս պետք է ավելի մանրամասն կանգ առնել Էնտրոպիայի խնդրի վրա: Էնտրոպիայի չնվազման օրենքը հիմնարար օրենքներից մեկն է, որը ոչ ոք չի

վիճարկում, և որը հաստատվում է անընդհատ: Ինչպես արդեն ասել ենք, Էնտրոպիան քառսի, անկարգության չափն է: Դա այն տիեզերական ուժն է, որը ժամանակի ընթացքում անխնա ավերում է բոլոր կառուցվածքները: Էնտրոպիան կապված է ժամանակի հետ, այն բանի հետ, որ ժամանակը հոսում է մեկ ուղղությամբ: Եվ ավերում է ամեն ինչ: Աղյուսը վաղ թե ուշ փոշի է դառնում: Աստղը վաղ թե ուշ մեռնում է: Ցանկացած կենդանի օրգանիզմ վաղ թե ուշ մահանում է: Ցանկացած կառուցվածք, եթե նրան հանգիստ թողնենք, քանդվում է: Տենց դա էլ ֆիզիկոսներին քաջ հայտնի Էնտրոպիայի չնվազման օրենքն է: Բայց եթե դա տիեզերական օրենք է, ապա Տիեզերքի 14 միլիարդ տարիների գոյության ընթացքում Էնտրոպիան պետք է ամեն ինչ ոչնչացրած լիներ: Այդ ժամանակը բավարար էր, որպեսզի մեր շուրջը միայն քառս ու անկարգություն, որևէ համակարգի ու կառուցվածքի բացակայություն տեսնեինք: Բայց մեր շուրջը տեսնում ենք կառուցվածքներ, անվերջ կառուցվածքներ՝ գալակտիկաներ, աստղային համակարգեր, կենդանի օրգանիզմներ, մարդիկ: Իսկ դա նշանակում է, որ բնության մեջ գոյություն ունեն Էնտրոպիայի կլանիչներ, ինչ-որ առանձնահատուկ տարրեր, ժամանակի ու տարածության մեջ հատուկ կետեր, որոնք այսպես թե այնպես դիմադրում են ավերմանը, դիմադրում են ոչնչացմանը: Էնտրոպիայի կլանման այդ կետերը տեսնում ենք բոլոր մակարդակներում: Ժամանակին Տիեզերքում նախնական գազից չգիտես ինչու աստղեր են ծնվել, չնայած մեզ հայտնի ֆիզիկայի օրենքները պահանջում են, որ գազը պետք է ոչ թե կուտակվի՝ թանձրուկ դառնալով, այլ պարզապես համաչափ ընդարձակվի: Բայցևայնպես ինչ-որ կերպ ստեղծվել են աստղերն ու համաստեղությունները՝ մեգաաշխարհը: Մեր շուրջը, մեր մոլորակի վրա նույնպես տեսնում ենք անհամար կառուցվածքներ՝ կենդանի օրգանիզմների ու բանական աշխարհի տեսքով՝ մակրոաշխարհը: Նույնը տեսնում ենք նաև մանոաշխարհում, որտեղ ինչ-որ

քվարկներից չգիտես ինչու ծնվում են պրոտոններ, նեյտրոններ և ավելի բարդ կառուցվածքներ, որոնք ենթարկվում են խիստ կանոնների: Մենք ամենուր կառուցավորում ենք տեսնում, չնայած տեսականորեն ամենուրեք պետք է իշխեր քառար. հենց դա է պահանջում էնտրոպիայի չնվազման օրենքը: Բազմաթիվ կառուցվածքների գոյությունն ուղղակի վկայում է, որ կան էնտրոպիայի կլանիչներ, այսինքն՝ ավերմանը դիմադրելու կետեր: Դրա ամենավառ օրինակը կենդանի օրգանիզմներն են՝ բազմացման իրենց ունակությամբ: Կարելի է պնդել, որ ցանկացած օրգանիզմի ծնունդ էնտրոպիայի կլանման գործընթաց է, իսկ օրգանիզմի կյանքը՝ պայքար իր ոչնչացման դեմ, այսինքն՝ պայքար էնտրոպիայի ընդարձակման դեմ: Ինչպե՞ս է դա արվում: Գենետիկ ինֆորմացիան հաջորդ սերունդներին հասցնելու, ինֆորմացիան ժամանակի մեջ փոխանցելու միջոցով: Դա գոյատևման, տեսակի պահպանման պայքար է: Տեխնիկայում դա կոչվում է ինֆորմացիայի փոխանցում վերականգնման միջանկյալ կետերի միջոցով: Իսկ ի՞նչ ինֆորմացիա է փոխանցվում սերնդեսերունդ կենսաբանական աշխարհում: Ինչ-որ նախասկզբնական, հիմնարար ինֆորմացիա, որն ապահովում է պարզ վերարտադրություն ու գոյատևման պարզագույն մեխանիզմներ: Եվ այդ ինֆորմացիան շատ քիչ է փոփոխվում. փոփոխությունները կատարվում են միայն եվոլյուցիայի, շրջակա միջավայրի պայմաններին հարմարվելու տեսանկյունից. դրանք աննշան հարմարվողական փոփոխություններ են (և ոչ մի դեպքում սկզբունքային. ձկան օրգանիզմը հաջորդ սերնդին չի կարող փոխանցել ինֆորմացիա, որ նա թռչուն պիտի դառնա): Գենետիկան այսօր գտնում է, որ գեների միջոցով ինֆորմացիա է փոխանցվում օրգանիզմի կառուցվածքի մասին, սակայն բացառված չէ, որ կառուցվածքի մասին ինֆորմացիան զուտ բազային է, և կա նաև ինչ-որ ուրիշ, ավելի նուրբ ինֆորմացիա՝ գրանցված այսպես կոչված «դատարկ» գեներում, որոնք ոչ մի կերպ չեն ազդում օրգանիզմի

ձևավորման վրա: Ամեն դեպքում, պետք է ընդունել այն փաստը, որ օրգանիզմները գոյատևում են միլիոնավոր ու միլիարդավոր տարիներ, ուրեմն սերնդեսերունդ անընդհատ ինֆորմացիա է փոխանցվում, որը հաջողությամբ պայքարում է էնտրոպիայի ընդարձակման դեմ: Սա այն գլխավորն է, որը կենդանի օրգանիզմներին տարբերում է անկենդաններից. անկենդանները չեն վերստեղծում իրենք իրենց, նրանք չունեն ժամանակի մեջ ինֆորմացիա փոխանցելու այդ համակարգը: Անկենդանները (օրինակ՝ քարերը) նույնպես կառուցվածքի ու ձևի մասին ինֆորմացիա կրողներ են, բայց միայն կենդանի օրգանիզմներն են դիմադրում ավերմանն ու ոչնչացմանը: Քարն սկսում է «մեռնել» իր կազմավորման պահից. այդ վայրկյանից սկսվում է նրա քայքայման անշրջելի գործընթացը:

Բայց հարկ է նկատել, որ ցանկացած կենդանի օրգանիզմ, մարդուց բացի, որպես էնտրոպիայի կլանիչ՝ սահմանափակված է ավերմանը դիմադրելու գործում: Նրա պաշտպանությունը պասիվ է, և այն ավելի շատ պաշարված ամրոց է հիշեցնում, որի միակ հույսը ռազմավարական պաշարներն են. կհերիքե՞ն, թե՞ ոչ: Դա պասիվ դիմադրություն է ռեսուրսների հաշվին: Պարզ ասած՝ կենդանի օրգանիզմների կյանքը մի ծրագիր է, որի գլխավոր նպատակը միայն կենսաբանորեն իրեն պահպանելն է, գոյատևելը: Կենդանի օրգանիզմը զբաղված է միայն հիմնարար ինֆորմացիայի վերարտադրությամբ ու հաջորդ սերնդին անկորուստ փոխանցմամբ: Ընդ որում, այդ նպատակին միշտ չէ, որ հասնում է. արտաքին գործոնների ավերիչ ազդեցությունը կարող է ոչնչացնել ամբողջ կենդանի տեսակներ. նրանք դիմադրելու միջոցներ չունեն: Ալիմայի, օդի, կենսապայմանների ու սննդի կտրուկ փոփոխություններն այն գործոններն են, որոնց դեմ կենդանի օրգանիզմները դժվար են պայքարում: Էնտրոպիայի դեմ կենդանի օրգանիզմների պայքարը սահմանափակ հնարավորություններ ունի: Որոշ տեսակներ հաղթում են այդ ճակատամարտում,

մյուսները, նոր մարտահրավերները չհաղթահարելով, պարտվում են: Նաղթած օրգանիզմները կուտակում են որոշակի ինֆորմացիա, փոփոխվող արտաքին պայմանների դեմ պայքարի փորձ, ինչ-ինչ գիտելիքներ: Եվ ոչ միայն կուտակում, այլև կարողանում են փոխանցել հաջորդ սերնդին, որն այդ ինֆորմացիան ամրագրում է: Օրինակ, ջրի բարձր թթվայնության պայմաններում փոխվել է ինչ-որ բակտերիայի գենետիկ կոդը, տեղի է ունեցել մուտացիա: Մնացած առանձնյակները զոհվել են, իսկ մուտացիայի ենթարկվածից ու վերապրածից սկիզբ են առնում բակտերիաների նոր սերունդներ, որոնց մեջ մուտացիան ամրակայվել է: Այսինքն, բակտերիան կուտակել է ինչ-որ ինֆորմացիա այն մասին, թե ինչպես պայքարել փոփոխված միջավայրի դեմ, և նրան հաջողվել է այդ ինֆորմացիան փոխանցել հաջորդ սերնդին: Ֆենոտիպն ազդում է գենոտիպի վրա: Փորձը փոխանցվում ու ամրակայվում է: Այդ մեխանիզմները բարդ են, բայց միանշանակ գոյություն ունեն: Այստեղ կարևոր է մեկ անգամ ևս նկատել, որ նույնիսկ էնտրոպիայի ազդեցության ներքո փոփոխվելու պարագայում որոշակի տեսակի օրգանիզմը չի վերածվում սկզբունքորեն այլ օրգանիզմի: Փոփոխությունները սահմանափակված են որոշակի ծավալով, տվյալ տեսակի ընդգրկման շրջանակով: Կադամբը ծառ չի դառնա, նապաստակը թռչուն չի դառնա, իսկ մամոնտը չի վերածվի մարդու: Եվ դա է ներկայումս իշխող տեսակների ծագման դարվինյան տեսության հիմնական խնդիրը:

Ո՞րն է եզրակացությունը: Ընդունելով էնտրոպիայի չնվազման օրենքի իրավացիությունը և զուգահեռեբար շուրջըրտըրը դիտարկելով ոչնչացմանը դիմադրող բազում կենդանի կառուցվածքներ՝ կարող ենք խոսել էնտրոպիայի կլանիչների առկայության մասին: Եվ ոչնչացմանն ու քաոսին այդպիսի դիմադրության ամենավառ օրինակը մարդն է:

ՄԱՐԴՈՒ ԿՈՂՄԻՑ ԻՆՖՈՐՄԱՅԻԱՅԻ
ՍՏԵՂԾՄԱՆ, ԿՈՒՏԱԿՄԱՆ ՈՒ ՓՈԽԱՆՑՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՏԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն նշել ենք, կենդանի աշխարհում անգամ ինֆորմացիան մի առանձնյակից մյուսին փոխանցելիս տեսակի պահպանման երաշխիքներ չկան: Այդ ինֆորմացիան անի միտում չունի, և նոր մարտահրավերների ի հայտ գալը կարող է բերել տեսակի ոչնչացման, անհետացման: Այն, ինչին կենդանիները սովորեցնում են իրենց ձագերին, գոյատևման գործառույթների հիմնային հավաքածու է. ինչպես թռչել, ինչպես ցատկել, ինչպես որս անել, ինչպես սնվել, ինչպես թաքնվել և այլն: Տեսող նրանք այդ հիմնային ինֆորմացիան փոխանցում են հաջորդ սերնդին: Սկզբունքորեն նոր ոչինչ չի ավելացվում: Իսկ եթե կենդանին իր կյանքի ընթացքում հայտնվում է բարդ պայմաններում, որոնք պահանջում են հարմարվել, ապա որոշ առանձնյակներ, հնարավոր է, կարողանան մշակել նոր հմտություններ ու գոյատևել: Բայց հարմարվելու միջոց գտնելն ու այն սերունդներին փոխանցելը տարբեր գործընթացներ են: Եվ հիմնական խնդիրը այդ ինֆորմացիայի փոխանցման ուղու թողունակությունն է, որը պայմանականորեն կարող ենք չափել գիզաբայթ/սերունդով: Եթե ինֆորմացիայի փոխանցման ուղին նեղ է և փոխանցվող ինֆորմացիան՝ ավելի քիչ, քան էնտրոպիայի ազդեցության տակ ոչնչացվող ինֆորմացիայի քանակը, ապա զարգացումը մարում է: Կապիկը գուցե և մտածի, թե ինչպես օգտագործել փայտը ծառից բանանը գցելու համար, բայց ինֆորմացիայի փոխանցման ուղու ցածր թողունակության պատճառով այդ հմտությունն ապագայում կանհետանա, և հաջորդ կապիկը ստիպված կլինի պատահականորեն սովորել դա կամ էլ չի սովորի ընդհանրապես. դրա նախադրյալները չկան: Կապիկներին հաղորդակցվել սովորեցնելու

բազմաթիվ փորձեր որոշ արդյունք են տվել. կապիկները յուրացնում էին ժեստերի լեզուն և ընդհանուր առմամբ ընկալում մարդկային խոսքը: Այդ ուղղությամբ հաջողության էին հասել հատկապես հոգեբաններ Ալեն և Բեատրիս Գարդներները, պրիմատաբան և հոգեբան Սյու Սևեջ-Ռամբոն: Սակայն փորձերի ընթացքում կապիկների ձեռք բերված հմտությունները շատ ժամանակ ու հսկայական ջանքեր պահանջեցին և արդյունքում բավարար չափով չզարգացան: Առավել ևս, ուսուցանվող պրիմատներն այդ հմտությունները չէին կարող փոխանցել հաջորդ սերունդներին: Եթե ժամանակի մեջ փոխանցվող ինֆորմացիայի քանակն ավելի մեծ է, քան էնտրոպիայի ազդեցության տակ ոչնչացվող ինֆորմացիայի քանակը, տեղի է ունենում ինֆորմացիայի աճ, կուտակում: Այդ դեպքում կապիկը զուտ տեսականորեն կարող է հմտություններ կուտակել, զարգանալ ու մի օր նույնիսկ վերածվել եթե ոչ homo sapiens-ի (դա, համեմայնդեալս, մարդ է), ապա գոնե կապիկ sapiens-ի:

Արդի գիտությունը homo sapiens-ի պատմությունը հաշվարկում է այն պահից, երբ մարդն սկսեց վերացական մտածել: Բայց բանական մարդու դարաշրջանի սկիզբն ավելի շուտ այն պահն է, երբ մարդու՝ ինֆորմացիայի փոխանցման ուղու թողունակությունն ընդարձակվեց: Այսինքն, երբ կուտակված ինֆորմացիան սկսեց չանհետանալ, չկորչել: Ինֆորմացիայի (որպես գոյի մաս) բազմաթիվ սերունդներում կուտակման գործընթացը հանգեցրել է զարգացման, և արդյունքում նաև ոչ կենսաբանական ճանապարհով ինֆորմացիայի փոխանցման եղանակների ստեղծմանը: Մարդը ստեղծել է ինֆորմացիայի փոխանցման սեփական մեխանիզմները (լեզու, գիր, դպրոց) հենց ինֆորմացիայի կուտակման ընթացքում, քանակից որակի անցնելու արդյունքում: Եվ այդ կուտակումն այսօր շարունակում է ստեղծել ինֆորմացիայի փոխանցման նոր եղանակներ՝ ավելի ու ավելի մեծ ծավալներով: Ուստի,

արդարացի կլիներ մարդուն կոչել *homo collectius sapiens*՝ «բանական, կուտակող մարդ»:

Կարևոր է նկատել, որ մենք խոսում ենք ընդհանրապես մարդու, մարդկային տեսակի մասին: Բայց մարդիկ միանման չեն. սոցիումում առկա է որոշակի շերտավորում, եթե այն դիտարկենք ինֆորմացիայի հետ փոխհարաբերությունների տեսանկյունից: Այդ առումով ժամանակակից սոցիումում կա մարդկանց մի քանի կատեգորիա.

- նրանք, որ ունակ են ստեղծելու, նյութականացնելու և փոխանցելու ինֆորմացիան,
- նրանք, որ ունակ են նյութականացնելու և փոխանցելու ինֆորմացիան,
- նրանք, որ ունակ են փոխանցելու ինֆորմացիան,
- նրանք, որ ունակ են միայն սպառելու ինֆորմացիան՝ նյութականացած տեսքով:

Ընդամին, ինֆորմացիա սպառում են առանց քաջատության բոլորը: Նշված կատեգորիաներն առանձնանում են նրանցից հետո մնացող ինֆորմացիայի քանակով ու որակով, այսինքն՝ կուտակման հատկությամբ: Վերջին կատեգորիայի այդ հատկությունը զգալիորեն թուլացած է և ձգտում է զրոյի: Բայց ընդհանուր առմամբ կարող ենք պնդել, որ մարդը զբաղված է ինֆորմացիա արտադրելով, այն նյութականացնելով ու կուտակելով: Մարդը միակ հայտնի արարածն է, որն ունակ է անսահմանափակ քանակով վերացական ինֆորմացիա արտադրել: Մարդն այն մասամբ նյութականացնում է ստեղծելով նոր կառուցվածքներ, բայց շատ բան պարզապես մնում է նրա մոքում: Գլխավորն այն է, որ մարդու գաղափարների քանակը սահմանափակված չէ. քանականությունը կարող է արտադրել դրանք անսահմանափակ քանակությամբ: Բնականաբար, մենք պետք է հնարավոր համարենք Տիեզերքում նաև այլ քանականությունների (վերացական ինֆորմացիա

արտադրողների), ինչպես նաև ավելի բարձր հիերարխիկ մակարդակների գոյությունը: Բայց փաստ է, որ մեր կողմից դիտարկվող բանական արարածներից հիերարխիկ ամենաբարձր աստիճանին կանգնած է մարդը:

ՏԻԵԶԵՐՔԻ ԿԱՊԱԿՅՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Ժամանակակից գիտությունը կյանքի և մարդու ծնունդը համարում է պատահականություն, դրանց հայտնվելը փորձում բացատրել ինչ-որ «ինքնածնությամբ», այսինքն, ժխտում է մտահղացման, ինֆորմացիոն սկզբի առկայությունը: Սակայն Տիեզերքի դիտարկվող տրամաբանությունը, նրա շարժման վեկտորը (հիմնարար մասնիկներից դեպի բանականություն ու գիտակցություն) հուշում են, որ մարդու գոյությունը պատահականություն չէ. այն կանխորոշված է Տիեզերքով ու նրա զարգացման օրինաչափություններով: Մարդը տիեզերական էկոհամակարգի համաձայնեցված, օրգանական մասն է: Եվ եթե այդպես է, ապա մարդկության շարժման վեկտորը պետք է համապատասխանի կամ առնվազն չհակասի Տիեզերքի, այսինքն՝ ամբողջի շարժման վեկտորին:

Տիեզերքի շարժման վեկտորի, տրամաբանության և իմաստի մասին խոսելիս անխուսափելիորեն ծագում է կապակցվածության հարցը. հնարավո՞ր է արդյոք, որ նրա տարրերը՝ աստղերը, մոլորակները, կենդանի աշխարհը և այլն, իրար ինֆորմացիա փոխանցեն և արձագանքեն այդ ինֆորմացիային: Արդի գիտությունը ժխտում է Տիեզերքի կապակցվածությունը: Եվ դա կապված է նրա հետ, թե ժամանակակից գիտությունն ընդհանրապես ինչպես է նկարագրում Տիեզերքի ծնունդը: Այդ նկարագրության մեջ քիչ չէ անհասկանալի և անբացատրելի: Իսկ ինչպիսի՞ն է Տիեզերքի ծննդի ընդունված վարկածը:

Ֆիզիկոսները պնդում են, որ սկզբում եղել է Ոչինչը, որն ինչ-որ պահի վերածվել է Ինչ-որ Բանի: Այդ պահին ծագել է ժամանակը: Եվ ահա Ինչ-որ Բանը սկսել է ընդարձակվել գերլուսային արագությամբ. 10^{-30} վայրկյանում անելով մոտ 10^{30} անգամ: Ընդարձակման ընթացքում այն սկսեց լցվել մատերիալով, հետո (չգիտես ինչու) տաքացավ մինչև 10^{28} աստիճան, ապա հարյուրերորդ միկրովայրկյանում վերածվեց տաք Տիեզերքի՝ ոչ մեծ գնդի՝ բաղկացած քվարկներից ու գլյուոններից: Այսինքն, Ինչ-որ Բանը վերածվեց Ամեն Ինչի: Նետո այդ Ամեն Ինչն սկսեց հանգիստ ընդարձակվել ու պաղել: Սակայն պարզ չէ, թե ինչու այդ Ամեն Ինչը, որն ունի առեղի, աներևակայելի խտություն, արդյունքում չսեղմվեց՝ վերածվելով սև խոռոչի: Ըստ երևույթին, ինչ-որ բան դիմակայել է դրան:

Բայց եթե Տիեզերքի ծննդին կար գերլուսային արագությամբ շարժում (համեմայնդեալ ժամանակակից ֆիզիկան այդպես է պնդում), ապա, ելնելով պարզագույն մաթեմատիկայից, Տիեզերքի երկու կետերի միջև ոչ մի կապ լինել չի կարող: Չէ՞ որ աստղաֆիզիկոսները պնդում են, որ Տիեզերքի դիամետրը կազմում է մոտ 96 մլրդ լուսատարի: Բայց Տիեզերքը գոյություն ունի ընդամենը 14 միլիարդ տարի: Դա նշանակում է, որ Տիեզերքի մի ծայրից արձակված լույսը երբեք չի հասնի մյուս ծայրին, որովհետև պետք է մոտ 7 անգամ ավելի ճանապարհ անցնի, քան թույլ է տալիս նրա գոյության ժամանակը: Իսկ դա նշանակում է, որ Տիեզերքի կապակցվածությունն անհնար է: Բայց երբ նույն ֆիզիկոսները հետազոտում են մնացորդային հառագայթումն ու հեռավոր աստղերը, այդ կապակցվածությունը գտնում են: Կելվինի 27 աստիճանը մնացորդային հառագայթման ջերմաստիճանն է: Այդ մեծությունը պահպանվում է 10^{-5} ճշգրտությամբ: Ինչպե՞ս է նման բան հնարավոր, եթե այդ հեռակայուն օբյեկտները Տիեզերքում կապակցված չեն:

Խնդիրն այն է, որ ժամանակակից ֆիզիկան պնդում է, թե ինֆորմացիան կարող է փոխանցվել միայն լույսի արագությամբ: Ինչը հետևանք է ևս մեկ պնդման. ինֆորմացիայի կրող կարող է լինել միայն նյութական օբյեկտը: Բայց այդպե՞ս է արդյոք: Կարո՞ղ է արդյոք ինֆորմացիան գոյություն ունենալ մատերիայից անկախ: Օրինակ, էներգիան ինքնուրույն տարր չէ. նյութի հատկանիշ է: Առանց նյութի էներգիա չկա: Ամենից երևութական նյութը ֆոտոնն է, բայց նույնիսկ ֆոտոնն ունի իմպուլս ու զանգված (ընդ որում, ոչ հանգստի զանգված, հանգստի վիճակում ֆոտոն ոչ ոք չի տեսել): Իսկ ո՞ր մնաց ինֆորմացիան: Ժամանակակից ֆիզիկան մերժում է եթերը՝ որպես միջավայր, որն ունակ է պահպանել և ակնթարթորեն տարածել ինֆորմացիան: Սակայն հայտնի են բազմաթիվ ֆիզիկական փորձեր, որոնք ցույց են տալիս ինֆորմացիայի ակնթարթային տարածման հնարավորությունը (լույսի արագությունից բարձր), ինչպես և օբյեկտների կապակցվածությունը: Տիեզերքն արանցից մի քանիսը:

Քվանտային հեռատեղափոխություն

Չնայած անվանմանը, այդ փորձն ընդհանուր ոչինչ չունի օբյեկտների տեղաշարժման հետ: Խոսքը ո՛չ մատերիայի, ո՛չ էլ էներգիայի, այլ օբյեկտի վիճակի՝ հսկայական տարածությունների վրա տեղափոխության մասին է: Պարզության համար խոսենք մասնիկի սպինի (իմպուլսի սեփական մոմենտի) վիճակի մասին: Սպինը կարող է լինել երկու պայմանական վիճակներում՝ սպին դեպի վեր և սպին դեպի վար: Կապակցված ֆոտոնների զույգը կառուցված է այնպես, որ նրանց միագումար սպինը հավասար է զրոյի: Այսինքն, մի ֆոտոնի սպինը դեպի վեր է, մյուսինը՝ վար: Ընդ որում, ոչ միայն մենք չգիտենք, թե ֆոտոնները որ կողմ են նայում, այլև ֆոտոններն իրենք չգիտեն՝ որ կողմ են ուղղված իրենց սպինները: Դրանք անորոշ վիճակում են, մինչև չկատարվի չափման գործողություն: Բայց մենք

հաստատ գիտենք, որ եթե չափում ենք մի սալինը, և այն նայում է վեր, ապա մյուս ֆոտոնի սալինը նայում է վար: Վերցնում են երկու այդպիսի ֆոտոն ու տեղափոխում մեծ հեռավորության վրա (օրինակ, մեկ կիլոմետր): Չափում են ֆոտոններից մեկի վիճակը: Եվ այն պահին, երբ որոշվում է, որ նրա սալինը դեպի վեր է, մեկ կիլոմետր տարածության վրա գտնվող մյուս խառը ֆոտոնի սալինն անցնում է դեպի վար վիճակի մի արագությամբ, որը գերազանցում է լույսի արագությանը: Այսպիսով, մի ֆոտոնի չափման գործողությունը փոփոխում է մյուս ֆոտոնի վիճակը: Փաստորեն այդ պահին տեղի է ունենում տարածության մեջ ինֆորմացիայի քվազիակնթարթային փոխանցում:

Յունգի գիտափորձը

Անգլիացի գիտնական Թոմաս Յունգի գիտափորձի էությունն այն է, որ լույսի փունջ են ուղղում երկու զուգահեռ հատվածքներով անթափանց էկրանի վրա, որի հետևում դրված է մեկ այլ էկրան: Անթափանց էկրանի հատվածքների լայնությունը մոտավորապես հավասար է հառագայթվող լույսի ալիքի երկարությանը: Տրամաբանական կլիներ ենթադրել, որ ֆոտոնները պետք է անցնեն երկու հատվածքների միջով՝ հետևի էկրանի վրա ստեղծելով լույսի երկու զուգահեռ գծեր: Բայց դրա փոխարեն լույսը տարածվում է այնպիսի գծերի տեսքով, որոնց մեջ հերթագայում են լույսի ու մութի հատվածները, այսինքն, լույսն իրեն պահում է որպես ալիք: Նատվածքներից միայն մեկով անցնելիս էլեկտրոններն էկրանին, հատվածքի դիմաց թողնում են մեկ գիծ, այսինքն, իրենց պահում են որպես մասնիկներ, եթե մարդը հետևում է դրան: Եվ այդ նույն էլեկտրոններն իրենց պահում են որպես ալիք, եթե մենք չհետևենք, թե հատկապես որ ճեղքով է անցել ամեն էլեկտրոնը: Ստացվում է, որ էլեկտրոնի վարքը կախված է նրանից՝ մարդը հետևե՞լ է նրան, թե՞ ոչ: Այսինքն, մարդու կողմից ինֆորմացիա ստանալն ազդում է էլեկտրոնի վարքի վրա: Նարկ է նշել,

որ ֆոտոնների քվանտա-ալիքային երկվության հետ կապված գիտափորձն աշխատում է և՛ օդում, և՛ վակուումում: Բայց երբ անցնում ենք մասնիկների ավելի խոշոր չափսի, օրինակ՝ ածխածնի 60 ատոմներից բաղկացած մոլեկուլի (ֆուլլերեն), ապա այդ գիտափորձն արդեն աշխատում է միայն վակուումում: Իսկ ահա օդի առկայության դեպքում նման բան չի դիտվում: Բայց ի՞նչ է կատարվում օդում: Կատարվում է այն, որ հետազոտվող մասնիկը բախվում է գազի ատոմներին: Եվ բախման ժամանակ մասնիկի մասին ինֆորմացիան այդ կոնկրետ կետում փոխանցվում է գազի ատոմին: Ֆուլլերենի մոլեկուլի և օդում առկա գազերից մեկի ատոմի փոխգործակցության արդյունքում տեղի է ունենում ինֆորմացիայի փոխանցում մասնիկից միջավայրին: Եվ հենց այդ ինֆորմացիան փոխանցվում է, նույն պահին ալիքային էֆեկտն անհետանում է. մասնիկի մասին ինֆորմացիան արդեն փոխանցված է: Այսինքն, սկզբունքորեն կարևոր չէ՝ ինֆորմացիան մարդուն է փոխանցվել, թե գազի ատոմին: Նենց ինֆորմացիան փոխանցվում է, հետազոտվող օբյեկտն սկսում է իրեն պահել որպես մասնիկ: Մենք տեսնում ենք, որ ինֆորմացիան ու նրա փոխանցումն ազդում են գործընթացների էության վրա: Չփոխանցված ինֆորմացիան մատերիայի անքակտելի մասն է և կարող է որոշակիորեն ազդել նրա վրա: Եվ տվյալ դեպքում մենք կրկին նկատում ենք զուգահեռներ մարդու հետ: Իզուր չէ, որ խորհուրդ են տալիս չբարձրաձայնել ապագա ծրագրերի մասին, իզուր չեն համարում, որ պլանների ու նպատակների մասին խոսելիս մարդը թուլացնում է իրեն, նվազեցնում դրանց իրագործման հավանականությունը, քանզի ինֆորմացիան «վերցվում» է, ինչն էլ որոշակի ազդեցություն է թողնում գործընթացների վրա: Եվ չի բացառվում, որ «Եթե ուզում եք ծիծաղեցնել Աստծուն, պատմեք նրան ձեր ծրագրերի մասին» արտահայտությունը հենց այս երևույթի արտացոլումն է:

Կոզիրնի գիտափորձը

Խորհրդային աստղաֆիզիկոս Նիկոլայ Կոզիրնն իր տեսության մեջ պնդում էր, որ ժամանակը չի տարածվում, այլ ակնթարթորեն հայտնվում է ամբողջ Տիեզերքում: Ժամանակի համար չկա տարածություն, այն գոյություն ունի միանգամից ամենուր: Իր հիպոթեզը հաստատելու համար գիտնականը կատարել է մի շարք աստղագիտական փորձեր:

Լույսի տարածման արագության վերջավոր լինելու պատճառով մենք միշտ աստղը տեսնում ենք անցյալում: Մինչև նրա լույսը հասնում է մեզ, աստղը սեփական շարժման շնորհիվ հասցնում է տեղաշարժվել: Կոզիրնը գիտափորձ էր դրել, որը նպատակ ուներ արձանագրել աստղի ազդանշանը ոչ միայն տեսանելի, այլև տարածության մեջ իրական դիրքից, այսինքն՝ աստղագիտական օբյեկտների ոչ լուսային ճառագայթումը: Աստղադիտակն ուղղում էին տարբեր աստղերի, մասնավորապես այնպիսի վառ աստղի, ինչպիսին Սիրիուսն է (տարածությունը՝ 8,6 լուսատարի): Եվ ամեն անգամ աստղադիտակին միացված պտտական կշեռքն արձանագրում էր աստղերի ոչ թե երկու, այլ նույնիսկ երեք դիրքերի ազդանշանները: Նախ՝ դա տեսանելի դիրքն է, այսինքն՝ աստղի դիրքն անցյալում: Երկրորդ՝ իրական, բայց անտեսանելի դիրքն՝ այնտեղ, որտեղ աստղը գտնվում է ներկա ժամանակում: Եվ երրորդ, ինչը միանգամայն անսպասելի էր, գրանցվեց ևս մեկ ազդանշան՝ ապագայից, այնտեղից, որտեղ կլինեք աստղը, եթե նրան հասներ Երկրից ուղարկված լուսային ազդանշանը: Պետք է նշել, որ երկու ազդանշանները՝ ներկայից և ապագայից, տեսանելի դիրքից (անցյալից) տեղաշարժված էին ճշգրիտ չափով: Աստղերի լույսի հոսքը աստղադիտակում ծածկում էր անթափանց էկրանը, ինչը վկայում է ստացվող ազդանշանի առանձնահատուկ բնույթի մասին: Կոզիրնն աստղագիտական գիտափորձեր է կատարել նաև Արևի խավարումների

ժամանակ: Լուսնի՝ Արեգակի սկավառակին դիպչելուց 8 րոպե առաջ Կոզիբի զգայուն սարքերը գրանցում էին ազդանշանի կտրուկ փոփոխություն: Քանի որ Արեգակի լույսը Երկիր հասնում է հենց 8 րոպեում, այդ էֆեկտը մեկնաբանվեց որպես Արևի ոչ թե տեսանելի, այլ իրական դիրքից ազդանշանի գրանցում:

Այս օրինակները ցույց են տալիս, որ կամ ինֆորմացիան է ինքնաբավ, կամ էլ կան այլ, ոչ նյութական միջավայրեր, որոնք կարող են փոխանցել ինֆորմացիան այնպիսի արագությամբ, որը զգալիորեն գերազանցում է լույսի արագությունը: Եվ եթե ինֆորմացիայի այդպիսի փոխանցում հնարավոր է, ապա կարող ենք ենթադրել, որ Տիեզերքի 96 մլրդ լուսատարի տարածությունում բացարձակապես ամեն ինչ կարող է կապակցված լինել, այսինքն, տարածության մեջ կարող է գոյություն ունենալ ինչ-որ ինֆորմացիոն դաշտ: Նման ինֆորմացիոն կապերի առկայությունը ենթադրում է Տիեզերքի որոշակի կարգի գոյության, իմաստավորվածության հնարավորություն: Եվ այդ ժամանակ ինֆորմացիոն կապերը հնարավոր են Տիեզերքի բոլոր օբյեկտների միջև, որոնց թվում նաև մարդն է: Նա կարող է ինֆորմացիոն առումով կապված լինել մոլորակների, աստղերի, գալակտիկաների հետ: Դա այն է, ինչի մասին Էդոնթերիկներն ու աստղաբանները խոսում են հազարավոր տարիներ, բայց չեն կարողանում փաստարկել իրենց դիրքորոշումը գիտական տեսանկյունից: Ընդունելով Տիեզերքի կապակցվածությունը՝ մենք կարող ենք ենթադրել, որ այն ունի ոչ միայն իր տրամաբանությունն ու հետագիծը (ինչպես վերը պարզել ենք), այլև որոշակի իմաստներ, որոնք պետք է տարածվեն նաև մարդու՝ որպես ընդհանուր համակարգի մի մասի վրա: Եվ բնական է, որ մարդու գոյության իմաստը չի կարող հակասել Տիեզերքի գոյության իմաստին:

ՉՈՐՍ ԿԱՆԽԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՏԻԵԶԵՐՔԻ ԵՐԵՔ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Մենք ձևակերպեցինք չորս կանխադրություններ, որոնք Տիեզերքի երեք հիմնական օրենքների հետ պետք է հիմք դառնան նոր սկզբունքների արտածման համար, որոնց հիման վրա էլ կկառուցվի ապագայի հասարակությունը.

1. Էնտրոպիային դիմակայող ցանկացած գոյ բաղկացած է երեք էություններից՝ ինֆորմացիա, մատերիա և էներգիա:
2. Տիեզերախիլ մակարդակների աճին զուգահեռ՝ մատերիան ու էներգիան քվազիանսահմանությունից ձգտում են չնչին քանակի, իսկ ինֆորմացիան՝ չնչին քանակից՝ քվազիանսահմանության:
3. Տիեզերքում կառուցավորման մեթոդների քանակը վերջավոր է, և այդ մեթոդները կրկնվում են տարբեր տիեզերախիլ մակարդակներում:
4. Մասի շարժման հետագիծը ժամանակի մեջ ընդհանուր առմամբ չի կարող հակասել ամբողջի շարժման հետագծին:

Նոր մարդկային հասարակության, նոր քաղաքակրթության կառուցման սահմանային սկզբունքների ձևակերպումը ոչ այլ ինչ է, քան մտարկումների արդյունքում ճշմարտությունների հայտնաբերում: Բնականաբար, սույն գրքի շրջանակներում այդ մտարկումները չեն կարող լիակատար ու համընդգրկուն լինել: Առավել ևս, մենք դեռ չենք կարող քննարկմանն առաջարկել ապագայի պատրաստի նախագիծ: Բայց, հիմնվելով Տիեզերքի երեք հիմնարար օրենքների ու նախորդ գլուխներում արտածված չորս կանխադրությունների վրա, կփորձենք ձևակերպել որոշակի հիմնարար սկզբունքներ, որոնց պետք է համապատասխանի նոր քաղաքակրթական մոդելը:

Ջրույց ծավալելով ապագա հասարակության և դրա իմաստների մասին կրկին հիշենք Տիեզերքը, որի հետագծի հետ մենք պետք է հակասության մեջ չլինենք: Եթե Տիեզերքն ունի խորքային իմաստներ, ապա որո՞նք են դրանք: Տեսնելով Տիեզերքի բարդ գործընթացներին՝ մենք առայժմ չենք կարող գուշակել դրանց էությունը: Բայց դրանց տրամաբանությունը (հիերարխիկ մակարդակների հետևողականությունը՝ առավել բարձր մակարդակներում տեսակների քանակի աճով) մեզ հուշում է Տիեզերքի իմաստներից առնվազն մեկը. նրա շարժման հետագիծը չի տանում տեսակների ոչնչացման: Տակառակը, տեսնում ենք տեսակների բազմազանության աճ, իսկ ամեն կենդանի բան վերարտադրության մեխանիզմների շնորհիվ ակտիվորեն դիմադրում է էնտրոպիային: Տիեզերքում դիտարկվող գործընթացների տրամաբանությունը հուշում է մի սկզբունք, որը կարելի է էկոլոգիական կոչել. Էվոլյուցիայի ընթացքում ծագած բոլոր բնական տեսակները (այդ թվում նաև մարդը) պետք է պահպանվեն մարդու կողմից, իսկ նրա գործունեությունը պետք է ուղղված լինի դրան և առնվազն չնպաստի այդ տեսակների ոչնչացմանը: Մենք իրավունք չունենք ավերելու ու ոչնչացնելու այն, ինչ մենք չենք ստեղծել՝ ո՛չ մեզ շրջապատող աշխարհը, ո՛չ ինքներս մեզ՝ որպես տեսակի: Դա տիեզերական էկոլոգիայի ընդհանրացված օրենքն է: Տակաբնական է նաև առանձին մարդու ինքնաոչնչացումը, ուստի, եկեղեցու կողմից ինքնասպանության ընկալումը՝ որպես ծանրագույն մեղք և աստվածային մտահոլացմանը նետված մարտահրավեր, գուցե ասվածի արձագանքներից է: Այսպիսով, կարելի է ասել, որ ապագա հասարակության մոդելում բնական տեսակների ոչնչացումը կամ դրանց ոչնչացմանը նպաստելը պետք է բացառվեն: Այդ էկոլոգիական սկզբունքը պետք է կիրառել ոչ միայն կենդանի

օրգանիզմների, այլև մարդկային հասարակության, նրա օրգանական բաղադրիչների նկատմամբ: Այսինքն, պետք է պահպանվի նաև սոցիալական էկոլոգիան: Օրինակ, ընտանիքը՝ որպես կառույց, ստեղծվել է մարդու կամքից անկախ. դա բնական կառուցվածք է: Մենք չգիտենք՝ ով է այդ կառուցվածքի հեղինակը, բայց ընտանիքը մարդու հղացումը չէ: Ազգերն ու ցեղերը (դրանց մեծ մասը) նույնպես ձևավորվել են բնական հանապարհով, անկախ մարդու կամքից: Մարդկային հասարակությունների այսօրինակ և այլ բնական տեսակները ևս պետք է պահպանվեն, հետևաբար, մարդու գործունեությունը չպետք է ուղղված լինի դրանց ոչնչացմանը: Մարդկային կամքի ազատությամբ ընտանիքի, որևէ ազգի կամ ժողովրդի ոչնչացումը նույնքան է հակասում Տիեզերքի իմաստին, որքան կենսաբանական ցանկացած տեսակի ոչնչացումը: Անհրաժեշտ է կարգավորել մարդու կամքի ազատությունը, քանզի այն ունակ է ինչպես արարման, այնպես էլ ավերման: Տիեզերքում մատերիայի զարգացումն ու կառուցավորումը միշտ կատարվել է արտաքին կառավարմամբ (ամենայն գոյի մասին ինֆորմացիան կար նախապես): Բայց հիմա դրան մասամբ մասնակցում է նաև մարդը. նա արտադրում ու նյութականացնում է մեծ քանակի տարատեսակ ինֆորմացիա և դրանով հանդերձ՝ օժտված է կամքի հսկայական ազատությամբ: Միայն մարդուն է հատուկ անդրադառնալ իր գործունեությանն ու վերլուծել այն: Ընդ որում, մարդու կամքի ազատությունը գործնականում ոչնչով սահմանափակված չէ: Օրինակ, նույնիսկ կենդանիների ներտեսակային խիստ մրցակցությունը չի հանգեցնում իրար կոտորելուն: Նրանք պարզապես չունեն այդպիսի նպատակ. բավական է վնաս հասցնել հակառակորդին կամ դուրս մղել նրան տարածքից, մատնել փախուստի, և հարցը լուծված է: Բնության մեջ գործում է անհրաժեշտ բավարարի սկզբունքը, հիշտ՝ ինչպես անցյալի դասական պատերազմներում, որոնց

նպատակը ոչ թե հակառակորդի ոչնչացումն էր, այլ նրա կամքը ճնշելը: Բայց մարդը՝ որպես տեսակ, կարող է հատել կարմիր գիծն ու ոչ միայն ավերել առանց բավարար պատճառի, այլև սպանել իր նմանին՝ հենց կամքի անսահմանափակ ազատության պատճառով: Ուստի, Էկոլոգիական սկզբունքը պետք է սահմանափակի հենց մարդու կամքի ազատությունը: Եթե մենք ունենայինք շրջակա միջավայրի նկատմամբ մեր գիտակցության, մեր կամքի կիրառման ձեռնարկ, հնարավոր է, որ ինչ-ինչ բաներից հրաժարվեինք: Բայց մենք այդպիսի ձեռնարկ չունենք: Եվ քանի որ մենք չգիտենք՝ ինչպես, ինչու և ով է ամեն ինչ այսպես կազմակերպել մեր շուրջը, ուստի, «մի՛ վնասիր ու մի՛ ավերիր» սկզբունքն արդարացի է:

Ոչ մի բնական տեսակ մոլորակի վրա չպետք է ոչնչացվի մեր կամքի ազատությամբ:

ԵՐԶԱՆԿՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԶԵՎԸ. ԹՎԱՑՅԱԼ ԴՐԱԽՏ ՈՒ ԹԱՔՆՎԱԾ ՍՊԱՌՆԱԼԻՔ

Ինչպիսին էլ լինի ապագա հասարակության մոդելը, բոլորն էլ կհամաձայնեն՝ այն պետք է այնպիսին լինի, որ մարդկանց մեծամասնությունը երջանիկ լինի: Երջանկությունը սոցիալական մոդելի արդյունավետության կարևորագույն չափորոշիչն է: Չէ՞ որ իրականում մարդու ամբողջ կյանքը նվիրված է հենց երջանկության կառուցմանը՝ դրա այս կամ այն մեկնաբանությամբ: Իհարկե, մարդիկ երջանկության մասին տարբեր պատկերացումներ ունեն, և դա հաճախ հետևանք է խոր մոլորությունների, իրականության աղավաղման, կյանքի իմաստների ձևախեղման: Բայց օրինաչափ է, որ կյանքի որոշակի փուլում (հասուն տարիքում ու տարեց հասակում) մարդկանց

մեծ մասի այդ չափորոշիչները նմանվում են իրար: Բայցևայն-
պես, այսօր երջանկության բուն սահմանումն իսկ աղոտ է, թե-
կուզև այն պարբերաբար փորձում են արտածել բազմաթիվ
գործոնների ամբողջությունից: Օրինակ, համաձայն ՄԱԿ-ի
երջանկության համաշխարհային ինդեքսի՝ Ֆինլանդիան աշ-
խարհում առաջին տեղում է: Սակայն ուշագրավ է, որ Ֆին-
լանդիայում արձանագրված է նաև ինքնասպանությունների
շատ բարձր տոկոս: Ակնհայտ է, որ այս երկու ցուցանիշները
չեն համապատասխանում իրար. երջանիկ մարդիկ կյանքն
ինքնասպանությամբ չեն ավարտում: Այսինքն, երջանկության
ներկայիս չափորոշիչները, ՄԱԿ-ի երջանկության բանաձևը
կոռեկտ չեն, ինչպես և տարբեր պետություններում երջանկու-
թյան գործակիցը չափելու և հաշվելու բազմաթիվ այլ փորձե-
րը՝ այլ բանաձևերի հիման վրա: Պարզ է նաև, որ երջանկու-
թյունն ուղղակիորեն կապված չէ նյութական բարեկեցության
հետ. մենք տեսնում ենք հսկայական թվով երջանիկ մարդկանց
աննախանձելի տնտեսական իրավիճակում գտնվող երկրնե-
րում, որտեղ մարդիկ չնչին աշխատավարձեր ու բազմաթիվ
չլուծված խնդիրներ ունեն: Նշանակում է՝ երջանկության բա-
նաձևն այսօր հստակ չէ և իմաստավորման կարիք ունի: Իսկ
գլխավոր խնդիրն այն է, որ երջանկության մեր գնահատա-
կաններում ելնում ենք հասարակության երկչափ մոդելից, որի
մեջ հիմա ապրում ենք: Մենք դիտարկում ենք այն աշխարհը,
որտեղ գլխավորը նյութական բարեկեցությունն է, իշխանու-
թյունն ու սոցիալական կարգավիճակը: Եվ առավել հաճախ
դա բավարար պայման ենք համարում ամբողջ սոցիումի եր-
ջանկության կառուցման և դրա բարգավաճման համար: Այդ
առնչությամբ չի կարելի չհիշել հայտնի «Տիեզերք-25» փորձի
մասին, որն անցկացրել է գիտնական-էթոլոգ Ջոն Քելհունը՝
դիտարկելով մկների գաղութները: Փորձն այնքան ինֆորմա-
տիվ ու ակնառու էր և այնքան նյութ տվեց խորհելու, որ արժե
ավելի մանրամասն պատմել այդ մասին:

Փորձի շրջանակներում մկների համար իսկական դրախտ էր ստեղծվել լաբորատորիայի պայմաններում: Դա երկուսը երկուսի վրա ու մեկուկես մետր բարձրությամբ բաք էր, որտեղից փորձակենդանիները դուրս գալ չէին կարող: Բաքի ներսում պահպանվում էր մշտական, մկների համար հարմար ջերմաստիճան, առատ էր կերն ու ջուրը, ստեղծվել էին բազմաթիվ բներ էգերի համար: Բաքը միշտ մաքուր էր պահվում, բացառվում էր գիշատիչների հայտնվելը կամ վարակի բռնկումը, ենթափորձային մկներն անասնաբույժների մշտական հսկողության տակ էին: Կերի ու ջրի ապահովման համակարգը թույլ էր տալիս 9500 մկների միաժամանակյա կերակրում՝ առանց որևէ անհարմարության: Տարածությունն ավելի քան բավարար էր, պատսպարանի բացակայության հետ կապված առաջին խնդիրները կարող էին ի հայտ գալ միայն պոպուլյացիայի՝ 3840-ը գերազանցելու դեպքում: Սակայն կենդանիների առավելագույն թվաքանակ գրանցվեց ընդամենը 2200 մկների մակարդակում:

Մկգրում բաքում տեղավորեցին առողջ մկների չորս զույգի, որոնց համար շատ ժամանակ չպահանջվեց, որ հարմարվեն, հասկանան, թե ինչ մկնային հեքիաթում են հայտնվել. դա առաջին փուլն էր՝ յուրացումը: Առաջին ձագերի ծնվելու պահից սկսվեց երկրորդ փուլը: Իդեալական պայմաններում սկսվեց պոպուլյացիայի թվաքանակի էքսպոնենտալ աճ. մկների թիվը կրկնապատկվում էր յուրաքանչյուր 55 օրը մեկ: Բայց սկսած 315-րդ օրից պոպուլյացիայի աճի արագությունն զգալիորեն նվազեց. հիմա արդեն թվաքանակը կրկնապատկվում էր ամեն 145 օրը մեկ: Դա նշանավորեց մուտքը երրորդ փուլ: Այդ պահին բաքում մոտ 600 մուկ էր ապրում, ձևավորվել էր որոշակի հիերարխիա, որոշակի սոցիալական կյանք: Ֆիզիկապես ավելի քիչ ազատ տեղ կար, քան առաջ:

Մկների մեջ հայտնվեց «մերժվածների» կատեգորիան, որոնց վտարում էին բաքի կենտրոն. շատերն ագրեսիայի զոհ

Էին դառնում: Դրանք հիմնականում երիտասարդ առանձնյակներ էին, որոնք իրենց տեղը չէին գտել մկնային հիերարխիայում: Խնդիրների պատճառն այն էր, որ մկները երկար էին ապրել իդեալական պայմաններում, ծերացողները տեղ չէին ազատում երիտասարդների համար: Ուստի, ագրեսիան հաճախ ուղղված էր առանձնյակների նոր սերունդներին: Արտաքսումից հետո արուները հոգեբանորեն կոտրվում էին, չէին ցանկանում պաշտպանել իրենց հողի էգերին և կատարել որևէ սոցիալական դեր: Չնայած նրանք պարբերաբար հարձակվում էին կամ «մերժվածների» հասարակության այլ առանձնյակների, կամ ցանկացած այլ մկների վրա: Էգերը, ձագերի ծննդին պատրաստվելով, ավելի ու ավելի նյարդային էին դառնում, քանի որ արուների շրջանում պասիվության աճի հետևանքով պակաս պաշտպանված էին պատահական հարձակումներից: Արդյունքում էգերն սկսեցին ագրեսիա դրսևորել, հաճախ կռվի բռնվել՝ պաշտպանելով իրենց սերունդը: Բայց ագրեսիան զարմանալիորեն ուղղված էր ոչ միայն շրջապատին. ոչ պակաս ագրեսիա էր ցուցաբերվում սեփական զավակների հանդեպ: Էգերը հաճախ սպանում էին իրենց ձագերին և տեղափոխվում վերևի բները, դառնում ագրեսիվ ճգնավորներ ու հրաժարվում բազմանալուց: Արդյունքում ծնելիությունը կտրուկ նվազեց, իսկ երիտասարդ առանձնյակների մահացությունը հասավ զգալի աստիճանի:

Շուտով սկսվեց մկնային դրախտի գոյության վերջին՝ մահվան փուլը: Այդ փուլում խորհրդանշական դարձավ մկների նոր խմբի ի հայտ գալը, որն ստացավ «գեղեցիկներ» անվանումը: Դրանց թվին էին դասվում արուները, որոնք, հրաժարվելով կռվել ու մարտնչել էգերի ու տարածքի համար, տեսակին ոչ բնորոշ վարքագիծ էին դրսևորում. հակված էին պասիվ կյանքի: «Գեղեցիկները» միայն ուտում էին, խմում, քնում, մաքրում իրենց մորթին խուսափելով կոնֆլիկտներից

ու ցանկացած սոցիալական գործառույթ կատարելուց: Ապշե-
ցուցիչ էր նաև «գեղեցիկների» զուգավորվելու և բազմանալու
ցանկության բացակայությունը: Ծնունդների վերջին ալիքում
բազմանալուց հրաժարվող «գեղեցիկներն» ու միայնակ էգերը
մեծամասնություն դարձան:

«Մկնային դրախտի» գոյության վերջին փուլում մկների
կյանքի միջին տևողությունը 776 օր էր, ինչը 200 օրով գերա-
զանցում է վերարտադրողական տարիքի վերին սահմանը:
Երիտասարդ առանձնյակների մահացությունը կազմում էր
100 %, հղիությունների քանակն աննշան էր ու շուտով հասավ
0-ի: Մկները հակված էին հոմոսեքսուալիզմի, իսկ կենսա-
կանորեն անհրաժեշտ ռեսուրսների առատության պայման-
ներում դրսևորում էին շեղված և անբացատրելի ագրեսիվ
պահվածք: Կերի առատության պայմաններում ծաղկում էր
կանիքալիզմը: Էգերը հրաժարվում էին դաստիարակել ձա-
գերին ու սպանում էին նրանց: Մկներն արագ մահանում էին,
և գիտափորձի 1780-րդ օրը մեռավ «մկնային դրախտի» վեր-
ջին բնակիչը:

Նետաքրքիր է, որ վերջին, մահվան փուլում բաքից դուրս
բերեցին մկների մի քանի փոքրիկ խմբեր ու տեղավորեցին
նույնքան իդեալական պայմաններում նվազագույն բնակեց-
վածության ու անսահմանափակ ազատ տարածության պայ-
մաններում: Ըստ էության, «գեղեցիկների» և միայնակ էգերի
համար վերատեղծվեցին այն պայմանները, որտեղ մկների
առաջին չորս գույգերն արագորեն բազմանում և սոցիալական
համակարգ էին ստեղծում: Բայց ի զարմանս գիտնականների՝
«գեղեցիկներն» ու միայնակ էգերն իրենց վարքը չփոխեցին,
հրաժարվեցին զուգավորվել, բազմանալ ու կատարել վերար-
տադրության հետ կապված իրենց սոցիալական գործառույթ-
ները: Արդյունքում նոր հղիություններ չեղան, և մկները մահա-
ցան ծերությունից: Ենթափորձային բոլոր մկները մահացան
իդեալական պայմաններում:

Մկնային հասարակությունը երկու մահ ապրեց: Առաջինը ոգու մահն էր: Երբ նոր առանձնյակների համար տեղ չգտնվեց «մկնային դրախտի» սոցիալական հիերարխիայում, քացահայտ դիմակայություն ծագեց հասուն ու երիտասարդ կենդանիների միջև, ահեց չհիմնավորված ագրեսիայի աստիճանը: Պոպուլյացիայի ահող թիվը, կիտվածության ահը, ֆիզիկական կոնտակտների ինտենսիվացումը հանգեցրին միայն պարզագույն վարքագծի ընդունակ առանձնյակների ի հայտ գալուն: Իդեալական աշխարհի պայմաններում, կերի ու ջրի առատության, գիշատիչների քացակայության պայմաններում կրծողների մեծ մասը ուտում, խմում, քնում, խնամում էր իրեն: Մուկը պարզունակ կենդանի է. նրա ամենաբարդ վարքագծային մոդելներն են էգի համար հոգ տանելը, բազմացումն ու սերնդի խնամքը, տարածքի ու ձագերի պաշտպանությունը, մասնակցությունը հիերարխիկ սոցիալական խմբերին: Նոգեբանորեն կոտրված մկները վերն ասված բոլոր գործառույթներից հրաժարվեցին:

Ոգու մահից հետո վրա հասած ֆիզիկական մահն անխուսափելի էր և ընդամենը ժամանակի հարց էր: Պոպուլյացիայի զգալի մասի ոգու մահվան արդյունքում ողջ գաղութը դատապարտված էր մահվան նույնիսկ «դրախտի» պայմաններում: Ընդհանրապես, ինչո՞ւ հայտնվեց «գեղեցիկների» խումբը: Պայքարից հրաժարված, կենցաղի անտանելի թեթևությունն ընտրած մկները վերածվեցին աուտիկ «գեղեցիկների», որոնք ընդունակ են միայն ուտելու ու քնելու ամենապարզունակ գործառույթների: «Գեղեցիկները» հրաժարվեցին ամենայն բարդից ու լարում պահանջողից և, ըստ էության, անընդունակ դարձան ուժեղ ու բարդ վարքագծի: Այսօրվա շատ տղամարդիկ նույնպես ընդունակ են միայն ամենասովորական, առօրյա գործողությունների ֆիզիոլոգիական կյանքը պահպանելու համար, բայց արդեն մեռած ոգով: Ինչն արտահայտվում է ստեղծարարության, հաղթահարելու

և, ամենագլխավորը, ճնշման տակ գտնվելու ունակության կորստով: Բազմաթիվ մարտահրավերներն ընդունելուց հրաժարվելը, փախուստը լարվածությունից, պայքարից ու հաղթահարումից՝ մահն է ոգու, ինչին անխուսափելիորեն հաջորդում է մարմնի մահը: Ի դեպ, գիտափորձը կոչվում էր «Տիեզերք-25», քանի որ դա գիտնականի՝ մկների դրախտ ստեղծելու քսանհինգերորդ փորձն էր. նախորդ բոլոր նույնանման փորձերն ավարտվել էին ենթափորձային մկների մահով:

Եվ ի՞նչ պարզվեց: Պարզվեց, որ կուշտ կյանքն ու սպառնալիքների բացակայությունը պոպուլյացիայի մեծ խտության պայմաններում բերեցին մկնային հասարակության քայքայման ու մահվան: Պարզվեց, որ թուլացած, ուժերի որևէ լարում չպահանջող կյանքն ուղիղ ճանապարհն է դեպի կործանում, իսկ դիմադրությունն ու հաղթահարումը կենսականորեն անհրաժեշտ են: Եվ դա արդարացի է ոչ միայն գիտակցության մակարդակում: Դիտարկենք թեկուզ մի այնպիսի երևույթ, ինչպիսին գրավիտացիան է: Այն մեր օրգանիզմին ստիպում է ամբողջ կյանքում կրել հսկայական ծանրություն՝ մեր սեփական քաշը: Մենք այն դժվարությամբ ենք բարձրացնում առավոտյան, հոգնում ենք, երբ քայլում, վազում կամ սարն ենք բարձրանում: Թվում է՝ այդ բեռից ազատվելը պետք է որ թեթևացնի մեր կյանքը, փրկի ողնաշարի դեֆորմացիայից և հողային խնդիրներից և ընդհանրապես, երկարացնի կյանքը: Բայց այդ իդեալական, տիեզերական անկշռելիության պայմաններում հայտնվելով՝ մարդը կարող է արագ մահանալ մկանների ու սրտի ապահովմից: Շենց այդ պատճառով տիեզերագնացները ստիպված են տիեզերքում ամեն օր բազում ժամեր մարզվել հատուկ մարզասարքերով և արհեստականորեն ծանրաբեռնել մկանները: Պարադոքս է. օրգանիզմի նկատմամբ որոշակի բռնությունն ապահովում է նրա դիմացկունությունը, տոկունությունը և բուն կյանքը: Ճիշտ նույն կերպ որոշակի բռնություն պիտի գործադրվի գիտակցության

նկատմամբ, սահմանափակվի բացարձակ ազատությունը: Օրինակ, այդպիսի դեր կատարում է ցենզուրան: ԽՍՀՄ-ում գրաքննության առկայության պայմաններում տաղանդավոր մարդիկ, այնուամենայնիվ, կարողանում էին բարձր արվեստ ստեղծել, քանզի ակտիվորեն մտարկում էին, թե մտահղացումն ինչպես իրացնել սահմանափակումների պայմաններում: Եվ այդ գործընթացը բերում էր բովանդակության բյուրեղացման, մոտեցումների ճշտակատարության: Բայց այն օրը, երբ ցենզուրան չեղարկվեց, երբեմնի շատ տաղանդներ մի ակնթարթում վերածվեցին կոնյունկտուրայի գռեհիկ ներկայացուցիչների. սկսեցին բացարձակապես անտաղանդ գործեր ստեղծել: Արվեստագետը նույնպես պիտի հաղթահարի. այդ ընթացքում է ստեղծվում իսկական արժեքը:

Հասարակության պարագայում էլ նման պատկեր է նկատվում: Տեխնոլոգիական առաջընթացը հանգեցնում է աշխատանքի արտադրողականության մշտական աճի, գործընթացների մեխանիզացման ու ավտոմատացման: Ապագայում մարդիկ պետք չեն լինի նույնիսկ սնունդ արտադրելու համար. նրանց փոխարեն ամեն ինչ կանեն ռոբոտներն ու արհեստական ինտելեկտը: Մարդը սոցիումում ունի երկու գործառույթ՝ արտադրողի և սպառողի: Բայց եթե արտադրողի գործառույթն անհետանա, ապա ի՞նչ է անելու մարդը, ինչո՞վ է զբաղվելու, ի՞նչ հանրություն կստանանք արդյունքում: Մենք կստանանք մկնային դրախտ: Զարգացած երկրների ժամանակակից հասարակության մի մասն արդեն հասել է այն վիճակին, երբ կարելի է սնունդն ու մնացած ամեն բանն ստանալ առանց լարվելու: Այդ մարդկանց մեջ անջատված է գոյության պայքարը՝ բնական մեխանիզմներից մեկը: Նրանց ոգու մահն արդեն վրա է հասել: Դա վառ արտահայտվում է, օրինակ, ժամանակակից եվրոպական արվեստում շեղում, տարօրինակություն, գաղափարների այլասերվածություն, ձև՝ բովանդակության փոխարեն: Այլասերվածությունը միշտ հայտնվում է

հագեցածության, սովորական կյանքի նկատմամբ անտարբերության ֆոնին: Այլասերումն արհեստական նպատակներ հորինելն է իրական նպատակների բացակայության պատճառով: Մյուս կողմից՝ սովորական, աշխատող հասարակությունում մարդկանց մեծամասնությունն այսօր երագում է եկամուտներ ստանալ՝ ոչինչ չանելով, բարձր պաշտոն զբաղեցնելով կամ ուղղակի տեղից չշարժվելով: Փողը պետք է բերի կարգավիճակ, իսկ աշխատանքը պիտի ուրիշներն անեն: Մարդիկ ցանկանում են «անաշխատ» եկամուտներ ստանալ: Այսօր նրանք ստիպված են աշխատել փողի համար ու հաճախ իրենց դժբախտ են զգում հենց աշխատելու պատճառով: Բայց չէ՞ որ կան նաև այնպիսիք, ովքեր որոշակի եկամուտներ ունեն՝ ընդհանրապես չաշխատելով. ԱՄՆ-ում կառավարությունը երկար ժամանակ նպաստներով կերակրում էր անօթևաններին ու անբաններին: Ջարմանալի չէ, որ նպաստով ապրողները դարձան հասարակության ամենաքրեածին մասը, և նրանց մեջ արդեն մեծացել է մի քանի սերունդ, որոնք սովորել են ընդհանրապես չաշխատել: «Շենց այնպես» փող ստանալու ցանկությունը բավական տարածված է, և արդեն այսօր Եվրոպայում բնակչությանը բազային եկամուտ բաժանելու փորձեր են արվում. հասարակության ապագայի համար հիմնավորված անհանգստության պատճառով այդ նախաձեռնությունն ամեն տեղ չէ, որ ընդունվեց, բայց գաղափարը դեռ ապրում է և ակտիվորեն առաջ քաշվում:

Մկնային դրախտը գիտափորձ էր տիպիկ երկչափ աշխարհի պայմաններում: Խիտ բնակեցված տարածության մեջ, պարտադիր շփումների և սոցիալական հիերարխիայի պայմաններում մկները չգտան կյանքի իմաստն առատության մեջ: Եթե մարդկությունն ապրելու է այդպիսի աշխարհում, ձգտելով միայն նյութական բարեկեցության և առատության, մենք կստանանք նույն արդյունքը՝ մահ: Ռո՞րն է ելքը:

Մեխանիկական լուծումը հիմնավոր դեպոպուլյացիան է, որը կարող է շատ արագ տեղի ունենալ գլոբալ պատերազմի կամ գլոբալ համաճարակի հետևանքով ու կենսական տարածություն ազատել: Ոչ ավանդական սեռական կողմնորոշման տարածումն ու քարոզը նույնպես դեպոպուլյացիայի եղանակ է, թեկուզև ավելի շատ ժամանակ է պահանջում. դա կլինի բազմացման անընդունակ, բազմացման չձգտող հասարակություն: Բայց դեպոպուլյացիայի հաշվին կենսական տարածության ընդլայնումը չի կարող փրկել հասարակությանն իմաստների սրընթաց ոչնչացման պայմաններում: Մենք հիշում ենք, թե ինչով ավարտվեց դեգրադացված մկների վերաբնակեցումը. նրանք արդեն ընդունակ չէին կյանքը բնականոն շարունակելու. սոցիալական իմաստով դրանք արդեն «խոտանված» առանձնյակներ էին: Դեգրադացված մարդը չի կարող զարգացման նոր ազդակ տալ իր տեսակին նույնիսկ իդեալական պայմաններում: Ուստի, պետք է խնդրի ոչ թե մեխանիկական լուծում փնտրել, ոչ թե հետաձգել վախճանը, այլ սկզբունքորեն այլ ուղի գտնել, որը կարող է մարդուն հաղորդել կյանքի իմաստ և կանխել նրա հոգևոր մահը:

Եվ այստեղ պետք է կարևոր դիտարկում անել: Մկնային դրախտ կարող էր ստեղծել միայն մարդը՝ արհեստակա-
նորեն, օգտագործելով բանականությունը, գիտակցու-
թյունը, իր գերագույն կամքը: Մուկն ընդունակ չէ մկների համար այդպիսի դրախտային պայմաններ կազմակերպե-
լու: Ճիշտ նույն կերպ՝ նաև մյուս կենդանիները: Բնական
ճանապարհով կենդանիների շրջանում այդպիսի իրավի-
ճակ ընդհանրապես անհնար է ստանալ. բնությունը միշտ
պահանջում է ինչ-որ գործողություններ, խոչընդոտների
հաղթահարում՝ անվտանգության ապահովման, սնվելու
ու բազմանալու համար: Իսկ ահա մարդը տեսականորեն
կարող է այդպիսի բան անել: Եվ մկնային դրախտը վառ

օրինակ է այնպիսի մարդկային ապագայի, որտեղ մարդն իր վարքագծով քիչ կտարբերվի կենդանիներից ու կդարարի կյանքում դրսևորել այն, ինչը մարդուն մարդ է դարձնում:

ՄԱՐԴՈՒ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Ո՞վ է մարդը: Այս առաջին հայացքից պարզ հարցի պատասխանը մտածողներն ու փիլիսոփաները փորձում են տալ մարդկության ողջ պատմության ընթացքում: Մարդը սովորաբար բնորոշվում է որպես կենդանի արարած, որն օժտված է բանականությամբ ու գիտակցությամբ և կենդանիներից տարբերվող ուղղահայաց կեցվածքով ու հոդաքաշիս խոսքով: Բայց ուղղահայաց կեցվածքը յուրահատուկ արտաքին նշան է: Տոդաքաշիս խոսքը նույնպես սուբյեկտիվ է: Կենդանիները նույնպես ունեն իրենց լեզուն, որը լիովին ընկալելի է իրենց համար, նրանք ունակ են զգալի քանակությամբ ինֆորմացիա և հույզեր փոխանցելու: Կենդանիներից շատերը նույնպես ինչ-որ չափով օժտված են բանականությամբ ու գիտակցությամբ: Այդ դեպքում ո՞րն է մարդու սկզբունքային տարբերությունը:

Մարդն, ըստ էության, յուրահատուկ է նրանով, որ ունակ է հսկայական քանակի վերացական ինֆորմացիա արտադրելու և այդ ինֆորմացիան նյութականացնելու: Ասենք, դելֆինները նույնպես բանական արարածներ են, նրանք էլ են արտադրում ինֆորմացիա, բայց այն նյութականացնել չգիտեն: Դա նրանց պարզապես հարկավոր չէ: Թռչունը կարող է բույն շինել, բայց դա նրա սահմանն է. կենդանիները որևէ ինֆորմացիա չեն նյութականացնում, բացի հիմնարարից, որն անհրաժեշտ է գոյատևման համար: Դրան է վերաբերում թռչունների բույն շինելը կամ, օրինակ, կուղբերի՝ գետերի վրա ջրարգելակներ կառուցելը: Իսկ անա կենսաքանական գոյատևման համար ոչ

պարտադիր ինֆորմացիա ստեղծելն ու այն նյութականացնելն արդեն բացառապես մարդու աշխարհն է: Գոյի ստեղծումը մարդու կարևորագույն հատկությունն է: Բայց նրա առավել կարևոր ու անքակտելի հատկությունն է այդ գոյի կուտակումն ու փոխանցումը հաջորդ սերունդներին (ինֆորմացիայի փոխանցման ուղի ու մեծ թողունակության հաշվին): Կենդանիները կուտակման այդ հատկությունը չունեն: Նրանց պարագայում առկա է սեփական պարզ վերարտադրությունը: Եվ միայն մարդուն է հատուկ ոչ թե պարզապես սերունդ տալու ձգտումը, այլ այն իր կենդանության օրոք կուտակած ու ստեղծած գոյի ավելի մեծ քանակով օժտելը:

Ժամանակակից դեգրադացված մարդու վարքը «Տիեզերք-25» գիտափորձի մկների պահվածքին նման է հենց գոյի ստեղծման, կուտակման ու փոխանցման ձգտման բացակայությամբ, բացառապես սպառման վիճակում ապրելու պատրաստակամությամբ: Մարդկության ամբողջ պատմությունն արարման ու կուտակման, կուտակածը հաջորդ սերունդներին փոխանցելու գործընթաց է: Կյանքի ամենատարբեր ոլորտներում մենք ստեղծել ու կուտակել ենք գիտելիքներ, նյութական ու ոչ նյութական մշակույթի օբյեկտներ: Եվ այդ գործընթացը լավագույնս արտացոլում է մեր էությունը: Մարդն անպայման ստեղծում է: Նամապատասխանաբար, կարող ենք մեզ թույլ տալ ասել, որ նա, ով կորցնում է այդ կարևոր հատկությունը, ով այն չի դրսևորում կամ հրաժարվում է դրանից իր կյանքում, մարդ է՝ այդ բառի ոչ ամբողջական, այլ միայն կենսաբանական իմաստով: Արդարացի կլինի նաև պնդել, որ բոլորովին էլ աշխատանքը չի բանական դարձրել մարդուն: Աշխատանքը երկրորդային է կուտակման համեմատ: Աշխատանքն ընդամենն ինֆորմացիայի նյութականացման և գոյի կուտակման գործիք է: Միևնույն ժամանակ կուտակման ձգտումն այս կամ այն չափով հատուկ է գործնականում բոլոր մարդկանց. մարդիկ հաճույք են ստանում այդ գոյի ավելացումից՝ երեք

Եռությունների (կամ դրանցից մեկի)՝ ինֆորմացիայի, մատերիայի, էներգիայի ավելացման շնորհիվ: Մարդը երջանկություն է փնտրում բնագոյաբար՝ մինչև վերջ չհասկանալով, թե ինչ է դա: Բայց փորձը հուշում է, որ երջանկությունը միշտ գործընթաց է, դինամիկա, շարժում: Նենց այդ պատճառով էլ գիտափորձի ընթացքում մկները դժբախտ էին, նրանք խնդիր ունեին. զրկված էին սոցիալական սանդուղքով բարձրանալու հնարավորությունից, հանուն ուտելիքի ու կացարանի ստիպված չէին դժվարություններ հաղթահարել, նրանց պետք չէր պայքարել իրենց կյանքի համար: Լեհացումը հանգեցրեց ոգու մահվան: Մարդն էլ է այդպիսին. երջանիկ է շարժման մեջ ու դժբախտ, երբ շարժման տեղ կամ ուղղություն չունի: Իսկ ինչպե՞ս պիտի մարդն ապահովի այդ շարժումը, ինչի՞ հաշվին: Կա երկու ճանապարհ՝ կամ գոյի անընդհատ ավելացում (այսինքն՝ շարժում կուտակման հաշվին), կամ պարբերական որոշումներ՝ իրավիճակի տատանումներ, սթրեսներ, դեպոպուլյացիա, պատերազմներ, տարատեսակ ճգնաժամեր, որոնք ստիպում են հաղթահարման շարժում իրականացնել: Բնության մեջ տարվա եղանակների պարբերականությունը, փուլայնությունն ապահովում են կենդանի ամեն ինչի աճն ու զարգացումը, ստիպում հաղթահարել ձմռան ցուրտն ու սովը ամռանը պարզևատրված լինելու նպատակով: Իսկ վերելքն ու զարգացումը հասարակության մեջ տեղի են ունենում որոշակի կոնֆլիկտներից ու սթրեսներից հետո: Վերելքից ու հաղթահարումից հետո վրա է հասնում հագեցումն ու երջանկության բացակայությունը, իսկ հետո սկսվում է դժբախտությունը՝ անկումն ու դեպրեսիան: Եվ այդպես՝ մինչև հաջորդ ազդակը: Բայց, ինչպես արդեն ասել ենք, պարբերական լուծումները հասարակության համար խնդրահարույց են, եթե արդեն սկսվել է սոցիումի անդամների դեգրադացիան. նրանք չեն կարող արմատապես լուծել խնդիրը, դրա համար նրանց որակն այլևս անբավարար է: Բացի այդ, եթե բացառենք

տարերքը, պարբերական լուծումները հասարակության մեջ պետք է կազմակերպվեն որևէ մեկի (կամ ինչ-որ բանի) կողմից: Այդ դեպքում մնում է երկրորդ տարբերակը՝ շարժումը անի հաշվին: Մարդը հաճույք կստանա նրանից, որ կյանքի ընթացքում ավելացնում է գոյը, ստեղծում այն, ինչը դեռ չի եղել:

Բայց կուտակման հանապարհին մարդուն դարանում է այնպիսի հատկություն, ինչպիսին նախանձն է: Նախանձը, բացասական ու ավերիչ գործոն լինելով, իրականում փառասիրության հակառակ երեսն է: Նախանձն ու փառասիրությունը նույն մեդալի երկու կողմերն են, մարդու կարևոր հատկություններից մեկի դրսևորումը՝ պայմանավորված իր ապրումները վերլուծելու հատկությամբ: Կուտակման և առաջընթացի՝ մարդու բնական ու բնածին ձգտումը հաշվարկման բացարձակ համակարգ չունի. այն հարաբերական է: Ուստի, մարդը պարբերաբար համեմատում է ինչ կա հիմա, ինչ է եղել է երեկ, ինչ կա շուրջը, ուրիշների մոտ: Նա չունի ներքին ծրագրեր, որոնք կարգավորում են այդ առաջընթաց շարժումը: Մարդը, մշտապես անդրադառնալով իր կյանքին, փնտրում է ի՛ր ծրագիրը, շարժման ի՛ր չափորոշիչները: Եվ հաճախ սխալներ է գործում՝ պայմանավորված սոցիալական համակարգի, նրա բարոյականության անկատարությամբ: Առաջընթացի չափորոշիչներ են դառնում տների, մեքենաների, աքսեսուարների (նյութական աշխարհի առարկաներ) առկայությունն ու արժեքը կամ իշխանությունն ու դիրքը հասարակության մեջ (էներգիայի տեսակներ), իսկ հաշվարկման կետերը հասարակության այլ անդամներն են: Մարդն իրեն համեմատում է ոչ իր, ոչ էլ հաշվարկման բացարձակ կետի, այլ շրջապատող մարդկանց հետ: Եթե որևէ մեկն ավելին է կուտակել ու ստեղծել, առաջանում է մրցակցին հասնելու և առաջ անցնելու ձգտում. դա փառասիրությունն է: Բայց դրա համար մարդուն բավական մեծ քանակի էներգիա ու տաղանդ է պետք. նա պիտի ուժեղ լինի: Իսկ եթե թույլ է, և այդ էներգիան չի հերիքում, ապա փառասիրությունը

վերածվում է նախանձի, մրցակցին կանգնեցնելու ու նվաստացնելու ձգտման: Դրանք մրցակցության երկու ձևեր են: Փառասիրությունն առաջընթացի ձգտումն է մրցակցին արագությամբ գերազանցելու արդյունքում: Նախանձն առաջընթացի ձգտումն է մրցակցի շարժումը դանդաղեցնելու կամ կանգնեցնելու հաշվին: Շետաքրքիր է նաև, որ համեմատությունն ունի մոտ տարածության վառ արտահայտված սկզբունք. մարդն իրեն համեմատում է մոտակայքում, կողքին գտնվողի հետ: Տարածությունը քթացնում է մրցակցության այդ ձգտումը: Ուստի, նա երջանիկ է, երբ կարողանում է առաջ անցնել նրանից, ում ճանաչում է՝ հարևանից, ծանոթից: Նախանձը նույնպես մեծապես վերաբերում է նրանց, ում նա անձամբ ճանաչում է: Նախանձն ավերիչ է և թունավորում է ինչպես մարդու գիտակցությունը, այնպես էլ հասարակական մթնոլորտը: Նախանձը մարդկանց մղում է բազմաթիվ պարսավելի արարքների: Բայց հնարավոր է արդյոք ազատվել դրանից. չէ՞ որ մարդը չի կարող դադարել համեմատել և վերլուծել: Նախանձից կարելի է ազատվել՝ միայն թողնելով դրա նորմալ դրսևորումը՝ առողջ փառասիրությունը: Մարդը չի կարող անվերջ աճեցնել նյութականը, բայց կարող է իր զարգացման, առաջընթաց շարժման, կուտակման ձգտման ծանրության կենտրոնը տեղափոխել ինֆորմացիոն դաշտ: Եվ այդ ժամանակ նա կստանա երջանկության իր բաժինը:

Իհարկե, նախանձին, ագահությանը և այլ արատներին անդրադառնալիս մենք խոսում ենք մարդու անկատարության և որպես հետևանք՝ նրա ստեղծած սոցիումի հիմնախնդիրների մասին: Կենդանական աշխարհում մենք այդ խնդիրները չենք տեսնում: Նշանակո՞ւմ է դա արդյոք, որ մարդն իր ընդլայնված գիտակցությամբ ու բանականությամբ սխալ է: Ոչ, քանզի նա տրամաբանական մասն է այն շղթայի, որը տեսնում ենք Տիեզերքի հետագծում: Այդ դեպքում ինչո՞ւ է մարդն այդքան խնդրահարույց, ինչո՞ւ է նրա

կամքի ազատությունն այդքան խնդիրներ հարուցում իր ու շրջապատող աշխարհի համար: Ննարավոր է՝ պատասխանը նրանում է, որ մարդկությունը դեռևս ձևավորման ընթացքի մեջ գտնվող, իր օպտիմալ ձևին չհասած մի բան է: Դիտարկման ողջ ընթացքում մեզ շրջապատող աշխարհը որակական փոփոխություններ չի կրում, մենք այդ աշխարհում սկզբունքորեն նոր որևէ բանի առաջացում չենք տեսնում: Կենդանիների բոլոր սոցիումները կայուն կերպով գոյություն ունեն դրանց դիտարկման ամբողջ ընթացքում: Գայլերի ոհմակի, առյուծների փրայդի, մրջնանոցի կազմակերպումն անփոփոխ են: Դրանք սոցիալական համակարգեր են, որոնք գոյություն ունեն օպտիմալ ու կայուն ձևի մեջ: Իսկ մա՞րդը: Եթե կենսաբանական առումով մարդը վաղուց ձևավորվել է որպես տեսակ, ապա որպես բանականության գեներատոր նա դեռևս գտնվում է զարգացման ընթացքում: Մարդկային հասարակության փոփոխությունների, սոցիալական համակարգի ձևափոխման ամբողջ պատմությունը վկայում է որոշակի գործընթացի առկայության մասին. մենք անընդհատ փոխվում ենք: Եվ այդ փոփոխություններն ընդհանուր առմամբ օրինաչափ ու տրամաբանական են, բնական, ինչպես և սխալները, մոլորությունները: Ճանաչումը հնարավոր է միայն փորձերի ու սխալների մեթոդով: Փոփոխությունների այդ գործընթացի վերջնակետը մեզ անհայտ է, բայց հասկանալի է այդ փոփոխությունների ուղղությունը՝ վեկտորը. անհրաժեշտ է համաձայնեցնել քաղաքակրթությունը Տիեզերքի շարժման հետագծի հետ: Եվ այդ հանապարհին անհրաժեշտ է նկատի ունենալ մարդու կարևորագույն հատկություններից մեկը, նրա էությունը՝ գոյի ստեղծման և կոտակման ձգտումը:

Գոյի ստեղծումն ու կոտակումը մարդու էությունն են, նրա գլխավոր հատկությունն ու նպատակը:

Մենք նշեցինք մարդու կյանքում գոյի (մատերիալի, էներգիալի և ինֆորմացիալի) ստեղծման ու կուտակման կարևորությունը: Բայց այդ գործընթացն ունի բնական սահմանափակումներ: Ակնհայտ է, որ մատերիան վերջավոր է. այն շարունակ կուտակելն անհնար է: Որևէ մեկի մոտ մատերիալի քանակի աճը նշանակում է մեկ ուրիշի մոտ, կամ մոլորակի ընդերքում մատերիալի քանակի նվազեցում (իսկ մոլորակի ռեսուրսներն անվերջ չեն): Էներգիալի (իշխանության) քանակը սոցիումում նույնպես սահմանափակ է. ավելի մեծ իշխանության և ավելի մեծ հեղինակության ձգտումը սահմանափակվում է սոցիումի չափերով. Երկրի վրա ընդամենը 7 միլիարդ մարդ է ապրում: Այն, ինչ մենք երբեմն կոչում ենք բացարձակ, անսահման իշխանություն, իրականում կոնկրետ սահմաններ ունի: Իշխանության առավելագույնն այդ 7 միլիարդ մարդու վրա իշխանությունն է Երկիր մոլորակի սահմաններում: Իր գոյությունը նախկինի պես շարունակելու (այսինքն՝ մատերիա և իշխանության էներգիա կուտակելու) համար մարդկությունը պետք է զաղութացնի տիեզերքն ու բազմանա, տարածվի: Բայց առայժմ դա անհնար է ոչ միայն տեխնոլոգիական, այլև ֆիզիոլոգիական առումով (մարդու օրգանիզմն ունակ չէ գոյատևել երկրայինից տարբերվող պայմաններում): Բայց մարդիկ, այնուամենայնիվ, ձգտում են գոյն ավելացնելուն ու կուտակելուն. դա նրանց բնույթն է: Երջանիկ լինելու համար պետք է ամեն օր ավելացնել գոյը: Երեխան, օրինակ, ամեն օր ինչ-որ նոր բան է ստանում (գիտելիք, խաղալիքներ, նոր զգացողություններ, հույզեր)։ Նա մշտապես աճում է: Եվ նա երջանիկ է: Բայց ինչ-որ պահի՝ միջին տարիքում, մարդու կյանքում վրա է հասնում ճգնաժամը՝ հետագա մշտական աճի ու ավելացման անհնարիությունը: Գոյի կուտակումն էքսպոնենցիալ աճի փուլից անցնում է դանդաղման: Եվ յուրաքանչյուր մարդու համար դա դառնում է լուրջ ներքին խնդիր, որովհետև

կուտակման բացակայությունը հակասում է նրա ներքին բնույթին: Մարդու ճանապարհին խոչընդոտ է դառնում երկչափ աշխարհը, որտեղ նա սովորել է ապրել ու որտեղ ապարդյուն փնտրում է կուտակման նոր ուղիներ: Ապարդյուն, որովհետև, և՛ մատերիան, և՛ էներգիան ունեն կուտակման բնական սահմաններ: Միակ էությունը, որը քանակային սահմանափակում չունի, ինֆորմացիան է: Մատերիայի և էներգիայի ավելացումը նշանակում է նրա նվազում այլ տեղում: Բայց ինֆորմացիայի ավելացումն այստեղ ու հիմա ոչ մի տեղ չի նվազեցնում այն: Իհարկե, ինֆորմացիայի ստեղծման համար էներգիա է հարկավոր: Եթե մատերիա ու ռեսուրսներ չլինեն, ապա անհնար կլինի նյութականացնել ինֆորմացիան, բայց մինչև այդ սահմանը դեռ հեռու է: Ինֆորմացիա արտադրելու համար շատ քիչ էներգիա է պետք, օրինակ, մարդու ուղեղն սպառում է ընդամենը 15-20 վատտ, բայց ի գործ է աներևակայելի բաներ ստեղծել:

Մենք տևական ժամանակ ապրել ենք երկչափ աշխարհում, որտեղ գլխավորն ունեցվածքն ու ազդեցությունն էր: Այս իրավիճակից միակ ելքը սոցիումի անցումն է դեպի եռաչափ աշխարհ, որտեղ գոյի կուտակումը կատարվում է ոչ թե երկու, այլ երեք էությունների հաշվին, որոնցից մեկը (ինֆորմացիա) կուտակման սահմաններ չունի: Այսինքն, երջանիկ լինելու համար մարդուն անհրաժեշտ է զարգանալ նաև ինֆորմացիոն առումով: Սոցիումի նոր մոդելի մեջ արտադրվող ինֆորմացիան նյութականացման միջոցով պետք է փոխարկվի էներգիայի՝ փառքի ու հարգանքի: Եվ եթե ինֆորմացիան անսահման է, ապա անսահման է նաև փառքը, ինչը մարդուն հնարավորություն է տալիս հաջողությամբ իրացնելու կուտակման իր տենչը:

Տասարակության եռավեկոտությունը յուրաքանչյուր մարդու համար հնարավորություն է ապահովում իրացնելու գոյի ստեղծման և կուտակման իր ձգտումը:

ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Բնության մեջ ի սկզբանե ներդրված են գոյության ներդաշնակեցման մեխանիզմներ, օրինակ՝ գիշատիչների ու խոտակերների, դրանց պոպուլյացիայի կարգավորման: Արհեստականորեն այդ ներդաշնակության խախտումը հանգեցնում է լուրջ խնդիրների և նույնիսկ աղետների, օրինակ՝ ճագարների աննախադեպ բազմացումն Ավստրալիայում:

Մենք արդեն դիտարկեցինք բազում հակասություններ, որոնցով լի են մեր կյանքի բոլոր ոլորտները: Ակնհայտ է, որ մարդկությանն այսօր պետք են անտազոնիստական երևույթների ներդաշնակեցման ինչ-որ մեխանիզմներ, համակարգեր: Բայց ներկայիս քաղաքակրթությունն այդպիսի մեխանիզմներ չունի: Պատճառներից մեկն այն է, որ մենք անընդհատ պայքարում ենք արդարության համար, ամեն ինչում արդարություն ենք փնտրում, այն դեպքում, երբ բնությունը դեպի ներդաշնակություն մշտական շարժման մեջ է: Արդարությունը մարդու կողմից ստեղծված ու խիստ սուբյեկտիվ արհեստական հասկացություն է: Հասարակության օրենքները պետք է ամեն կերպ աջակցեն այդ սուբյեկտիվ արդարությանը: Ընդ որում, հենց արդարության սուբյեկտիվությունն է մարդկանց մղում տրամագծորեն հակառակ գործողությունների: Յանկագած դատաքննության մասնակցում է և՛ մեղադրողը, և՛ դատապաշտպանը, որովհետև ցանկացած իրավիճակի վերաբերյալ նույնիսկ գրված օրենքի ակնհայտ խախտման դեպքում կան տարբեր տեսակետներ՝ թելադրված արդարության տարբեր ընկալումներով: Սակայն բնության մեջ չկան արդարության օրինակներ: Մի՞թե արդար է, որ փոքր խիտ աստղը կլանում է մեծ ու փխրուն աստղին, իսկ հետո պայթում: Արդա՞ր է արդյոք, որ մի մոլորակը մթնոլորտ ունի, իսկ մյուսը՝ ոչ: Տիեզերքում գոյություն

չունի այդպիսի հասկացություն, ինչպես որ չկա նաև բնության մեջ: Արդարությունը մարդկային բանականության ծնունդն է: Այդ եզրույթի բովանդակությունը, իմաստը շատ հեղհեղուկ է, ոչ ունիվերսալ: Ի հակակշիռ արդարությամբ՝ ներդաշնակությունն այն հասկացությունն է, որը երկակի մեկնաբանություն չունի: Ներդաշնակության բոլոր սահմանումներն օգտագործում են կանոնավորվածություն, համաձայնեցվածություն, կարգավորվածություն, համաչափություն, ամբողջականություն հասկացությունները: Ներդաշնակությունը հիմնարար հասկացություն է, որն արտահայտվում է ֆրակտալներում մաթեմատիկայի, երաժշտության, գեղագիտության մեջ և այլն:

Ներդաշնակությունը դիտարկում է ամբողջի շահերն ու ամբողջի շարժման հետագիծը: Ներդաշնակություն է, երբ ամբողջի շահերն առաջնային են և գերակայում են մասի շահերի նկատմամբ: Անտառի շահերն առանձին ծառի շահերից վեր են: Ֆուտբոլային թիմի շահերն առանձին ֆուտբոլիստի շահերից վեր են: Ընտանիքի շահերն այդ ընտանիքում աղքատության մեջ ապրող երեխայի շահերից վեր են: Չի կարելի երեխային աղքատ ընտանիքից խլել զուտ այն պատճառով, որ այնտեղ նա փոքր-ինչ պակաս վիտամիններ է ստանում, քան պետք է: Ընտանիքն ամբողջն է: Եթե ընտանիքը կարիքավոր է, պետք է օգնել ընտանիքին, ոչ թե խլել երեխային: Այսօր անհեթեթ իրավիճակ է ստեղծվում կապված մարդու, առանձին անհատի իրավունքները առաջնային հռչակելու հետ: Ամբողջի (ամբողջ հասարակության) շահերը տվյալ դեպքում զոհաբերվում են մասի շահերին: Եվ այդ ժամանակ մարդկանց բացարձակ մեծամասնությունը ստիպված է լինում անհարմարություններ ստեղծել իր համար՝ հանուն ոչ ավանդական կողմնորոշում ունեցող չնչին թվով անձանց կամ հանուն ապակառուցողական տարրերի «ինքնարտահայտման ազատության», որը երաշխավորում են սահմանադրությունները: Միանգամայն արքուրդ հետևանքներ է ունենում արվեստում

հասարակության մի մասի շահերի պարտադիր պաշտպանության պահանջը: Եվ այդ ժամանակ մենք ունենում ենք 1986 թվականին Չեռնոբիլի ԱԷԿ-ում տեղի ունեցած վթարի մասին պատմող «Չեռնոբիլ» հեռուստասերիալը, որը սուր քննադատության արժանացավ այն բանի համար, որ ֆիլմում չկային սևամորթ դերասաններ, իսկ հերոսների թվում՝ ոչ ավանդական սեռական կողմնորոշմամբ անձինք:

Նասարակության մի մասի շահերի գերակայությունն ամբողջի շահերի նկատմամբ տանում է հասարակության ատոմացման, հասարակության քայքայման: Նոր քաղաքակրթական մոդելը պիտի առաջարկի առաջնահերթությունների այլ համակարգ: Մենք պետք է հասնենք ներդաշնակության՝ արդարության հասկացության փոխարեն: Դա է պահանջում մեր կանխադրույթներից մեկը՝ մասի շարժման հետագիծը չի կարող հակասել ամբողջի շարժման հետագծին և իմաստին: Մենք կանգնած ենք մարդկության ու Տիեզերքի կապը վերականգնելու անհրաժեշտության առջև՝ համաձայնեցնելու քաղաքակրթության զարգացման հետագիծը Տիեզերքի հետագծի հետ, իսկ սոցիումի առանձին մասերի հետագիծը՝ քաղաքակրթության հետագծի հետ:

Ննարավոր է, որ արդարացի հարց ծագի. եթե ամբողջի շահերը դիտարկում ենք որպես առաջնահերթություն, ապա ո՞վ պետք է ձևակերպի և պաշտպանի այդ շահերը: Մասի հանդեպ ընդհանուրի առաջնահերթությունը նշանակո՞ւմ է արդյոք, որ մեծամասնության կարծիքը միշտ ճիշտ է, և ժողովրդավարական համակարգն արտացոլում է այդ սկզբունքը: Նարցը կարևոր է, որովհետև ցանկացած սոցիում միատարր չէ. մարդիկ ունեն ինտելեկտի, գիտակցության տարբեր մակարդակներ, տարբեր ճաշակներ, տարբեր պահանջմունքներ: Ինչպիսի՞ն պետք է լինի հասարակության կառուցվածքը, որպեսզի նրա այդքան տարբեր բաղկացուցիչ մասերը գտնվեն կարգավորված, համաձայնեցված, համակարգված

վիճակում, որպեսզի հասարակությունը լինի ամբողջական ու ներդաշնակ: Մենք վերն արդեն խոսել ենք կառուցավորման մեթոդների վերջավոր լինելու մասին և բերել ենք դրա օրինակները: Պարբերական կառուցվածքը մարդկային հասարակության մեջ գործնականում անհնար է, քանզի մարդիկ ամենատարասեռ արարածներն են Տիեզերքում: Նրանց միանման դարձնելու համար պետք է ծախսել ահռելի էներգիա: Այդպիսի բան հնարավոր է միայն տոտալիտարիզմի դեպքում: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ այդպիսի կառուցվածքը կայուն չի լինի. առանց հսկայական էներգիայի կիրառման այն արագ կքայքայվի: Եվ այստեղ երևան են գալիս ուղղակի զուգահեռներ ֆիզիկայի օրենքների հետ: Օրինակ, նյութի՝ բոլորին հայտնի չորս ագրեգատային վիճակներից բացի (պինդ, հեղուկ, գազանման, պլազմա) գոյություն ունի ևս մեկը՝ այսպես կոչված Բոզե-Էյնշտեյնի կոնդենստը: Այն ատոմների խումբ է՝ սառեցված գրեթե մինչև բացարձակ զրո (կելվինի մեկ միլիոներորդից պակաս): Երբ ատոմները հասնում են այդ ջերմաստիճանին, ապա հազիվ են շարժվում մեկը մյուսի նկատմամբ. նրանք գրեթե չունեն ազատ էներգիա: Այդ պահին ատոմներն սկսում են միասին սեղմվել ու մտնում են նույն էներգետիկ վիճակների մեջ: Նրանք նույնական են դառնում ֆիզիկական տեսանկյունից, և ատոմների ամբողջ խումբն սկսում է իրեն այնպես պահել, ասես եթե ընդամենը մեկ ատոմ լիներ: Ֆիզիկայից վերցված այդ օրինակը հրաշալի պատկերում է մարդու պահվածքն ամբոխի մեջ. անհատն առավելազույն «սառչում է», նրա ազատ կամքը ձգտում է զրոյի, նա կորցնում է իր անհատականությունն ու գործնականում դադարում շարժվել ամբոխի մյուս անդամների նկատմամբ (և՛ ֆիզիկական, և՛ էներգետիկ, և՛ ինֆորմացիոն առումներով): Արդյունքում ամբոխն իրեն պահում է որպես մեկ մարդ, իսկ մարդիկ ամբոխի մեջ իրարից չեն տարբերվում: Բայց, ինչպես արդեն ասել ենք, ամբոխանման կառուցվածքն անկայուն է և

արագ քայքայվում է. պարզապես չկա այնպիսի էներգիա, որը կկարողանա մարդուն երկար պահել այդ վիճակում:

Մարդկային հասարակությունը պտտման համակարգ է՝ փոքր ծավալ ունեցող խտացված կենտրոնով: Տասարակության կենտրոնը կենտրոնական գաղափարի կրողներն են: Եվ այդ կրողները միշտ փոքրամասնություն են հասարակության մեջ: Փոքրամասնության շատ խիտ միջուկը կարող է ազդել մեծամասնության վրա, լինել նրա ձգողականության, պտույտի կենտրոնը: Բավական է, որ հասարակության 5 տոկոսը որևէ գաղափարի հետևորդ լինի, որպեսզի շատ արագ գա իշխանության:

Եթե հասարակությունը դիտարկենք որպես ֆիզիկական միջավայր ու համեմատենք, օրինակ, գալակտիկայի հետ, կպարզվի, որ հասարակության մեծ մասը քառս ու էնտրոպիա է: Տիեզերքում, երբ որևէ մատերիա հավաքվում ու դառնում է աստղ, ապա դա նշանակում է, որ շուրջը հարյուր միլիոնավոր կիլոմետրերի դատարկություն է: Ճիշտ այդպես է կառուցված ատոմը. դա հսկայական դատարկ տարածություն է ծավալով փոքր միջուկի ու էլեկտրոնի միջև: Էնտրոպիան մեծ է ծավալով: Որևէ բան չանելու համար ավելի շատ հիմնավորումներ կան, քան որևէ բան անելու համար. սա հենց էնտրոպիայի չնվազման օրենքն է գործողության մեջ: Բայց հետաքրքիր է, որ որևէ տեղ էնտրոպիան նվազեցնելու, ինչ-որ բան կառուցավորելու համար պետք է մեկ այլ տեղում մեծացնել էնտրոպիան: Այդ գործընթացը նման է ռեակտիվ շարժմանը. որպեսզի հրթիռն առաջ շարժվի, այն պետք է հետ նետի զանգված (այրված վառելիք): Եվ որքան արագ է շարժումը, այնքան մեծ է նետման արագությունը կամ հետ նետվող զանգվածը: Ստացվում է, որ կառուցավորելու համար անհրաժեշտ է կառուցավորման գոտուց դուրս ավելացնել քառսը, անկարգությունը: Տամապատասխանաբար, եթե հասարակության մեջ ստեղծում ենք որևէ գաղափարի հետևորդների փոքրիկ, բայց խիտ միջուկ, ապա

դա նշանակում է, որ այդ պահին կհայտնվեն հսկայական թվով մարդիկ, որոնք ոչ մի կապ չունեն այդ գաղափարի հետ: Եվ նրանք մեծամասնություն են: Իսկ ինչպե՞ս վարվել մեծամասնության, ժողովրդավարական համակարգի հետ: Որքան էլ տարօրինակ հնչի, մեծամասնության կարծիքը չի կարող որոշել ամբողջի շահերը: Բանն այն է, որ մարդկային քաղաքակրթության շահերը, Տիեզերքի հետագծի հետ համաձայնեցված նրա շարժման հետագիծը գոյություն ունեն ինքնին՝ անկախ նրանից՝ մեծամասնությունը հասկանում է դա, թե ոչ: Մեծամասնության կարծիքը կարող է և՛ արդար լինել, և՛ սխալական. մարդկության իրական շահերը դրանից որևէ կերպ չեն փոխվի: Մենք հիշում ենք, որ համակարգի առավելագույն ծավալը քառսն է, իսկ հասարակության մեծամասնությունը՝ կյանքի մասին ոչ հստակ պատկերացումներով սովորական մարդիկ, որոնք բարձր գաղափարների հետևորդներ կամ քացարձակ արժեքների կրողներ չեն: Հասարակության կենտրոնը, նրա գաղափարների կրողը և առաջնությունների դրսևորողը մեծ կշիռ ունեցող փոքրամասնությունն է: Այդ պատճառով էլ բացարձակ մեծամասնության կողմից կարևոր որոշումներ ընդունելու ժողովրդավարական համակարգը հակասում է տիեզերական կանոններին, իսկ նրա սխալականությունը և նույնիսկ վտանգավորությունը բազմիցս ապացուցվել է պատմության մեջ. մեծամասնությամբ ընդունված առաջին որոշումներից մեկը Հիսուս Քրիստոսին մահապատժի ենթարկելու որոշումն է: Նացիոնալ-սոցիալիստական կուսակցությունը Հիտլերի գլխավորությամբ 1933 թվականին հաղթեց Գերմանիայի ընտրություններում շնորհիվ ձայների մեծամասնության: Եվ այդ մեծամասնության կարծիքը թանկ արժեցավ ամբողջ աշխարհի համար: Բայց չէ՞ որ ընտրությունները միանգամայն ժողովրդավարական էին, իսկ իշխանությունը՝ լեգիտիմ: Մեծ նավի վրա մի քանի հարյուր նավաստիներ են ծառայում, տասնյակ սպաներ և ընդամենը մեկ նավապետ: Բայց եթե նավի

անցումը նեղուցով իրականացվի քվեարկության միջոցով, իսկ որոշումն ընդունվի ձայների մեծամասնությամբ, ապա նավն անխուսափելիորեն կկործանվի՝ ժայռերին բախվելով կամ ծանծաղուտ ընկնելով: Իսկ ահա երբ քարդ նեղուցով նավը վարի ընդամենը մեկ մարդ՝ լոցմանը, ամեն ինչ կարգին կլինի: Մեծամասնության կարծիքը երբեք չի եղել ու չի կարող ճշմարտության չափանիշ լինել: Եվ երբ հնչում է «բոլորը չեն կարող սխալվել» փաստարկը, պետք է ազնվորեն խոստովանել՝ կարող են: Ավելին, մեծամասնությունն անընդհատ սխալվում է: Ձայների բացարձակ մեծամասնությամբ ու բնակչության լիակատար ու անսահման աջակցությամբ ընտրված պետությունների նախագահները մի քանի տարի անց դառնում են ռիսերիմ թշնամիներ այդ նույն բնակչության համար, որը փողոց է դուրս գալիս և բողոքի ակցիաներ կազմակերպում՝ պահանջելով ազատվել նրանից, ում հարցում այդպես սխալվել է: Նման օրինակներ մենք տեսնում ենք ամենուրեք:

Վերը բերված՝ մեծամասնության խնդիրը համընդհանուր հավասարության գաղափարի ուղղակի հետևանքն է: Այդ գաղափարը գոյություն ունի բավական վաղուց և ֆորմալ առումով ժամանակակից դեմոկրատիաների հիմքն է: Բայց անողորմ տրամաբանությունը հուշում է, որ համընդհանուր հավասարության գաղափարը կարող է արդարացի լինել միայն ատոմների կամ տարրական մասնիկների մակարդակում, որտեղ մասնիկները իրարից իսկապես չեն տարբերվում: Բայց մեզ հայտնի է, որ անհատականության, տարբերության աստիճանը կենսաբանական մակարդակում կտրուկ աճում է: Տավասարությունը ենթադրում է նմանություն: Եվ մարդիկ նման չեն իրար շատ ավելի, քան մնացած բոլոր արարածները: Սոցիումի տեսանկյունից նրանք առավելագույնս նման չեն իրար ինտելեկտով, մտածողությամբ, անձնային որակներով: Տեղաբար նշանակում է՝ համընդհանուր հավասարության գաղափարն էլ ճիշտ չէ, որովհետև չի արտացոլում իրական վիճակը:

Ավելին, նման գաղափարը հակասում է սոցիումի բուն կառուցվածքին՝ պտտական, խիտ կենտրոնով, կենտրոնական գաղափարներով ու առաջնորդներով:

Ազատության ու հավասարության կարգախոսը վտանգավոր ու կործանիչ է սոցիումի համար նաև այն պատճառով, որ քերում է սահմանափակ մարդկանց արհեստական վսեմացման և բարձր ունակություններով օժտված անհատականությունների նսեմացման: Այսինքն, մենք գործ ունենք մարդկանց արհեստական հավասարեցման հետ, որը վերածվում է ոմանց նկատմամբ բռնության, իսկ մյուսների դեպքում՝ շվայտացման: Ավելին, այդպիսի համակարգն ամենայն հավանականությամբ ընդհանրապես ոչ մեկի համար պիտանի չի լինի: Այդ համակարգում ոչ ոք երջանիկ չի լինի: Տեսույալ օրինակը հրաշալի ներկայացնում է այս թեզը: 1950-ական թվականներին ամերիկյան ռազմաօդային ուժերում չափագրել էին 4000 օդաչուների մարմինները՝ տարբեր չափորոշիչներով, ներառյալ բութ մատի երկարությունը, աչքի և ականջի միջև տարածությունը և այլն: Արդյունքում ստացել էին յուրաքանչյուր պարամետրի միջին արժեքը: Բոլորը հավատացած էին, որ պարամետրերի առավել մանրակրկիտ հաշվարկը կրերի «միջին օդաչուի» համար կատարյալ, հարմարավետ խցիկի ստեղծմանը: Լեյտենանտ Շիլբերտ Դենիելսը հաշվարկեց տասը ֆիզիկական պարամետրերի միջին արժեքները, որոնք ամենակարևորն էին խցիկի դիզայնի համար՝ ներառյալ հասակը, կրծքավանդակի շրջագիծը և թևքի երկարությունը: Տեսող մանրամասն, մեկը մյուսի հետևից լեյտենանտը համեմատեց յուրաքանչյուր օդաչուի պարամետրերը միջին արժեքների հետ: Գիտնականները ենթադրում էին, որ օդաչուների զգալի մասը կհամապատասխանի միջին թվերին բոլոր 10 պարամետրերով: Բայց Շիլբերտ Դենիելսն ապշած էր, երբ պարզեց այդպիսի օդաչուների իրական թիվը: Ջրո՝ 4063 օդաչուներից ոչ մեկը չէր համապատասխանում բոլոր

տասը պարամետրերով միջին դիապազոնին: Մեկի ձեռքերն էին միջինից երկար, իսկ ոտքերը՝ կարճ, մյուսը լայն կուրծք, քայց նեղ կոնքեր ուներ: Բայց ավելի ապշեցնող էր այն, որ եթե դիտարկվեն տասից միայն երեք պարամետրերը, ասենք՝ պարանոցի շրջագիծը, ազդրի շրջագիծը և դաստակի շրջագիծը, ապա, մեկ է, միջին պարամետրերով օղաչուների միայն 3,5 տոկոսն էր համապատասխանում բոլոր երեք ցուցանիշներին: Եզրակացությունը շոկային էր. «միջին օղաչու» հասկացություն գոյություն չուներ: Եթե ինքնաթիռի խցիկը նախագծվի միջին օղաչուի համար, ապա իրականում այն ոչ մեկին հարմար չի լինի: Իսկ արդյունքում ի՞նչ ելք գտան ինքնաթիռի խցիկը նախագծողները: Ստեղծեցին կարգավորվող բազկաթոռներ, ոտնակներ ու սաղավարտներ, ինչը թույլ էր տալիս առավելագույնս հաշվի առնել մարդու անհատական առանձնահատկությունները: Իսկ այդ պատմությունից արված գլխավոր եզրակացությունն այսպիսին էր. միջին մարդու համար հաշվարկված ցանկացած համակարգ դատապարտված է ձախողման: Համակարգը պետք է հաշվի առնի, որ մարդիկ միանման չեն: Դա վերաբերում է նաև հասարակությանը:

Անհավասարություն հասարակության մեջ. առաջին հայացքից հանդուգն ու ոչ կոռեկտ է հնչում: Բայց մի՞թե գիտնական-ֆիզիկոսի և երթուղայինի վարորդի տեսակարար օգտակար կշիռը հասարակության մեջ հավասար է: Արդյոք սոցիումի համար հավասար արժեք ունե՞ն բժիշկ-վարակաբանն ու մարմնավաճառը: Մենք խոսում ենք ոչ թե քաղաքական կամ սոցիալական իրավունքների տարբերության, ոչ թե մարդկանց բարձր ու ցածր կարգի, այլ սոցիումի կոնկրետ անդամների տեսակարար կշռի մասին: Անկասկած, այն տարբերվում է: Ավելին, հանդիպում են նաև այնպիսի անհատներ, որոնք քաջարձակապես անալիտան են հանրույթի համար: Տետևաբար անհրաժեշտ է մշակել այնպիսի համակարգ, որում մարդկանց միատեսակ չլինելը նորմալ է և ոչ թե

խտրականության դրսևորման առիթ է, այլ բնական վիճակ, որը հասարակության համար ապահովում է հնարավորինս լիարժեք զարգացում, որից էլ վերջնարդյունքում շահում են բոլորը: Մենք խոսում ենք ներկայումս գոյություն ունեցող առաջնությունների համակարգը 180 աստիճանով շրջելու մասին: Առանձին անհատի իրավունքների առաջնահերթության փոխարեն, որը իրացվում է ի վնաս հասարակության և արդյունքում նաև նրա մյուս անդամների շահերի, անհրաժեշտ է, որ առանձին անհատի շահերն ու իրավունքները ենթարկվեն ամբողջ հասարակության և դրա բոլոր անդամների շահերին: Մինչդեռ արդի իրականության մեջ, երբ առաջնահերթությունը տրվում է տարբեր փոքրամասնություններին ու առանձին անհատների շահերին ու իրավունքներին, հասարակության մեջ առաջանում են ոչ թե ձգողության, այլ պայթյունավտանգ կենտրոններ, ստեղծվում են բազմակենտրոն սոցիումներ: Իսկ դա անկայուն, միջանկյալ վիճակ է, որը կամ հանգեցնում է լիակատար անարխիայի, կամ դառնում անցումային փուլ դեպի նոր տեսակի սոցիումի կառուցում, որը կազմակերպված է Տիեզերքի հետ ներդաշնակ:

Ներդաշնակության սկզբունքը. ամբողջի շահերը միշտ բարձր են մասի շահերից:

ՍԻՆԹԵԶ ԵՎ ԱՆԱԼԻԶ

Մեր քաղաքակրթության հիմնախնդիրների շարքում մենք նշել էինք անալիտիկ, վերլուծական մտածողությունը՝ որպես ճանաչման մեթոդ, քննարկել ուսումնասիրվող թեմաների մանրամասների մեջ անվերջ խորասուզումը, որն ուղեկցվում է աշխարհի ընդհանուր պատկերի կորստով:

Ինչպես և այլ խնդիրներ, սա նույնպես ծագել է ոչ թե ինչ-որ դավադրության կամ մարդկանց տիեզերական հիմարության, այլ հասարակության զարգացման օրինաչափությունների արդյունքում. այդպիսին էր տեղի ունեցող գործընթացների տրամաբանությունը: Տասկանալ ինչ-որ բանի սխալականությունը կամ անբավարարությունը, գիտակցել խնդիրը. սա արդեն առաջին քայլն է խնդրի լուծման հանապարհին: Եվ այսօր հանաչման հարցում բացառապես վերլուծական մեթոդի ոչ բավարար լինելու գիտակցումը պետք է դառնա նոր մտածողության ձևավորման մեկնակետ:

Սինթետիկ մտածողությունը ենթադրում է որոշակի հեռավորություն սինթեզի տարրերից: Զափազանց շատ մոտենալը նեղացնում է տեսադաշտը: Եվ միայն բավականաչափ հեռանալով կարելի է տեսնել ամբողջական պատկերը: Պատկերացնենք գեղանկարչության 20 մասնագետի, որոնք խոշորացույցի տակ ուսումնասիրում են մեկ նկարի տարբեր հատվածներ: Դրանցից յուրաքանչյուրը կարող է շատ ինֆորմացիա տրամադրել այն մասին, թե ինչ գույնի և ինչ տեսակի ներկով և կոնկրետ ինչպես է նկարվել կտավի տվյալ հատվածը: Նրանք կարող են տեսնել վրձնի խավամագերի հետքերը և նույնիսկ մանրագույն փշուրները: Բայց նրանցից ոչ ոք չի հասկանա, որ դա «Մոնա Լիզան» է, եթե մի կողմ չդնի խոշորացույցն ու նկարից թեկուզ մեկ մետր չհեռանա: Այսօր հետազոտողների և գիտնականների մեծ մասը նման է խոշորացույցով զինված արվեստաբանների, իսկ նրանցից ոմանք մանրութները վերլուծելու համար դիմում են արդեն մանրադիտակի օգնությանը: Իսկ ահա ամբողջ նկարը, ընդհանուր մտահղացումը տեսնում են հազվագյուտ մարդիկ:

Սինթետիկ մտածելակերպ ունեցող մարդկանց փոքր քանակը միմյանց հետ կապակցված գործոնների ազդեցության արդյունք է: Առաջինը մարդուն արարչագործության պսակ հռչակելն է, տրանսցենդենտից հրաժարվելը և տիեզերքի

բոլոր հարցերը «գետին իջեցնելու», դրանք պայմանական մանրադիտակի տակ ուսումնասիրելու փորձն է: Եթե մարդն ինքն իրեն չի դիտարկում որպես մեծ համակարգի մաս, իսկ իր առաջացումը բացատրում է պատահականությամբ, ապա արդյոք արժե՞ զարմանալ, որ նա չի տեսնում կապն իրեն շրջապատող աշխարհի մնացած մասերի միջև և դրանք դիտարկում է առանձին-առանձին: Երկրորդ գործոնն ինքնին մարդկային մտածողության մեխանիզմն է: Գիտակցությունը, որին մարդը մշտապես դիմում է մտավոր գործունեություն իրականացնելիս, բոլորովին էլ որոշումների ընդունման կենտրոնը չէ: Գիտակցությունից զատ, մեր մեջ գոյություն ունի նաև անգիտակցականը՝ ենթագիտակցությունը: Գիտության զարգացումը չգիտես ինչու մեզ հանգեցրել է այն համոզմունքին, որ մարդու մեջ կարևորը հենց գիտակցությունն է: Մեր գիտակցությունն ամբարտավան է: Մենք նույնիսկ ենթագիտակցությունն անվանել ենք ենթագիտակցություն, այսինքն՝ մի բան, որը գիտակցությունից ցածր է: Ենթագիտակցության մյուս սահմանումը՝ անգիտակցականը, նույնպես ունի նվաստացուցիչ երանգ: Մարդու ուղեղի կառուցվածքը բաց թեմա է և ենթակա է խոր հետազոտության, բայց մեզ հայտնի բոլոր փաստերը հուշում են, որ ենթագիտակցությունը շատ ավելի հզոր է, քան գիտակցությունը: Ենթագիտակցության կողմից կատարվող և հոմեոստազն ապահովող գործողությունների քանակն ու բարդությունը համաչափելի չէ գիտակցության հետ: Միլիոնավոր ռեցեպտորներ և սենսորներ միաժամանակ հաղորդում են ինֆորմացիայի հսկայական ծավալ, որը վերլուծում է ենթագիտակցությունը: Նենց այդտեղ էլ կատարվում են բարդագույն մաթեմատիկական հաշվարկներ և տրամաբանական գործողություններ: Այնդտեղ էլ դրված են հիմնական ծրագրերի հիմքերը, որոնք ապահովում են տեսակի գոյատևումն ու վերարտադրումը: Ենթագիտակցականն արդյունավետ կառավարում է ամբողջ օրգանիզմն առանց

գիտակցության որևէ միջամտության: Այդ գործընթացը նույնն է բոլոր կենդանիների դեպքում: Իսկ գիտակցությունն ավելի շատ նման է արտաքին աշխարհի հետ կապի համար նախատեսված ինտերֆեյսի, որն ունի սեփական պայմանական պրոցեսոր: Ենթագիտակցությունն առաջնային է. եթե հոմեոստազը խանգարվի, եթե կենսաբանական օրգանիզմը մեռնի, ոչ մի գիտակցություն չի լինի: Չէ՞ որ գիտակցությունն է թելադրում, թե սիրտն ինչպես կծկվի, կամ լյարդն ինչպես աշխատի: Ընդ որում, նույնիսկ խանգարված գիտակցությամբ մարդկանց օրգանիզմը գործում է, իսկ ուղեղը՝ հաջողությամբ իրականացնում իր հիմնական գործառույթները: Քնի ժամանակ մեր օրգանիզմը նույնպես աշխատում է ժամացույցի նման, առանց գիտակցությունը գործի դնելու: Մարդկանց ու կենդանիների տարբերությունը գիտակցության հնարավորությունների օգտագործման մեջ է: Ավելի ճիշտ, մարդու դեպքում գիտակցության տարածքն ընդլայնված է, և հենց դրա շնորհիվ մարդը կարող է ստեղծել ու կուտակել ինֆորմացիա, որն իր ծավալով զգալիորեն գերազանցում է հիմնարար, միայն վերարտադրման համար անհրաժեշտ ինֆորմացիան: Սակայն գիտակցության հաշվողական հզորությունը բավարար չէ ինֆորմացիայի մեծ ծավալների հետ աշխատելու համար, և հենց այդ պատճառով մենք այն տրոհում ենք մասերի և ամբողջը մաս-մաս վերլուծում: Մինթեզը տեղի է ունենում ենթագիտակցության մեջ, որն իր հնարավորություններով ավելի նման է սուպերհամակարգչի: Տենց այնտեղ էլ ի հայտ են գալիս համակարգային լուծումներ, այնտեղ է ձևավորվում ընդհանուր պատկերը, այնտեղ են ծնվում հայտնագործությունները:

Մինթետիկ, ինտեգրալ մտածողությունը իմաստների ըմբռնման ուղին է:

ՆԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՄՐՅԱԿՅՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Ուսումնասիրելով մարդկային հասարակության պատմությունը՝ մանրամասն կանգ առանք աշխարհում այսօր գերիշխող կապիտալիստական մոդելի և դրան հատուկ խնդիրների վրա: Կապիտալիզմի սկզբունքներից մեկը, որը փորձաքար է ներդաշնակ հասարակության ստեղծման հանապարհին, մրցակցության սկզբունքն է: Մի կողմից, թվում է, մրցակցությունը պետք է խթանի զարգացումը, արագացնի և օպտիմալացնի գործընթացները. արդյոք դա բարիք չէ: Այս ամենը հիշտ է, բայց մրցակցությունը նաև հակառակ կողմն ունի: Մրցակցությունն այն է, երբ ես ուզում եմ ուրիշների հաշվին ավելացնել իմ գոյը: Կապիտալիստական մրցակցությունը ցանկություն է, որպեսզի գնեն իմը և ոչ թե ուրիշինը, որպեսզի լսեն ինձ և ոչ թե ուրիշներին, որպեսզի լավ լինի ինձ համար և ոչ թե ուրիշների: Եվ դա բնական է. չէ՞ որ համակարգի հիմքում ընկած է ագահությունը: Կապիտալիզմի դեպքում մրցակցությունը պատերազմի տեսակ է, որի նպատակն է ոչ միայն հաղթել, այլև ճնշել, սնանկացնել, արնաքամ անել կամ ոչնչացնել հակառակորդին: Օրինակ, ո՞րն է սմարթֆոններ արտադրողի նպատակը: Ավելացնել վաճառքի ծավալները: Գուցե հարց ծագի. իսկ մի՞թե այդտեղ պատերազմի տարր կա: Թող այդ ծավալներն ավելանան՝ որքան ուզում են, ոչ ոք դեմ չէ. թող վաճառեն և՛ նրանք, և՛ մյուս արտադրողները: Բայց բանն այն է, որ վաճառքի շուկան նույնն է, այսինքն, մենք ենք: Եվ արտադրողները, բրենդները պատերազմ են մղում հանուն գնորդի, որը պատրաստվում է գնում կատարել: Նա չի գնելու և՛ մեկը, և՛ մյուսը: Գնել իմը նշանակում է չգնել ուրիշինը: Այն, ինչ կվաստակեմ ես, չի վաստակի մեկ ուրիշը: Իմ եկամուտները նշանակում են ինչ-որ մեկի վնասները: Եվ այդպես շարունակ: Նետևաբար,

կապիտալիստական մրցակցությունը պատերազմ է: Եվ դրանում միշտ կան պարտվողներ:

Սակայն մարդկության ամբողջ կենսափորձը ցույց է տալիս, որ համագործակցությունն ավելի լավ արդյունքներ է տալիս, քան մրցակցությունը: Եթե մրցակցության դեպքում մղվում է պայքար, որն ուղեկցվում է տեխնոլոգիաների, ռեսուրսների, մասնագետների յուրացմանն ուղղված ջանքերով, ապա համագործակցության դեպքում ոչ միայն տեղի է ունենում բոլոր ռեսուրսների, ամբողջ ներուժի համախմբում, այլև առաջանում է սիներգիա, ծնվում է նորը: Օրինակ, երգչախումբը համագործակցության և սիներգիայի վառ տարբերակ է: Երաժիշտները չեն ապացուցում, թե իրենցից որն է ավելի լավը. փոխարենը նրանք միասին ստեղծում են մի բան, որին ոչ ոք միայնակ ընդունակ չէ: Ամբողջը միշտ ավելին է, քան նրա մասերը: Մրցակցության դեպքում ամբողջն ավելի փոքր է լինում, քան մասերը: Որովհետև մրցակիցները չեն գումարում իրենց ջանքերը, այլ խլում են մեկը մյուսից: Կապիտալիզմը գոյության միջոց է ոչ թե համագործակցության, այլ մրցակցության մեջ: Եվ դա է պատճառը, որ նկատվում է հասարակության և տնտեսության այս ֆիբրիլացիան:

Խոսքով՝ արևմտյան հասարակությունը հաճախ հռչակում է համագործակցության անհրաժեշտությունը կյանքի տարբեր ոլորտներում: Թե՛ ՆԱՏՕ-ն, թե՛ Եվրոպական միությունը, թե՛ բազմաթիվ միջազգային կազմակերպություններ ունեն «համագործակցության» ծրագրեր: Սակայն «համագործակցություն» և «ինտեգրում» բառերը սովորական սուտ են թաքցնում: Այդ ծրագրերի մեծ մասը հետապնդում է զուտ պրագմատիկ նպատակներ, և կարող է օգուտ բերել գործընթացի մասնակիցներից միայն մեկին: Աշխարհի երկրները վաղուց հասկացել են համագործակցության անհրաժեշտությունը պատերազմների և այլ համաշխարհային կատակլիզմների կանխարգելման, համաշխարհային ճգնաժամերի

պայմաններում գործողությունների համաձայնեցման և այլնի համար: Դրա համար նրանք սկզբում ստեղծեցին Ազգերի լիգան, հետո՝ ՄԱԿ-ը: Բայց փաստերը վկայում են, որ այդ ցուցանակի ներքո քիչ բովանդակություն կա: Այդ մեխանիզմները չեն աշխատում կամ աշխատում են՝ ծառայելով միայն կոնկրետ կողմերի շահերին: Մարդկությունը փաստորեն հանձնվել է՝ չկարողանալով լուծել իր առաջ ծառացած խնդիրները: Մենք միայն ձևացնում ենք, առերևույթ ցույց ենք տալիս, թե լուծում ենք խնդիրները: Միացյալ Եվրոպան սիներգիա չէ, այլ ֆեյք, որի իմաստն ուժեղների շահերի պաշտպանությունն է: Չնայած կարգախոսերին ու գեղեցիկ խոսքերին՝ Եվրոպայի առաջատար երկրները բոլորովին էլ չեն ձգտում Եվրամիության բոլոր անդամների մեջ տեսնել իրենց հավասարին: Խոսելով «եվրոպացիներ» անվանումով հանրույթի մասին՝ արդի քաղաքագետներն ու մտածողները, մեղմ ասած, խորամանկում են: Նրանք երբեք իրենց առաջ նպատակ չեն դրել այդպիսի հանրույթ ստեղծելու: Առավել ևս, նրանք խնդիր չեն դնում հավասարեցնելու կենսամակարդակը Եվրամիության երկրներում, մասնակից բոլոր երկրների մարդկանց կյանքը դարձնելու արժանապատիվ ու ծաղկուն: Գերմանացիներն ու ֆրանսիացիները բոլորովին չեն ձգտում Լիտվան, Լատվիան կամ Ռումինիան դարձնել բարձր կենսամակարդակով երկրներ: Նրանց համար լիտվացին, լատիշն ու ռումինացին խիստ պայմանական եվրոպացիներ են: Ուստի, նրանք չեն պատրաստվում հավասարության նշան դնել իրենց և նրանց միջև: Կորոնավիրուսային համավարակն ակնառու ցույց տվեց եվրոպական «համագործակցության» գինը. Իտալիան, հայտնվելով ծանր իրավիճակում, մնաց լիակատար մեկուսացման մեջ և իր եվրոպացի «գործընկերներից» ոչ մի օգնություն չստացավ:

Այդ իմաստով հակառակ օրինակ էր ԽՍՀՄ-ը, որը ոչ միայն հռչակել, այլև կոնկրետ քայլեր էր ձեռնարկում ինչպես

միասնական խորհրդային ժողովուրդ ստեղծելու, այնպես էլ միութենական հանրապետությունների տնտեսությունների և կենսամակարդակի հավասարեցման ուղղությամբ. ԽՍՀՄ հանրապետություններին տրամադրվում էին խոշոր միջոցներ, այնտեղ ստեղծվում էին ժամանակակից ենթակառուցվածքներ, գիտություն, արդյունաբերություն: Իսկ կենտրոնական ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերն անպայման ենթադրում էին ծայրամասերից ուսանողների ներգրավվածություն: Դա էլ հենց սիներգիայի ձգտումն էր, թեկուզ և շատ առումներով անկատար: Այդ սիներգիայի արդյունքը խորհրդային ժողովրդի համախմբվածությունն ու ոգին էր Նալբենական մեծ պատերազմի տարիներին, երկրաշարժից ավերված Տաշքենդի, իսկ հետո նաև Լենինականի՝ համատեղ ջանքերով վերականգնումը: Ու քանի որ խոսք եղավ ԽՍՀՄ-ի մասին, հարկ է նշել, որ խորհրդային համակարգի շրջանակներում սիներգիայի հետ մեկտեղ կար նաև մրցակցություն: Բայց այն ուներ բոլորովին այլ ձև՝ սոցիալիստական մրցություն ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև, իսկ այդ մրցության մասնակիցների համար խթանը փոխանցիկ կարմիր դրոշմ էր: Ձեռնարկություններն ու կազմակերպությունները պայքարում էին ոչ թե ռեսուրսները մեկը մյուսից խլելու կամ շուկան իրենց ազդեցության տակ պահելու, այլ փառքի ու պատվի համար, որոնց նյութականացված ձևը փոխանցիկ կարմիր դրոշմները, պատվադրոշմները, պատվոգրերն ու շքանշաններն էին: Այդ, սոցիալիստական մրցության հաղթողներին նաև պարգևավճարներ էին տրվում, ինչը միանգամայն տրամաբանական է, սակայն այստեղ էլ կարևոր է, որ այդ միջոցները ոչ մեկից չէին խլում. դրանք լոկ հավելավճար էին. ընդհանուր առմամբ, սոցիալիստական մրցության հաղթողները մնացածների նկատմամբ չունեին որևէ ֆինանսական առավելություն:

Մտորելով ապագայի սոցիումի մոդելի մասին՝ մենք չենք բացառում մրցակցության գոյությունը, բայց մարդկությանը պետք է այնպիսի մրցակցություն, որը հիմնված է ոչ թե ազահության, այլ տեղեկատվական բաղադրիչի զարգացման վրա: Ինֆորմացիայի ստեղծումը թույլ է տալիս ստեղծել նոր գոյ, ավելացնել, կուտակել այն: Ոչ թե ուրիշներից ավելի, ոչ թե ուրիշների հաշվին, այլ պարզապես օրեցօր ավելացնելով ստեղծածը: Այդ դեպքում մարդը մրցակցում է ինքն իր հետ՝ ամեն օր աշխատելով ավելի լավ ու որակով, քան երեկ: Այս սկզբունքը լավ հայտնի է ստեղծագործական մասնագիտությունների տեր մարդկանց. յուրաքանչյուր նոր աշխատանք մրցակցում է նախորդի հետ: Եթե ավելի լավն է, ապա համարվում է հաջողություն և ողջունվում է, իսկ եթե ոչ, հեղինակն ինչ-որ չափով կորցնում է իր փառքը: Ուստի, յուրաքանչյուր իսկական վարպետ ամեն անգամ ձգտում է գերազանցել ինքն իրեն: Եվ դա որևէ խնդիր չի հարուցում մնացած հեղինակների համար: Երբ ընկերությունը սմարթֆոն է արտադրում, ապա ձգտում է, որ գնեն ոչ թե ուրիշի, այլ հենց իր արտադրածը: Իսկ երբ հեղինակը կտավ է նկարում կամ գիրք գրում, ապա իր առջև խնդիր չի դնում, որ մարդիկ տեսնեն կամ ձեռք բերեն միայն իր նկարը և կարդան միայն իր գիրքը: Նա դեմ չէ, որ հանդիսատեսը, ընթերցողը ծանոթանա նաև այլ հեղինակների հետ: Միակ բանը, որ ցանկանում է՝ դուր գալ, ստանալ դրական արձագանքներ, փառքի ու պատվի իր չափաբաժինը. այդ մրցակցության մեջ ռեսուրսն, ըստ էության, անսահմանափակ է. փառքը բոլորին էլ կհերիքի:

Այնուամենայնիվ, նույնիսկ առողջ մրցակցության պայմաններում հասարակության մեջ փոխհարաբերությունների հիմնական ձևը պետք է լինի համագործակցությունը, որի օրինակները ամենուրեք հանդիպում են բնության մեջ: Դրանք սիմբիոզի, փոխշահավետ գոյության օրինակներ են՝ սկսած ստամոքսային ու աղիքային բակտերիաներից,

առանց որոնց մարտությունն անհնարին կլիներ, մինչև այն-
 պիսի բույսերը, որոնց փոշին կարող է տարածել միջատների
 միայն մեկ կոնկրետ տեսակ: Միմբիոզը հենց համագործակ-
 ցության տեսակ է: Կողմերը մեկը մյուսից վերցնում են անպի-
 տանը (որը, սակայն, պետք է իրենց) կամ ինչ-որ անհրաժեշտ
 բան, բայց բավարար և ողջամիտ քանակությամբ, և արդյուն-
 քում սկսում են զարգանալ, հասնել ներդաշնակության: Ինչ
 վերաբերում է մարդկային հասարակությանը, ապա այսօր
 համագործակցությունն ավելի հաճախ դիտարկվում է որպես
 արտաքին մարտահրավերներին դիմակայելու ձև: Շրջակա
 միջավայրի ծանր պայմանները միշտ համախմբում են մարդ-
 կանց. կյանքը խիստ սառնամանիքի, տայգայի պայմաննե-
 րում կամ սարերում պահանջում է համագործակցություն,
 սովորեցնում ապրել այդպես: Բայց մշտապես արտաքին
 սպառնալիք ունենալը կամ ստեղծելը ճիշտ ճանապարհ չէ,
 որովհետև մարդկանց այդպիսի փոխազդեցության հիմքն
 այնքան էլ ամուր չէ: Չէ՞ որ արտաքին մարտահրավերների
 անհետացումը, սպառնալիքների թուլացումն ու հարմարա-
 վետ վիճակի անցումը մարդկանց անմիջապես դարձնում է
 ավելի թույլ ու մեկուսացած, յուրաքանչյուրն սկսում է ապրել
 ու գոյատևել միայնակ, ինչը տեսնում ենք այսօր աշխարհի
 բազմաթիվ երկրներում: Ապագա հասարակության շարժման
 վեկտորը պետք է ուղղված լինի նրան, որ միավորումն ու հա-
 մագործակցությունը տեղի ունենան ոչ միայն սպառնալիքնե-
 րին դիմակայելու համար, այլև հանուն ընդհանուր բարօրու-
 թյան, հանուն յուրօրինակ նորի ստեղծման:

*Ապագայի հասարակության հիմնական փոխհարա-
 բերությունները պետք է լինեն միավորումն ու համա-
 գործակցությունը՝ հասնուն ընդհանուր շահի և ընդհա-
 նուր բարօրության ստեղծման:*

Պարադոքսներ և հակասություններ թույլ տալը, դրանք անտեսելը վաղուց դարձել են արդի քաղաքակրթության դժբախտություններից մեկը: Այդպիսի իրավիճակը խոչընդոտում է ճշմարտության հաստատմանը, հետևաբար նաև զարգացմանը: Գլխավոր խնդիրը հենց մեր վերաբերմունքն է խնդիրների և հակասությունների գոյությանը: Արդյոք ամուսինը կարո՞ղ է հանգիստ ապրել կնոջ հետ, եթե փաստերի մի մասը վկայում է այն մասին, որ նա հավատարիմ ու սիրող կին է, իսկ մյուս փաստերն ուղղակիորեն ցույց են տալիս, որ նա դավաճանում է ամուսնուն: Տավանաբար, ամուսինը պետք է ուսումնասիրի այս բոլոր փաստերը և կողմնորոշվի, այլ ոչ թե շարունակի ապրել կնոջ հետ՝ ասես ոչինչ էլ չի եղել, այսպիսի իրավիճակն ընդունելով որպես նորմալ մի բան:

Բայց ինչո՞ւ ենք նման բան թույլ տալիս, օրինակ, գիտության մեջ: Օրինակ, մենք դեռևս չգիտենք, թե ինչ է էլեկտրոնը: Գիտենք, որ այն ունի լիցք, գիտենք, որ ունի որոշակի զանգված: Բայց չգիտենք, թե ինչ է այն իր էությանը: Եթե էլեկտրոնը կետ է (քվանտային մեխանիկայի համաձայն), ապա այն պետք է ունենա անվերջ եներգիա և անվերջ զանգված: Բայց անվերջ եներգիա կամ զանգված լինել չի կարող, իսկ դա նշանակում է, որ քվանտային մեխանիկան ճիշտ չէ: Եթե մոտենանք դասական ֆիզիկայի տեսանկյունից, ապա էլեկտրոնը պետք է ուղղակի պայթի, որովհետև նույնանուն լիցքերը վանում են միմյանց: Մենք չենք հասկանում էլեկտրոնը: Ցավն այն է, որ աշխարհում գոյություն չունի էլեկտրոնի պայմանական ինստիտուտ, որտեղ գիտնականները ջանք կգործադրեին այդ հարցերի պատասխանները գտնելու ուղղությամբ: Այսինքն, չկա նպատակաուղղված շարժում, որը տանի հարցերի լուծմանը, չկա նույնիսկ այդ հարցերի ձևակերպում: Ֆիզիկան ընդունում է, որ ֆոտոնը և՛ մասնիկ է, և՛ ալիք: Բավական

անհեթեթ է հնչում: Մեզ ասում են, որ ֆոտոնը ծնվում է որպես մասնիկ, ապրում որպես ալիք և մեռնում որպես մասնիկ: Իսկ որտե՞ղ է բացատրությունը: Քվանտային մեխանիկան պատասխանում է դա անհնար է հասկանալ, պետք է պարզապես ընդունել: Եթե մեզ ասեն, որ մեզ ծանոթ մարդը կարող է միաժամանակ և՛ ազնիվ լինել, և՛ ստախոս, արդյոք մենք կընդունե՞նք դա առանց բացատրությունների:

Անհրաժեշտ է սկզբունքորեն արմատախիլ անել այն իրավիճակները, երբ կան հակասություններ ու պարադոքսներ, որոնց ուղղությամբ ոչ ոք չի աշխատում: Պետք է լինեն հարցեր, և պետք է լինեն պատասխաններ, առանց որևէ երկակի կամ անորոշ մեկնաբանության: Ավելի լավ է անկեղծ պատասխանել, որ պատասխան չկա, քան տալ ակնհայտորեն հակասական բացատրություններ: Արդյոք դրանից հետո զարմանալի՞ է, որ երկակի ստանդարտներ հասկացությունը հասարակության մեջ հաստատվել է ամենուրեք: Մենք չպետք է ապրենք այնպիսի հասարակության մեջ, որտեղ օրենքը գործում է ոչ բոլորի համար, որտեղ միևնույն գործողության համար մեկին պատժում են, մյուսներին՝ խրախուսում: Մեզ անհրաժեշտ է կոորդինատների հասկանալի և հստակ համակարգ, որը թույլ չի տա երկակի մեկնաբանություններ: Երկակի ստանդարտները խնդիրների առաջ անգործության և դրա մասին խոստովանելու անկարողության ուղղակի հետևանք են: Այդպիսի իրավիճակում մարդիկ ստիպված են լինում խորամանկել, պատրվակներ փնտրել ու բացահայտ սուտ ասել:

Խիզախությունն ու ազնվությունը որակներ են, որոնք սպառնում են օբյեկտիվությունն ու բացառում երկակի ստանդարտների ու անտեսվող հակասությունների գոյությունը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ .

ԱՊԱԳԱՅԻ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Եվ այսպես, մենք ձևակերպեցինք չորս կանխադրույթ, որոնք Տիեզերքի երեք հիմնական օրենքների հետ մեկտեղ դարձան որոշակի սկզբունքների սահմանման հիմք, որոնց համաձայն պետք է նախագծվի ապագա հասարակությունը: Նամադրենք այդ սկզբունքները և հակիրճ ամփոփենք, նկարագրենք ձևավորվող վերջնական պատկերը:

Գոյություն ունի սոցիումի զարգացման ընդհանուր տրամաբանություն: Ինչ-որ փուլում այն հանգեցրեց կապիտալիզմի ի հայտ գալուն, երկչափ աշխարհի ձևավորմանն ու որոշակի գլխավոր տեսությունների ստեղծմանը, որոնք կոչված էին հիմնավորել այդ կարգուկանոնը: Զարգացման հենց այդ նույն տրամաբանությունն էլ մեր քաղաքակրթությանը հասցրեց ***նոր եռաչափ աշխարհի ստեղծմանը, որը հիմնված է երեք էությունների (ինֆորմացիա, էներգիա և մատերիա) համադրեքության վրա:*** Նոր քաղաքակրթությունը սոցիումի չորրորդ տեսակն է, որին մենք հասանք անտիկ շրջանի և միջնադարի միաչափ աշխարհներից և ոչ հեռավոր անցյալի երկչափ աշխարհից հետո: Ինֆորմացիան՝ որպես ինքնուրույն արժեք, նրա տարբերակիչ հատկանիշն է: Ինֆորմացիան, գիտելիքը նոր հասարակության մեջ պետք է լինեն իշխանության ու փողի հետ համադրելի: Եվ ոչ միայն համադրելի, այլև փոխարկելի: Ի տարբերություն ներկայիս իրավիճակի, որտեղ իշխանությունը պատկանում է քիզնեսին, ապագայում, օրինակ, հանճարեղ գիտնականը պետք է նույնպիսի ազդեցություն ունենա հասարակության վրա, որքան միջազգային կորպորացիաների հիմնադիրը կամ սեփականատերը: Ընդ որում, ապագայի հասարակությունը պարտավոր է ունենալ ինֆորմացիայի ստուգման, գտման և ապատեղեկատվությունից ու աղմուկից

մաքրման մեխանիզմներ, որոնք ապակառուցողական ազդեցություն են ունենում սոցիումի վրա: Այդպիսի մեխանիզմները պետք է լինեն ինքնաքավ, փողի ու իշխանության ազդեցությունից անկախ, մշակված ու ներդրված հասարակության կողմից: Բայց այդպիսի եռաչափ իրականության մեջ մեզ դեռ անհրաժեշտ է ապրել սովորել: Առաջին հերթին պետք է ձևավորվի և հաստատվի եռաչափ աշխարհայացք, մեր մտածողությունը պետք է համապատասխանի եռաչափ աշխարհին: **Ինտեգրալ, սինթետիկ մտածողությունը պետք է լրացնի դիֆերենցիալին, վերլուծականին. դա իմաստների ըմբռնման ճանապարհ է և նոր հասարակության կառուցման գործիք:** Սինթետիկ մտածողությունը մեզ թույլ է տալիս տեսնել ու գիտակցել նմանության սկզբունքը, նկատել, որ աշխարհի հիերարխիկ համակարգում տարբեր աստիճանները, տարբեր մակարդակները կառուցված են նմանաձև: Իսկ դա նշանակում է, որ գոյություն ունի Տիեզերքի ինչ-որ ընդհանուր իմաստ, ընդհանուր տրամաբանություն, որը մենք հայտնաբերում, տեսնում ենք այս մակարդակներում: Եվ քանի որ ամեն ինչն ունի ընդհանուր իմաստ, ապա հիերարխիկ տարբեր մակարդակները պետք է դառնան ներդաշնակ, որպեսզի չխախտեն այդ ընդհանուր տրամաբանությունը, ընդհանուր իմաստը: **Մենք հանգում ենք ներդաշնակության սկզբունքին. ամբողջի շահերը մշտապես վեր են մասի շահերից:** Ներդաշնակության սկզբունքը ենթադրում է ամբողջի մասերի համաձայնեցում և վերաբերում է մարդուն նույնքան, որքան Տիեզերքի այլ մասերին: Մարդը պետք է ապրի ու զարգանա Տիեզերքի տրամաբանության համաձայն և ոչ թե հակասելով դրան: Նա պետք է իր հետագիծը համաձայնեցնի Տիեզերքի ընդհանուր հետագծի հետ, և հենց այստեղ է դրսևորվում **համընդհանուր էկոլոգիական սկզբունքը. մոլորակի վրա ոչ մի քնական տեսակ չպետք է ոչնչացվի մեր կամքի ազատությամբ:** Մենք հանգում ենք այն եզրակացության, որ Տիեզերքում կան ոչ թե հարաբերական, այլ

բացարձակ ճշմարտություններ: Եվ դա հակասում է ամենուր իշխող ռեյատիվիզմին: Ի դեպ, ռեյատիվիզմը վերաբերում է ոչ միայն ֆիզիկային և հարաբերականության տեսությանը, այլև մտածողությանը: Մի քանի ֆրանսիացի լրագրողների սպանությունն արդի հասարակության համար ավելին է, քան մի քանի տասնյակ հազար արարների մահը: Ոմն մեկի հետ կամավոր հիմունքներով սեռական կապերը հասարակության կողմից ավելի շատ են դատապարտվում, քան կասկածելի մարտական գործողությունների ընթացքում կատարվող զանգվածային սպանությունները: **Այդ հարաբերականությունը և դրա հետևանքով առաջ եկած երկակի ստանդարտները պետք է փոխարինվեն բացարձակ չափանիշներով:** Չէ՞ որ մենք հասկանում ենք, որ դրանք գոյություն ունեն: Կա բացարձակ Բարին, երբ հետազոծողներդաշնակության մեջ է Տիեզերքի հետագծի հետ: Նամապատալսանաբար, բավական հստակ ձևակերպվում է նաև Չարը՝ գործընթաց, որը հակասում է ներդաշնակությանը, կործանում այն ու հակառակվում ընդհանուրի հետագծին: Անցյալում եկեղեցական դոգմաների հակասականությունն ու երկվությունը թույլ չէին տալիս միանշանակ լուծել Բարու և Չարի ձևակերպումների խնդիրը: Այսօր մենք առաջարկում ենք լուծել այդ հարցը, սահմանել կոորդինատների բացարձակ համակարգ: Ճշմարտություն հասկացությունը պետք է փոխարինվի իսկությամբ: Ճշմարտությունն առանձին խմբերի շահերի լոկ բանավոր արտահայտումն է: Իսկ մենք առաջարկում ենք առաջնորդվել ընդհանուրի շահերով: Չէ՞ որ չեն կարող գոյություն ունենալ ընդհանուրի շահերի տարբեր արտահայտումներ. այդ շահերը միասնական են, քանի որ ընդհանուրն ինքնին միասնական է: Կան ընդհանուրի, ամբողջի շահեր և կա իսկություն: Ապագա հասարակության մեջ թվացյալ հավասարության գաղափարը պետք է իր տեղը զիջի հենց ընդհանուրի շահերի գերակայությանը, իսկ արդարության փոխարեն գլխավորը

պետք է դառնա ներդաշնակությունը: Այդպիսի ներդաշնակ հասարակության մեջ բռնությունը նույնպես թույլատրելի է, քայքայ միայն այնքանով, որքանով այն նպաստում է ներդաշնակեցմանը. ի վերջո, պետության մեջ ոստիկանություն նույնպես պետք է: Ներդաշնակության սկզբունքը, որը դրված է գաղափարախոսության և իրավունքի հիմքում, վերջնարդյունքում կպաշտպանի նաև յուրաքանչյուր անհատի շահերը, որը հասարակության, համակարգի ներդաշնակ մաս է: Տիմնական նպատակն այնպիսի հասարակության կառուցումն է, որտեղ մարդիկ ստանում են երջանկության իրենց անհրաժեշտ մասնաբաժինը: Դեպի երջանկություն տանող ճանապարհներից մեկն է՝ ապահովել մարդու շարժումը, թույլ չտալ լնացում և հոգևոր մահ: Խոչընդոտների, ճգնաժամների ու աղետների արհեստական ստեղծումն ու դրանց հաղթահարումը շարժումը խթանելու օպտիմալ միջոց չէ: Անհրաժեշտ է հասկանալ, որ **գոյի ստեղծումն ու կոտակումը մարդու էությունն է, նրա գլխավոր հատկանիշն ու նպատակը:** Իսկ ստեղծման ու կոտակման գործընթացն ինքնին շարժման լավագույն ու օպտիմալ ձևն է նոր տիպի սոցիումում, որն այժմ սկսում է ձևավորվել: **Տենց հասարակության եռավեկտորությունն է յուրաքանչյուր մարդու համար ապահովում գոյի ստեղծման և կոտակման իր ձգտումն իրագործելու հնարավորություն՝ ինֆորմացիայի ստեղծման և կոտակման անսահմանափակ հնարավորությունների հաշվին:** Ինչ վերաբերում է մրցակցությանը, ապա այն պետք է կառուցվի ոչ թե հարաբերական (ավելի լավ կամ ավելի շատ, քան մեկ ուրիշի մոտ), այլ բացարձակ սկզբունքի համաձայն՝ շարժում դեպի ավելացումն ընդհանրապես, մրցակցություն ինքդ քեզ հետ: Եվ որպես հանրագումար՝ ոչ թե դժբախտություն արհեստական, պարտադրված նպատակների անհասանելիության պատճառով, այլ երջանկություն սեփական գործունեության արդյունքներից, սեփական բացարձակ առաջընթաց շարժումից: **Ապագայի հասարակության**

մեջ հիմնական փոխհարաբերությունները պետք է լինեն միավորումն ու համագործակցությունը՝ հանուն ընդհանուր շահի և ընդհանուր քարիքի ստեղծման:

Ինչպես արդեն նշել ենք, ցանկալիին հասնելու համար անհրաժեշտ է լուծել երկու խնդիր. **աշխարհի ճանաչման վերլուծական մեթոդը լրացնել սինթետիկ, ինտեգրալ մեթոդով և մտածողության մեջ ռեյսատիվիզմից անցնել աբսոլյուտիզմին:** Բնականաբար, դրանք լայնածավալ խնդիրներ են, որոնք գլոբալ բնույթ են կրում: Դրանց լուծման կոնկրետ մեխանիզմների ստեղծումը մոտ ապագայի հարց է, քայց գլխավորի մասին կարելի է ասել արդեն հիմա: Մենք խոսում ենք մեր մտածողության մեջ կատարվելիք լուրջ, հիմնարար և նույնիսկ հեղափոխական փոփոխությունների մասին: Նման փոփոխություններ հնարավոր են միայն սկզբունքորեն նոր կրթական համակարգի միջոցով, որը պետք է ձևավորի նոր տիպի մարդկանց, իսկ գիտելիքն ազատի դոգմաներից: Կրթության նոր, եռաչափ համակարգի ներդրումը ենթադրում է, որ երեխաներին կրթելու իրավունքը պետք է տրամադրվի սահմանափակ և խիստ կանոնակարգված: Երեխաներին դասավանդելու հնարավորությունը հասարակության մեջ պետք է դառնա արտոնյալ կարգավիճակ, մարդու քացառիկ տաղանդների ու որակների ճանաչման արդյունք: Դա ինքնաբերաբար ենթադրում է ապագայում դիստանցիոն կրթություն. աշխարհում երևելի մարդիկ փոքրաթիվ են, նրանք չեն հերիքի բոլոր երեխաներին: Երեխաների մեջ պետք է քաջալերել ազատամտությունն ու քննադատական մտածողությունը, դաստիարակել անհատականությունը, հոգեպես զարգացնել նրանց: Կրթության նոր համակարգի նախագծումն առաջնային ու գլխավոր խնդիր է: Որովհետև մարդիկ են աղյուսներն այն համակարգի, որը դեռևս պետք է կառուցել: Այդ գործընթացը կպահանջի ժամանակ, ինչպես նաև որոշակի քաղաքական կամք: Առաջին քայլը, որն անհրաժեշտ է կատարել արդեն այսօր,

բացարձակ մտածողությամբ և սինթետիկ ունակություններով մարդկանց համախմբումն է: Նրանք քիչ են, բայց հենց նրանք պետք է դառնան ապագա փոփոխությունների միջուկը՝ քննադատական և ազատ մտածող մարդիկ՝ ինտեգրալ մտածողությամբ:

Սույն գիրքը մի կողմից՝ գաղափարախոսական հենք է, որի վրա առաջարկվում է սկսել մշակել հասարակության նոր մոդել, իսկ մյուս կողմից՝ քննարկման և համատեղ աշխատանքի հրավեր: Քանի որ հասարակության նոր մոդելի մշակումը մի գործընթաց է, որը հնարավոր է միայն գաղափարակիցների, շահագրգիռ կողմերի և փորձագետների ներգրավվածությամբ: Սա ակտիվ և խիզախ որոնում է համագործակցության հիմքի վրա՝ հանուն ընդհանուր շահի և ընդհանուր բարօրության ստեղծման:

Տ.Գ. ՈՒԺԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱՅՄԱՆ ԿԵՏ

Մի փաթեթ առաջ անցնելով արժե խոսել այն մասին, թե որտեղ և ինչպես նպատակահարմար կլինեն ներդնել այն նոր սոցիալական համակարգը, որը պիտի ստեղծվի, մշակվի առաջարկված հենքի վրա: Չէ՞ որ խոսքն ինչ-որ նոր էլեկտրոնային սարքի կամ մեքենայի մասին չէ, այլ մեր սոցիումի, հասարակության: Իսկ այն բարդ կենդանի օրգանիզմ է, և դրա հետ զուգորդվող ցանկացած փոփոխություն կապված է ռիսկերի, գոյություն ունեցող համակարգի և հասարակության անդամների իներցիայի և վերջապես ռեսուրսների առկայության հետ: Չի կարելի, օրինակ, մի ակնթարթում փոխել հասարակական համակարգը մոլորակային մասշտաբներով կամ ինչ-որ խոշոր պետության շրջանակներում: Նախագծողներին քաջ հայտնի է նոր համակարգերի կամ լուծումների՝ փոքր մասշտաբներում նախնական փորձարկման պրակտիկան.

այդպես արդյունքն ավելի արագ է երևում, ավելի հեշտ է վեր հանել ու շտկել սխալները, նկունություն դրսևորել որոշումների ընդունման մեջ: Ստացված դրական արդյունքներն ու կուտակված փորձն օրինակ ու հիմք են ծառայում նմանատիպ բարեփոխումների իրականացման համար նաև «ծանրաքաշ» համակարգերում: Աշխարհաքաղաքական իմաստով Տայաստանը դիտարկվում է որպես նոր գործընթացի մեկնարկի համար առավել հարմար վայրերից մեկը, և դրա համար կան մի շարք պատճառներ:

Սկսենք նրանից, որ բարենորոգչության, լուսավորչության ավանդույթները մշտապես գոյություն են ունեցել Տայաստանում: Միսիոներությունը հայկական ազգային ավանդույթի մի մասն է: Մարդկության պատմության մեջ հին ժամանակներից կային գիտելիքի, տեխնոլոգիաների կենտրոններ, որտեղից այդ գիտելիքն ու տեխնոլոգիաները տարածվել են աշխարհով մեկ, և այդպիսի կենտրոններից մեկն անկասկած Տայաստանն էր: Այստեղից աշխարհին տրվեցին մետաղի մշակման ու գյուղատնտեսության վարման մասին գիտելիքներ, առաջատար հարտարապետական լուծումներն ու քաղաքացիական իրավունքի հայեցակարգեր, փիլիսոփայական մտքի և ստեղծագործական նորարարության նմուշներ: Արդեն նորագույն ժամանակներում հայազգի գործիչներն ու գիտնականները մշտապես գտնվում էին նորը ստեղծողների շարքերում, նրանք ակտիվ ու ստեղծագործ դեր ունեն ինքնաթիռաշինության, էլեկտրոնիկայի, տիեզերագնացության, բժշկության և կյանքի քաղմաթիվ այլ ոլորտներում: Դրան մեծապես նպաստում էին հայերի անհատական առանձնահատկությունները, նրանց քնավորությունը, մտածողությունը, մոտեցումը հարցերին ու խնդիրներին: Մասնավորապես, հայերը առանձնանում են մտածողության դեդուկտիվ մեթոդով, որտեղ ճանաչման գործընթացը էության ըմբռնումից գնում է դեպի երևույթը, այսինքն՝ ընդհանուրից դեպի մասնավորը, երբ արտարկվում են

ընդհանուր գիտելիքները: Արևմտյան ավանդույթում սկզբում ընդօրինակվում է ձևը, հետո՝ բովանդակությունը: Տայկականում, հակառակը, ձգտում կա խորանալու ու հասնելու իմաստին և միայն դրանից հետո ընդօրինակելու ձևը: Տայերը դժվարությամբ են որևէ բան ընդունում սոսկ հավատալով, նրանց համար կարևոր է հասկանալ եությանն ու գտնել տրամաբանական բացատրություն, թե հատկապես ինչի հետ գործ ունեն: Նմանատիպ իրավիճակ է նաև լեզվի հարցում. արևմուտքում լեզվի մեջ հայտնվում են փոխառված բառեր, իսկ ավելի ուշ սկսվում է բովանդակության ընկալումը: Տայերենում սովորաբար այլ լեզուներից բառերն ու եզրույթները մեխանիկորեն չեն կրկնօրինակվում, այլ ձևավորվում են սեփական նորաբանություններ՝ ելնելով օտար բառերի իմաստից: Այսինքն, ակնհայտ է եության իմաստի վերհանումը՝ որպես առաջնային խնդիր: Տայերը՝ որպես ազգ, օժտված են հետաքրքրասիրությամբ, ունեն աշխույժ միտք, իսկ հումորի զգացումը նրանց ակտիվ ինտելեկտի նշաններից է: Տայերի կարևոր հատկանիշներից է նաև գոյն ավելացնելու մշտական ձգտումը. նրանք սիրում են շատ աշխատել իրենց օգտին՝ չգոհանալով անհրաժեշտ նվազագույնով: Նրանք բավականաչափ ակտիվ են և լավ են հարմարվում նոր իրավիճակներին ու մարտահրավերներին: Միևնույն ժամանակ, նրանց դժվար է հնազանդեցնել կամ ճնշել՝ շնորհիվ մտավոր ազատության բացառիկ բարձր մակարդակի: Նենց այդ պատճառով էլ ստրկատիրական հարաբերությունները Տայաստանում չեն ունեցել ու չունեն որևէ ավանդույթ. Ստրկությունը՝ որպես վիճակ, հայերի համար անընդունելի էր մենքալ տեսանկյունից: Ֆեոդալական կախվածությունը, հիերարխիկ հարաբերություններն, անշուշտ, գոյություն ունեին, բայց ստրկություն բուն իմաստով, ըստ եության, չկար: Մտածելակերպի այս առանձնահատկությունները շատ օգտակար են պատմության շրջադարձային, կարևորագույն պահերին: Տայերի հետ չի

կարելի խոսել ուժի դիրքերից, իսկ պայմանավորվել կարելի է և պետք է. նրանք շփվող են ու գնահատում են մարդկային շփումը, հարգանքն անհատականության հանդեպ: Բացի այդ, չնայած երկար տասնամյակներ տևած պետական աթեիզմին, հայերի մեջ առկա է կապը տրանսգենդենտի հետ, բայց ոչ թե սեփական քրիստոնեական եկեղեցու, այլ հիմնականում ինչ-որ խոր ակունքների, ինչ-որ ավելի մեծ աղբյուրի անդրադառնալու միջոցով: Պատկանելությունը Նայ առաքելական եկեղեցուն հայերի համար ավելի շատ սեփական ինքնության հաստատման միջոց է, իր ոչ բազմաքանակ տոհմին պատկանելու ցուցիչ, քան քրիստոնեական փիլիսոփայության և համապատասխան կենսաձևի գիտակցված ընտրություն: Նայերը հավատում են վերին ուժերին, բայց այդ հավատը որպես կանոն չի ցուցադրվում ու չի սահմանափակվում որևէ դավանաքանական շրջանակներով, իսկ նախապատմական ծիսակատարությունների ու պաշտամունքների նշաններ, բազմաթիվ ծեսեր այդպես էլ դուրս չեն մղվել մարդկանց կյանքից, չնայած 17-դարյա քրիստոնեական պատմությանը: Կարևոր է նշել նաև, որ հայ հասարակությունն ավանդաբար հարգում է ընտանիքի ինստիտուտը՝ համարելով այն սոցիումի կարևորագույն տարր, իսկ իր ազգն ամբողջության մեջ նույնպես ընկալում է որպես մեկ մեծ ընտանիք: Ընդ որում, չնայած սեփական ամուր ավանդույթներին, հայերն ընդհանուր առմամբ միշտ բաց են աշխարհի առջև, պատրաստ ընդօրինակել լավագույնը և լինել առաջամարտիկ. նրանց մեջ առողջ կոսմոպոլիտիզմ կա:

Կա ևս մի գործոն, որը նպաստում է Նայաստանի բարենպաստ հենադաշտ լինելուն հասարակության նոր մոդելի իրականացման համար. երկիրը երկու տարբեր աշխարհայացքների սահմանագծին է: Արևմտյան և արևելյան մտածելակերպերի միջև կա լուրջ տարբերություն: Անծանոթի հանդիպելիս Արևմուտքում ավելի շատ հետաքրքրվում են, թե ուր է

նա գնում: Արևելքում հետաքրքրվում են, թե որտեղից է գալիս: Տարբերությունն այն է, թե ինչն է առավել կարևոր մարդու համար: Արևմուտքում կարևոր է նպատակը: Արևելքում՝ հիմքը, ելման կետը: Ընդ որում, երկու մոտեցման մեջ էլ ճշմարտություն կա, և յուրաքանչյուրն իր ձևի մեջ ռացիոնալ է: Տայաստանն Արևմուտքի ու Արևելքի սահմանագծին է և համադրում է թե՛ մեկի, թե՛ մյուսի տարրերը: Բայց ինչո՞ւ չկողմնորոշվել դեպի մեկը, օրինակ, Արևելքը: Բանն այն է, որ արևելյան փիլիսոփայությունն ընդհանրապես չի դիտարկում Բարու և Չարի հասկացությունները, այլ զբաղվում է կլանված ու խոր հայեցողքով՝ պարզապես որպես իրականություն ընդունելով ինի ու յանի՝ իգական ու արական սկիզբների գոյությունը: Արևմուտքը, հակառակը, բնագդաբար հասկանում է, որ Բարին ու Չարը գոյություն ունեն, բայց չի կարող օբյեկտիվորեն ձևակերպել այդ հասկացությունները և նույնիսկ փոխարինում է դրանք, որովհետև փաստացի չի դիտարկում մարդկությունը՝ որպես ամբողջական մի բան: Արևմտյան արժեհամակարգում կան յուրայիններ և օտարներ, որոնց համար պետք է գործեն տարբեր օրենքներ ու կանոններ: Այն, ինչ համարվում է չարիք յուրայինների համար, կարելի է ազատ կիրառել օտարների նկատմամբ՝ նրանց համարելով երկրորդական ու ոչ կարևոր: Մենք նույնպես կարծում ենք, որ աշխարհում կա Բարի ու Չար, բայց այդ հասկացությունները ձևակերպում ենք ներդաշնակության միջոցով, որի սկզբունքները միասնական են ամբողջ մարդկության համար: Արժեքների տեսանկյունից այսօր մարդկությանն անհրաժեշտ է միասնական համակարգ, միասնական մոտեցում, որն աշխարհը չի բաժանում արևմուտքի ու արևելքի, հուսիսի ու հարավի: Մարդկանց առանձնահատկություններն ու յուրօրինակությունը չեն չեղարկում այն, որ մարդկությունը միասնական է, հետևաբար պետք է ունենա զարգացման միասնական վեկտոր: Գտնվելով աշխարհաքաղաքական խաչմերուկում՝ Տայաստանն ունի նոր իմաստների

գեներացման կենտրոն դառնալու բոլոր հնարավորությունները՝ միտքը կառուցելով դեդուկտիվ և սինթետիկ ճանապարհով: Դրա համար կա մարդկային կապիտալ թե՛ երկրի սահմաններում, թե՛ աշխարհում շնորհիվ բազմաքանակ սփյուռքի: Բացի այդ, Նայաստանն այսօր ըստ էության երկու պետություն է՝ Նայաստանի Նանրապետություն և Արցախի Նանրապետություն: Չնայած ազգային ընդհանրության՝ այդ երկու հանրապետությունների բնակչությունը հետխորհրդային ժամանակներում ձեռք բերեց սկզբունքորեն տարբեր փորձ: Եթե Նայաստանի Նանրապետությունը լիարժեք զգաց նախկին սոցիալ-քաղաքական համակարգի կործանման հետևանքները և ինչ-որ չափով ենթարկվեց արևմտյան լիբերալ գաղափարախոսության կործանարար ազդեցությանը, ապա Արցախում միանգամայն այլ իրավիճակ ստեղծվեց: Արցախի Նանրապետությունը, լինելով չհանաչված պետություն, 1990-ականներից ստիպված գոյատևում է մեկուսացման մեջ և ինքնավար ռեժիմում ներգրավված չլինելով գլոբալացման գործընթացներում: Արցախը միջազգային կազմակերպությունների անդամ չէ և իր ներքին քաղաքականությունը ձևավորում է՝ ելնելով բացառապես սեփական շահերից և նպատակահարմարությունից: Այդպիսի պայմաններում Արցախում աստիճանաբար ձևավորվել է այլ մտածողություն, որը մեծապես պահպանել է անցյալի սոցիալիստական իրականությանը բնորոշ տարրեր: Տարբեր մենթալիտետով, բայց միասնական ազգային ու մշակութային հենքի վրա հիմնված երկու հայկական պետությունների գոյությունը փայլուն հնարավորություն է ընձեռում սոցիալական ոլորտում ճշգրիտ, կշռադատված փորձերի, հասարակության նոր սոցիալական մոդելի հետազոտման, զարգացման և հաջողությամբ իրագործման համար:

ՏԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Արա Պետրոսյան:

Ծնվել է 1953 թվականին

Երևանում:

1975 թվականին ավարտել է

Երևանի պոլիտեխնիկական

ինստիտուտի

ռադիոտեխնիկայի

ֆակուլտետը:

1975-2000 թվականներին

դասավանդել է Երևանի

պոլիտեխնիկական

ինստիտուտի կապի

համակարգերի

ամբիոնում, զբաղվել է

օպտոէլեկտրոնիկայով:

2000 թվականից հիմնել է

սեփական ընկերությունը, որն

զբաղվում է շինարարության

մեջ ինժեներական

համակարգերով, ինչպես

նաև շինարարությամբ ու

դիզայնմենտով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 3..... Տեղինակի կողմից
9..... Ներածություն
- 13..... ՄԱՍ 1
15..... Տարցեր քաղաքակրթությանը
16..... Աշխարհների հետազիծը տիեզերքում
17..... Կա այնքան, որքան կա
18..... Լավագույնի առավելագույն քանակը
31..... Ճանապարհ, որն այլևս չի տանում դեպի տաճար
41..... Կրոնի ճգնաժամից՝ հավատի ճգնաժամ
44..... Գիտության ճգնաժամ
60..... Բժշկության ճգնաժամ
65..... Փորձություն սոցիումի համար
82..... Կրթական համակարգի ճգնաժամ
91..... Ստեղծագործության ճգնաժամ
101..... Ներկայիս քաղաքակրթության ընդհանուր պատկերը
109..... Պատերազմը՝ որպես ճգնաժամների լուծման մեթոդ
- 115..... ՄԱՍ 2
118..... Ընդհանուր սցենար եվ ընդհանուր կանոններ
119..... Երեք էություն

- 123..... Աշխարհների հետագիծը Տիեզերքում
- 129..... Կառուցավորման մեթոդների վերջավոր լինելը
- 134..... Ամբողջի ու նրա մասի հետագծերի
համաձայնեցվածությունը
- 135..... Պայքար քառսի դեմ
- 140..... Մարդու կողմից ինֆորմացիայի ստեղծման, կուտակման
ու փոխանցման առանձնահատկությունները
- 143..... Տիեզերքի կապակցվածությունը
- 150..... Չորս կանխադրություններն ու Տիեզերքի երեք օրենքները
- 151..... Տամբուհանուր Էկոլոգիական սկզբունքը
- 153..... Երջանկության բանաձևվը. թվացյալ դրախտ ու թաքնված
սպառնալիք
- 163..... Մարդու էությունը
- 169..... Ելք դեպի եռաչափություն
- 171..... Ներդաշնակություն արդարության փոխարեն
- 180..... Սինթեզ և անալիզ
- 184..... Տամագործակցություն մրցակցության փոխարեն
- 190..... Երկակի ստանդարտների բացառում
- 192..... Ընդհանուր պատկեր . ապագայի հասարակության
հիմնական սկզբունքները
- 197..... Տ.Գ. Ուժերի կենտրոնացման կետ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՄԱՐ

ՆՇՈՒՄՆԵՐԻ ՏԱՄԱՐ

Արա Պետրոսյան

ԸՆԴ ՏԱՆՈՒՐ

Խմբագիր՝ Էդուարդ Այսկյան
Թարգմանիչներ՝ Լուսինե Վարդանյան,
Ներսես Աթաբեկյան

Ձևավորումը և տպագրությունը՝ «Կոլլաժ» ՍՊԸ
Երևան • 2020